



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՆՎԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆՈՐԾԵՐ
ԵՎ
ԶՈՐԻՅՑՆԵՐ

Երկրորդ
շրջան, բարեփոխված
հրատարակություն

ԵՐԵՎԱՆ «ԼՈՒՅՍ» 1987

Խմբագրիչին՝
Արամ Ինճիկյան, Լևոն Հախվերդյան,
Էդվարդ Ջրբաշյան

Տեղադր պատրաստեց և ծանոթագրեց
Լևոն Հախվերդյանը

Անվանացանկերը կազմեց՝
Ֆրիդա Հակոբյանը

ՆՎԱՐԳ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Այս գրքի հեղինակը՝ Նվարդ Թումանյանը, մեր ազգային մեծ բանաստեղծի երրորդ զավակն է, ծնված 1892-ին: Նա աչք է բացել և իր առաջին տպավորություններն ստացել այն մտերմիկ, գրական ջերմ մթնոլորտում, որ Թումանյանի հարկի տակ ստեղծվել էր 90-ական թվականների վերջերից: Նա գրեթե ամեն օր իրենց տանը տեսել է Աղայանին ու Պոռոջանին, Շիրվանզադեին ու Խասհակյանին, Շանթին ու Դեմիրճյանին, լսել նրանց խոսքն ու զրույցը, իր եղբայրների ու քույրերի հետ ունկնդրել «Հասկերի» ու «Լուսաբերի» համար հայրիկի գրած բանաստեղծությունները, լեզենդները, հեքիաթները...

Հետզհետե նրա առջև բացվել են հայրիկի բացառիկ հարուստ գրապահարանները:

Նվ այդ ամենը խոր, անջնջելի դրոշմվել են նրա հիշողության մեջ, մեծապես նպաստել նրա հոգևոր աշխարհի ձևավորմանը, ընթացք և ուղղություն տվել նրա հակումներին:

Աշակերտական տարիներին Նվարդ Թումանյանի նախասիրությունը թեքվում է դեպի պատմությունը: Միջնակարգ կրթություն ստանալով Հովհանյան դպրոցում, նույն տեղում նա դասավանդում է պատմություն և ղեկավարում գրական խմբակը: Ավարտելով (1920 թ.) Թիֆլիսի Անդրկովկասյան համալսարանի պատմագրական բաժինը, նա փայփայում է արևելագիտությանը նվիրվելու իղձը: Նվ այդ, անկասկած, արդյունք էր Թումանյանի ներդրության, որ կյանքի վերջին տարիներին հակվում էր դեպի «աստվածային Արևելքը»՝ «հայրենիքը, իր հոգուն»:

Հետևելով իր զավակների մտավոր զարգացմանը, բանաս-

Թումանյան Ն.

Թ 952 Հուշեր և զրույցներ: Դպր. միջին և բարձր տարիքի համար.— Եր.: Լույս, 1987.— 335 էջ:

Հովհաննես Թումանյանն առօրյա զրույցների մեջ էլ վերին աստիճանի հետաքրքիր մտքեր ու կարծիքներ է հայտնել կյանքի ու արվեստի ամենատարբեր երևույթների մասին: Բարեբախտաբար, դրանցից շատերը բանաստեղծի դուստր Նվարդ Թումանյանը գրել է առել ժամանակին և պահպանել սերունդների համար: Գիրքը պատմում է հայոց մեծ բանաստեղծի բնավորության, սովորույթների, նիստուկացի մասին՝ դասեր հավաստի վկայություններով:

Գիրքն առաջին անգամ հրատարակվել է բանաստեղծի ծննդյան 100-ամյակի օրերին («Լույս», 1969): Երկրորդ հրատարակությունը լրացված է հեղինակի արխիվում գտնված նորահայտ նյութերով:

4302000200 (65) 184. 1987

Թ 702 (01) 1987

Нвард Туманян

ВОСПОМИНАНИЯ И БЕСЕДЫ

Для среднего и старшего школьного возраста

(на армянском языке)
Ереван «Луйс» 1987

© «Լույս» հրատարակչությունը փոփոխությունների համար, 1987:

տեղծը դեռևս 1912 թվականին Պետերբուրգի բանտից գրած նամակներից մեկում դատերը խորհուրդ էր տալիս. «...կալ կանես, երբոր պատմությունը սիրում ես, զբաղվես առանձնապես Արևելքով ու Կղզկասով. և շատ է կարևոր, և շատ կհավանես»:

Նվարդ Թումանյանն, ի վերջո, ընտրում է հայագիտությունը: Եվ 1921 թվականի սեպտեմբերին, երբ բանաստեղծը մի շարք գրական, հասարակական և պետական գործիչների հետ ուղևորվում է Երևան՝ մասնակցելու 204-ի հիմնադիր ժողովի աշխատանքներին, նրան ուղեկցում է դուստրը՝ նպատակ ունենալով աշխատանքի ընդունվել էջմիածնում նոր հիմնված Գիտության ինստիտուտը: Մի շարք հանդամանքներ և հատկապես Թումանյանի հիվանդությունն ու հանկարծազուս մահը հետաձգում են այդ ծրագրի իրականացումը: Նվ. Թումանյանը Երևան է տեղափոխվում 1925 թվականին և աշխատանքի անցնում նախ Նյութալի կուլտուրայի պատմության ինստիտուտում, ապա և մի քանի այլ գիտահետազոտական հաստատություններում, իսկ 1943 թվականից՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտում, ուր մնում է մինչև իր մահը (1957 թ.):

Նվարդ Թումանյանի շուրջ երեսնամյա գրականագիտական գործունեության կենտրոնում եղել է իր մեծանուն հոր կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությունը: Այդ ճանապարհին իր առաջին քայլերն արել է Թումանյանի կենդանության օրոք: 1914 թվականից սկսել է գրի առնել բանաստեղծի զրույցները, ապա և, 1919 թվականին, հիմք է դրել նրա երկերի մատենագիտությանը:

Կարելի է անվարան ասել, որ 1926 թվականից մինչև 1957 թվականը, ավելի քան երեսուն տարվա ընթացքում, Թումանյանական գրեթե բոլոր նախաձեռնումները կապված են Նվարդի անվան հետ. կամ ինքն է մտահղացել ու ձեռնարկել, կամ եղել է նախաձեռնված գործի ամենաեռանդուն մասնակիցն ու ոգեշնչողը:

Նվարդ Թումանյանի շնորհիվ, 20-ական թվականներին երկրորդ կեսից սլաբերական մամուլում սկսում են հրատարակվել

րակվել և դիտական շրջանառության մեջ մտնել մեծ բանաստեղծի գրական ժառանգության անտիպ էջերը:

1926 թվականին լույս է տեսնում Թումանյանի երկերի հետմահու առաջին ժողովածուն՝ անստորագիր կենսագրական ակնարկով, որի հեղինակը Նվարդն էր: Դա բանաստեղծի մինչ այդ գոյություն ունեցող կենսագրականներից ամենաընդարձակն էր: Դրան հաջորդում է Չարենցի խմբագրությամբ և Նվ. Թումանյանի ամենագործուն մասնակցությամբ 1934 թվականին լույս տեսած միհատորյակը, ուր տեղ էին գտել բազմաթիվ անտիպ երկեր, մեծ մասամբ բանաստեղծություններ: Այդ ժողովածուն ամենահարուստն էր՝ մինչ բանաստեղծի երկերի դիտական հրատարակությունը եղած բոլոր ժողովածուներից:

Նույն թվականին Հայաստանի Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտին կից պատմության և գրականության ինստիտուտը ձեռնարկում է Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակությունը: Նվարդ Թումանյանն իրեն հատուկ եռանդով ու խանդավառությամբ նվիրվում է այդ կարևորագույն գործին. 1922—1925 թվականներին Պ. Մակինցյանի՝ խմբագրությամբ տպագրված Տերյանի քառահատորյակից հետո դա մեր նոր դասականների երկերի գիտական հրատարակության առաջին փորձն էր՝ կապված շատ դժվարությունների հետ: Նախքան բուն տեքստաբանական աշխատանքներն սկսելը, անհրաժեշտ էր կատարել նախապատրաստական հսկայական աշխատանք. ամբողջացնել Թումանյանի երկերի և նրա մասին եղած գրականության՝ տարիներ առաջ Նվարդի իսկ սկսած մատենագիտական ցանկերը, հավաքել սլաբերական մամուլի էջերում տպագրված երկերը, կատարել դրանց նախնական համեմատությունը: Եվ այդ բոլորը պետք է աներ Նվարդը՝ միմիայն մեկ աշխատակցի օգնությամբ: Կային նաև այլ խոչընդոտներ: Եվ շուրջ քառորդ դար (1934—1957) տևող այդ աշխատանքների ոգին, շարժիչ ուժը Նվարդ Թու-

1 Մակինցյան Պողոս — գրական քննադատ, հասարակական-քաղաքական գործիչ

մանյանն էր. նա և՛ մատենագետ էր, և՛ տեքստաբան, և՛ ծանոթագրող-մեկնաբան, և՛ խմբագիր:

Թումանյանի երկերի գիտական հրատարակության նախապատրաստական աշխատանքների հետ միաժամանակ, նվարդի նախաձեռնություններով, սկսվեց ժամանակակիցների հուշերի հավաքման գործը: Այստեղ ևս կենտրոնական դիմաքը նվարդն էր. նա էր կենդանի կամ նամակագրական կապ պահպանում հուշագրողների հետ, հարցեր էր ուղղում կամ պատասխանում նրանց հարցումներին, փաստական և ժամանակագրական ճշտումներ անում: Եվ նվարդի ջանքերի շնորհիվ 30-ական թվականների կեսերին հավաքված շուրջ հարյուրի հասնող հուշերը (որոնք հետագայում լրացվեցին ևս քսանհինգով) խիստ կարևոր նշանակություն ունեն Թումանյանի կյանքի և ստեղծագործության համակողմանի գիտական ուսումնասիրության համար: Նվարդ Թումանյանի դերը այդ գործում անավել նշանակալի է, եթե նկատի ունենանք, որ հուշագրողներից շատերը մեկ-երկու տասնամյակ հետո այլևս չկային...

1939 թվականին նվարդը կազմեց և հրատարակեց «Թումանյանը քննադատ» ժողովածուն՝ իր տեսակում առաջինը մեր իրականության մեջ, որտեղ ի մի էին բերված մեծ բանաստեղծի ասույթները գրականության մասին: Ժողովածուի մի զգալի մասը, քաղված լինելով Թումանյանի դեռևս անտիպ նամակներից, առաջին անգամ էր ներկայացվում գրական հասարակայնությանը: «Թումանյանը քննադատ» ժողովածուն խոշոր դեր կատարեց մեր գրականագիտական մտքի, մասնավորապես Թումանյանագիտության զարգացման գործում:

Երևանական թվականների սկզբից նվ. Թումանյանը, հատկապես գրական մամուլում, սլարբերաբար հանդես էր գալիս Թումանյանի կյանքի և ստեղծագործության առանձին կողմերը լուսաբանող, նրա երկերի ստեղծագործական պատմությանը կամ գրական-գեղագիտական հայացքներին նվիրված իր ուշագրավ հոդվածներով, որոնք ամեն անգամ մեր իմացությունը մեծ բանաստեղծի մասին հարստացնում էին նոր փաստերով և հետաքրքրական, դիպուկ գիտողություններով:

Ահա դրանցից մի քանի, առավել կարևորները. «Ինչպես էր մշակում Թումանյանն իր երկերը», «Թումանյանը և մանկական գրականությունը», «Թումանյանը լեզվական խնդիրների մասին», «Աղայանի և Թումանյանի մտերմությունը», «Ալ. Սպենդիարով և Թումանյան», «Հայկական բայրոնիզմի հարցերի շուրջը— Բայրոնը և Թումանյանը», «Զրույցը Թումանյանի կյանքում», «Խստապահանջ բանաստեղծը», «Տերյանը և Թումանյանը», «Թումանյանը և իր ժամանակի էրիտասարդ գրողները»: Նվ. Թումանյանի գրչին է պատկանում նաև «Թումանյանը և ուսուցիչականությունը» ուսումնասիրությունը, որի համար նա ստացավ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Առանձնապես պետք է նշվի Թումանյանի կենսագրության ստեղծման մեջ նրա կատարած աշխատանքները: 1939 թվականին Թումանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ տպագրված կենսագրական ակնաբկը ամենահարուստն է մինչև այժմ եղածների մեջ: Առավել արժեքավորը «Թումանյանի մանկությունն ու պատանեկությունն» է, որ արժանացել է երեք հրատարակության: Արխիվային վավերագրերի, ժամանակակիցների հիշողությունների հիման վրա (որոնց զգալի մասը գրված է իր պատվերով կամ գրի է առել հենց ինքը), օգտագործելով նաև Թումանյանի ինքնակենսագրական նյութերն ու պատմածները, նա աշխատել է, որքան հնարավոր է, վերապատկերել բանաստեղծի կյանքի առաջին շրջանը:

Այդ աշխատությունը, կարևորագույն մի շարք տվյալներով, սկզբնաղբյուրի նշանակություն ունի, և Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունը ուսումնասիրողներից ոչ ոք, ոչ այսօր և ոչ էլ հետագայում չի կարող անուշադիր անցնել դեպ կողքով:

Խոշոր է նվարդի դերը նաև Թումանյանի տուն-թանգարանի հիմնադրման և կազմակերպման գործում:

Թումանյանական ամենօրյա և բազմազան աշխատանքներին զուգընթաց, նա ձեռնարկում է կազմելու Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը, որ, ցավոք, մնաց անկատար:

Նվարդ Թումանյանի աշխատանքների մեջ բացառիկ է

զնորութիւնն ունեն նրա «Հուշերն ու գրույցները», որ ներկայացվում են գրական հասարակայնութեան և ընթերցող լայն շրջանների ուշադրութեանը:

Հետաքրքրական է, որ այս գրքի մտահղացումը թեև ոչ ուղղակիորեն, կապվում է Հովհաննես Թումանյանի անվան հետ: «Զրույցների» առաջաբանի սևագրութեան մեջ նվարդը պատմում է, թե ինչպես ինքը և իր քույրերն ու եղբայրները, 8—12 տարեկան դպրոցականներ, հոր խորհրդով, ամեն մեկն իր համար, հիշատակարան էին պահում, գրի առնելով օրվա տպավորութիւնները կյանքից, բնութիւնից, կարգացած գրքերից, շրջապատի մարդկանցից, իրենց տան հյուրերից:

Ավելի ուշ, երբ նվարդն ուսանողուհի էր, էքերմանի նշանավոր գրքի («Զրույցներ Գյոթեի հետ») ներշնչումով, սկսում է գրի առնել Թումանյանի ասույթները, հատկապես այնպիսիները, որ ավելի տպավորվում կամ դուր էին գալիս իրեն:

Առաջին գրույցը նվարդ Թումանյանը գրի է առել 1914 թվականի հոկտեմբերի 2-ին, և այնուհետև, փոքր-կամ մեծ ընդմիջումներով, շարունակել մինչև օրհասական 1923 թվականի մարտի 23-ը: «Գրում էի անսխտեմ,— պատմում է նվարդը,— մեծ ընդմիջումներով, սկզբում մտքեր, իսկ հետո՝ նաև գրույցներ: Գրում էի գրույցի անմիջական տպավորութեան տակ, հյուրերի ցրվելուց հետո, հիշողութեան մեջ մնացածը՝ կցկտուր, հատվածաբար, հաճախ մի քանի նախադասութեան մեջ ամփոփված կամ ուրվադժված: Լրիվ, ամբողջական գրույցներ քիչ եմ գրել... Լսածիս մեկ հարյուրերորդականը հազիվ գրած լինեմ, և եթե գրել եմ՝ ավելի գրականութեան և արվեստի մասին կամ մեղ վերաբերող կրթադաստիարակչական բնույթի գրույցները»:

Այդ գործն անհամեմատ ծանր է եղել Թումանյանի վերջին հիվանդութեան շրջանում. «Գրելն, իհարկե, — ցվար էր այն օրերին,— կարդում ենք 1923 թվականի հունվարի 7-ի գրառման մեջ,— սկսեցի երբեմն, մեկ-մեկ գրել մտքումս մնացած նրա մտքերն ու խոսքերը, իհարկե, կցկտուր ու կարճ: Գրում էի հիվանդանոցի միջանցքներում կամ տրամվայում, երբ և որտեղ պատահում էր»:

Հետագայում, հավանորեն, 20-ական թվականների երկ-

րորդ կեսից, նվարդն սկսում է վերանայել իր գրառումները, խմբագրել, լրացումներ ու ճշտումներ կատարել և կամ գրի առնել ավելի վաղ շրջանի հուշերն ու տպավորութիւնները, նստակ ունենալով մի գրքի մեջ ամփոփված՝ տպագրութեան հանձնի:

1933 թվականին, Թումանյանի մահվան տասնամյա տօրելիցին, «Գրական թերթը» հաղորդում է, որ նվարդ Թումանյանի «Զրույցները» տպագրութեան է պատրաստվում Չարենցի խմբագրութեամբ: Սակայն, ինչպես հայտնի է, այդ ժամանակ, և հետագայում էլ, նվարդ Թումանյանի կենդանութեան օրոք, «Զրույցների» առանձին, ամբողջական հրատարակութիւնը չիրականացավ: Դրա հիմնական պատճառն, անշուշտ, պատասխանատուութեան այն մեծ զգացումն էր, որ նվարդ Թումանյանն ուներ իր դործի նկատմամբ: Գրքի հրատարակութիւնը թողնելով հետագային, նա բավականացավ մամուլի էջերում առանձին հատվածներ տպագրելով: Այդ հատվածներում ներկայացվող բանաստեղծի մտքի խտացումները արվեստի, գրականութեան, իր առանձին երգերի, կյանքի և ստեղծագործական ուղու շրջափոխերի մասին՝ ընդհանրացան և մտան Թումանյանի վավերական ասույթների շարքը: Դրանով նվարդ Թումանյանի «Զրույցները» բռնեցին առաջին թնութիւնը գրական հասարակայնութեան առաջ:

Նվ. Թումանյանի «Հուշեր և գրույցների» նշանակութիւնը բացատրի է մեր մեծագույն ազգային բանաստեղծի կյանքի և ստեղծագործութեան գիտական ուսումնասիրութեան տեսակետից:

Թումանյանն իր վերջին հիվանդութեան օրերին, 1923 թվականի հունվարին, ծանոթանալով Դոստոևսկու դատեր հուշերին, նկատել է. «Էս գիրքը հենց էսպես և եթե էլ ավելի թույլ էլ լիներ գրված, նույնպես արժեքավոր է և հետաքրքրական, որովհետև աղջիկն է գրում իր հոր մասին»:

Բանաստեղծի այս խոսքը, անուղղակի, վերաբերում է նաև իր դստեր՝ նվարդի գրքին:

«Հուշեր և գրույցների» ամենազվազուր արժանիքը գրառումների հարազատութիւնն է Թումանյանի մտքերին, ոճա-

կան և լեզվական առանձնահատկություններին: Հեղինակը ձգտել է, որքան հնարավոր է, չի նկ ճշմարտապատում, նույնությունամբ վերարտադրել տեսածն ու լսածը:

Նմբագրությունը ևս, իր հերթին, տեքստը պատրաստելիս աշխատել է հարազատ մնալ «Հուշեր և զրույցների» բնագրին (որի նյութերի նախնական ընտրությունը կատարել է Արփիկ Թումանյանը), անհրով լեզվաոճական կարգի ուղղումներ և, բանաստեղծի ընտանիքի անդամների օգնությամբ, լրացնելով ու ճշտելով փաստերը: Պահպանվել է ժամանակագրական կարգը: Թվականներ շննհցող դրառումներն ու ասույթները խմբավորված են դրքի առաջին մասում:

Ցավոք, վերահաս մահը Նվարդ Թումանյանին հնարավորություն չտվեց ամբողջացնելու «Հուշեր և զրույցները», ինչպես և իրականացնելու իր մյուս մտահղացումները:

Սակայն այնքանն էլ, ինչ ի վիճակի է եղել կատարելու Նվարդ Թումանյանը, լիուլի բավական է, որ նրա անունը սիրով և երախտագիտությամբ հիշեն մեծ բանաստեղծի այսօրվա և ապագայի ընթերցողները:

Առամ Իննիկյան

ՀՈՒՇԵՐ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Հայրիկին հիշում եմ չորս-հինգ տարեկան հասակիցս. ապրում էինք Բիֆլիս քաղաքի ծայրամասում՝ Ելիզավետինսկայա փողոց, № 144: Տան երկրորդ հարկում երեք սենյակով մի ընդարձակ բնակարան՝ լույս և արևկող, մեծ ու լայն պատըշգամբով: Բակում հակակի (ակացիայի) ծառեր կային, որոնց ճղները մեր պատշգամբն էին հասնում: Գարնանը դրանք բացվում էին, օդը լցնում թարմ բուրմունքով:

Մեր բակի հակառակ ծայրում մեծ այգի կար իր ճաշարանով: Այստեղից հրեմն պատրաստի ճաշ էինք ստանում, պատահում էր, որ կիրակի օրերն այգում էինք ճաշում:

Մեծ չէր այն ժամանակ մեր ընտանիքը՝ հայրիկը, մայրիկը, ինձնից փոքր երկու եղբայրս և ես: Մեծ եղբայրս՝ Մուշեղը և քույրս՝ Աշխենը, ապրում էին տատիս մոտ:

Նս. շատ ուշ իմացա, որ 1897—98 թվականները դժվար տարիներ են եղել հայրիկի կյանքում՝ և տանը, և դրսում: Իր ընկերների վիճակն էլ լավ չէր:

Նոր Նախիջևան աքսորվելուց առաջ (1898, ապրիլ), մոտ մեկ ամիս մեզ մոտ էր ապրում Ղաղարոս Աղայանը: Նրա տրամադրությունն ու վիճակն էլ վատ էին: Ի լրումն այդ ամենի՝ հայրիկի հոր մահը 1898-ին:

Հայրիկը շատ էր սիրում մեր տանտիրոջը, որ վրացի արհեստավոր էր՝ բարի, մեղմ, ղվարթ ու զրուցասեր: Հայրիկը նրա հետ միշտ կատակներ էր անում ու զրուցում:

Հանգիստ ու խաղաղ էին անցնում մեր օրերն այդ բնակարանում, միայն մի զիլ ձայն խանգարում էր ամենքին: Դա փոքրիկ եղբորս՝ Համլիկի ձայնն էր՝ սուր և ուժեղ: Դատ էր շարանճի՝ ոչ ոքի հանգիստ չէր տալիս, ամենից շատ իրեն՝

մի օր քիթն էր շարդոտ, մյուս օրը՝ ոտքը, կովում էր, աղմուկում: Էսպես ամեն օր մի արկած, մի դեպք:

Մյուս եղբայրս՝ Արտավազը, հանգիստ բնավորությու՞ն ունեւր: Միշտ լուռ ու մենակ, ժպտադեմ, բայց տխուր, մեծի նման լուրջ ու մտախոհ:

Այդ տարիներին հայրիկը մեզ հետ շատ քիչ էր լինում: Երբեմն միայն, կիրակի օրերը, Մուշտաշիդ այգին էր տանում զբոսանքի. գետափին խաղում էինք, քար գցում, վազվզում, կարուսել նստում, գնդակ ու պարան խաղում:



Թիֆլիս գալով, հայրիկն առաջին տարիներին՝ ապրել է էին թաղամասերում՝ Հավլաբար, Խարիտուխ, տեսել է հին Թիֆլիսի կենցաղը, լսել Թիֆլիսի բարբառը: Ապրել է արհեստավորների շրջապատում:

Հավլաբարում, բազազ Մուրադյանի երկու անընդունակ երեխաների հետ միառժամանակ հայոց լեզու է պարապել և ուժգոհությամբ հեռացել: Այդտեղ է, որ զննել է բազազ Արտեմի, նրա կնոջ տիպերը:

Նույն տարիներին անգլերեն լեզվով դասեր է անել Անգլիայի հյուպատոս Մուրտալից, որպեսզի Շեքսպիրը բնագրով կարդալու հնարավորություն ունենա: (Այդպես է վկայում իր ժամանակակից Գևորգ Ասատուրը):

1899 թվականի աշնանը փոխադրվեցինք նոր բնակարան՝ Բեհբության փողոց, № 50: Այստեղ մնացինք մինչև 1908 թվականի աշունը:

Վերնատան բնակարանն ուներ լայն, երկար, լուսավոր, գեղեցիկ միջանցք՝ հայրիկի սենյակից մինչև պատշգամբը: Միջանցքի երկու կողմի պատերից հայրիկը կախել էր հունական և հռոմեական դիցաբանությունից նկարներ, հիշում էմ՝ Ջև, Հերա, Ապոլլոն, Վեներա և ուրիշներ:

Բեհբության փողոցի այս տունն էր, որ դարձավ հայրիկի գրական ընկերների հավաքատեղին: Բնակարանը, վերին հարկում լինելու պատճառով, կոչվեց Վերնատուն, իսկ խմբավորման անդամները՝ վերնականներ:

Մեր նոր բնակարանը հինգերորդ հարկում էր, Բուսաթանական այգու դիմաց, երկու կողմից պարտեզ ուներ, գեղեցիկ տեռաս: Այս տարիներին հայրիկը մեզ հետ քիչ էր լինում: Ավելի շուտ դուրան էր անց կացնում, ընկերների հետ, ժողովներում: Տանն էլ շարունակ զբաղվում էր հյուրերով: Մայրս տան հոգսերի ու երեխաների հետ էր: Երբեմն մեզ համար երեկոները մանկական գրքեր էր կարդում. հիշում էմ՝ «Փայլուն կոպեկը», «Թավամազ մեղուն», «Մոխրոտը», «Աղբյուր» պատկերազարդ ամսագրի գրվածքները: «Մոխրոտը» մեր մանկության սիրած գիրքն էր: Ավելի ուշ կարդաց «Սամվելը»:

1900—1903 թվականներին հայրիկն իրեն թույլ էր զգում. հիվանդ էր: Ամառները գնում էր Աբասթուման կամ Ուրավիլ՝ ու մնում էր մինչև ուշ աշուն, իսկ մենք մայրիկի հետ գնում էինք Գսեղ:

Արիստակես Զարգարյանը², հայրիկի մտերիմը և բուժող բժիշկը, նրա հիվանդության օրերին մեր բնակարանի դռանը փակցրել էր հետևյալ գրուկները. «Ընդունելությունը ուրախ օրերը. ժամը 11—2»:

Այդ հայտարարությունը ոչ մի նշանակություն չունեցավ, քացառությամբ մի քանի սրտացավ բարեկամների, որոնք, գրուկները կարդալով, չէին անհանգստացնում հայրիկին, իսկ շատ շատերը, — աննրբանկատ մարդիկ, — շարունակում էին գալ ու խանդարել, հոգնեցնել հայրիկին: Գալիս էին և ասում՝ «Այդ հայտարարությունը մեզ չի վերաբերում» կամ՝ «Մենք տիկին Օլյայի մոտ ենք գնում»: Գնում էին սեղանատուն՝ մայրիկի մոտ, հետո անցնում հայրիկի սենյակը, զրուցում, մնում մինչև ուշ երեկո:

¹ ամառանոցային բնակավայրեր Վրաստանում

² Զարգարյան Արիստակես (Ռուստեմ)—բժիշկ, գրական-հասարակական գործիչ, գրել է վոզնիկներ զգեցրի բարբառով

Վերնատան անդամներն էին՝ Ղազարոս Աղայանը, Թումանյանը, Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը¹, Դերենիկ Դեմիրճյանը և Ավետիք Իսահակյանը:

Մյուս գրողները՝ Պոռշյան, Շիրվանզադե, Լեո, Մուրացան, Ահարոնյան և ուրիշներ, լինում էին հայրիկի մոտ, մասնակցում երեկոներին, բայց Վերնատան անդամ չէին:

Վերնատունն ուներ իր մշտական հյուրերը՝ ինչպես Ֆիլիպ Վարդազարյան², բժիշկ Արիստակես Զարգարյան, իշխանուհի Մարիամ Թումանյան³, պատմաբան Հակոբ Մանանդյան՝ իր կնոջ հետ, և էլի ուրիշներ: Նրանց թիվը սահմանափակ էր և հրավիրվում էին երբեմն վերնականներից որևէ մեկի նոր գործը կարդալու առիթով: Կին հյուրերին ասում էին վերնանուշներ: Գրական հավաքույթներին հյուրերը մշտապես հյուրասիրվում էին քիշմիշով ու լաբլաբուով, որին ասում էին վերնահատիկ:

Մի կիրակի առավոտ Աղայանն ու Պոռշյանը գալիս են հայրիկի մոտ: Նստում են զրուցում բավական երկար ժամանակ: Հայրիկը շատ է խնդրում, որ մնան ճաշի, սրանք թե՛ «Ձէ, կիրակի օր է, մեր տները դնանք»: Գնում են, Բնակարանից դուրս գալիս ասում են՝ արի մեր Օհանեսի տան սանդուղքները համբարենք:

Հաշվելով իջնում են ցած և դուրս է գալիս Պոռշյանինը՝ 101, Աղայանինը՝ 102: Սկսում են վիճել և բարձրաձայն վիճելով, հետ են դառնում նորից հաշվելով: Ժիշտն Աղայանի հաշվածն է լինում: Աղմուկի վրա հայրիկը դուրս է գալիս, կարծելով, թե փոշմանել են, եկել են ճաշելու նրանք պատ-

1 Աղբալյան Նիկոլ — գրական ընկադատ

2 Վարդազարյան Փիլիպոս (Ֆիլիպ) — Թումանյանի մտերիմն ու աշակի-ցը, որի հրատարակությունը լույս են տեսել նրա մի շարք երկերը: «Վշտի ու թախծի երգիչ» — Հովհ. Թումանյան» գրքույկի հեղինակը

3 Իշխանուհի Թումանյան Մարիամ — գրական, թատերական, հասարակական գործիչ: Բանաստեղծի մտերիմն ու աշակիցը, որի հրատարակությունը լույս է տեսել «Մանկական գրողարան Հովհաննես Թումանյանի» մատենաշարը: Բանաստեղծի հետ ազգակցական կապ չունի

մում են եղելուցույնը, հայրիկի անեկոտներին ավելացնելով ևս մեկը:

Պերճ Պոռշյանը մեզ մոտ հաճախ էր լինում: Մեզ բոլորիս, առհասարակ երեխաներին, ասում էր «լակոտներ», իսկ հայրիկին, Աղայանին, Շիրվանզադեին՝ «գյաղաներ»: Դա էր նրա ոճը: Մեր մարդ էր, գալիս էր բակի մեջտեղը կանգնում և իր բամբ ձայնով կանչում. «է՛յ, լակոտներ, էն դյաղեն սա՞նն ա...»:

Երբ հայրիկը տանն էր լինում, բարձրանում էր վերև, հիթե ոչ՝ թողնում էր գնում:

Վերնատան հավաքույթներն ունեին իրենց երկրորդ մասը՝ ուրախ ժամանցը. թեյ, ընթրիք, երգ, քեֆ, անեկոտներ, գվարճալի ու սրամիտ պատմություններ՝ գրական այլևայլ մարդկանց կամ իրենց կյանքից: Այդ երեկոներին երգում էին պանաղան երգեր, ինչպես «Քյոթողլի», Սայաթ-Նուվայի «Բուն էն գլխեն իմաստուն իս» և այլն: Վերնականների կյանքից նկարում էին զանազան ծաղրանկարներ, գրչի հանաքներ անում, որոնց հեղինակը Դերենիկ Դեմիրճյանն էր: «Երբ Վերնատանն էինք ապրում, — պատմում էր մայրիկը, — նա մեր տունն իր տունն էր դարձրել: Այնքան հաճախ էր ճաշերին մեր տանը լինում, որ երբ բացակայում էր՝ երեխաներն էլ, Օհանեսն էլ սպասում էին, որ Դերենիկը գա: Նույնիսկ այն ժամանակ, երբ Օհանեսը հիվանդ էր և ուզում էր պարապել, Դերենիկը շարունակում էր պալ, թե՛ Օլյայի մոտ եմ եկել: Սեղանատանը նստում էր, մի քիչ զրուցում, հետո մըտնում էր Օհանեսի սենյակը, խանդարում, շեր թողում պարապի: Իսկ երբ մեկնեց Շվեյցարիա, շարունակ նամակ էր գրում Օհանեսին, որ փող ուղարկի, և նա Ֆիլիպից, սրանից-նրանից փող էր խնդրում և ուղարկում»: Դերենիկի քույր Վարսենիկը հիշում էր. «Հայրիկը երբեմն գալիս էր մեզ մոտ, գնալու ժամանակ Վիգենին՝ փող էր տալիս, որ իրեն համար խաղալիքներ առնի, բայց ինքն էլ գիտեր, մենք էլ, որ էդ փողը տալիս է ոչ թե Վիգենի խաղալիքների, այլ մեր ճաշի, հացի համար»:

Հիշում եմ, Գեմիրճյանը՝ երբեմն ջութակը հետն էր բերում։ Երբ հայրիկը տանը չէր լինում կամ քնած էր լինում, գալիս էր մեր սենյակը։ Մենք՝ Մուշեղը, Աշխենը և ես, մի սենյակում էինք պարապում։ Գալիս էր, նվագում ու ասում ծիծաղելով. «Եթե ձեզ խանգարում եմ, կարող եք դուրս գալ...»:

Մի օր վերնականները, իրենց հերթական երեկոյից հետո, մի լուսնյակ գիշեր բարձրանում են դիմացի սարը և որոշում են մնալ մինչև լուսադեմ՝ արշալույսը դիտելու։ Գնում են սարի գլխի տներից մեկի պատշգամբում նստում, զրուցում ու սպասում արևածագին։ Քունները տանում է, գլուխները կախ գցած քնում են։ Մեկ էլ զարթնում են՝ տեսնում արևը բարձրացել է, գլուխներն արևահարել։



Դերասան Կարապետ Գալֆայանը նոր էր եկել Փարիզից։ Դեռ վերնատանն էինք ապրում։ Ամեն օր մեր տուն էր գալիս, հայրիկի համար խաղում իր դերերը։ Հայրիկը նրան շատ օգնեց և՛ նյութապես, և՛ բարոյապես (իր հողվածներով պաշտպանում էր նրան հարձակումներից)։

Ամենից շատ հավանում էր նրա Համլետը։

Երեք արտիստ՝ Սիրանուշը, Կարապետ Գալֆայանը և Նիկողայոս Հովհաննիսյանը Համլետի դերով հանդես եկան միևնույն շաբաթում, Արտիստական թատրոնում։ Չեմ հիշում 1900, թե 1901 թվականին էր։

Վերնատանը Գալֆայանն ապրել է մեկ ամիս, Գեմիրճյանը՝ երկու ամիս, հետո Իսահակյանը, շորս-հինգ ամիս՝ Լևոն Շանթը։

Երբ վերնատանն էինք ապրում, սովորաբար, շաբաթվա մի երեկո հայրիկը հատկացնում էր երեխաներին։ Մեզ համար կարգում էր իր մանկական գրվածքները, հորդորում, որ անգիր անենք, լսում էր երեխաների կարծիքները և հաշվի առնում, երբեմն էլ կարդում էր էջեր հայոց պատմությունից և բացատրում։



Առաջին երգերը հայրիկն է մեզ սովորեցրել. շորս-հինգ տարեկան երեխաներ էինք, մանկական ուրախ երգեր էր երգում մեզ համար։ Հիշում եմ առաջինը՝ «Սիրուն թիթեռ», հետո՝ «Արտուտիկ, ինչո՞ւ թռչում ես վեր-վեր...», այնուհետև սովորեցրեց «Գարունն է եկել նախշուն թևերով...», «Ահա ծագեց կարմիր արև...» և այլն։

Իսկ ավելի ուշ, 1901—1902 թվականներին, հայրիկը մեզ տխուր երգեր սովորեցրեց։ Լավ եմ հիշում այդ օրը։ Աշուն էր. հայրիկը հիվանդ պառկած էր ննջարանում. բոլորիս հավաքեց իր մոտ, նստեցինք անկողնու շուրջը։ Երգեց՝ «Ազնիվ ընկեր, մեռանում եմ...», «Վայր ընկնող աստղեր», հետո՝ «Ցուրտը փչեց, ձմեռ սաստիկ» և վերջը՝ Շահազիզի «Երազը»։

Մենք տխուր տրամադրությամբ ցրվեցինք. մի ճանի օրից հետո հայրիկը անկողնուց վեր կացավ։ Մեկնեց Աբասթուժան բուժվելու, ուր մնաց մոտ չորս ամիս։

Մեր «ոնպերտուարը» հետագայում հարստացավ. նոր երգեր լսեցինք ու սովորեցինք։ Բոլորս խմբով երգում էինք. նույնիսկ հյուրերի ներկայությամբ, երբ հայրիկը կանչում էր։ Խմբավարը ես էի համարվում, որպես լավ ձայն ունեցող։

Սովորեցինք և ժողովրդական երգեր՝ ջանգլուումի քառյակներ, ազգային երգեր, իսկ ավելի ուշ՝ Սայաթ-Նովա և ուսուցիչները։

Երգում էինք քաշվելով, առանց վերջին հասնելու։ Եվ հայրիկը մեզ նկատողություն էր անում ու միշտ ասում էր. «Երգը սրտալի կերպեն, ազատ ու մինչև վերջը»։



1902 թվականի աշնանը, հոկտեմբերին, երբ հայրիկն Աբասթուժանում բուժվում էր, մեր տանտիրուհին՝ բժիշկ Քոչարյանի կինը, մեր շորս սենյակին ավելացրեց ևս երկուսը՝ հայրիկի համար կաթինեռ ու ընդունարան, որը և շարժավ վերնականների սենյակը։ Մեր տանտիրուհին՝ իտալուհի ժողովներից, երգչուհի էր, արվեստի սիրահար, շատ էր հարգում։

ու գնահատում հայրիկին: Տան վարձը ամիսներով ուշացնելիս չէր դժգոհում:

Այսպես մեր բնակարանն ընդարձակվեց ու գեղեցկացավ: Հայրիկն առանձնասենյակ ունեցավ պատշգամբով ու գեղեցիկ տեսարանով: Իր նախկին առանձնասենյակը հայրիկը հատկացրեց մեզ, երեք մեծերիս՝ Մուշեղին, Աշխենին և Ինձ:

Բնակարան վարձելիս հայրիկը քաղաքի կենտրոնից հեռու, օդառատ, արևոտ, բնությանը մոտ տեղեր էր փնտրում, բնակարան, որ ունենա մեծ պատշգամբ, լինի բարձր հարկում, առջևը՝ բացվող տեսարան: Մեր նախավերջին (Բեհբուջյան փողոց, 50, հետագայում՝ 44) և վերջին (Վուզնեսենսկայա փողոց, 18) բնակարանները Բուսաբանական այգու, Կոշորի սարի մոտ էին, առաջինը հինգերորդ, երկրորդը՝ երրորդ հարկում, երկուսն էլ արևոտ և օդառատ:

Մեր տան թամադան Աղայանն էր: Հայրիկի կենացին միշտ երգում էր՝ «Քյորոզլին», հետո՝ զրկախառնվում էին ու համբուրվում: Սպիտակ անձեռոցիկ էին փռում կրծքներին ու ախորժակով, զվարթ ճաշում: Դերենիկը ջութակով նվագում էր Սայաթ-Նովա կամ դանազան մեղեդիներ: Նիկողը երգում էր «Դուն էն գլխեն իմաստուն իս», Վրթանես Փափաղյանը, երբ գալիս էր, ջութակով նվագում էր «Լուր դա լուրը»: Փափաղյանը մեր տանը քիչ էր լինում, բայց երբ մեր հարևանը դարձավ (մեր բնակարանի ներքևի՝ երկրորդ հարկում մի սենյակ էր վարձել) հաճախ էր բարձրանում հայրիկի մոտ:

900-ական թվականներին, երբ դեռ նոր էր ստեղծվել Վերնատունը, մենք նրա հավաքույթներին, զրույցներին չէինք մասնակցում, իսկ երբ մեծացանք՝ Վերնատան հավաքույթները լրիվ կազմով չէին լինում: Աղայանը չկար, Իսահակյանը հեռացել էր Թիֆլիսից, կյանքն էլ պատերազմի տարիներին խաթարվեց և առաջվա ուրախ հավաքույթները չկային:

Վերնատանը հայրիկն ուներ երեք լուսանկարչական ապարատ: Լուսանկարում էր մեզ՝ երեխաներիս, մոտիկ ընկերներին ու բարեկամներին, վերնականներին ու հյուրերին: զանազան տեսարաններ, որ բացվում էին Վերնատան պատու-

հանից ու պատշգամբից: Իսկ մեծ եղբայրս լուսանկարում էր հայրիկին ու իր ընկերներին:

Առաջին լուսանկարչական ապարատը, մայրիկի ասելով, հայրիկը գնել էր 1896 թվականին:

Միրում էր տանը կենդանիներ պահել: Հիշում եմ, հորեղբայրս գլուղից եղնիկ էր բերել, որին բուրբու սիրում էինք, գուրգուրում, խնամքով պահում: Եղնիկը դուրս էր գալիս՝ Վերնատան պատշգամբը, կարոտով նայում դիմացի սարերին: Հետո եղբայրս՝ Մուշեղը, եղնիկին տարավ Շուլավեր և բաց թողեց անտառում:



Առաջին գրական զրույցներից մեկն էլ, հիշում եմ, Պուշկինի մասին էր: Հովնանյան դպրոցի աշակերտուհի էի: 6—7-րդ դասարանում անցնում էինք Պուշկին: Ես շարունակ նրա գործերն էի կարդում և անգիր անում, որոշ նմանություններ գտնում Պուշկինի և հայրիկի միջև: Այդ մասին մի օր իրեն ասացի և ավելացրի, որ նմանությունների հետ միաժամանակ կան և մեծ տարբերություններ: Ասացի, որ Պուշկինը դրամաներ էլ է գրել, իսկ դու չես գրել: Հայրիկն ասաց. «Դու դեռ չգիտես, որ ես դրամաներ էլ ունեմ գրած, որ ես դրամատուրգ եմ...»:

Ես այդ չգիտեի և չէի կարողանում մոռանալ այդ նորությունը, որ հայրիկն այդ օրն այնքան համոզված ասացինձ:



Մտքիցս չի հեռանում ավարտական քննության օրը հայոց լեզվից և գրականությունից: Հովնանյան դպրոցի 7-րդ դասարանումն էի. մայիսի վերջերը, քննության օրը, մեզ տվեցին երկու թեմա՝ ընտրելու ազատ ցանկությամբ. մեկը՝ Սունդուկյանի «Պեպոն», մյուսը՝ 90-ական թվականների քնարերգությունը: Առանց վարանելու ընտրեցի երկրորդը, մտածելով, որ Ալ. Սատուրյանը հեշտ հեղինակ է, Հովհ. Հովհան-

նիսյանի և Ավ. Իսահակյանի քնարերգությունը սիրում էի և անգիր գիտեի, իսկ շորրորդը՝ Թումանյան. հայրիկն է, ի՞նչ կա որ: Իհարկե, գիտեմ, հեշտ կլինի:

Ու... սկսեցի գրել:

Ալ. Մատուրյանը հեշտ անցա, չովհ. Չովհաննիսյանին նույնպես, բայց երբ հասա Թումանյանին՝ դժվարացա, չէի կարողանում ամբողջացնել, ամփոփել...

Քննության ժամանակից անցել էր 3 ժամ, մնացել էր 2 ժամ: Դասատուս նկատեց իմ երեքումները, դժվարությունները:

Թեման թողի կիսատ և անցա Սունդուկյանի «Պեպոյին»...

Իհարկե, նոր թեման էլ չավարտեցի, երկուսն էլ մնացին կիսատ, և ես այդ օրը 4 ստացա, ես, որ տարվա ընթացքում գրավորից առաջիններից էի:

Եկա տուն, հայրիկին պատմեցի, թե ջո պատճառով գնա-հատականս իջավ: Հայրիկը ծիծաղեց ու ասաց՝ «Բա դու կարծում ես, որ տանը ձեզ հետ կատակներ, մասխարություններ եմ անում, հայրիկդ եմ, քննության ժամանակ էլ հայրիկդ կլինեմ ու հե՞շտ կլինի...»:

⊙

Չորրորդ դասարանումն էի, դպրոցական երեկույթի էինք պատրաստվում: Ես էլ որևէ բանաստեղծություն պիտի արտասանեի: Եկա տուն, հայրիկից խորհուրդ հարցրի, թե ի՞նչ արտասանեմ. նա թե՛ Պեշիկթաշլյանից «Մուլթ է գիշերս, ինչպես սիրոս ալ...» կամ՝ «Մ՛հ, ի՞նչ անուշ և ինչպես զով...», իսկ իրենից՝ խորհուրդ տվեց «Հայոց լեռներում» և «Բնկերիս» բանաստեղծությունները: Այս վերջինը Մուշեղն անգիր էր արել և միշտ արտասանում էր:

⊙

Բնագիտության դասատու Եղ. Զորյանի աղղեցության տակ բնագիտական գրքեր շատ էի կարդում: Հայրիկի գրադարա-

:20

նում տեսել էի բնագիտական գրքերի մեծ, հաստափոր հատորներ՝ գեղեցիկ նկարներով, շքեղ կազմով:

Առն Շանթը մի օր, երբ հյուր էր եկել մեզ մոտ, տեսավ .իրեմի գիրքը կարդալիս՝ խորհուրդ տվեց գիտական գրքեր քիչ կարդալ, այլ ավելի՝ գեղարվեստական երկեր: Ծաշակ պարզացնելու համար խորհուրդ տվեց կարդալ Շիլլեր, Դիկ-կինս, Վալտեր Սկոտ, Ժյուլ Վեռն:

⊙

Արտիկը, որ յոթ-ութ տարեկան էր, նկարչական շնորհք տվեց: Հիշում եմ, դեռ Վերնատանն էինք ապրում, սովորա-թղթի վրա կիպարիսների շարք էր նկարել, հայրիկի անվա-նակոչության օրը՝ հունվարի 14-ին նվիրեց նրան: Հայրիկը հուզված էր: Շատ հավանեց, դրեց գրասեղանին, թանաքա-մանի մոտ. նայում էր, ուրախանում:

⊙

Ամառային արձակուրդները լավ անցկացնելու զանազան խորհուրդներ էր տալիս և շատ ջանք էր դնում պայմաններ ստեղծելու համար:

Չունիսի սկզբից երկու-երեք ամսով մեզ ուղարկում էր ամառանոց, հատկապես իր ծննդավայրը՝ Դսեղ: Եթե ինքը մեզ հետ չէր լինում, նամակներ էր գրում և խորհուրդներ տալիս, որ ամառանոցում և՛ բնությունից օգտվենք, և՛ շրջապատի մարդկանց հետ լինենք:

Առաջին խորհուրդն այն էր, որ գյուղում շարունակ դուրսը լինենք, բնության գրկում, ազատ և մաքուր օդում խաղանք: Արասթումանից գրում էր. «Ամառը մարդ պետք է խաղաղ ապրի ու կազդուրվի: Ամենից թանկը առողջությունն է: Աշխատեցեք լավ առողջանալ»:

Ապա խորհուրդ էր տալիս, որ գյուղացիների հետ զրույց անենք, լսենք նրանց խոսքը, գյուղական ոճով ու դարձվածք-ներով հարստացնենք մեր լեզուն:

Ապա գրում էր և խորհուրդ տալիս, որ ամեն մեկս մեզ

21

համար հիշատակարան պահենք և մեր տպավորությունները կյանքից ու կարողացած գրքերից ամեն օր գրի առնենք: 1901 թվականին Ուրավելից գրում էր. «Միրելի Մուշեղ, Աշխեն, և Նվարդ, Ձեր հիշատակարաններն այնքան կարճ են, որ ավելի շուտ մոռացարաններ են, քան թե հիշատակարաններ: Ամենից լավը Նունիկինն էր, որ կորել է... ես երևակայում եմ, թե ինչքան բաներ կային մեզը գրած: Դուք հիշատակարան գրել չգիտեք: Որ գնում եք մի տեղ— նայեցեք, թե ինչն է ամենից ավելի ձեր ուշադրությունը գրավում, մարդիկ, բնությունը, բնության ինչ տեսակ լինելը, մարդկանց ինչ տեսակ կյանքը— մի խոսքով ամեն բան, ինչ որ ձեզ վրա տպավորություն է անում— ուրախ թե տխուր— ամեն բան պետք է նշանակեք: Նրանից հետո ինչ է պատահում ձեզ հետ, ինչ է պատահում ձեր մոտիկ շրջանում— մեր տանը՝ ամեն բան: Իհարկե, մի որոշ կարգով: Բնությունը— ժողովուրդը, նրանց կերպարանքը, ապրուստը, ձեր կարծիքը այդ բոլորի մասին, ձեզ հետ պատահած ու ձեր մոտիկների պատահած դեպքերը: Այսպես, կգրեք ու կուղարկեք ամեն շաբաթ հերթով, ամեն մեկը մի օր: Բայց իրարից չգողանաք— երբ որ կգրեք, հետո սևագրությունը կկարդաք, որ իրար նման չգրեք...»:



Նրբ ամառները Դսեղում մեզ հետ էր լինում՝ տանում էր մոտակա աղբյուրները, իր մանկության վայրերը, հնություններն էր ցույց տալիս կամ որսի էր տանում և խոսում թռչունների, կենդանիների կյանքից: Իսկ հետագայում, երբ ուրիշ ամառանոցներ էինք գնում՝ Բորժոմ, Ցագվեր, Կոջոր, Պյատիգորսկ և այլն, մեզ համար գնում էր զանազան խաղեր՝ կրոկետ, սերսո, մեծ գնդակներ, պարան և այլն, իսկ տանը խաղալու համար տեսակ-տեսակ լոտոններ: Ի դեպ, կրոկետը մեր սիրած խաղերից էր. հայրիկն էլ հաճախ խաղում էր մեզ հետ ու քանի որ լավ նշան դնող էր, դիպուկ խփող՝ տանում էր խաղը ու երբեմն ասում կատակով՝ Ի՞նչ կտաք, որ էս անգամ տարվեմ:

Գյուղում, տան առջևի պարտեզում պես-պես ծաղիկներ էինք ցանում, նաև՝ բանջարեղեն, կանաչեղեն, մարգերը մաքրում էլինք, մշակում, խնամում:



Ի՞նչ հարազատ բույր ունեն դաղձն ու ուրցը: Դրանք հիշեցնում են մեր գյուղը, մեր սարերը, մանկության օրերը: Հայրիկի սիրած բույսերն էին: Դաղձը հիշեցնում էր մեր աղբյուրները՝ առվակը և հատկապես ս. Գրիգորի աղբյուրը, երբ վաղ գարնանը արևին ձորն էինք իջնում, ջրի ակերին թարմ ու բուրավետ դաղձ քաղում և ուտում: Իսկ ուրցը հիշեցնում է մեր Դիղը¹, երբ իրիկունները հովին, հայրիկի հետ բարձրանում էինք Դիղը, ծաղիկներ քաղում, արտույտներին, ծրղրիղներին լսում, ուրցի փնջեր կապում, նրա սուր ու դուրեկան հոտն առնում, իսկ հայրիկը խոսում էր ուրցի, դաղձի, մասուրի բուժիչ հատկությունների մասին:

Չեմ կարողանում մոռանալ ամառվա այն օրերը, որ անցեմ կացրել մերոնց հետ գյուղում՝ մեր հանդերում, մեր սարերում ու ձորերում:

Ի՞նչ սքանչելի ժամեր էին, ի՞նչ պայծառ ու անհոգ օրեր, անդառնալի, անվերադարձ, չքնաղ օրեր...

Երեխաներ էինք, ազատ ամեն հոգսից ու նեղությունից: Նանր ասրումն էր լինում. ամեն կիրակի մեզ համար քամած մածոն էր ուղարկում, թարմ կարագ ու արածան, ալանի ճիլ պանիր, իսկ տոներին՝ ազդակ (թխվածք)՝ ու բաղաբլի:

Հորեղբայրներս միշտ դուրսն էին լինում: Տանն ամեն ինչ կար: Հարսերը տան գործն էին անում: Առավոտը վաղ և երեկոյան հովին, կժերն ուսած, աղբյուրն էին գնում ջրի, մենք էլ նրանց հետ վազում էինք աղբյուրը: Մայրիկը միշտ տանն էր մնում, փոքր երեխաների հետ: Մայրիկը, որպես տան մեծ հարսը, ճաշ եփողն էր, եկող գնացողին ընդունողը:

Բանջարեղենն էլ առատ էր: Ամեն ամառ հայրիկը մեզ համար զանազան տեսակի ծաղիկների, կանաչեղենի, բան-

¹ Իլուր Դսեղի մոտակայքում

չարեղենի սերմեր էր գնում, որ գյուղի տան պարտեզում ցանենք ու մշակենք: Ցանում էինք համեմ, կտեմ, բողկ, զանազան ծաղիկներ: Մարզերի միջով հոսում էր մի բարակ առու: Ամառվա շոգ օրերին սալորի ծառերի տակ պառկում էինք ու կարդում:

Աշակերտական տարիներս՝ մինչև 1910—1912 թվականները, մենք ամառներն անց էինք կացնում գյուղում և համարյա միշտ առանց հայրիկի: Մեր տան նյութական դրությունը այդ տարիներին լավ չէր: Ամառանոցի վարձը թանկ էր, հայրիկը բուժվում էր Աբասթումանում, Մանգլիսում¹, Ուրավելում կամ Ստեփան Լիսիցյանի² հետ աշխատում էր «Լուսաբեր» դասագրքի վրա: Մեզ հետ չէր, բայց շարունակ նամակներ էր գրում և խորհուրդներ տալիս՝ ինչպե՞ս անցկացնենք ամառը, ինչպե՞ս օգտվենք բնությունից, ի՞նչ կարգանք և ինչպե՞ս կարգանք, ինչպե՞ս գրենք մեր հիշատակարանները:

Բայց, իհարկե, ինչպես միշտ, ամենից առաջ, նույնիսկ հեռվից, մտահոգված էր մեր առողջությունը: Մայրիկին գրած բոլոր նամակներն այդ բովանդակությունն ունեին՝ երեխաներին լավ խնամելու և պահելու:

Ամառները, երբ գյուղ էինք գնում ծղոտե գլխարկներով, գյուղացիներն ասում էին՝

— Տղե՛րք, էրեխեքը մոշամաննի են բերել:

Գսեղի հանդերը հարուստ են զանազան գույնի ու բույրի ծաղիկներով, հագեցած ծղրիղների երգով, թռչունների ծլվլուցով: Հանդերն առանձնապես բուրումնալի են խոտհնձի ժամանակ: Իրիկնադեմին խոտի բլուրներին թինկը տված հրնձվորների հետ նստում էինք գրուցի:

Գարնան թարմությունը, բնության դարթոնքը ոչ մի տեղ այնպես չեմ զգացել, այնպես լիաթոք չեմ շնչել, ինչպես Լոռի 1906 թ. ապրիլ ամսին, երբ հայ-թուրքական ընդհանրության ժամանակ հայրիկի հետ ամբողջ ընտանիքով մնա-

լինք գյուղում: Մի տարի, գուցե և ավելի: Այդ ժամանակ մենք մոտիկից ծանոթացանք գյուղի կյանքին ու կենցաղին:

1905 թ. աշնանը նոր էինք գնացել գյուղ. հայրիկի փոքր քրոջ՝ Աստղիկի հարսանիքն էր. գուռնա դհուղով, ձիավորներով մեր գյուղից հարսին տարան Չորագյուղ:

Գյուղի հարսն ու աղջիկների հետ մասնակցում էինք բոլոր տոներին: Տարեմուտի երեկոյի պատրաստություններին՝ ձեթով բիշի առաջին հերթին, որ ուտում էինք մեղրով (հայրիկը դա շատ էր սիրում), Բարեկենդանի օրերի խաղերին, ծաղկազարդի օրը ճրոխներով ու ուտի ճյուղերով եկեղեցուց որևէ տուն գնալուն, Զատիկի օրը կարմիր ձու ներկելուն, չամիչով հաց թխելուն և այլն, և այլն: Մասնակցում էինք վիճակ հանելուն Համբարձման տոնին: Գիշերը հարևանների հետ գնացինք մոտիկ աղբյուրը ջուր բերելու, ճանապարհին անխոս եկանք տուն, մյուս օրը հանդից բերած մեր ծաղիկներից վիճակ հանեցինք:



«Մովեր» կոչված հանդամասը գտնվում է գյուղից երեք փլումետր հեռավորության վրա: Քիչ հեռու Չխալի թաղայի խոտհարքն է, իսկ «Մովերի» գլխին՝ կա մի աղբյուր:

Վարդավառի օրն էր. ծաղիկի, ջրի տոնը:

Առավոտը իրար վրա ջուր ցանելուց հետո, ամբողջ օրն անցկացրինք «Մովերում»: Սալի մեջ դրինք ուտելիք, խալիներ, մութաքաներ, տան մեծերին փոքրիկ երեխաների հետ, իսկ մենք գնացինք ոտքով:

Երբ գետակն անցանք, մի կողմից նոր փթթած շքեղ ուռիներն էին, մյուս կողմից նոր ծաղկած տանձենիներն ու խնձորենիները: Մառերի սպիտակ ու վարդագույն թերթիկները մեղմ դեփյուռի հետ թափվում էին կանաչ մարգագետնի վրա՝ ստեղծելով հեթաթային գեղեցիկ պատկեր, որ հիշողությանս մեջ մնացել է անմոռաց:

«Մովեր» ասվածը եղեգնուտով շրջապատված երկու լիճ է՝ մեծ և փոքր, խիտ անտառի մեջտեղը. անտառի ծառերը լիրենց ստվերը գցում են ջրի մեջ:

¹ ամառանոցային վայրեր վրաստանում

² Լիսիցյան Ստեփան— բանասեր և մանկավարժ, «Հասկեր» մանկական հանդեսի խմբագիրը

Մի ամառվա շոգ օր որոշեցինք գնալ Չաղի ձորը: Մոտակա վայրերում եղել էինք արդեն: Գյուղում լինելիս ամենից անաչ գնում էինք մեր սիրած Քարի գլուխը, Գրդի ուսը, Առվակը՝ հայրիկի սիրած վայրերը, ուր նա անց է կացրել իր մանկութունը, իր կյանքի անհոգ օրերը:

Եղել էինք «Մովերում», Տան տակի ձորում, Չխալի թափում, ս. Գրիգորի ձորում, մեր սիրած ջրաղացում:

Հայրիկն իր նամակներում էլ մեզ միշտ գրում էր, հիշեցնում՝ ամառը նրա համար է, որ մարդիկ բնության մեջ լինեն և ժողովրդի հետ մտախիտ շփվեն:

Չաղի ձորը բավական հեռու է, գյուղից 10—12 կիլոմետր հեռավորության վրա: Մեր կալի մոտով, Դըղի փեշերով անցանք, ինչպես գյուղացիներն են ասում՝ ամբողջ Դուղը, գյուղի լայնատարած մեծ դաշտը, հասանք Ագոավի վանքը, ապա՝ ս. Գրիգորի ձորը և իջանք Չաղի ձոր: Սա մի անտառապատ ձոր է, որի միջով անցնում է համեղ ձկնորս Քարուստ գետը:

Ասենք, Չաղի ձորում ամեն ինչ համեղ է՝ և՛ ձուկը, և՛ վարունգը, և՛ միրգը, և՛ մեղրը, ամեն, ամեն բան: Կեռն որ մեկ անգամ էր անցել այդ ձորով և վարունգ կերել, ասում էր՝ «կաթնահամ վարունգներ»:

Չաղի ձորումն էր ապրում մեր բիճա Մելքոնանց Մելիքը՝ իր կնոջ՝ Սիրամարգի հետ, որին մենք Սիրամարգ հոբիթ էինք ասում: Հայրիկի հետ նրանք մանկուց թույր ու եղբայր էին դարձել:

Գնացինք դեպի Մելիքի դպիհն: Սիրամարգ հոբիթը դափի առաջին բանջարանոցն էր վարում ու վարունգ քաղում: Մեք որ տեսավ, ուրախացավ.

— Հոբիթը ձեզ մատաղ, էդ ի՞նչ լսով բան եք արել, որ մեզ միտներդ եք գցել... — ասաց, գրկեց, համբուրեց բոլորիս: Թաշկինակը հանեց, աչքերը սրբեց ու հարցրեց.

— Օհանեղը ո՞նց ա, բա խի՞ Օլես էլ չեկավ...

Մեր աղմուկի վրա դափից դուրս եկավ Մելիք բիճեն՝ շիբուխը ձեռին.

— Ա՛յ բարով եք եկել, հազա՛ր բարին:

Ասաց, նստեց դափի մոտ, քարին, հնամաշ արխալուղի գրպանից հանեց թութունի քիսան, լցրեց շիբուխը, կայծքարը հանեց սկսեց խփել, որ շիբուխը վառի.

— Ա՛յ կնիկ, կրակը թեժ արա, սիմինդ խորովենք ըրեսանց համար, ես էլ գնամ մեղր հանեմ:

Այստեղ էր և Սաբնանց Գևոն՝ Խուբին, հայտնի ստախուր: Սա մի քանի ուրիշների հետ գնաց ձուկ բռնելու: Շատ ժամանակ չէր անցել, երբ Խուբին ձկները ճիպոտի վրա շարած բերեց, խաշեց, փռեց թարմ կանաչ տերևների վրա: Հոբիթը վարունգ բերեց, Մելիք բիճեն՝ մեղր:

Այդ օրը հիշողությանս մեջ մնացել է անջնջելի:

Շատ էի սիրում մեր գյուղը խոտհնձի օրերին:

Խոտհնձի ժամանակ դաշտը հաճելի է և դուրեկան հատկապես երեկոյան դեմ, երբ փոցխով հավաքում էինք խոտը, գիղում և, հենվելով խոտի դեզերին, պառկում էինք վերջալույսի շողերի տակ: Դաշտում մնում էինք միջև ու երեկո, վայելում բուրալի օդը, լուսնունը, ջինջ երկինքը...

Խոտհնձի օրերը կյանքիս ամենալավ, ամենահաճելի օրերն են եղել, և ամեն անգամ ամառը հուլիս ամսին կարոտով եմ հիշում մեր հանդերն ու դաշտերը, մեր ծաղկաշատ դաշտերը, ուր ծղրիղներն են երգում, թռչունները թփից թուփ թռչում, թիթեռները՝ ծաղկից ծաղկի, մեղունները բլրաբլում... Դըղի կողմից փշում է ուրցի ու անանուխի հոտով հագեցած դուրեկան հովը...

Ուշ երեկոյան Քարի գլխով վերադառնում էինք տուն: Քարի գլխին, գեղեցիկ տեսարանների դեմը նստում էինք ժայռի վրա, լսում Դեբեղի վըշշոցը ու սպասում գնացքի երևալուն. գնացքը գալիս էր զիլ ու խոր արձագանքվող սուլոցով, գալիս էր թունելների միջով, օձապտույտ ճանապարհով, Դեբեղի ափով, ետևից թողնելով օղակ-օղակ ցրվող ծուխը ծառերի վրա, հանգող սուլոցի հետ միասին, ապա Դե-

բեղի ափին մի անգամ էլ հայտնվում և անհետանում ժայռերի ետևը...

Ի՞նչ թանկ հուշեր են կապված գնացքի սուլոցի, նրա ձայնի հետ: —



Հիշում եմ Լոռին, Լոռու մեր ձորը, Դեբեդը, մանկության օրերը, երբ հայրիկի հետ իրիկնադեմին բարձրանում էինք Դեբեդ և ուշ երեկոյան Դեղի գլխից արտերի միջակներով իջնում էինք ձորը և սպասում գնացքի երևալուն: Գնացքը գալիս էր, ձորը դղրդացնում ու հեռանում ու նորից մնում էր Դեբեդի խուլ վըշշոցը...

Չխալի թալաշի խոտհարքը հայրիկի սիրած վայրերից էր: Արտիկի ու Համլիկի հետ որսորդական հրացաններն ուսած գնում էին թուռններ որսալու կամ ուղղակի նշան դնելու:

Խոտհնձի ժամանակ հայրիկը սիրում էր հնձվորների հետ պուրցել:

Երբեմն էլ գնում էինք Կոթի փոսը՝ մի փոքրիկ ձորակ, ուր լավ աղբյուր կար: Գնում էինք Կոթի փոսը մոտ, մոշ կամ մասուր հավաքելու:



Մեր գյուղի և առհասարակ Լոռու նշանավոր հուշարձաններից է ս. Գրիգորի վանքը: Թեև կիսակործան, համարյա ավերակ է արդեն, պատերն են միայն կանգուն մնացել, բայց այդ վիճակում էլ մեծ տպավորություն է թողնում իր կամարներով, դեղեցիկ քանդակներով և արձանազրույթյուններով:

Ս. Գրիգորի վանքը գտնվում է ձորի մեջ, մի հարթ տեղ, սառն աղբյուրի մոտ, այդ պատճառով ձորն էլ, աղբյուրն էլ կոչվում են սուրբ Գրիգորի ձոր ու աղբյուր: Վանքը դեռ մանուկ օրերից հայրիկի սիրած վայրն էր, ուր շատ է եղել ընկերների հետ՝ խաղալու և աղբրի սառը ջուրը խմելու:

Հետագայում, երբ ամառները հայրիկի մոտ հյուր էին գալիս, առաջին լրբոսանքը կատարվում էր դեպի ս. Գրիգորի վանքը:



Մեր գյուղի շրջակա վայրերից ամենատպավորիչը, երկի-այն խոր ձորն է, որի միջով հոսում է Դեբեդը և նրան զուգահեռ սուրում է գնացքը: Դա գյուղի ամենամոտ ձորն է, ուստի և կոչվում է «Տան տակի ձոր»: Լեռն այդ ձորը կոչում էր «Անուշի ձոր»: Պատմական է այդ ձորը, որովհետև հարուստ է հին հուշարձաններով, ավելի ճիշտ՝ հուշարձանների հետքերով. շատ բան ավերվել է, քանդվել: Այդ ձորումն է գտնվել մեր տոհմի ընկուզենիների պատմական այգին և ջրաղացը:

Այժմ այդ բոլորից մնացել է միայն մի ընկուզենի, զրույց և հուշ: Ասում են, այնքան հաստ են եղել ընկուզենիները, որ երկու տղամարդ շեն կարողացել զրկել, այնքան շատ է եղել ընկուզը, որ փռել են կալով մեկ: Գինու կարասների հետքեր են մնացել, խաղողի այգու վազեր, թթի, դեղձի ծառեր: Մնացել է ընտիր հոնի մի ծառ, որ, ասում են, Թումանյանի տատի սիրած ծառն է եղել:

Ամեն անգամ, երբ անցնում ենք այդ ձորով, հիշում եմ «Լոռեցի Սաքոյի» առաջին տողերը.

Էս տախտի վըրա աղոթում մի վանք,
էն ժայռի գըլխին հըսկում է մի բերդ,
Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք,
Բուի կըռնչն է տարածվում մերթ-մերթ,
Իսկ քարի գըլխից, լուռ, մարդու նրման
Նայում է ձորին մի հին խաշարձան...

Ճիշտ այդպես:

Չորի ամենազրույթը տեղերը տախտերն են՝ կանաչ, հարթ, խոտառատ ու ծաղկավետ, որ ձգում են դեպի իրենց, իրենց դիրկը, հանգիստ առնելու թարմ խոտերի վրա, նայելու դիմացի ժայռերին, լեռներին ու լսելու Դեբեդի վըշշոցը... Հայրիկի սիրած տախտերը...

Ի՞նչ թանկ հուշեր կան կապված Տան տակի ձորի հետ՝ մանկուց, մանկության օրերի հետ կապված: Հիշում եմ աշակերտական տարիների օրերս, ջահել օրերս: Օսան հոքրի հետ երեկոները ձորն էինք իջնում՝ իր երկու այծն ու ուլը գտնե-

չու, տուն բերելու: Քարից քար էինք թռչում, ժայռից ժայռ, ձեռքերին կանգնում, կանչում:

Օսան հոքիրը ուրախ բնավորությամբ ունեւր, շնայած իր կյանքի ձախորդ հանգամանքներին, իր տարիքին ու նյութական նեղ դրուձյանը:

Առավոտը վաղ նրա երեխաները՝ Օնիկն ու Անդրանիկը, այծերին տանում էին այդ մոտակա ձորն անում, իսկ երեկոյան դեմ հորաքույրս գալիս էր մեր տուն, ինձ և քրոջս վերցնում տանում Տան տակի ձորը այծերը տուն բերելու:

Իսկ երբ երևում էր դնացքը, Օսան հոքիրը սկսում էր երգել:

Ա՛յ մաշինա՛, մաշինա՛,
Քառսուն վազոն բաշում ա.
Մաշինեն թա՛րս ա գնում,
Իմ յարը Ղա՛րս ա բնում...

Ու վերջն էլ կանչում էր՝ «Բա մեր Տիգրանին տեսն՞ւյ չես...»:

Տիգրանը նրա ամուսինն էր, դարսեցի և, որովհետև գյուղում աշխատանք չունեւր, միշտ տանից տեղից կտրված՝ թափառում էր և գնում Ղարս, քրոջ տունը:

Օսան հոքիրը իր տունը՝ շորս երեխաներին այդ երկու այծի կաթով էր պահում. դա էր նրա ապրուստը: Կաթ, պանիր, կաթնապուր, — ամեն ինչ այդ երկու այծի կաթից էր պատրաստում և անտրտունջ պահում իր տունը: Ժողովուրդն ասում է «է՛ծը քյասիբի կովն է», դա մեր Օսան հոքիրի համար է ասված:

Հյուրասեր էր, լայնասիրտ, ղվարթ, երգասեր: Սիրում էր երգել ժողովրդական երգեր, որոնցից մեկը՝ «Մաճկալ ես, բեղարած ես...» աշակերտական տարիների սիրած երգերից մեկն էր: Եվ ուրիշ երգեր, դարձյալ Իսահակյանի տեքստերով՝ «Միրեցի, յարս տարան...», «Դարգս լացեք, սարի սմբուլ...», «Որսկան ախպեր»:

Օսան հոքիրը հայրիկի մեծ քույրն էր: Իր եղբոր նման բարձրահասակ, նիհար, վաղ ճերմակած: Ապրում էր մեծ ու խոնավ օդայի մեջ: Չնայած իր կյանքի նեղ պայմաններին,

նա մինչև վերջ էլ մնաց կենսուրախ, շվհատվող, կատակասեր: Մեղ համար դանադան խաղեր էր անում, շատ էր սիրում մեղ և նրա մշտական խոսքն էր.

— Հոքի՛րը ձեզ մատաղ...

Մենք գյուղում մշտապես վայելում էինք մեր հորաքույրերի ջերմ, սիրառատ վերաբերմունքը:

Ամենից շատ սիրում էի հայրիկի երկրորդ քրոջը՝ Իսկուհուն: Հայրիկն էլ, կարծեմ, նրան շատ էր հավանում: Բանաստեղծական խառնվածք ուներ Իսկուհի հոքիրը, բնավորությամբ էլ նուրբ, ղգայուն կին էր: Թեև անգրագետ, սսենք, երեք քույրերն էլ անգրագետ էին (մայրը դեմ է եղել նրանց ղպրոց տալուն), բայց կարծես թե գրականություն գիտեր, կարղացած կին էր: Երբեմն ասում էր.

— Նվա՛րդ ջան, հլա Շեքսպիրի «Օթելլոն» կարղա ինձ համար:

Կամ Տոլստոյից էր հարցնում: Խոսելիս էլ՝ միշտ հանգիստով էր խոսում: Դարգոտ կին էր: Ամուսնությունն անհաջող է եղել, հակառակ իր ցանկությունը, մի հարուստ ընտանիքի հարս են տվել և ամբողջ կյանքում ճնշել, պահել են փակ, տան աշխատանքի ծանրության տակ նրան կորացրել, ձեռացրել:

Երբ խոսում էր իր ծանր ու ղծվար անցած կյանքից, քառյակներ ու բայաթիներ էր, որ ասում էր.

Իմ կյանքը լուռ անց կացավ,
Սերերս գուր անց կացան,
Հարյուր տարվա կյանք ունեի—
Մի ժամվա հյուր անց կացա:

— Իմ թեկն թե չէր հասնի, մեր տունը ինձ ճղնակոտոր, թեկաթնափ արեց...



Դսեղ էինք: Ամառվա մի շոգ օր հայրիկի հետ գնացինք՝ բեռի Սիմոնի մեղվանոցը, որ գտնվում էր Չաղի ձորից բարձր՝ քարածայռերի ստակ:

Դրդի ուսով պնացինք, արտերի միջնակներով դուրս եկանք լայն ճանապարհ, իջանք դեպի ս. Գրիգորի ձորը, թեքվեցինք դեպի աջ՝ Սիրուն խաչի ձորը, մոտ մեկ կիլոմետր անցանք ստվերախիտ ծառերի միջով:

Մմալի և հողի թարմ, խոնավ բույրը զովացնում ու զվարթացնում էր մեզ: Հայրիկը շատ էր սիրում ծմակ տեղերի, խիտ անտառների ստվերը և այդ տեղերին հատուկ տերևների խոնավ բուրմունքը, որն առանձնապես դուրեկան էր Դրդի դաշտի շոգից ու վառ արևից հետո: Մենք անցնում էինք ծառերի տակ թափված խաշամի՝ լոր տերևների վրայով: Տեղտեղ ընկած էին փտած մամուռապատ ծառեր, բարակ ջուր էր հոսում դրանց տակով:

Քեռի Սիմոնն իր մեղվանոցումն էր: Հայրիկին որ տեսավ, շատ ուրախացավ:

— Ուհանե՛ղ ջան, ա՛յ բարով, հաղա՛ր բարին, բաղըս բեղ փեշքե՛շ...

Դեղին սալորի լավ հասած ծամանակն էր: Գյուղացիները դրան դամբիլ են ասում: Քեռի Սիմոնի այգին հարուստ էր պտղատու ծառերով, իսկ այգու մուտքի մոտ ճյուղերը տարածած մի մեծ ընկուզենի կար:

— Արի՛, Ուհանե՛ղ ջան, էս կակալի շվաքում նստի, դընջացի, ես էլ էս հասած դամբիքերը շղահարեմ, մի քիչ դամբիլ կեր:

Ասաց քեռի Սիմոնը, գնաց մի հին, մաշված կարպետի կտոր բերեց, փռեց ծառի տակին ու սալորի ծառը թափ տվեց:

Քեռի Սիմոնը պյուղի ծերապետն էր: Հայրիկը սիրում էր նրա հետ զրուցել, հարց ու փորձ անել նրա կյանքից, տանուտերության շրջանից:

— Քեռի՛, բա էն ո՞նց եղավ էն տարի ճանճանոցի կրակ տալը, — հարցրեց հայրիկը, — դու էլ դատարան արիր, մի պատմի՛ր, տեսնենք:

Քեռի Սիմոնը խուսափելու համար, ըստ երևույթին, ասաց.

— Ուհանե՛ղ ջան, դու հլա էդ դամբիլը կեր, ես գնամ բեղ հըմար մեղր կտրեմ, բերեմ, տես ի՞նչ մեղր ունեմ: Զրկեցը եղնա կանենք:

Ասաց ու գնաց: Քիչ հետո եկավ ձեռին մի մեծ բաղիա

(պղնձե խոր աման), մեջը մի քանի հաց մեղր: Նա մեղունեքը պահում էր քարանձավներում՝ երկարավուն գործված կողովածե ամանների մեջ (գյուղում դեռևս մուտք չէր գործել փայտե փեթակը):

Աղբրի մոտ նստեցինք, նախաճաշեցինք: Հայրիկը գրպանից հանեց իր ճամփորդական ջրի բաժակը՝ արծաթադուլն, ծալովի կլոր տուփի մեջ: Այդ բաժակը հայրիկն ամառները միշտ գրպանն էր պահում, իբրև անհատական աղբյուրների մոտով անցնելիս, գրպանից հանում էր, ջուր խմում այդ բաժակով և ուրիշներին հյուրասիրում:

Նախաճաշից հետո ծառերի տակ թինկը տվեցինք մուխաքաներին, քեռի Սիմոնն էլ նստեց մեր դեմը մի մեծ քարի վրա, գրպանից հանեց թուփունի հնամաշ քսակը, իր երկար չիբուխը լցրեց, շախմատին տվեց, չիբուխը վառեց ու սկսեց իր զրույցը:



1906 թվի ամառն էր: Նոր էին վերջացել հայրիկի շրջադաշտթյունները Լոռու և Ղազախի շրջաններում: Կյանքը խաղաղվել էր: Ամեն ինչ ընթանում էր իր հունով: Մենք ապրում էինք ամառանոցային կյանքով:

Վարդավառի օրերն էին: Մեզ հյուր էր եկել Հակոբ Մանանդյանը կնոջ ու քրոջ հետ, Ալեքսյուլից էլ՝ Ավետիք Իսահակյանը՝ քրոջ հետ:

Ամառվա ջոգ օր էր: Հայրիկը, ինչպես միշտ, հյուրերին գյուղի պատմական հուշարձանները ցույց տալուց հետո, ամբողջ օրերով տանում էր իր սիրած մոտակա վայրերը. մի օր՝ ս. Գրիգորի վանքը, մյուս օրը՝ «Մովերը», հետո՝ Առվակը՝ իր սիրած կաթնաղբյուրից ջուր խմելու: Եվ ամեն տեղ խորոված անհողի, ուրախ ծամանակ անցկացնելով հյուրերին պահում էր իր մոտ:

Մի օր էլ որոշեցինք գնալ Բալա Գիքորի ջրաղացը՝ ձուկ բռնելու և մոռ ուտելու: Մոռի լավ ծամանակն էր. այդ ջրաղացի շրջակայքն էլ հայտնի էր իր մոտով:

Զրադացը գյուղից բավական հեռու էր՝ 5—6 կիլոմետր հեռավորության վրա, պատկանում էր գյուղի հարուստներից մեկին՝ Բալա Գիքորին, նրա անունով էլ ասում էին՝ «Բալա Գիքորի ջրաղաց»։ Զրադացը գտնվում էր «Մտվերից» այն կողմ, Մարց գյուղի մոտերը, Մարցա գետի՝ Բաբաջանի ափին։

Գյուղացիների աշխատանքի ամենահեռու շրջանն էր։ Մենք, խումբ-խումբ ցրված, անցնում էինք լայն ու ծաղկավետ դաշտի միջով։ Հասնելով ձորը, ստվերախիտ ծառերի տակ, աղբյուրի մոտ բոլորս միացանք հանգստանալու։ Հայրիկն իր հետաքրքիր դրույցով, պատմություններով ու առակներով համախմբում էր բոլորին, դբաղեցնում ու ղվարձացնում։ Իջանք ձորը, լսվում էր գետի վըշշոցը, քիչ հետո էլ լավից ջրաղացի աղմուկը. շոգից ու տոթից միանգամից դովացանք։ Նախաճաշից հետո խումբը ցրվեց։ Մեծերը՝ տղամարդիկ, կարթերը վերցրին գնացին գետափ ձուկ բռնելու և լողանալու, ավելի ջահելները հրացանները վերցրին գնացին որսի, կանաչք գնացին ջրաղացում ճաշ եփելու, իսկ մենք՝ փոքրերս, հայրիկի հետ գնացինք ջրաղացի մոտի այգին, բանջարանոցի մոտուտը։

Մոռուտը ջրաղացից շատ մոտ էր՝ 5—6 բուպեի ճանապարհ միայն։ Նոր էինք սկսել մոռ քաղելը, հանկարծ արևոտ, տոթ օրը փոխվեց, մթնեց, ամպերը կուտակվեցին, սկսվեց մեղմ անձրևը... Հայրիկը, որ լավ գիտեր իր հայրենիքը և Լոռու անձրևը, խորհուրդ տվեց մոռը թողնել և շտապ վերադառնալ ջրաղացը։ Մենք շտեղծեցինք, ագահաբար շարունակեցինք ուտել խոշոր հյութալի մոռը, երբ սկսվեց որոտն ու կայծակը։ Հայրիկը երկրորդ անգամ շտապեցրեց, մենք թողեցինք մոռուտը և շտապեցինք դեպի ջրաղացը։ Բայց ուշ էր արդեն. ընկանք կարկտախառն հորդ անձրևի տակ։ Անձրևն այնքան էր ուժեղ և մեր ընթացքին հակառակ սառը քամին՝ խիստ, որ դժվարությամբ էինք շնչում։ Մի քանի բուպետմ բուլբուլ թրջվեցինք... Մինչև հիմա շեմ կարողանում մոռանալ այդ օրվա հորդ անձրևը և մեր թրջվելը։

Զրադացում կրակ արինք մեր շորերը շորացնելու համար։

Եկան որսկանները, ձկնորսները, բոլորն էլ դատարկ ու թրջված, ո՛չ որս, ո՛չ ձուկ։

Այսպես մնացինք ջրաղացում մինչև ուշ երեկո։ Հորեղբայրս դնաց մոտակա Մարց գյուղը, ձիեր բերեց և ուշ գիշերը ձորից բարձրացանք, հասանք գյուղ։



Գյուղում ասում էին «Տեր-Թադևոսն անհաշիվ ու շոալս ապրող մարդ էր, հաշիվ պահել չգիտեր, պարտք էր տալիս ու մոռանում»։

Իր թաղման օրը գինի շունեինք,— պատմում էր հորեղբայրներիցս մեկը,— իմացանք, որ գյուղում մեկը գինի է բերել ծախելու։ Գնացինք առնելու, թե՛ բա չեք ասի, էս գինու փողը տերտերն է տվել։

Եղ առնելու համար մարդ ուղարկեցինք մի քարինջեցու մոտ, նա էլ թե՛ փողը տերտերից ենք առել, պարտքը մնացել է մեզ վրա, էն փողի հաշվում եզը տարեք։



Մի օր գնացինք Քարինջ գյուղի ջրաղացը։ Զրադացյանն ալյուր էր աղում։ Հայրիկը դրույցի բռնվեց հետը, հարց ու փորձ արեց, իմացավ, որ Քարինջում մի լավ «ղրից անող» կա Մակո անունով։ Մարդ ուղարկեց, Մակո բիձուն բերել տվեց, և ամբողջ օրը նա ասում էր, հայրիկը՝ գրում։



Գյուղի շվի ածողների համար հայրիկը Թիֆլիսից նվերներ էր բերում՝ գիրք, թուֆոն, արխալուղացու կամ ուղղակի փող էր տալիս և հյուրասիրում։ Հավաքում էր շվի ածողներին, պատմել էր տալիս իրենց կյանքը, հովվական եղանակներ պատմիրում։ Ամենից շատ սիրում էր շոբան Ակոփին և Ղըշի Մեկսակին (Աղաբեկյաններ)։ Առհասարակ հոգատարությամբ էր վարվում հեքիաթ ու առակ ասողների և աշուղների հետ։ Նվերներ էր տալիս, հյուրասիրում տանը թե դրսում։



Կենցաղում մեծ տեղ էր տալիս մարդանքին. առավոտը վաղ մաքուր օդում՝ պատշգամբում կամ բնության մեջ: Մարզանքի համար գնել էր սրոշ իրեր՝ մարդաքարեր:

Մի ժամանակ, երբ դեռ Բեհբության փողոցումն էինք ապրում, ինքն էլ մարմնամարդությամբ էր պարապում, մեզ էլ էր սովորեցնում, խորհուրդ տալիս: Թեև ոչ կանոնավոր, բայց զբաղվում էր: Ծվ միշտ օրինակ էր բերում անզլիացիներին, որ ծեր հասակում էլ զբաղվում են մարդանքով:

Կարևորություն էր տալիս ջրաբուժությանը՝ Կնեյսի¹ սիստեմին: Դնել էր բժշկ Պլատենի² երեք հատորը: Երեխաների հիվանդության ժամանակ օգտվում էր այդ հատորներից: Դսեղում դրանք մեր սեղանի գրքերն էին:

Հիշում եմ, Շուլավերում, ծանոթներից մեկի այգում ջրավազան և ցնցուղ սարքեց: Նույնն արավ 1915 թ. ամառը Տաբաթանեյում: Իսկ երբ մեկնում էինք ջրառատ ամառանոցները, ամեն օր գնում էր գետափ, լողալու տեղ պատրաստում:

Հայրիկը պատանի ժամանակ լավ որսորդ է եղել, լավ հրացանաձիգ, նշան խփող, քար գցող, լող տվող և արագ վազող:

Մեծ նշանակություն էր տալիս խաղին:

— Կյանքը, կենդանությունը, ուժեղ հոգին, առողջ սիրտը խաղով է արտահայտվում, — ասում էր նա:



Երեկոները, երբ մենք դաս էինք պատրաստում, հայրիկը հաճախ մեզ իր մոտ էր կանչում զրույցի և ասում կատակով.

— Դուք կարծում եք ձեր ուսուցիչները ինձանից լավ բաներ են սովորեցնելու...

¹ Կնեյս Սերասիան — գերմանացի կաթոլիկ հոգևորական, որը 1848 թ. հորինել է ջրաբուժության սեփական սիստեմ

² М. Платен. Новый способ лечения. Настольная книга для здоровых и больных. С.-Петербург, 1903 г.

Նա չէր բավականանում զրույցի ժամանակ բանավոր խորհուրդներով, որոշ մտքեր խոշոր տառերով գրել էր քարտերի վրա և փակցրել սեղանատան նկարների տակ, որպեսզի երեխաները կարդան ու հիշեն:

«Հազար վերստի ճամփան էլ մի քայլով է սկսվում» (Զինական առած),

«Քո սրտի մեջ է փայլում քո բախտի աստղը» (Շիլլեր),

«Առողջ մարմնի մեջ առողջ հոգի»,

«Կարգը մեծ ուժ է»,

«Մաքրությունը առողջության հիմքն է»:

Իր առանձնասենյակում, պատի վառարանի վերևում փակցրել էր այսպիսի խնդիրք.

Խնդրում եմ շփել

և

գիրք շխնդրել:

Չէր սիրում, երբ ծանոթները, նույնիսկ մտերիմ մարդիկ, իր գրադարանից գրքեր էին խնդրում: Դժվարությամբ էր մերժում, այդ պատճառով էլ իր խնդիրքը փակցրել էր պատին, որ իրեն անհարմար դրություն մեջ չդնեն, բայց և ստիպված էր լինում խախտել իր իսկ խնդիրքը:



Երբ փոքրիկ երեխաներ էինք, նոր տարու առիթով մեզ համար տոնածառ էին սարքում, բայց ոչ ամեն տարի. դա թանկ բավականություն էր: Մի քանի անգամ ենք սարքել: Առաջին անգամ տոնածառ տեսել ենք իշխանուհի Մարիամ Թումանյանի տանը: Մենք նրան ուղղակի իշխանուհի էինք ասում, այդպես էր ընդունված:

Հիշում եմ շքեղ խաղալիքներով, հարուստ, գույնզգույն մոմերով լուսավորված ու զարդարված մեծ տոնածառը, որ մենք տեսանք իշխանուհու տանը: Տոնածառի շուրջը խաղացինք «Մուկն ու կատուն», «Մեր ձաղուկը փոսում նստած», «Երկու փոքրիկ նապաստակ» և այլն: Հիշում եմ դանազան գույնի փոքրիկ պարկերով նվերներ, ապա թեյասեղանը՝

մեծերի և փոքրերի համար առանձին: Չեմ կարողանում մոռանալ եփած շագանակը, որից գոլորշի էր բարձրանում: Առաջին անգամն էինք ուտում աղով եփած համեղ շագանակներ: Մինչև հիմա էլ, երբ եփած շագանակ եմ տեսնում, հիշում եմ իշխանուհու տան շքեղ տոնածառը և առաջին շագանակները:

Նոր տարուն իշխանուհու տանը բարձր դասարանի աշակերտները ներկայացումներ էին տալիս. հիշում եմ «Ենչոյի թուղը»¹:



Նոր տարվա առիթով հայրիկը մեզ համար նվերներ էր գնում: Առավոտը վաղ մեզ կանչում էր իր սենյակը. մենք էլ հերթով, ըստ հասակի, կանգնում էինք ու սպասում «ձմեռ պապի» նվերներին: Հայրիկը բարձի տակից հանում էր ու նվերները բաժանում:

Մի նոր տարի հայրիկը մեզ համար գնել էր գունավոր պատկերազարդ, մեծադիր զրքեր. «Մոխրոտը», «Պատիկն ու ճստիկը», «Քնած գեղեցկուհին», «Կարմիր գլխարկը», «Կարենն ու Մանուկը», «Օթերոնի հրաշալի եղջյուրը»:

1905 թվականի հունվարի 1-ին, երբ դեռ ութը երեխա էինք², հայրիկը մեզ տոնածառի կանչեց մի փոքրիկ երգով՝ շորս տող ութ երեխայի անունից կաղմված.

Մուշիկ, Նուշիկ, Անուշիկ,
Աբտիկ, Համլիկ, Աբիուշիկ,
Աշխեն, Արեգ շուտ արեֆ,
Տոնածառը զարդարեֆ...

¹ հայտնի թատերագիր էմին Տեր-Գրիգորյանի վոզելը

² Հովհ. Քումանյանն ունեցել է տասը զավակ. Մուշեղ, Աշխեն, Նվարդ, Արտավազդ, Համլիկ, Անուշ, Աբիիկ, Արեգ, Սեդա, Քամար



Մեր տանն ընդունված չէր երեխաների ծննդյան կամ անվանակոչության օրը տոնելը, բայց հունվարի 14-ը՝ հայրիկի անվանակոչության օրը, միշտ տոնվում էր: Առավոտից հյուրեր էին գալիս՝ ընկերները, բարեկամները, տիկիներն ու օրիորդներ, և ապա երեկոյան՝ ընթրիք:

Հայրիկը, սովորաբար, մի որեէ իր գնելով նշանավորում էր այդ օրը՝ մրգի ափսեներ, դանակներ, թեյի բաժակներ, անձեռոցիկներ և այլն: Եվ հետո հիշում էինք, որ այսինչ իր՝ իր այսինչ թվականի անվանակոչության օրն է գնել:

Առաջին անգամ իր անվանակոչությունը տոնել է 1895 թվականին (որ հիշատակել է իր նամակներից մեկում):

Այդ օրերը երբեմն շատ բազմամարդ էին լինում: Այդպես էր 1911 թվականի հունվարի 14-ը: Քամադան Աղայանն էր: Նա բարձր տրամադրությամբ երգում էր «Քյորօղլին» և այլ երգեր՝ խմբով: Հիշում եմ ինչպես Գրիգոր Վարդանյանը՝ երգում էր «Ո՛հ, այն աղջիկն է Գոհարիկ...»² երգը: Այդ օրը քեֆ արին մինչև լույս, առավոտը՝ արեածագին, թեյ խմելուց հետո, խմբով, երգելով-պարելով իջան փողոց: Առաջինն Աղայանն էր սպիտակ անձեռոցիկն աջ ձեռքին բռնած՝ խաղով իջնում սանդուղքներով ու երգում.

Առավոտ լուս
Արեգակն արդար...



Մի օր տատս եկել էր Շուլավերից: Այնտեղից գալիս սովորաբար հետը խաշ էր բերում: Հետևյալ օրը, առավոտյան հայրիկը գնում է լվացվելու, հակառակի նման լողարանի սենյակը փակ է լինում, գնում է խոհանոց լվացվելու: Այս-

¹ Վարդանյան Գրիգոր— հասարակական գործիչ, հետագայում 204-ի հիմնադիրներից մեկը

² բանաստեղծությունը՝ Մկրտիչ Պեշիկթաշլյանի

տեղ տեսնում է, որ պլիտան վառվում է ու վրան էլ մի մեծ կաթսա: էլ չի հարցնում, թե ինչ է, ինչ չի, վճռում է, որ խաշ կլինի ու գնում է խմբագրատուն: Մենք էլ լվացքի ենք, լվացքի օրերը սովորաբար ավելի թեթև ճաշ էինք պատրաստում:

Մեկ էլ, ժամը 4-ի մոտերը, զանգը տալիս են ու ներս են գալիս Աղայանը, Լեոն, Շիրվանզադեն, Աղբալյանը և էլի ուրիշներ: Սկան ու նայում են մայրիկի զարմացած դեմքին, մայրիկն էլ նրանց: մայրիկը հարցնում է թե՛ ի՞նչ է պատահել, որ էդպես խմբով եկել եք: Աղայանը թե՛ ո՞նց թե ինչ, եկել ենք խաշ ուտելու: Բա՛ ի՞նչ խաշ, թե՛ Օհանեսը մեզ խաշի է հրավիրել, ինքն էլ էս է գալիս է:— Ի՞նչ խաշ, ի՞նչ բան,— զարմանում է մայրիկը,— մենք էսօր լվացքի ենք, իսկի կարգին ճաշ էլ չունենք...



Հայրիկը երեխաների անունները դնում էր հատուկ խնամքով:

Հիշում եմ, նորածին աղջկա Սեդա անունը գտնելու համար պատմական գրքեր էր նայում, և կարծեմ 16-րդ դարի իշխանուհու անուն է: Առաջին Սեդան քույրս եղավ: Լեոն Շանթին այդ անունը շատ դուր եկավ և նա էլ այդ անունով իր «Հին աստվածների» հերոսուհուն կնքեց:

Մեր անուններից երեքը Բաֆֆու «Սամվելից» է անված՝ Մուշեղ, Աշխեն, Նվարդ: Արեգի անունը դրել է Ղազարոս Աղայանը. հայրիկն Աղայանին գրել էր, թե մի երեխա էլ ավելանցավ, և ստացել պատասխան. թե աղջիկ է, անունը դիր Արեգնազան, թե տղա է՝ Արեգ:

Մյուս տղաների անունները՝ Արտավազդ և Համլիկ, հայրիկն իր գրամաներից էր վերցրել¹:

¹ Թումանյանի շղահասկանված գրամաներից երկուսն այդ անուններով են կոչվել



Հայրիկը շատ հոգատար էր տասը երեխաներից ամեն մեկի հանդեպ: Երբ մեկը հիվանդանում էր՝ մոտենում էր գրքուկում, գուրգուրում, տաքությունն իմանում, հետո հարցնում. «Սիրուն ջան, ի՞նչ էս ուզում, որ բերեմ...»: Երբ ասում էինք՝ ոչինչ, բացականշում էր. «Պա՛հ, էդ ինչ դժվար բան ուղեցիր, էս ոչինչը ո՞րտեղից գտնեմ...»:

Գնում էր և վերադարձին հետը բերում էր նարինջ, Գանձակի խաղող կամ խնձոր: Սովորաբար դա ձմեռն էր լինում, երբ հիվանդանում էինք անդինայով: Իսկ առհասարակ քիչ էինք հիվանդանում:



Զրույցի ժամերին, երբ խոսում էր աշխատանքի, գործի դժվարությունները հաղթահարելու մասին, ոգեշնչված օրինակ էր բերում իր սիրած հերոսին՝ «Հաղարան բըլբուլի» Արեգին, նրան, որ իր նպատակին հասնելու՝ գազանը մարդ դարձնելու համար իր ճանապարհին անասելի դժվարությունների է հանդիպել և կամքի ուժով հաղթահարել:

Գրասեղանի աջ արկղից հանում էր «Հաղարան բըլբուլի» սև պորտֆելը և կարդում հատվածներ:

Մարդու զարգացման գործում ընթերցանությանը, ինքնակրթությանը, դրույցին, անձնական շփումներին ավելի մեծ տեղ էր տալիս, քան դպրոցին: Հաճախ էր ասում. «Մեր տունը ձեզ համալսարան»: Եվ իրոք, մեր տունը մի համալսարան էր հայրիկի ճոխ գրադարանով, նշանավոր հյուրերով, իմաստուն դրույցներով, ժամանակի իրականության հետ ունեցած լայն շփումներով: Շատ էր ուզում, որ երեխաները դասնանս նուրբ և ազնիվ ճաշակի տեր մարդիկ:

Որդուն՝ Արտավազդին, որ սովորում էր Մոսկվայի նկարչական դպրոցում, խորհուրդ էր տալիս լայն զարգացում ձեռք բերել և եթե մի կողում տնի՛ հասնել այդ կողման դազաթին: Խորանալ մասնագիտության մեջ, կենտրոնանալ, համառ աշխատանքով գիտելիքներ ամբարել: «Առողջ հոգով ու մարմ-

նով և ժամանակի գիտությունով ու լուսավորությունով ճոխացած,— ահա թե որն է մարդը»,— այս էր նրա խորհուրդը: Որդուն գրած նամակներից մեկն ավարտում է այսպես. «Տգեա նկարիչն ինչի՞ է պետք»:

Եվ առհասարակ հայրիկը շատ էր մտահոգվում իր զավակների ապագայով: Հաճախ մեղ կհավաքեր իր սենյակը և խրատական զրույցներ կաներ: Այդ զրույցներից մեկի ժամանակ ասաց. «...Կյանքս ձախորդ է եղել. մեկ ու մեկ շեղվել եմ. հեշտ, ուղածիս պես շի եղել. դուք աշխատեցեք, դուք եղեք էնպես, ինչպես կուզեի»:

Ինչպես արվեստում, այնպես էլ կյանքում մեծ տեղ էր տալիս ճաշակին՝ կիրթ ու նուրբ ճաշակին: Ամեն գոհակություն, ամեն տգեղ, տձև ու կոպիտ բան վրդովում էր նրան: Շարժ ու ձևից, հագնվելուց, ուտելուց սկսած մինչև հոգու բարձր արտահայտությունները:

Ասում էր.— Ամենից շատ ինձ մարդու անճաշակ լինելն է բարկացնում: Ամենագլխավորը կյանքում՝ ճաշակը կյանքի բույրն է:



Տանը շատ էր խիստ ու պահանջկոտ: Ամեն ինչ, նույնիսկ մանր, աննկատելի բաները տեսնում էր, հետևում: Կարգ ու կանոնի, մաքրության, ապրելու ձևի ու նման խնդիրներում չէր տանում անփութությունը, անհոգությունը, թափթփվածությունը: Եթե սենյակներից մեկում նկարը ծոված էր տեսնում կամ մի բան իր տեղը չէր լինում՝ ուղղում էր, բարձրացնում, իր տեղը դնում ու ասում. «Ապրելու ձև կիմանան, կսովորեն: Արտիստի աչք պետք է ունենալ, ոչ թե նայել, այլ տեսնել: Կուտուրան մեծ բան է»:



Կարգապահ, կարգ ու կանոն սիրող մարդ էր հայրիկը, բայց աշխատելու մեջ սխառեմ, որոշ ժամեր շուներ: Գրապատճառը ոչ թե այն էր, որ չէր սիրում պարապելու որոշ

ժամեր ունենալ, կանոնավոր կյանք վարել, այլ այն, որ դրան խանգարում էին մեր կյանքի պայմանները, ինչպես և իր բարի, զգայուն, հյուրասեր բնավորությունը:

Երկու հակապատկեր էին Թումանյանը և Շանթը: Թումանյանը որևէ հյուրի,— ով էլ լիներ՝ պաշտոնական անձնավորություն, թե մտտիկ բարեկամ, մտերիմ ընկեր, թե անձանոթ օտարական, աշակերտ կամ երեխա,— այցելության ժամանակ իր պարապելու ժամը կամ հանգիստը խանգարում էր: Գրասեղանի վրայի թղթերը շտապ-շտապ հավաքում էր, հյուրին ընդունում, սկսում էր զրույցն ու հյուրասիրությունը:

Շանթը՝ ընդհակառակը, ով էլ լիներ այցելուն, թեկուզ և իր մոտ բարեկամը կամ մտերիմ ընկերը, երբեք իր պարապելու ժամը չէր խանգարում: Նա ուներ որոշ սխառեմ, պարապելու ժամ, կարգ ու կանոն:

1902 թ. աշնանը հայրիկը բժիշկների խորհրդով 4—5 ամսով Աբասթուման էր գնացել: Փ. Վարդաղարյանի առաջարկով Շանթը, որ արտասահմանից նոր էր վերադարձել, փոխադրվեց մեզ մոտ. մինչև հայրիկի վերադարձը ապրում էր հայրիկի կաբինետում:

Շարունակ պարապում էր, այցելուներ համարյա չունեւ. ապրում էր ինքնամոխի:

Շիշում եմ, մի օր իր մոտ եկավ ուսանողական ընկեր Հակոբ Մանանդյանը, որ նոր էր վերադարձել Պետերբուրգից. շրնդունեց, ժամ նշանակեց հաջորդ կիրակի օրը, և առանց խանգարվելու, շարունակեց իր աշխատանքը: Մենք շատ վարմացանք, որ իր հյուրի հետ հայրիկի նման չվարվեց:



Հսկող աչք էր, սիրող ձեռք և զթառատ սիրտ:

Հասկացնում էր մեզ, որ առանց աշխատանքի, առանց կենսորոնանալու ոչնչի հասնել չի կարելի:

Ինքն վաղ էր վեր կենում, թեև իր մշտական ժողովների և հյուրերի պատճառով ուշ էր քնում: Խորհուրդ էր տալիս՝ վաղ քնել և վաղ վեր կենալ:

Հիշում եմ, Մոսկվայում, հիվանդ ժամանակ ասում էր՝ մեկ վաղ վեր կացողը չի փոշմանի, մեկ էլ վաղ ամուսնացողը: Մի անգամ էլ դրան ավելացրեց. թեև այդ գյուղացիների մասին է ասված, բայց ճիշտը դա է:



Հայրիկը նախընտրում էր պարապել առավոտը վաղ սամ ուշ պիշերը, երբ խանգարող չէր լինում: Օրը վաղ էր սկսում, առավոտյան ոտի սլոա էր, մանավանդ՝ ամռանը: Բայց երբեմն հենց առավոտից էլ ծայր էր առնում նրա այցելուների շարքը: Եվ այդպես էլ չէր հաջողվում առավոտվա լավ ժամերին պարապել: Ո՞վ ասես, որ չէր գալիս, ի՞նչ գործով ասես, որ չէին դալիս. զանազան գործեր, դիմումներ, խնդիրքներ, սիջնորդություններ... անվերջ, անսպառ. ինչե՛ր ասես, որ չէին խնդրում՝ դրամական օգնությունից սկսած... Այսպես ամեն օր, ամեն օր, ինքն էլ առանց դրամի, մի բանկից մյուս բանկն էր գնում պարտք անելու:

Պարտք անելու հոգսը մի կողմից, մյուս կողմից բազմաթիվ դիմումներն ու գործերը շատ էին զբաղեցնում ու յոգնեցնում նրան: Առավոտը վաղ, պարապելու փոխարեն, այդ օրվա գործերի ցուցակն էր կազմում, գնում ժիլետի աչ գլորպանը և շտապով տանից դուրս գնում: Երբ չէր կարողանում օրվա «պլանը» կատարել, նշանակված ժամին ժողովի կամ ժամագրված վայրը հասնել՝ տուն էր գալիս, ցուցակը նայում ու ասում. «Պահո՞, չհասա, ուշացա...»:

Ճաշի ժամանակ էլ հանգիստ չուներ, առօրյա գործերից էր խոսում՝ հիշեցրեք, էս ինչը դալու է... կամ՝ միտքս գցեք, էն մարդուն նամակ գրեմ... ին մարդու գործով էսինչ մարդի մոտ պիտի գնամ, տեսնեմ... և էսպես անվերջ:

1914 թ. որոշեց հեռախոս գնել, որ ժամանակ շահի: Հեռախոսի համարը 17—20 էր: Դրեց իր սենյակում, հենց իր թախտի մոտ: Բայց ավելի վատ եղավ: Շարունակ զանգահարում էին. հանգիստը բոլորովին կորցրեց. ոչ ճաշից հետո էր հանգստանում, ոչ էլ նույնիսկ ուշ գիշերին, շարունակ զանգահարում էին: «է՛ս էլ չէլավ...»:



Երաժշտագետ Արշակ Աղամյանը մի առիթով հիշեց. «Մի երեկո եկա մոտը, հագնված էր, գնում էր Հայարտուն՝ երեկույթի, բայց գնալու տրամադրություն չուներ. «Ոչ մի ցանկություն չունեմ, բայց պարտավոր եմ ներկա լինելու. էսպես բան ինձ հետ քիչ է լինում: Սովորաբար մարդ որ տեղ է գնում, փողոցով անցնելիս զգույշ է անցնում, որ ավտոմոբիլի կամ տրամվայի տակ չընկնի, էսօր ես կգերագասեի փողոցով անցնելիս մի ավտոմոբիլի տակ ընկնեի, քան թե Հայարտուն հասնեի...»:

Կարդալու էին Արևոմեդի՝ նոր դրաման, շատ թույլ գործ: Գնում է, հասնում է երեկույթի կեսին: Երբ տեսնում է շատ մարդիկ կան՝ թողնում է, հեռանում. «էդքան ժողովուրդ կա՝ հերիք է»:



Գեոևս 90-ական թվականներից հայրիկը հայտնի է եղել որպես թամադա: Կյանքի առաջին շրջանում քեֆերը դուրսն է արել. տանը ո՛չ հարմարություն է ունեցել, ո՛չ հնարավորություն: Տան հրավերքները սկսվել են ավելի ուշ՝ 900-ական թվականներին, վերնատան ժամանակից:

Մեր տան ճաշկերույթների թամադան մինչև 1911 թվականը Աղայանն էր, իսկ Աղայանների տանը՝ հայրիկը:

Այդ ժամանակների հայրիկն իր հեքիաթի ուրախ Հասանն էր: Չունեցած տեղն էլ քեֆ էր անում: Չպիտի կարծել, թե քեֆ էր անում շատ դրամ և ժամանակ ունենալուց: Հայտնի է, և մերձավորները գիտեն, որ նա իր քեֆերը պարտքով է արել կամ ձեռն ընկած պատահական դրամարով: Ուստի և քեֆի ժամանակ տսում էր. «Բանը մարդու սիրտն է... դու քո սիրտը ուրախ պահիր, քեֆ արա, փողն ի՞նչ է, որ մարդ փողի մասին մտածի»:

1 Արևոմեդ — Գևորգ Ղարաջյան, բաղաբական գործիչ, սոցիալ-դեմոկրատ

Ինքն ուրախ էր ապրում, ուրիշներին էլ ուրախացնում էր
և սովորեցնում աշխարհում ուրախ ապրել: Միրում էր ասել:
«Ես իմ հոր զվարթությունիցն ունեմ»:



Մի առիթով հայրիկը պատմեց. «Մի թագավոր գործ է
ուղարկում հարևան երկիրը թալանելու, տիրելու: Զորքը գնում
է թալանում, ավերում ու վերադառնում: Թագավորը այդ
երկիրը մարդ է ուղարկում տեսնելու, թե ի՞նչ դրուժյան մեջ
են ավերված երկրի բնակիչները: Գնում են, ետ գալիս թա-
գավորին պատմում, թե ժողովուրդը շատ նեղ օրի է՝ լաց է
լինում, դարդ անում ու գանգատվում իր դրուժյունից: Թա-
գավորն ասում է՝ ուրեմն դեռ էլի բան ունեն, որ էդպես լաց
են լինում: Զորքը նորից է ուղարկում, նույն բանն են անում:
Երրորդ անգամ թագավորը նորից է գործ ուղարկում: Էս ան-
գամ հիմնովին ավերում են ու ոչնչացնում: Գնում են տեսնում
ժողովուրդը քեֆ է անում, ուրախանում: Թագավորը թե՛
ուրեմն էլ բան չունեն, որ քեֆ են անում:

Հիմի էս հարուստներն են, շարունակ փողից են խոսում,
լաց լինում ու գանգատվում, և իսկի քեֆ էլ չեն անում. շատ
ունենալուցն է, իսկ մենք, որ բան չունենք, շեղածով էլ
ենք քեֆ անում, ո՛չ լաց ենք լինում, ո՛չ գանգատվում: Մար-
դիկ կան, կարծում են, թե ես որ շատ քեֆ եմ անում, շատ
ունենալուցն է»:



Հյուրեր հավաքելու օրը նախօրոք սենյակում որևէ բուր-
մունք էր տարածում— ամբոս¹ կամ «հայկական թուղթ»²:

Հյուրերին ընդունում էր, զբաղեցնում, հյուրասիրում,

¹ ամբոս— այստեղ՝ անուշահոտ հեղուկ

² հայկական բուղթ (papier d'Armenie)— թուղթ, որի այրումից
հաճելի բուրմունք է տարածվում սենյակում

ճանապարհ դնելիս լույսը վառում էր, վերարկուն բռնում, օգ-
նում-հագցնում, ապա կանգնում էր աստիճանների գլխին՝
վերևը, մինչև հյուրերն իջնեին, և բոլորին էլ զգուշաց-
նում էր, որ սանդուղքի պտույտի վրա զգուշ իջնեն, չընկ-
նեն...



Երբ սեղան էինք պատրաստում, հյուրերին իր սենյակը թո-
ղած, գալիս էր տեսնելու մեր պատրաստած սեղանը: Հետևում
էր, որ ամեն ինչ իր տեղը, ճաշակով ու գեղեցիկ լինի: Սե-
ղանի վերևի մասում նստում էր ինքը՝ հյուրերի հետ, իսկ
ցածի մասում՝ երեխաները: Հյուրերին հրավիրելիս մի ան-
գամ էլ էր ստուգում, որ ոչինչ չմոռանան՝ աղ, անձեռոցիկ-
ներ, աթոռներն իրենց տեղերը լինեն:

Քիչ էր ուտում, հյուրասիրում էր հյուրերին և զբաղեցնում:
Ասում էր, խոսում, կենացներ խմում և ամեն կենացի ու
առիթի զանազան դեպքեր, անեկդոտներ պատմում: Ինքը
քիչ էր խմում. ավելի ձևի համար. խմեցնում էր հյուրերին:

Նստում էր առակներով. «Ասում են մի օր...» և այլն: Կամ՝
պատմում էր իր կյանքից որևէ դեպք. «Մի իրիգու...», կամ՝
«Մի ամառ...»: Երբեմն մի դեպքի առիթով որևէ առակ էր
պատմում, հետո ավելացնում՝ «Հիմի մերն ա...»: Կամ թե չէ՝
«Դե հիմա կացեք, ձեզ մի բան պատմեմ...», ու տաքացնում
էր զրույցը:



Նրան քերն էին ճանաչում. շատ քերին էր հայտնի նրա
դժվարին կյանքը:

Նույնիսկ պարզ, բյուրեղյա պարզություն ունեցող իր եր-
կերը, որ կարծես հասկանալի ու մատչելի են բոլորին, քերն
են հասկացել: Ինքն էլ էր նկատում և ասում էր. «Թեև կար-
դացել են, բայց դեռ չեն տեսել, չեն կարողացել ներս թա-
փանցել»:

Նրա պայծառ ժպիտը, վեհ ու հանգիստ բնավորութունը,

զվարթ զրույցը թաքցնում էին իր վշտացած հոգին: Ես
բնորոշ է սրտի խորքից բխած իր բացականչությունը. «Դրա-
մաների մեջ ավելի զարհուրելին չկա, քան մեծ հոգիների դրա-
ման»:

Նա իր կյանքում ասրեց այդ դրաման:



Թիֆլիսի մտավորականության վրա ծանր էր ազդել Մամբ-
րե Մատենճյանի¹ մահը: Թաղումը բազմամարդ էր: Այդ
պերճախոս, հմայիչ ուսուցչի մահը սգում վիճեց բոլոր դպրոց-
ների աշակերտները: Մատենճյանի մահը մինչև հոգու խորքը
վշտացրել էր հայրիկին՝ գունատ էր, տրտում ու ինքնամ-
փոփ:

Նրա առաջին մեծ վիշտը հոր մահն էր՝ 1898 թվականի
հունվարին: Հոր մահից հետո նա երկար ժամանակ հիվանդ
էր: Նրա վրա ծանր ազդեցություն ունեցավ նաև հայրական
տան ավերումը: Վերջին տարիներին այդ մասին խոսում էր
խորին ցավով. «Իմ եղբայրները, — գրում է նա վերջին նա-
մակներից մեկում, — փշացրին ու քանդեցին իմ հորական
լավ տունը, իմ հոգու տունը»: 1921 թվականի աշնանը, Երե-
վանից Թիֆլիս վերադառնալիս, երբ գնացքն անցել է Լոռու
ձորով, շատ է ուղեցել իջնել, նորից տեսնել գյուղը, հայրա-
կան տունը, մանկության վայրերը, քայց շտապում էր Պոլիս
իր միսիան կատարելու: Այդպես էլ դա եղավ նրա վերջին
հայացքը, որ մնաց Լոռու ձորերում:

Հայրիկի կյանքի երկրորդ ծանր կորուստն Աղայանի մահն
էր՝ 1911 թվականի հունիսին: Երրորդ ծանր հարվածը որ-
դով՝ Արտավազի սպանությունը՝ Վանի գաղթի ժամանակ
(1918 թ.): Սա ամենածանր հարվածն էր արագորեն կորց-
րեց առանց այն էլ խախտված առողջությունը, կորովն ու
հանգիստը: Արտիկի հետքերը գտնելու շատ փորձեր արավ,
բայց ասպարոզուն:

¹ Մատենճյան Մամբրե — գրաքննադատ, գրականության ուսուցիչ
Ներսիսյան դպրոցում



Մտվորություն ուներ տոներին հյուրեր հրավիրել՝ ճաշի
կամ ընթրիքի. հրավիրում էր հատկապես գավառներից եկած
ծանոթ ուսուցիչներին կամ մայրաքաղաքից եկած ուսանող-
ներին, պարզապես մենակ մարդկանց, որոնք տուն և ըն-
տանիք չունեին:

Երբ նման օրերին ձեռքին դրամ չէր լինում և ոչ էլ պարտք
անելու հնարավորություն՝ հիվանդ էր ձևանում ու պառկում:
Կամ՝ մի տեղից մի փոքրիկ դումար էր ձեռք բերում, տալիս
էր մայրիկին տան կարիքները հոգալու, իսկ ինքը տանից
դուրս էր գնում:

Երբ ընկեր գրողները Թիֆլիսից բացակայում էին, տոն
օրերին նրանց երեխաների համար նվերներ, մրգեր էր առ-
նում, այցի էր գնում բոլորին՝ ուրախացնելու:



Տոներից ամենից շատ սիրում էր «Համբարձումը»: Առա-
վտաը վաղ վեր էր կենում, պահարանից հանում էր բոլորը՝
մոտ երկու տասնյակ, մեծ ու փոքր ծաղկամանները, լցնում
հատկապես դաշտի և սարի պես-պես ծաղիկներով և դնում
սենյակների բոլոր սեղաններին ու անկյուններում: Այս օր-
վա հետ կապված զանազան ավանդություններ էր կարդում,
Ջանգյուլումի քառյակներ ասում: Երբ տրամադրությունը
լավ էր լինում ու ժամանակ էր ունենում՝ վիճակախաղ էր
բացում: Սեղիկն էր վիճակ հանողը:



Բնավորությամբ պարզ էր, լավատես ու ժպտուն, ամեն
ինչ հեշտացնող, հեշտ ու թեթև տանող, բայց իր վիշտն ու
ցավը տանում էր վարագուրած, անտրտունջ: Նույնիսկ մտե-
րիմ մարդիկ լավ չգիտեին նրա հոգսերն ու տառապանքները:
Նվիր անձնական, ընտանեկան և գրական կյանքի բոլոր դժվա-

րություններն ու նեղությունները տարել, հաղթահարել է մեն-
մենակ:

Նրա հայտնի քեֆերն ու ժամանցներն ասես ինքնամոռաց-
ման միջոցներ էին, խաբում էր և՛ իրեն, և՛ ուրիշներին.
«...Ուզում եմ մի կերպ ժամանակն անց կացնել, քեֆի մեջ
լինի, թե զրույցի»:

«Իմ ուրախության ժամերին մասնակից եմ անում բոլո-
րին, իսկ իմ արցունքներն ու վիշտը հայտնի է միայն ինձ», —
կարլեյլի՝ այս խոսքը հայրիկը կարող էր ասել իր մասին:

Շատ ոգևորվող էր և ուրիշներին էլ ոգևորող, տրամադրող:

Շատ էր տպավորվող, զգայուն. մի փոքրիկ լավ վերաբեր-
մունք բավական էր, որ ջերմանար, ուրախանար և ընդհա-
կառակը՝ վատ վերաբերմունքից նեղանար, փակվեր, հեռա-
նար:



Աղայանի ընտանիքի հետ կապված ամեն ինչ սրտին
մոտ էր ընդունում և մտահոգվում էր նրա հոգսերով:

1911 թվականի ամռանը՝ Աղայանի մահվան տարին, Մանդ-
լիսում երկու հարևան ամառանոց վարձեց, մեկն ընկերոջ ըն-
տանիքի, մյուսն իր ընտանիքի համար, որ ամառը միասին
լինեն:



Հիշում եմ, թե ինչպիսի սիրով էր վերաբերվում Աշոտ
Աթանասյանի հորը՝ Տեր-Ղևոնդ քահանային, որ խաշատուր
Աբովյանի աշակերտն էր եղել: Հրավիրում էր տուն, զրու-
ցում և ամեն անգամ շեշտում էր, որ նա Աբովյանի աշա-
կերտն է: Հայրիկի պատվերով էլ նա գրեց իր հուշերը մեծ
լուսավորչի մասին:

Անանձին հարգանքով էր վերաբերվում Աբովյանի թոռ-

1 կարլեյլ թոմաս — 19-րդ դարի անգլիացի գրող, փիլիսոփա, հրա-
պարակախոս

ներին, Սայաթ-Նովայի ժառանգներին, Գևորգ Հախվերդյա-
նի թույրերին: Գրողների ընկերության երեկույթներին նրանց
հատուկ հրավիրատուս էր ուղարկում, իսկ տոն օրերին՝ այ-
ցելության գնում:



Գրական միջավայրի մեծ հաշտեցնողն ու հուսադրողն
էր: Ամեն ընդհարում, գծտություն կարողանում էր մեղմաց-
նել, վերացնել: Այդ գիծը ժառանգել էր հորից: Մերձավորներն
ասում էին՝ նա զարմանալի կերպով կարողանում էր իրար
դեմ լարված կողմերը հաշտեցնել, հանգստացնել, ներդաշ-
նակություն, խաղաղ տրամադրություն ստեղծել:

Շնորհիվ իր ներքին տակտի, վարվեցողության եղանա-
կի ու ձևի, նրան հաջողվում էր մոտ բարեկամական կապեր
հաստատել ռուս, վրացի, ադրբեջանցի և այլազգի գործիչնե-
րի, գրողների, արվեստագետների հետ, թեև կուզե նոր ծանոթ
լիներ կամ դիմացինի լեզուն չիմանար, ինչպես այդ հաճախ
պատահում էր զանազան տեղերից եկած հյուրերի հետ, նրանց
հետ թարգմանի միջոցով կարողանում էր մտերմանալ և բա-
րեկամանալ:

Կարողանում էր իրար հետ գծոված մարդկանց հաշտեց-
նել. նման դեպքեր եղել են ոչ միայն մեր գրողների, այլև
վրաց գրողների կյանքից:

Օրինակ, մի դեպք, որը հանրահայտ է: Ղազարոս Աղայանը
և Պերճ Պոռոջյանը գծոված էին և տարիներով իրարից խոռվե-
Հայրիկը շատ էր ուզում նրանց հաշտեցնել: Մի կիրակի օր,
առաջօրը, Պոռոջյանը հյուր է գալիս Թումանյանին և այդ
օրը, ինչպես միշտ, Աղայանը ճաշին պետք է լիներ Թու-
մանյանի մոտ: Թումանյանը Պոռոջյանին զբաղեցնում է մինչև
ճաշի ժամը, ու Ղ. Աղայանը գալիս է: Ճաշում են միասին
և այդ օրը կերքով միասին նկարվում են, հաշտությունը
հավերժացնում այդ լուսանկարով:



Վրաց պոետներն ու գրողները առանձին ակնածանքով էին մերաբերվում հայրիկին: Երբ նրա հետ անցնում էինք Դվարցովայա փողոցով, վրացիները հեռվից տեսնելով նրան, մտանում էին, կանգնում, ողջունում. «Привет Арагаты!»: Իսկ երբ մեր տան մոտովն էին անցնում, գիշեր լիներ, թե ցերեկ, հայրիկին դուրս էին կանչում պատշգամբ, ողջունում էին, մի ջերմ խոսք ասում՝ անցնում կամ ուղղակի բարձրանում էին տուն, իրեն մոտ:



Սիրում էր Քիֆլիսի գարնան հեղեղները, երբ մայիսի վերջերը հանկարծ երկինքն ամպում էր, գոռում ու սկսվում էր հեղեղ և տարափ: Կոջորի փողոցով առուններ էին, որ հոսում էին, մեր դիմացի սարից տիղմ, ժայռի կտորներ, խոշոր քարեր աղմուկով ու շառաչով բերում լցնում մեր տան ներքևի ջրանցքը: Իսկ հեղեղն անցնելուց հետո տարածվում էր վերահամեմի դուրեկան հոտը: Պատշգամբում կանգնում էր ու նայում դիմացի սարին, խորը շնչում — ապրում էր. հիշում էր կոտլա սարերը, ջրերը, օդը. դեմքը զվարթանում էր, պայծառանում: Հիշում էր սարերի որոտն ու ճայթյունը, կայծակն ու հեղեղը:



Հայրիկը շատ ժամանակ էր վատնում դրամ հայթայթելու միջոցով: Չնայած մայրիկի ծնողների օգնությանը, տան կարիքներն անպակաս էին: Եվ միշտ պարտք էր վերցնում: «Պոտոս ու Մուսան» պոեմի խոսքը՝

Վեռ կենամ, ապի, մեկի մոտ գրնամ,
Արեկին պարտք անեմ, գրուխը քար...

Իրական վիճակի արտացոլումն է: Իրոք, պարտքով էր կարողանում պահել և՛ իր ընտանիքը, և՛ քեֆեր սարքել ու հյուրասիրել, և՛ շատ շատերին էլ օգնել:

Ծանոթ էր Քիֆլիսի բանկի բոլոր գիրեկտորներին, նրանց հետ բարեկամական կապեր ուներ: Այդ գիրեկտորներն էլ իրենց հերթին սիրով ու հարգանքով էին վերաբերվում բանաստեղծին, օգնում էին, նրա համար միշտ ընթացիկ հաշիվ էին բաց անում, շարունակ նորոգում մուրհակները: Վերջին տարիներն իր անունով մուրհակներն այնքան շատացան, որ սկսեց մայրիկի անունով դրամ վերցնել:

Բանկերից պարտք վերցնելուն ամենից շատ օգնում էր Մինաս Բերբերյանը¹, որը, կարծեմ, 1914—1916 թվականներին Քիֆլիսի Առևտրական բանկի գիրեկտորն էր: Նա հայրիկին տեական ժամանակով պարտք էր տալիս, հրաշխավորում, մուրհակներ վեղջում — ստորագրում: Բերբերյանը հայրիկին շատ բարձր էր գնահատում, սիրում էր և շատ ուշադիր ու հոգատար էր նրա հանդեպ: Ուրիշ բանկերի էլ էր գիմում. Մելիք-Ղարազյուզյանին («О—во взаимного кредита» բանկի գիրեկտորը), Ներսիսյան դպրոցի նախկին տեսուչ Սամվել Բալազյանին, որը Վելյամինովսկայա փողոցի «П—ош взаимныхъ кредитъ» բանկի գիրեկտորն էր: Աղայանն էլ նրանից էր պարտք վերցնում, «Գիր» գրախանութը՝ նույնպես: Ալ. Թամամչյանը (Ֆ. Վարդաղարյանի քրոջ՝ Շուշանի ամուսինը), որ նույնպես բանկի գիրեկտոր էր, հայրիկին շատ էր օգնում, որ դրամ ստանա: Բայց, իհարկե, նրանցից ոչ մեկի օգնությունը և լրնկերական վերաբերմունքը չէր կարող համեմատվել Փիլիպոս (Ֆիլիպ) Վարդաղարյանի հետ, որ ամեն կերպ, և՛ նյութապես, և՛ բարոյապես, նեցուկ է հղել հայրիկին: Ահա ինչու ամեն մի լավ վերաբերմունք բարձր գնահատող, երախտագիտությանը հիշող Թումանյանը կարող էր իր զրույցներում ու նամակներում այնքան ջերմորեն արտահայտվել նրա մասին. «Ամեն փողոցում Ֆիլիպ չի լինի»:

Հայրիկը գերազասում էր բանկերից դրամ վերցնել, քան թե ունեոր բարեկամներից, մանավանդ հարուստ ծանոթներից: Նա իր համար ոչ մի հարուստի օգնությանը չէր դիմում: Իր ընկերներից մեկի համար, չեմ հիշում՝ Իսահակյանի², թե՛

¹ Բերբերյան Մինաս — իրավաբան, գրականագետ-քննադատ, հասարակական գործիչ

Դեմիրճյանի, որոնք արտասահմանում էին ապրում, դեմե-
կը մի հարուստի և մերժում էր ստացել. սաստիկ վիրավոր-
վել էր: Ընկերներից ոմանք երբեմն խնդրում էին, որ հայրիկն
իրենց համար այս կամ այն հարուստից նպաստ խնդրի. հա-
րուստները քեզ լավ են վերաբերվում՝ կտան: Հայրիկն էլ
ասում էր. լավ են վերաբերվում, որովհետև իրենցից ոչինչ
չեմ խնդրում:

Բացի բանկի դիրեկտորներից, հայրիկը լավ ծանոթ էր
զանազան մթերային խանութների տերերին, հեղինակություն
ու վստահություն ուներ նրանց մեջ: Դրամ ունենալիս մեծ
քանակությամբ և առանց հաշվի գնումներ էր կատարում
նրանցից, իսկ շունեցած ժամանակ բոլորն էլ ապառիկ էին
տալիս կամեցածը: Պուշկինյան, Լերմոնտովյան, մեր՝ Վոդ-
նեսենսկայա փողոցների խանութների տերերը միշտ ապառիկ
էին տալիս և դեռ ընտիր մթերքները պահում էին նրա հա-
մար:

Այդպես էին վարվում Շադինովը, Չեդվեևովը, Մելիք-
Բախտամյանը, Անիկը և մյուսները: Դրա շնորհիվ էլ, երբ
մտոր հյուրեր էին լինում և ձեռքին դրամ չէր լինում, կարո-
ղանում էր ճոխ հյուրասիրություն սարքել: Հիշում եմ,
Վ. Բրյուսովին ընթրիքի հրավիրելու օրը առանց դրամի մոտ
քառասուն մարդու ընթրիք տվեց:



Քանի որ մշտական եկամուտ չուներ՝ հաճախ էր նեղության
մեջ ընկնում: «Փողի նեղություն շատ է քաշել, շատ, և մեր
մեջ էլ ինչ խոսակցություն ու աղմուկ եղել է՝ միշտ փողի
շուրջն է եղել ու փողի պատճառով», — ասում էր մայրիկը:
«Մանր, նեղ օրեր շատ ենք տեսել: Առաջին անգամ հայրիկն
իրեն համար կոստյում առավ նշանվելուց հետո՝ 1888 թվա-
կանի Չատկին: Մի ան կոստյում առավ. 16 ոտբլի տվեց»:

Հայրիկը մի օգնող շտաբ ձեռք պիտի ունենար, որ հաս-
կանալով նրա «արքայավայել» ապրելու ձևն ու ձգտումը՝
անվերջ օգներ նրան: Իհարկե, նա լավ ընկերներ ու բարե-
կամներ ունեցավ, ինչպես Փիլիպոս Վարդազարյանը, իշխա-

Նուհի Մարիամ Թումանյանը, բժիշկ Արիստակես Զարգարյա-
նը և մյուսները, բայց բոլորը օգնում էին չափով ու որոշ
ձևով, երբեմն նույնիսկ կշտամբանքով ու դժկամությամբ:
Իժգոհում էին, որ հազվագյուտ գրքեր է առնում, ճոխ գրա-
դարան կազմում, շարունակ հյուրեր է հրավիրում ու շքեղ
սեղաններ բացում, որ ստացած դրամից ուրիշներին բաժին
է հանում: Ուստի և հաշվով էին տալիս, հաշիվ պահանջում:
Մինչդեռ, հայրիկը հաշվով ապրող մարդ չէր ու չէր սիրում
հաշվետու լինել, թե ինչ բանի վրա է ծախսել ստացածը:

Նյութականի հարցում շատ էր հպարտ, զգայուն, ինքնա-
սեր. իրեն պահում էր հարուստի նման, ամպահովված մարդու
նման: Իր նեղ վիճակից չէր տրտնջում: «Աստված եղածն
օրհնի», — ասում էր:



Նրա քեֆը գործ էր:

Եվ ամեն մի գործ միշտ իր տանն էր սկսում՝ ճաշ ու ընթ-
րիքով, հյուրասիրությունով, քեֆի միջոցով: Մարդիկ էր հրա-
վիրում, ինքը թամադայություն անում, կենացներ խմում,
հառեր ասում՝ մարդկանց ոգևորում էր, ջերմացնում, կա-
պում գործին, իր հետ և գործը կենդանացնում էր, շար-
ժում:



Երաժշտության մեծ սեր ուներ: Գրամաֆոն էր գնել և
պլաստիկաներ: Հիշում եմ «Չորան բայաթին», «Մահուր
հինդին», «Ռաստն» աննելու օրերը. հրավիրում էր Աղայանին,
Դեմիրճյանին, Փափազյանին և մի քանի անգամ էր կրկնում,
որ լսեն նվագը: Կսելիս հուզվում էր, հիշում կոովա սարերը:

Հայ ժողովրդական երգերից ամենից շատ սիրում էր «Ան-
տունին», որի առաջին տողերը երգում էր հուզմունքով.

Սիրտը նման է էն փրլած տրեքեր, —
Կուրեր գերաններ, խախտեր են սրեր,
Բուն պիտի դնեն մեջ վայրի հավեր...



Մի անգամ, երբ Կոմիտասը երգում էր «Անտունին», երեւում էր, թե հայրիկն ինչպես է ապրում երգի ամեն մի խոսքը, բառը, ամեն մի հնչյունը: Ինքն էլ սկսեց երգել Կոմիտասի հետ և հետո ասաց. «Սիրոս նման է էն փրլած տրնե...»՝ ժողովուրդն իր ամբողջ պատմութունն է տվել, ժողովրդական ստեղծագործության գոհար է սա»:

Հայրիկի վրա մեծ տպավորություն էր թողնում Կոմիտասի «Մոկաց Միրզան»: Երբ 1905 թ. գարնանը Կոմիտասը էջմիածնի Գեորգյան ճեմարանի երգչախումբը Քիֆիս էր բերել համերգների, նա իր աշակերտներից մեկի՝ հետ եկավ հայրիկին այցելության: Այդ օրը նրանք խոսում էին միմյանց հետաքրքրող հասարակական երևույթների և, իհարկե, ժողովրդական ստեղծագործության ու երգի մասին:

Հայրիկը ներկա է եղել Կոմիտասի երգչախմբի համերգներին:

Նրա շատ սիրած երգերից մեկը «Տեր կեցոն» էր՝ հայության պահպանման ու լուսավորության միտքն արտահայտող այդ երգը:

Համիշտակությամբ էր լսում նաև Սայաթ-Նովայի երգերը, ինչպես և արևելյան բայաթիներն ու մուղամները: «Չոբան բայաթու» վերջին տողերը (երբ հովիվը դիմում է ժողովրդին) ինքն էլ էր երգում: Բարեկամություն էր անում Քիֆիսի հայտնի երաժիշտների հետ՝ Զիվանու, Հաղիբի, քյամանչիստ Սաշա Օգանեղաշվիլու (Ալեքսանդր Հովհաննիսյան), դուդուկահար Բազրատի և մյուսների հետ: Բազրատն մրթաճալայի այգիների խնջույքներին նվագել է «Սեզյահ», «Սահարի», «Ուստի գուբաս», «Դուն էն գլխին», «Չիս ասում» և ուրիշ մեղեդիներ:

¹ Վանան Տեր-Առաքելյան — երգիչ, հետագայում գինյորական, թարգմանիչ (Թարգմանել է «Քաջ գինյոր Շվեյկի արկածները»: «Աննա Կարենյան» և ուրիշ գործեր): Այդ այցելության մասին նա գրել է հուշեր, որ տեղ է գտել «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» հատորում (1969 թ.):



Աբասթումանում 1910 թվականի ամառը հայրիկն ապրում էր Մելիք-Հայկազյանների՝ տանը: Նրան մի փոքրիկ սենյակ էին հատկացրել, որ անմիջապես անտառ էր դուրս գալիս: Այդ ամառ իրեն թույլ էր ղգում, բժիշկներն արգելել էին պարապելը: Երբ մի քիչ կաղոտրվում էր, սկսում էր մարդիկ հրավիրել ու քեֆ անել:

Մի օր տանեցիները գնում են անտառ դրոսներու, հայրիկին թողնում են տանը մենակ, որ պառկի հանգստանա: Վերադառնում են երեկոյան դեմ, տեսնում են սեղան նստած հյուրեր:

Այն էլ ասեմ, որ 1911 թվականից՝ Ղաղարոս Աղայանի մահվանից հետո, առաջվա նման քեֆ չէր անում, չէր ուրախանում: 1911 թվականի ամառը, երբ իր մեծ դուստրը՝ Աշխենն ամուսնանում էր, ոչ ոքի չհրավիրեց:

«Առաջ մի պլաստիկա աննելիս էլ քեֆ էր սարքում, իսկ հիմա աղջիկ է ամուսնացնում և մարդ չի հրավիրում», — դժգոհում էր մայրիկը:



Հայրիկն աղատ խոսում էր ուսերեն, կարիք եղած դեպքում նույնիսկ սեղան էր կառավարում, թամադայություն անում, ինչպես Բյուրատլի ճաշկերույթների կամ վրաց գրողների հետ հանդիպելու ժամանակ:

Պետերբուրգում, բանտից ազատվելուց հետո (1912 թ., մարտ), ի պատիվ արդարացված մեղադրյալների, «Դոնոնում» տրված բանկետին թամադան եղել է ուսու հայտնի դատապաշտպաններից մեկը. կեսից նրան հայրիկն է փոխարինում և մինչև լույս կառավարում սեղանը:

¹ Մելիք Հայկազյաններ — Թումանյանի մտերիմ ընտանիքներից մեկը. գնդապետ Ալեքսանդր Մելիք-Հայկազյանը եղել է Բաֆֆու մեկենասը:

●
Ռուս գրողների հետ բանկետները, ճաշկերույթներն անց էր կացնում «Ориант», «Гранд отель», «Анонна» հյուրանոցներում, հայ գրողների հետ՝ Օրթաճալայում, Վերայում, «Ֆանտազիա» այգում կամ «Над Курой» քեստորանում, իսկ վրաց գրողների հետ՝ «Химерион»-ում:

●
Մազլի խանութներից սիրում էր Երևանյան հրապարակի խանութը՝ «Солей Дор»: Այստեղ միշտ զինում էին ամեն տեսակի թարմ, բնորոշ ծաղիկներ, իսկ խանութի տերը՝ Մամուլաշվիլին, որն առանձին հարգանք էր տածում իր մշտական հաճախորդ հայրիկի հանդեպ, նրա համար միշտ գեղեցիկ փնջեր էր կազմում, շքեղ կողովներ պատրաստում:

●
Մրգի սիրահար էր. ամեն տեսակի միրգ էր գնում, շատ էր սիրում խնձոր և բնկույզ: Մի օր ընկույզ էր առել՝ ամբողջ մի պարկ. բերին տուն, քանի կտորեցինք՝ փուշ դուրս եկավ: Հարցրինք, թե՛ հայրիկ, ինչո՞ւ չէիր փորձում, հետո առնում, թե՛ մի հինգը կտորեցի, բոլորը փուշ դուրս եկան, ասի ուրեմն մնացածը լավը կլինի. ծախողն էլ մի խեղճ մարդ էր, ուզում էր ծախի, շուտ՝ տուն գնա, ասում էր՝ էրեխեքս սոված են. մեղքս եկավ՝ վերցրի:

●
Մենք տասը երեխա էինք և որքան էլ հայրիկը սիրում էր երեխաներին, նրանց դպրոցական կյանքին հետևելու ժամանակ ու հնարավորություն չունեիր, որ խմանար, թե որը որ դպրոցում է սովորում կամ որ դասարանում է:
Մի օր, Գայանյան դպրոցի տեսուչը հայտնում է հայրիկին, որ դպրոց անցնի իր աղջիկներից մեկի՝ Անուշի մասին

խոսելու համար: Գայանյանի փոխարեն հայրիկը գնում է Հովնանյան դպրոց և հարցնում, թե ինչպե՞ս է սովորում նվարդը: Ուսուցիչները ծիծաղելով ասում են, թե նվարդը վաղուց է ավարտել դպրոցը: Այստեղ հայրիկը հիշում է, որ երևի հարկավոր էր գնալ Գայանյան դպրոց, ուր սովորում էին մյուս աղջիկները: Գնում է հարցնում իր մյուս աղջկա՝ Արփիկի մասին, բայց նրա համար չէ, որ կանչել էին իրեն: Այս պատմությունը տարածել էին՝ հայրիկի անշափ զբաղվածությունն ու ցրվածությունը ցույց տալու համար:

Եվ իրոք, հայրիկը հնարավորություն չունեիր հետևելու մեր կրթության գործին: Նա շատ հաճախ իր բնակարանում էր հրավիրում զանազան նիստեր ու ժողովներ: Հյուրերն ու ժողովականներն անպակաս էին: Եվ նրանց ընդունելու, հյուրասիրելու հոգան ընկնում էր մայրիկի ու երեխաների վրա: Այնպես որ՝ երեխաների ուսման կարգ ու կանոնն էլ խախտվում էր:

Մեծ եղբորս՝ Մուշեղին, և մեծ քրոջս՝ Աշխենին, տատս տվել էր ուսական գիմնազիա: Հայրիկը դժգոհ էր դրանից: Չէր սիրում գիմնազիաները, նախ՝ օտարանում էին, կտրվում հայկական կյանքից, լեզվից և հետո՝ չէր սիրում գիմնազիայի շոր, շինովնիկական մթնոլորտը, պաշտոնական վերաբերմունքը դեպի երեխաները: Եվ հայրիկը որոշեց մյուս երեխաներին տալ հայկական դպրոցներ: Առաջինը ես էի, որ ընդունվեցի Հովնանյան դպրոց: Մյուս քույրերս Գայանյան դպրոց էին հաճախում, իսկ երկու եղբայրներս՝ Ներսիսյան, ամենից փոքր եղբայրս՝ Լիսիցյան գիմնազիան:

Երբեմն, երբ ժամանակ էր ունենում, նայում էր մեր աշակերտական տեսրեքը, իհարկե, հայոց լեզվի և գրականության: Մեծ ուշադրություն էր դարձնում լեզվի վրա, ապա նաև ձեռագրի, որ պարզ լինի, խոր տառերով և գեղեցիկ:

— Կզրեն տղամարդու նման՝ հաստատուն ձեռագիր կմշակեն, — ասում էր:

Դպրոցում մեզ մազգիծ տառեր էին սովորեցնում և գրում էինք մանր տառերով. այդ դուր չէր գալիս հայրիկին, մանավանդ մանր տառերը: Արտավազդի ձեռագիրը դժվար ընթեռնելի էր: Եղբայրս գրում էր արագ և մանր տառերով, եր-

բեմն, պարզապես անընթեռնելի: Գեպքեր են եղել, որ իրեն ուղղված նամակները վերադարձրել է առանց կարդալու: Հիշում եմ, 1915 թվականի ամառը Վանից Արտիկի ուղարկած նամակը առանց կարդալու ետ առաքեց՝ վրան գրելով՝ «Գործը ի՞նչ էս գրել»:



Աստղաբաշխության վերաբերյալ գրքեր էր գնել և միշտ կարդում էր: Հանքաքարերի կոլեկցիա էր գնել, ալբոմներ և ուսումնասիրում էր քարերի դանազան տեսակները:

Շատ էր ուզում, որ իր սրդիներից որևէ մեկը երկրաբան դառնա: Իր մեծ տղային, որը բնագիտություն էր պարուպում, խորհուրդ էր տալիս որպես մասնագիտություն ընտրի երկրաբանությունը:

«Լոռին մեծ ապագա ունի,— ասում էր նա,— հանքերով հարուստ երկիր է. երկրաբանություն սովորի, որ մեր երկրում բան ստեղծեն, օգուտ տաս, թե չէ օտարներն են օգտվում, ա՛յ, ֆրանսիացիք Ալավերդու պղնձահանքի տերն են դարձել...»:



Ցերեկները, երբ հոգնած տուն էր գալիս, ճաշից հետո ուզում էր մի քիչ հանգստանալ: Իր սենյակը գնալիս տսում էր. «Հիշեցեք էս ինչ մարդը, էս ինչ գործով գալու է մոտս...»: Ասում էր ու իր սենյակում փակվում հանգստանալու, բայց, շանցած կես ժամ, վեր էր կենում և սպասում հերթական այցելուին:



Գրանդանի նուազ նստած կամ ճաշասենյակում սեղանի գլխին՝ սովորություն ուներ այժմ ձեռքի ցուցամատով «գրել» և միշտ նույն շափի, նույն տևողությամբ, նույն ձևի, կարծես աղզանուն էր ստորագրում: Չգիտեմ, գուցե և ստեղծագործում էր:

Նույնը նկատվում էր հիվանդ ժամանակ. վերակի վրա էր «գրում»:



Հակումներով արևելցի էր, կենցաղում՝ եվրոպացի: Շատ կիրթ, բարձր ճաշակ ուներ, սիրում էր ապրել հարմարություններով՝ լայն, առատ, մաքուր:

Կոլեկցիոներ էր՝ էմիլ Զոլայի և Անատոլ Ֆրանսի նման: Սիրում էր գեղեցիկ իրեր և նկարներ գնել և դարդարել սենյակը: Միշտ գնում էր լավից լավը, գեղեցիկից գեղեցիկը և հաճախ, երբ գրականությամբ պարապելու տրամադրություն չէր ունենում, դբաղվում էր այդ իրերը տեղադրելով:

Գնում էր գեղեցիկ ալբոմներ, դասական գրողների երկերի շքեղ, հազվագյուտ հրատարակություններ՝ ունիկումներ, որոնք միառժամանակ պահում էր «ըրուցի սեղանի» վրա: Թերթում էր, նայում, կարդում, հյուրերին ծանոթացնում էր այս կամ այն նկարչին կամ գրողին, հետո պահում էր գրադարանի որոշյալ պահարանում: Նայած ինչ մասնագիտության հյուր էր գալու մոտը՝ ճարտարապետ էր թե նկարիչ, երաժիշտ էր թե գրող, բոս այդմ էլ պահարանից հանում էր այդ շքեղ հրատարակությունները և նորից դնում սեղանին:

Ձմեռը քիրմանի շալե խալաթ էր հագնում՝ երկար ու լայնփեշ, ամառը՝ արևելյան վառ գույներով, նույն ձևի մետաքսե խալաթ: Գլխին դնում էր մետաքսե թելերով ասեղնագործ թասակ: Հագնում էր սև փայլուն եվրոպական տուֆլիներ:

Գրական հավաքույթներին ու հանդեսներին հազնում էր սև կոստյում, սպիտակ օձիքով: Սևը սպիտակով՝ այդ էր ճաշակը: Փողկապը, թաշկինակը և գուլպաները համապատասխան դույնի էր ընտրում: Ճաշակով հագնվող էր: Կարևորություն էր տալիս որոշ ոճով և գեղեցիկ հագնվելուն: Սիրում էր պարզը և ընտիրը:

Իր արտաքինով, կեցվածքով, հայրիկը մեծ տպավորություն էր թողնում անծանոթ մարդկանց վրա: Զգիտես ինչու, նրան երբեմն օտարերկրացու տեղ էին դնում:

Հիշում եմ, մի ընտանիքում հայրիկը կանգնած զրուցում

էր մի խումբ մարդկանց հետ: Կողքիս կանգնած մի տիկին հարցրեց ինձ. «А кто такой этот англичанин?»: Երբ ասացի, որ Քումանյանն է՝ զարմացաւ. «Он на армянина не похож. Как он выделяется среди всех.».



Վերջին տարիները գիշերները շատ քիչ էր քնում. ուշ էր պառկում քնելու և վաղ էր վեր կենում: Առավոտյան 7-ից 8-ից արդեն ոտքի վրա էր: Գիշերն էլ հանգիստ չէր լինում. ամեն ձայնի վրա տեղից վեր էր թռչում:

Երբեմն էլ, քնից արթնացած, մեղ էլ էր կանչում, սիրտը նեղվում էր, ինչ-որ անհանգստություն էր զգում, թե վախ՝ չգիտեմ: Իսկ առաջ ուշ էր վեր կենում՝ ժամը 9—10-ին և թերթերը միշտ անկողնում էր կարդում:



Ինչպես պարապելու, գրելու, այնպես էլ կարդալու համար հայրիկը ժամանակ քիչ ուներ: Դա էր պատճառը, որ իր հարուստ գրադարանից չէր կարողանում օգտվել ուղած շափով:

Գրքեր գնելու սովորությունը վաղ էր զարթնել նրա մեջ, դեռևս աշակերտական տարիներից: Շարունակ նոր ու նոր գրքեր էր գնում, իհարկե, ընտրութեամբ: Սիրում էր կլասիկներին և գնում էր նրանց շքեղ հրատարակությունները: Նրան հետաքրքրում էին հատկապես կովկասագիտությունը, ֆուլկլորին, արևելքի պատմությունը, բնագիտությունը վերաբերող հազվագյուտ գրքերը: Ռուսական պարբերականներից ստանում էր «Русское богатство», «Мир божий», «Русская мысль», «Вестник Европы», «Былое» հանդեսները:

Քանի որ կարդալու ժամանակ քիչ ուներ, հաճախ գրքերը կարդում էր թերթելով, ձեռաց, շտապ կամ խանդարված՝ ընդմիջումներով: Բայց ոչ բոլոր գրքերն էր այդ ձևով կարդում: Գրքեր կային, որ ուղղակի ուսումնասիրում էր, մի քանի անգամ էր կարդում և հաճախ վերադառնում: Նրանց:

կարդալիս փղոսկրյա կտրիչը միշտ ձեռքն էր լինում: Շատ էին այն գրքերը, որոնց լուսանցքներում մատիտով զանազան դիտողություններ է արել կամ հատվածներ նշել: Գրքեր էլ կային, որ պարզապես թերթում էր, բայց այդ ձևով էլ ավելի շատ բան էր քաղում, քան մեկ ուրիշը՝ կարդալով: Գրքի հոտառություն, ուժեղ բնազդ ուներ, գիրքը կարծես թե զգում էր, գլխի էր ընկնում: Ասում էր՝ գրքեր կան, որ թերթելով եմ կարդում, ուրիշ կերպ անհնար է, հո չի՞ կարելի բոլոր գրքերն անխտիր կարդալ:

Լեոն մի դեպք պատմեց հայրիկի ընթերցանության մասին. «էդ տնաշենը գիրք կարդալու զարմանալի ձև ուներ: Մի օր մոտն էի, խոսում էինք կովկասագիտությունից: Մի նոր գիրք էր գնել, սեղանի վրա տեսա (Маевский, «Закав-кавье»): Ասի՝ Օհանես, մի քանի օրով տնոր տանեմ կարդամ, ետ բերեմ:

Սովորաբար նա իր գրքերը տուն չէր տալիս, ինձ էս անգամ բացառություն արավ, տվեց: Տարա, սկսեցի կարդալ, տեսա, որ թերթերից շատերը դեռ կտրված էլ չեն: Կարդացի, մի քանի օրից եկա մոտը: Խոսք ընկավ էդ գրքից, ասի՝ Օհանես, դու էդ գիրքը ո՞նց ես կարդացել, որ թերթերը դեռ կտրված էլ չեն. բան չասաց: Զրույցը շարունակեցինք, քիչ հետո խոսք գցեց էդ գրքից, հետն էլ մի կարծիք հայտնեց, որ միանգամայն նոր էր ինձ համար: Ասի՝ Օհանես, էդ որտեղի՞ց գիտես, թե՛ հենց էդ գրքիցն եմ ասում, որ տարել ես, կարդացել ու ետ բերել... Շատ ծիծաղեցինք...»:



Ինչպես բանալից գրած նամակներից կարելի է դատել և ինչպես իր դատապաշտպան Գրուդենբերգն էր ասում, բանտում հայրիկն ավելի շատ կարդում էր, գրականությամբ էր պարապում, քան իր գործերով ու դատավարությամբ հետաքրքրվում: Կայանքի մեջ ազատ ժամանակ էր գտել իր նվիրական գործով՝ ընթերցանությամբ և գրականությամբ զբաղվելու համար:



Գրքի պաշտամունքը հայրիկի մեջ շատ էր ուժեղ: Գրողա-
րանի գրքերը պահում էր խնամքով և ոչ ոքի չէր տալիս:
Գրողարանից գիրք չխնդրելու հայտարարություն էր փակցը-
րել, բայց երբեմն, մտերիմ մարդիկ խնդրում էին այս կամ
այն գիրքը: Եվ նա զիջում էր, երբեմն էլ՝ նվիրում:

Մի երեկո դերասանուհի Օլգա Մայսուրյանը, հայրիկի-
գրողարանում տեսնելով թատրոնի մասին մի հետաքրքիր
գիրք, խնդրում է իրեն տալ ընթերցելու: Հայրիկը, իհարկե,
չի մերժում տիկնոջը և գիրքը նվիրում է: Հետո անհանգստա-
ցած սկսում է գրախանութներում որոնել նույն գիրքը, մինչև
որ ձեռք է բերում:

Հայ պատմիչների գրքերը, դրանց լավագույն հրատա-
րակությունները իր գրողարանի զարդն ու գանձն էին: Այդ
գրքերին և առհասարակ հայոց պատմությանն էր հատկացված
իր ձեռագրերի բյուրոյի մոտ գտնվող պահարանը (№ 5):

Հաճախ էր կարդում ու ոգեշնչվում Փավստոս Բյուզան-
դի, Ղազար Փարպեցու, Եղիշեի ու հատկապես Խորենացու գրքե-
րով: Շատ էր կարդում նաև հայ ժողովրդի պատմության
ծանր դրվագները, աղետները պատկերող պատմիչներին, ինչ-
պես Կիրակոս Գանձակեցի, Արիստակես Լաստիվերացի: Միջ-
նադարյան գրականությունից ամենից ավելի կարդում էր
պանդխտության երգերը, հայկական տաղերն ու շարական-
ները, հատկապես Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու,
Կոստանդին Երզնկացու, Գրիգոր Աղթամարցու, Նահապետ
Քուչակի բանաստեղծությունները:

Երբեմն մեզ համար հատվածներ էր կարդում. հիշում էմ՝
Արիստակես Լաստիվերացի, Կիրակոս Գանձակեցի, Մատ-
թեոս Ուռհայեցի: Այս պատմագիրներին հաճախ էր անդ-
րադառնում հատկապես «Վերջ Հայաստանի» վեպն ուսումնա-
սիրելիս:

Բավականությամբ էր կարդում Գարեգին Սրվանձտյանի¹

¹ Սրվանձտյան Գարեգին — նշանավոր բանահավաք, գրող-ազգագրա-
գետ, «Սասունցի Դավիթ» առաջին պատմի գրի առնողը

«Համով-հոտովը»: Բարձր էր գնահատում նրա և՛ այդ, և՛
մյուս երկերը, նրա գեղեցիկ, ժողովրդական ոճերով հարուստ
լեզուն:



Գրողարանի պահարաններից մեկը հատկացրել էր բառա-
բաններին: Գնում էր ինչպես եվրոպական, այնպես էլ տեղա-
կան, բայց մանավանդ արևելյան լեզուների (պարսիկերեն,
արաբերեն, սանսկրիտ և այլ լեզուների) բառարաններ:

Մշտապես թերթում էր այդ բառարանները, թարգմանու-
թյուն անելիս օգտվում էր դրանցից՝ լինել անգլիերեն, գերմա-
ներեն, ֆրանսերեն, դիմում էր եվրոպական լեզուներ իմացող
ընկեր-բարեկամներին, նրանց շնորհիվ ստուգում, ճշտում
գիտցածը: Միշտ սեղանի վրա էին Քաջունու² գիրքը, Հայ-
կազյան բառարանը, Դալը³, Ռադլովը³:

Մի բառի համար քսան բառարան էր բաց անում:



Հայրիկը մի օր պատմեց. «1909 թվականի աշունն էր:
Նոր էինք փոխադրվել Վոլնեսենսկայա № 18 տունը: Մի օր
ցերեկը, տանը նստած պարսպում էմ, այցելության եկավ մի
անծանոթ: Հյուրին դահլիճ են ընդունում: Դուրս եմ գալիս
իմ սենյակից, բարևում. անծանոթն սկսեց ֆրանսերեն խո-
սել: Ռուսերեն հայտնեցի, որ ֆրանսերեն չգիտեմ: Հյուրն
սկսեց ռուսերեն խոսել և պարզվեց, որ պարսից դեսպանն է,
Պարսկաստանից է գալիս և իր անձնական գործերով գնում
է Պեսկերբուրգ: Գնալուց առաջ ցանկություն է ունեցել տես-

¹ Քաջունի Մանվել — Մխիթարյան միաբան, բանասեր-բառարանա-
գետ

² Դալ Վ. Վ. — «Толковый словарь великорусского языка» նշա-
նավոր բառարանի հեղինակը

³ Ռադլով Վ. Վ. — լեզվաբան, հնէաբան, ազգագրագետ «Опыт сло-
варя тюркских наречий» աշխատության (4 հատոր) հեղինակը

նկու իր վաղեմի ծանոթ՝ պարսկահայ հարուստ Համբարձում Թումանյանին, որը բնակվելիս է եղել հենց էս նույն բնակարանում:

Թյուրիմացությունը պարզելուց հետո, հյուրին հրավիրեցի իմ առանձնասենյակը ու սիսեցի դրոցեղ գրականությանից, խոսքը մասնավորեցնելով պարսից գրականության վրա՝ Ֆիրդուսու, Խալամի, Հաֆեզի և մյուսների: Դեսպանը տեսնելով պարսկական գրականությանը ծանոթ լինելս, գնալուց առաջ խոստացավ Պարսկաստանից ինձ ուղարկել Ֆիրդուսու «Շահնամեի» պարսկերեն շքեղ հրատարակությունը: Էդ ժամանակ պահարանից հանեցի «Շահնամեն»: Դեսպանը թե՛ հենց այդ գրքից է, որ ես պիտի ուղարկեմ ձեզ:

— Էս ձեզ նվեր,— ասացի նրան: Սկզբում մերժեց, բայց երբ պահարանից հանեցի նրկորդ օրինակը, նա զարմացավ վրան մակադրեցի ու նվիրեցի»:



Դեհ էր ն. Պրժևալսկու «Ճանապարհորդություն Կենտրոնական Ասիայում» գիրքը: Կարդում էր և խորհուրդ էր տալիս, որ մենք էլ կարդանք: Առհասարակ սիրում էր կարգավ մեծ ճանապարհորդների գրքերը, եթե ժամանակ էլ չէր ունենում՝ ուղղակի թերթում էր:



Համալսարանում անցնում էինք Ռարլեի «Գարգանտյուա և Պանտագրուելը»: Մեր դասախոսը՝ բանաստեղծ Յուրի Վերխովսկին, որ հայրիկի մոտ ծանոթներից էր, մի ոգեշնչված, երազների աշխարհը վերացած մարդ էր: Մեզ հետ առանձին ոգևորությամբ էր անցնում Վերածնության դարաշրջանը:

Այդ շրջանն անցնում էինք Ստորոժենկոյի¹ գրքով, բայց:

¹ Ստորոժենկո Ն. Բ. — գրականագետ, արևմտահայերենի (գլխավորապես անգլիական) գրականության մասնագետ

հայրիկը նոր գիրք տվեց՝ կարդալու Վերածնության խոշոր դեմքերի մասին: Դա եղավ առիթ, որ ես տեսնեմ, թե հայրիկն ինչ մեծ հետաքրքրություն է տածում Վերածնության դարաշրջանի և նրա հանճարների հանդեպ:

Աստվածաշունչը գրասեղանի մշտական գիրքն էր, որի խորությունն ու արվեստը գնահատում էր շատ բարձր:

Ուներ նաև հույն դիցաբանության և գրականության պատմունք: Պրոմեթեոսը և նրա ողբերգությունը զբաղեցնում էին հայրիկի միտքը: Ոգևորվում էր, գրականություն էր կարդում նրա մասին: Հաճախ էր անդրադառնում նրան՝ համեմատելով վրաց Ամիրանիի և մեր Աբտալազգի ու Մհերի հետ:

Հոմերոսի հերոսների նկարագրություններից ամենից շատ հավանում էր Թերսիդեսի նկարագրությունը: Կարդում էր ոգևորությամբ: «Մի՛ տես, ի՛նչ լավ է», — ասաց մի օր ու կարդաց.

Մի աչքը շիլ, մի ոտքը կաղ
Ման էր գալիս լնգլնգալեն,
Մեջքը սապառ, ուտերը ծոռ,
Կուրծքը փլած², ընկած էր ներս,
Մրագագաթ իր կոնդ գլխին
Հազիվ ուներ մի ֆանի մազ...



Շատ էր սիրում Բայրոնի և Բերանտեի³ երգերը, ապա և Ռյուկկերտին², Ուլանդին³: Սիրած գրողների երկերից գնում էր զանազան հրատարակություններ՝ և՛ ռուսերեն, և՛ օտար

¹ Ռեանմե Պյեռ Ժան — 19-րդ դարի ֆրանսիական նշանավոր դեմոկրատ բանաստեղծ, հայտնի է իր երգիծական, հակաբռնակալական ոտանավորներով, որոնցից շատերը երգվել են ժողովրդի մեջ

² Ռյուկկերտ Ֆրիդրիխ — 19-րդ դարի գերմանական բանաստեղծ, արևելագետ և թարգմանիչ

³ Ուլանդ Կյուդլիգ — 19-րդ դարի գերմանական բանաստեղծ, ուղտամանիզմի ներկայացուցիչ

լեզուներով: Բառարանների օգնությամբ կարգում էր, թարգմանում: Գնել էր Բերանժեի ֆրանսերեն և ռուսերեն շքեղ հրատարակությունները: Մտադիր էր նրանցից մի քանի բան թարգմանել:

Գյոթեի մասին ասում էր. «Գյոթեի մեջ մտածողը, քըննադատը, բանաստեղծը հավասար են ու իրար կողքի...»:



Հայրիկն առանձին հաճույքով կարգում էր Չեխովի պատմելիքները, հումորով լի գրվածքները, ինչպես «Զիու ազգանունը», «Կաշտանկան»:

Միրում էր ամերիկյան երգիծաբան Մարկ Տվենի զվարթ հումորը: Բարձր էր գնահատում շվեդ կին գրող Սելմա Լագերլոֆին:

Ռուսերենից, Բունինի՝ թարգմանությունից հայրիկը թարգմանել է Լոնդոնի լիտվացի «Հայավաթի երգի» առաջին գլուխը, ուր հնչում է խաղաղության հուժկու ձայնը:

Սեղանին հաճախ էր լինում Հերդերի ժողովրդական երգերի հավաքածուն:



Կարգում էր Իրանի անգլիական դիվանագիտական ներկայացուցիչ Ջեմս Մորիսի «Հաջի Բարայի արկածները», մի հեղինակ, որ 1808—1809 և 1810—1816 թվականներին ճանապարհորդել էր Հայաստանում:

Հավանում էր այդ գիրքը, հանձնարարում էր կարգալու Հայրիկին: Գուր էր գալիս հեղինակի հումորը, և ընթերցելիս զվարթ ժպիտ էր խաղում դեմքին:

1 Բունին Եվան Ալեկսեևիչ (1870—1953) — 20-րդ դարի ռուս հայտնի արձակագիր, բանաստեղծ և թարգմանիչ



Սի երեկո գրույցը Կալիդասայի «Շաքունթալա» դրամայի շուրջն էր: Հայերեն թարգմանել էր Մեսրոպ վարդ. Մաքսուդյանը: Կարգում էր և խոսում արևելքի գրականության մասին: Արևելքի մեծերից իր ճաշակին ավելի մոտ էին Ֆիրդուսին, Խաֆանին, Նիզամին, Խայամը, Հաֆեզը, Սադիկն, Ռումին:

Արևելյան մեղեդիներից ամենից շատ հավանում էր ռասաը, հատկապես քյամանջիստ Սաշա Օզանեզաշվիլու կատարմամբ: Այս երաժշտին հայրիկը շատ էր սիրում: Նրան լսելը հայրիկը համարում էր շքեղ ու շտայլ մի հոգեկան վայելք ամեն մի արևելցու համար:



Ռափայել Պատկանյանի բանաստեղծությունների նկատմամբ քննադատական վերաբերմունք ուներ: Միրում էր Պատկանյանի արձակը: Հերթական գրական երեկոներից մեկում կարդաց նրա «Չախուն»՝ նոր նախիջևանի բարբառով:

Միքայել Նալբանդյանի երգերից էինք խոսում: Ասում էր, որ նա ինքնուրույն բանաստեղծություն քիչ ունի, շատ է ազդվել Բերանժեից: Նրա ոտանավորների մեծ մասը թարգմանություններ են, գլխավորապես իտալերենից, ինչպես «Մեր հայրենիքը»:



Երվանդ Օսյանի «Առաքելություն մը ի Մապլվար» գիրքը շատ էր հավանում և կարգում էր մեծ հաճույքով: Գրախանությունից մեկում տեսել էր, հինգ-վեց օրինակ գնել: Երկուսն իր գրադարանի համար պահեց, մյուսները բաժանեց ընկեր գրողներին: Երեկոները, հրք հյուրեր էին գալիս մոտը, «Մապլվարից» հատվածներ էր կարգում մեծ բավականությամբ:

Սովորութիւնն ունիւր առատորեն բաժանել իր նոր լույս տեսած գրքերը՝ յոգովածու, թե առանձին գրվածք: Ամեն կիրոյի, մանավանդ մոտ ծանոթի, նվիրում էր: Մանկական պատկերազարդ գրքերը այնպէս էր բաժանել, որ տանն օրինակ չէր մնացել: 1923 թվականին Մոսկվայում հարկավոր եղան «Մի կաթիլ մեղրը» և «Շունն ու կատուն» (հրատարակելու համար), բայց գրադարանում ոչ մեկը չգտանք:

Այդպէս է եղել միշտ: Մայրիկը պատմում էր, թե ինչպէս 1893 թվականին լույս տեսած «Գաշնակներ» գրքուցկի օրինակները լցրել է իր երկար վերարկուի գրպանները և բաժանել ամեն պատահողի: Այնպէս է բաժանել, որ մոտը ոչ մի օրինակ չի մնացել: Վերջը նվիրածներից մեկը ետ է վերցրել իր համար:

Մի օր գրավաճառներից մեկի մոտ տեսել է Սմբատ Շահազիզի «Աղատութեան ժամերը», գնել է տասն օրինակ և բաժանել. «Սա հաղվագրուտ հրատարակութիւնն է, ինչպէ՞ս է բնկել էստեղ...»:

Հայրիկին մտահոգում էր նաև գրախանութների խնդիրը, հատկապէս այն, որ մասնավոր գրավաճառները մեծ տոկոսներ (մոտ 60 տոկոս) են վերցնում հեղինակներից («Գուտենբերգը», Կենտրոնական և Զարարիա Գրիգորյանի գրախանութները): Հայրիկն էր «Գիր» գրախանութի հիմնադիրներից մեկը: Առհասարակ հեղինակային իրավունքների պաշտպանութեան գործը նրան շատ էր զբաղեցնում:

Մեծ նշանակութիւն էր տալիս դրուցին, այն համարելով գրողի համար շատ կարևոր մի բան. «Մինչև հիմա մեր ինտելիգենցիան չհասկացաւ, թե ինչ բան է դրուցը, սա էլ մի տեսակ ստեղծագործութիւնն է...»:

Խոսում էր ամենքից և ամեն բանից, պատմում էր իր ընկերների կյանքից, անցած շրջանից՝ դեպքեր, հուշեր, աննկատներ: Խոսում էր հասարակական, քաղաքական այլևայլ խնդիրներից, օրվա հարցերից ու գործերից. էսպէս անվերջ, առանց հոգնելու: Բայց դրուցի կենտրոնը միշտ դրականութիւնն էր, գրական կյանքն ու դեմքերը:

Գրական աշխարհից, դեղարվեստից խոսելու տրամադրութիւնը բարձր էր լինում, իրեն ազատ էր գտնում, թեթև ու լալ: Խոսում էր համոզված, տիրաբար, իշխողի նման, մանավանդ, երբ խոսքը սիրած գրողներին էր վերաբերում: Մեծ գրողներից շատ էր սիրում Շեքսպիրին, Գյոթեին, Պուշկինին, Խայամին, և դրուցի ժամանակ միշտ նրանում էր իր յուրահատուկ սերը դեպի այդ մեծերը, բայց հատկապէս դեպի Շեքսպիրը: Երբեմն հատվածներ ու մտքեր էր բերում այս կամ այն հեղինակից՝ անգիր կամ կարգում էր:

Երբ մեր քաղաքական կյանքից էր խոսում, մանավանդ վերջին շրջանից՝ յշտացած ու լցված էր լինում, ինչ-որ դայրուցի ու ցավ կար ներսը: Դժգոհ էր իր շուրջը կատարվող դեպքերից ու անցուդարձից, դժգոհ էր գործիչներից:

Պատմում էր ղվարձալի դեպքեր դյուրական կյանքից: Չեմ հիշում ում ընտրութեան առթիւ էր, մի դեպք պատմեց.

«Մեր գեղումը մի շաշ մարդ կար՝ Օհանանց Խեչո էին ասում: Մի օր գրան տանուտեր են ընտրում: Տուն ա գալի, շատ ախուր: Կնիկը թե՛ ա՛յ մարդ, ընչի՞ ես ախրել:— Բա ո՞նց շտխրեմ, ա՛յ կնիկ, մինչև հըմի իմ շաշութիւնը մենակ մեր տանը գիտիին, հըմի սաղ գեղը կիմանա»:

Սիրում էր հին Թիֆլիսը և առանձին կարոտով էր հիշում իր ջահել օրերի տեսած Թիֆլիսը:

«...Հե՛յ դիդի հա, հին Թիֆլիսը չկա՝ ո՛չ էն երգն ու ուրախութիւնը, ո՛չ առաջվա առատութիւնն ու շտալութիւնը... Ի՛նչ օրեր էին, ի՛նչ քեֆեր... ամեն կարի վրա դայրա ու նազարա, ամեն տոնին քեֆ ու թամաշա: Ժողովուրդն իրեն տա-

բազում գուգլած, վարդարված, աղբում էին իրենց սովորու-
թյուններով ու աղաթներով՝ միշտ դուրսը, միշտ ուրախ-
վարթ, բաց կտուրների վրա»:

⊙

Նրա գրույցը շփոթ է խանդավորի: Չէր սիրում, երբ գոույ-
ցի ժամանակ որևէ մեկը կողմնակի բանով էր զբաղվում կամ
ժամ ու ժամանակից հարցնում: Սիրում էր հանգիստ ու լիքը
գրույցը. պարզ, սրտալի, առանց խանդարումի ու ընդ-
հատումի: «Լոռուցու քեֆը գիտես ո՞րն է՝ մտա ընկերների հետ
նստի ու գրից անի»: Այսպես էր ասում ու այդպես էր կյան-
քում: Ուր էլ լինե՞ր՝ շրջան էր կազմում ու սկսում գրույցը:

Խոսում էր հանդիստ, դանդաղ, շեշտով, մեղմ ու կամայ:

Չէր սիրում բարձր ձայնով, ինչպես փնքն էր ասում, գոռա-
լով խոսելը կամ «ճըղճղալը»: Չէր սիրում և հասլշտապ խոս-
քը՝ «վրտվրտացնելը»: Ասում էր. «Խոսելիս կարգին կխոսեն՝
հանգիստ, շեշտով. մարդ իր խոսքին արժեք ու գին պիտի
տա»:

⊙

Խոսելիս աչ ձեռքը շարժման մեջ էր: Երբ միտքը կապ
ունեն որևէ գրքի հետ, ասում էր, խոսում, հետո ձեռքը մեկ-
նում էր դեպի գրադարանի գրքերն ու ասում.

— Հրեն, էնտեղ գրած է...

⊙

Խոսելիս ձախ ձեռքի բուխ մատը ժխտի թևի մեջ էր
դնում կամ, պիջակի փեղջ էտ քաշելով, շալվարի գրպանն
էր խրում, իսկ աջը խաղացնում էր օդում, որո՞շ տակտով ժես-
տեր անում ասած խոսքի համաձայն:

Մտքիցս չեն հեռանում հայրիկի ձեռքերը՝ ճերմակ, մոմի
պես թափանցիկ, երկար մատները, որ նիհար էին, բայց ոչ
շոր:

⊙

Երբ մեկը այցի էր գալիս իրեն, դատարկ ու անխառն
գրույցով խլում ժամանակը, նրան համարում էր «չիբուֆո
բաշոդ»՝ այսինքն՝ ժամանակի գինը չիմացող մարդ:

⊙

Սիրում էր առողջ, վարթ ու սրտալի ծիծաղը: Չիշում էմ,
ուսանող ժամանակս մի ընկերուհի ունեի՝ Թամար Ղուկաս-
յան (վլադիկավկազցի): Առողջ, ժպտերես, վարթ աղջիկ
էր Թամարը, ինչպես ժողովուրդն է ասում՝ առողջությունը
երեսից կաթում էր: Նա վարմանալի հնչեղ, զնգուն և վա-
րակիր ծիծաղ ունեի: Բնավորությամբ բանաստեղծական խառ-
նրվածք՝ նուրբ ու գթառատ: Մենք առաջին ծանոթությունից
մտերմացանք: Հաճախ էր լինում ինձ մտա: Կարոտով էր հի-
շում իր ծննդավայրը՝ Հյուսիսային Կովկասը, ոգևորությամբ
նկարագրում Ռազմավիրական ճանապարհը, Կովկասյան ձյու-
նափառ լեռները, գետերը, ջրվեժները, հատկապես Գեղո-
րակյան սառցադաշտը: Հայրիկը սիրում էր լսել Թամարի
նկարագրությունները: Զրուցում էր նրա հետ ու հիանում նրա
կարկաչուն, հնչեղ, սրտալի ծիծաղով:

Ուրախ դեմք, պայծառ ժպիտ, առողջ ծիծաղ, հանգիստ
ու լիքը գրույց. ահա հայրիկի ճաշակը:

⊙

Մեծ տեղ էր տալիս կնոջ խոսելու ձևին, ձայնին, տեմբ-
րին. «Կինը մեղմ պիտի խոսի, նուրբ, դուրեկան ձայնով,
ոչ թե ճղճղա»:

Շատ էր հավանում բժիշկ Գրիգոր Սաղյանի պատմելու
ձևը, ասում էր, որ պատմածները գրի առնի. «Գրի, է՛, գրի»:
Խորհուրդ էր տալիս Գրողների ընկերությանը անդամագրու-
վել:

⊙

Սրբ Լեօն գալիս էր, խոսում էին պատմությունից: Կովկասագիտությունը և հայոց պատմությունը նրանց զրույցի մյուսն էր, գուցե հենց այդ էր պատճառը, որ նրանք շատ մտերմացան, բարեկամացան:

Նրանց զրույցի կենտրոնը հաճախ Խաչատուր Աբովյանն էր և նրա «Վերք Հայաստանին»: Երկուսն էլ ոգևորված խոսում էին Երևանի առումից, Կրասովսկուց, Պասկևիչից: Նրանց զբաղեցնում էր «Վերքի» նոր, ճշտված, դիտական հրատարակության խնդիրը:

Զրույցի ժամանակ հայրիկը կովկասագիտության պահանջից հանում էր կովկասյան պատերազմների հայտնի պատմագիր, գեներալ Պոտոսյի հատորները¹, Մասկու «Ванский вилает» և ուրիշ գրքեր: Կովկասագիտությունը հատուկ տեղ էր գրավում նրա հետաքրքրությունների մեջ, կարելի է ասել՝ կենտրոնական տեղ, քանի որ կապված էր հայ ժողովրդի պատմության, նրա հարկան ժողովուրդների հետ: «Վերք Հայաստանին» ուսումնասիրելիս հաճախ էր դառնում կովկասագիտության գրքերին, Պոտոսյի հատորներին:

⊙

Վահան Տերյանի սիրած թեման, որին հայրիկի հետ զրուցելիս հաճախ էր անդրադառնում, տաղաչափությունն էր, ոտանավորի երաժշտականությունը: Թոմանյանը, ընդհակառակը, տաղաչափությունից քիչ էր խոսում, ավելի շատ խոսում էր գրվածքի ոգու, ստեղծագործական ներշնչանքի մասին:

⊙

Սովորություն ուներ զրույցների ժամանակ պատմություններ անել իր և իր գրական ընկերների կյանքից հետաքրքիր դեպքեր պատմել: Հատկապես շատ էր պատմում Ղ. Աղայա-

¹ «История кавказских войн», I—IV.

նի, Պ. Պոռոջյանի, Խրիմյան Հայրիկի, Ավ. Արասխանյանի՝ կյանքից:

Առանձին սիրով էր խոսում Պոռոջյանի մասին, որը հարազատ էր իրեն իր ժողովրդական խառնվածքով: Պատմում էր Վիպասանի կյանքից առանձին ծիծաղաշարժ դեպքեր՝ իրեն հատուկ հումորով և ժպիտը դեմքին:

⊙

Ավ. Իսահակյանն ասում էր՝ երբ սիրուն կին եմ տեսնում, տխրում եմ: Հայրիկը հակառակն էր ասում՝ սիրուն կին որ տեսնում ես՝ ուրախացիր, ինչո՞ւ ես տխրում:

⊙

Ասում էր. «Ես շատ գաղտնապահ եմ — նայած թե որքան թանկ է գաղտնիքը կամ վտանգավոր»:

⊙

«Պատահական խոսք չի, որ ասում եմ՝ ես էլ ձեզ հման երեխա եմ»:

⊙

Հաճախ էր վրդովվում մեր ինտելիգենցիայի անգրագիտության պատճառով. «Դպրոց են ավարտել, ահագին մարդիկ են, ուսուցիչներ են՝ հասարակ խնդիրք գրել չգիտեն, մի նախադասության մեջ տասը սխալ կբռնես, լեզվի մասին հո էլ չեմ ասում — լեզու չգիտեն...»:

¹ Արասխանյան Ալեաի (1857—1912) — գրական-հասարակական հայտնի գործիչ, տնտեսագետ, «Մուրճ» ամսագրի հիմնադիրն ու խմբագիրը:



Հիշում եմ հայրիկի այս խոսքը. «Ես ջնջելական եմ, սեղմությունն եմ սիրում»:



Իր մանկական շափածոյից սիրում էր «Գարնան առափտոր»՝ համարելով այդ զուտ հայկական, խորապես երաժշտական երգ: Սիրում էր «Կաքավի երգը», «Սոխակի վիշտը» և առհասարակ թուղաներին նվիրված շարքը:



«Поэзия Арменни» գրքից ամենից շատ խողասելի¹ թարգմանություններն էր հավանում:

Օտար լեզուներից կամ կատարած թարգմանական գործերից խոսելու ժամանակ նրա զրույցը այն տպավորություն էր թողնում, թե նա և՛ ֆրանսերեն գիտեր, և՛ անգլերեն ու գերմաներեն, կարծես արևելյան լեզուները՝ պարսկերենն ու արաբերենն էլ գիտեր: Մինչդեռ նա այդ լեզուներին բառարաններով էր միայն ծանոթ և բնագիրը կարդում էր բառարանների օգնությամբ: Որևէ երկ թարգմանելիս շարունակ գրքեր ու բառարաններ էր նայում, համեմատություններ անում:



Բառեր կային, որ իր ստեղծագործության մեջ գործածելով, հավանում էր, անդրադառնում գրանց, խոսում էր այդ բաների իմաստից, ծագումից, վեր էր լուծում բառը: Այդ բաներից հիշում եմ անճառ-ը, անշամանդաղ-ը:

¹ Խողասելի Վ. Ֆ.— 20-րդ դարի ուսումնասիրող: «Մի կաթիլ մեղրի» և «Հայրենիքիս հետ» բանաստեղծության թարգմանիչը



Գեղարվեստական երկերում չէր սիրում բացականչություններ ու ձայնարկություններ՝ ա՛խ, օ՛Ֆ և այլն: Ասում էր՝ դրանք թուլացնում են գործը: Նույնպիսի կարծիք ուներ գրդի տենդենցի մասին, երբ դա երևում էր բացահայտ ու ակներև:



Իրում էր խոշոր տառերով, մեծ թափով, արնագ, հեշտ ու թեթև, իր քայլվածքի նման:

Սևագրերը ինքն էր արտագրում, երբևէ միայն, հիվանդ ժամանակ, այն էլ հեքիաթներ թարգմանելիս՝ մեղ էր տալիս արտագրելու:



Հանազան առիթներով էքսպրոմտ բանաստեղծություն՝ երշատ է գրել, բայց դժբախտաբար մեծ մասը ժամանակին գրի չեն առնվել, չեն պահպանվել:

Անփույթ էր. գրում էր, արտասանում ու մոռանում՝ լինել պաշտոնական բանկետներում, թե որևէ դեպքի առիթով: Ստեղծում էր հեշտ ու հեշտ էլ կորցնում:



Միշտ երկի որակից էր խոսում, բարձր արվեստից: «Բանն էն չի, թե ինչ ես գրում, բանն էն է, թե ինչքան է դիմանալու ժամանակին, թե որքան է մնալուն գործդ: Հասարակը իսկականից ջոկելու համար դիր արևի տակ, կտեսնես, իսկույն կխոնհանա»:

«Բանը կենսունակությունն է,— ասում էր,— որակը, ոչ թե քանակը: Մնալուն գործեր պիտի տալ՝ խիտ, խորը և ուժեղ»:

Մանկական որևէ գրվածք գրելուց հետո ամեն անգամ մեզ հավաքում էր իր սենյակը՝ կարդում, ամեն մեկից կարծիք հարցնում, ընդհանուր սուլավորությունն իմանում, հետո ուղարկում էր «Հասկերին»:

Տպելիս ինքն էր անում վերջին սրբագրությունը, որ սխալ չլրիպի, իսկ եթե առանձին գրքով էր հրատարակվում, մինչև գրքի լույս տեսնելը սպարանից չէր հեռանում: Ամեն ինչ իր հաշակով ու իր ձեռքով էր անում: Նախ լավ թուղթ էր ընտրում. նկարչին պատվիրում էր ու հետևում նրա արածին:

Հիշում եմ հեքիաթներից մեկի՝ «Ոսկի քաղաքի» տպագրության ժամանակ հայրիկին բանտարկեցին: Շատ էր անհանգրստանում գրքուչկի հրատարակման որակով. ամեն անգամ, երբ բանտ էինք գնում տեսակցության, հարցնում էր, խնդրում, որ հետևենք, հետաքրքրվենք, որ հանկարծ սխալներով ու վատ չհրատարակվի:

«Գրիչո, գրածս ավելի թույլ է, քան մտածածս, հղացումըս: Գրելիս էն չի դուրս գալիս, ինչ որ մտածում եմ:

Երազներս, մտքերս ավելի շքեղ են»:

«Ի՞նչ եմ գրել, — մի քանի տող բան, էն էլ ձեռաց, ոտի վրա... Ինչ որ գրել եմ՝ մի կողմ պիտի դնեմ. նոր պիտի սկսեմ գրել», — ասում էր վերջին տարիներին: «Գրողը հիսուն տարեկանից հետո նոր պիտի գրող դառնա. երբ որ հասունանում է, լցվում՝ էն ժամանակ պիտի նստի ու ստեղծագործի»:

Հայրիկը վախենում էր, թե չգրած երկերի ցուցակն ավելի մեծ կլինի, քան գրածներինը:

Այդպես էլ եղավ...

Սիրում էր ամեն մի նոր բան՝ գրական նորություններ, նոր գրքեր, նոր դեմքեր: Սպրում էր գրանով՝ նորով, նոր օրով:

«Ընթերցողի ի՞նչ գործն է, — ասում էր, — թե դու գրելու ժամանակ կնոջդ հետ կովիլ ես կամ քեֆդ խարաբ է եղել: Ընթերցողը քեզանից լավ բան է պահանջում, լավ գործ»:

Երբ խոսք էր լինում անարվեստ, արհեստական լեզվով գրած գործերի մասին՝ ասում էր. «Դրանք թղթից շինված արհեստական վարդեր են. ամեն ինչ կա, բայց գլխավորը, էականը չկա՝ կյանքը, բույրը. բանը հենց էն կենդանի շունչն է»:

Քայլվածքը թեթև էր, արագ ու շտապ, մեջքը մի քիչ կռացած: Սիրում էր ոտքով գրոսնել, հատկապես ամառանոցներում: Քայլվածքի մեջ ինչ-որ թռիչք էր զգացվում: Երբ դուրս էինք գալիս փողոց՝ հետևում էր, որ ցրված զգնանք, միասին լինենք, ես ու առաջ շրնկնենք. «Փողոցում ման գալ կիմանան, և միշտ առաջը կնայեն, պլուխը բարձր...»:

Սափրվում էր ինքը՝ փոքրիկ ու կարճ միրուք թողնելով: Ածելիները, ինչպես տան դանակները, գերմանական հայտնի Ձոլինգեն ֆիրմայի արտադրություն էին:

Չէր սիրում նկարիչներին բնորդել, նստել սեանսներով: Այդ է պատճառը, որ նրան չնկարեցին Քերլեմեղյանը և Սարյանը, շքանդակեց Նիկոլաձեն: Միայն կեպիսովը սկսեց

հայրիկի կիսանդրին Եվ մեկ էլ հիվանդ ժամանակ՝ 1922-ին, երկու սեանս բնորդեց նկարիչ Շարբաբչյանին:

⊙

Մի երեկո, սարապելու ժամանակ, էլեկտրական լույսն անջատվեց: Հայրիկը հեռախոսեց կայանի պետ Բեզլար Դանիելյանին.— Էս ի՞նչ արիր, մուսաներիս փախցրիր...

Մյուս օրվանից Բեզլար Դանիելյանը, որ հայրիկի մոտ ծանոթն էր ու համակրում էր նրան, հատուկ գիծ անցկացրեց:

⊙

Ունեւ գեղեցիկ իրերի պաշտամունք: Դեռ 1889-ին գնեւ էր մի ամբողջ շարք երաժշտական գործիքներ՝ մետալաֆոն, շոնգուր, շվի, ջութակ, մանդոլին:

Գեղեցիկ ափսեները, գավաթները հայրիկի թուլութունն էին: Դնում էր հատկապես ֆրանսիական հախճապակի, Սևրի գործարանի արտադրանքը՝ նուրբ, գեղեցիկ ամաններ, գավաթներ: Արեւելյան սուրճի գեղեցիկ սպասք էր գնել:

Գեղեցիկ իրերը մեծ մասամբ գնում էր կոմիսիոն խանութում: Պատահում էին և դավաճանական դեպքեր: Մի օր եկավ գնումներով, բարձր տրամադրութեամբ, բացեց կապոցներից մեկը, թե՛ ո՞վ է ուզում, ո՞վ է ուզում, տեսեք ի՞նչ գեղեցիկ բաներ են: Տեսանք՝ շատ հնաձեւ, կանացի սեւ կոշիկներ, թեւ բոլորովին նոր: Շատ հիասթափվեցինք, բայց ցույց չտվինք: Բարեբախտաբար, ոչ մեկիս ոտքին չեղավ և այդ կոշիկները երկար ժամանակ մնացին ընկած: Մի օր էլ մայրիկն ինձ պատեց, տար կոմիսիոն խանութ, գուցե ծախվում է, ինչ կտան: Կտան՝ կադատվենք: Տարա հանձնեցի: Չանցած մի քանի օր հայրիկը նորից եկավ կապոցներով, ոգևորված, թե՛ եկեք տեսեք, ի՞նչ հիանալի բաներ են բերել: Իսկույն հավաքվեցինք և հայտնվեցին դարձյալ նույն շարքաաստիկ կոշիկները: Խանութի ցուցափեղկում տեսել էր և շտապել էր վերցնել: Մեր անզուսպ ծիծաղից հայրիկը կռահեց, թե ինչ է կատարվել, և

հետագայում էլ հիշում էր ու ծիծաղում: Երբ հասարակ բան էինք գնում՝ ասում էր. «Ինչի՞ եք հասարակ բաների փող տալիս՝ միևնույն գինն է»: Հիշում էր անդլիական ասացվածքը՝ ես այնքան հարուստ չեմ, որ էժան բան առնեմ:

⊙

Ճաշից հետո, երբ հյուրեր քիչ էին լինում, մի քանի հոգի, նրանց տանում էր իր սենյակը, հավաքում «զրույցի սեղանի» շուրջը, ինքը վառարանի կրակի վրա սուրճ էր պատրաստում:

Սուրճն իրեն վնաս էր, բժիշկներն արգելել էին, բայց ինչպես ինքն էր ասում, «շախի խաթեր» և՛ պատրաստում էր, և՛ խմում:

Միրում էր քաշովի՝ խորոված ձկան (դասպիշի) հետ: Չուկը փաթաթում էր լրագրի մեջ, դնում վառարանը, խորովում: Ծննդավայրի թխվածքներն էր սիրում, որ կերել էր մանուկ օրերին՝ ամենից շատ թարմ սերուցքով պատրաստած ազդակը, ապա և հալվան, խավիժը, նագուկը, գաթան, բաղարջն ու բիշին:

⊙

Սրտաբաց խանութածք էր հայրիկը, և ուզում էր, որ ուրիշներն էլ այդպես լինեին. «Աշխարհքին ու մարդուն նայել բարի սրտով ու պայծառ հայացքով»:

Մեծ կարևորություն էր տալիս հայեցողությանը, ինչպես երբեմն ասում էր՝ созерцание-ին, հոգու խաղաղ, անդորր վիճակին, երբ մարդը մեն-մենակ խորասուզվում է իր մտքերի մեջ, կենտրոնանում, խորանում:

⊙

Չմեռվա ցուրտ օրերին հայրիկի հաճույքներից մեկը կրակն էր: Օրվա ընթացքում վառարանը մի քանի անգամ էր վառում. վառարանի դուռը բաց էր թողնում մինչև ուշ

գիշերը, փայտը մեկ-մեկ ավելացնում, որ կրակն անշեշ մնա, իսկ ինքը նստում էր դիմացը իր ճոճաթոռին, նայում էր կրակին ու զրույց անում հյուրերի հետ:

— Կրակը՝ ձմեռվա ծագիկն է. լավ բան է կրակը...

Լավ կրակ անող էր Ավելի շատ բուխարին էր սիրում, քան վառարանը, մտածում էր իր սենյակում վառարանի փոխարեն բուխարի շինել տալ: Մետաղե շերեփի մեջ ամբրոս էր պցում, տաքացնում վառարանի կրակի վրա, սենյակում ամբրոսի բուրմունք տարածում: Երբեմն շերեփի մեջ շագանակ էր ածում, խորովում և հյուրասիրում, իսկ երբ արամադրությունը տեղն էր լինում, երեկոն էլ աղատ, սև սուրճ էր պատրաստում իր փոքրիկ ջեզվետով, գողարիկ գավաթներով տալիս հյուրերին՝ քաղցր դիմիների ու մրգերի հետ և սխտւմ էր «հոգեշա՛հ զրույցը»:

Վերջին տարիներին շատ էր սիրում արևելյան ձևով ապրել. դա քառյակների շրջանն էր:

Սենյակը կահավորել էր արևելյան ճաշակով. խալիներ էր փռել, թախտ, բարձեր, քիրմանի շալով ծածկել, զանազան նկարներ, գրավյուրներ ու արձանիկներ էր գնել՝ ճապոնական, պարսկական, շինական, գեղեցիկ իրերով դարդարել: Դալյան էր առել, թեև չէր ծխում, զանազան ձևի չիբուխներ՝ տիրուլի. պարսկական և զանազան գույնի մուշտուկներ: Իր մուշտուկը դեղին քահրբարից էր՝ ծայրը կարմիր: Սկսել էր երբեմն ծխել, ինչպես ինքն էր ասում՝ «շախի խաթիր»:

Մահճակալի կողքից կախել էր կարմիր փայտից ծաղկանկար մի թղթապանակ, մեջը թուղթ մատիտ էր դնում. դա քառյակների տեղն էր: Գիշերները գրած քառյակները դնում էր դրա մեջ:

Գարնանային աստղալի գիշերները, պատշգամբում իր ճոճաթոռին նստած, արևելյան գունավոր մետաքսե խալաթը հագին, գլուխն աչ ձեռքին հենած, աչ ոտքը ձախին պցած, ամբուլովին իր մտքի ծավն ընկած, երկար-երկար նայում էր երկնքին, ամեն ինչ մոռացած, ասես աշխարհից վերացած: «Անէանում էր...», ինչպես մի անգամ ասաց զրույցի միջոցին և ավելացրեց. «Անհունության գաղափարը մեծ գաղափար է. մի ժամ մտածելը շատ ծանր բան է— խելագա-

րության հասցնող բան... Մարդիկ սովորություն չունեն կրկնքին նայելու, մինչդեռ շատ է կարևոր...»:

Երբ այդ ժամերին մոտը մարդ էր գալիս՝ տիեզերքից էր խոսում, կյանքի ու մահվան գաղտնիքներից, կյանքի ունայնությունից, գոհունակության դժգոհումից, արնակքի իմաստունների էր մտաբերում. Սաադուն, Հաֆեզին և հատկապես Օմար Խայամին: Այդ այն շրջանն էր, երբ հաճախ էր կարդում Խայամի քառյակները և մտաբերում. «Լավ է ասում Օմար Խայամը՝ ենթադրվր թե մեռած ես արդեն, և էս օրերը դատած համարիր ու քեֆ արա, քեզ համար ապրիր, էս օրդ վայելիր... Ի՞նչ ենք մենք, Ի՞նչ է մեր կյանքը էս ծով օվկիանոսում— մի հյուլն անցնող...»:

Խոսում էր և գոհունակության դժգոհումներից, մանավանդ, երբ հյուրերից որևէ մեկը դժգոհում էր իր կյանքից. գոհ եղիր, ուրախ ու գլխարթ, սիրտդ ուրախ պահիր, ուրախ, որ ամենադժվար բանն է կյանքում:



«Գեղարվեստում ու կյանքում ամենաէականն ու ամենաթանկը— պարզությունն է:

Ուժը պարզության մեջ է. դրա համար նիցշեն տկար է. նա շունի Գյոթեի պարզությունը»:

«Գրել անկեղծ ու կենդանի լեզվով,— դա է գրողի պիսավոր արժանիքը»:

«Արվեստը պետք է լինի աչքի նման թափանցիկ, պարզ և աչքի նման բարդ»:

«Լիրիկան թանկագին գոհար է, նրա ազդեցությունը հենց հզվվածության մեջ է»:

«Ամենամեծ ստեղծագործողն ինքը ժողովուրդն է, և նրա ամենամեծ ստեղծագործությունը՝ հեթիաթը»:

«Մարդ որքան մոտ լինի իր երկրին ու իր ժողովրդին, որքան շատ խորանա ժողովրդական ստեղծագործության մեջ, այնքան ավելի մեծ է ու համամարդկային. էդ ճանապարհով միայն գրողը կարող է համամարդկային գրականության մեջ տեղ ունենա»:

«Մենք մարդ նախ և առաջ իր լեզուն պիտի իմանա, իր երկիրն ու ժողովուրդը. իրեն պիտի ճանաչի, իր հարեաններին և հետո հեռուները գնա՝ դեպի համաշխարհայինն ու համամարդկայինը»¹։

1905—1912

1905 թվականի նոյեմբեր ամիսը. ձյուն, ցուրտ, խառը օրեր, աճ ու վախի օրեր։ ԱՏՆ ու վախը դգում էինք մեր շքր-շապատում, մարդկանց հարաբերությունների մեջ, առօրյա կյանքում, նույնիսկ օդում։ Մարդիկ խոսում էին ցածր ձայնով, դգուշ, ամեն ինչ արվում էր լուռ, ծածուկ, գաղտագաղտ։ Այդպես էր գրությունը Շուլավերում, երբ լսեցինք հրացանի առաջին ձայնը։ Լուր եկավ, որ ներքին Շուլավերից թուրքերը հարձակվում են։

Ես և բուլբերս մայրիկի հետ Շուլավերում էինք, իսկ Հայրըս եղբայրներնս հետ գնացել էր գյուղ՝ Դսեղ։ Երբ իրարանցումն ընկավ, երկու օրից հորեղբայրս Դսեղից եկավ Շուլավեր, մեզ գյուղ տանելու։

Շուլավերից մինչև երկաթգծի կայարան՝ Աշաղա Սարալ (այժմ Շահուսյան) 7—8 կիլոմետր էր։ Գնում էինք գիշերով, կառքերով, երկու կողմից զինված պահակներ։ Գավառապետը տասներկու ստրամնիկ էր տրամադրել՝ հնարավոր հարձակումից մեզ պաշտպանելու համար։ Գնում էինք լուռ աճ ու դողով...

Կայարան հասանք ուշ գիշերով։ Գնացքով եկանք մինչև մեր գյուղի կայարանը՝ Քոլագերան։ Գյուղից ձիեր էին բերել։ Հայրիկն էլ էր եկել կայարան։ Որոշեցինք հենց գիշերով բարձրանալ գյուղը։ Չյուն, ցուրտ։ Չգիտեմ, լուսինն էր, թե լուսնի ռեժիմի ձյունը, որ լուսավորում էր մեր ճամբան։ Շշուկով խոսելով բարձրանում էինք. Լուսա խորունկ

¹ Մինչև այսօր ժամանակագրական և նթագրված հաջորդականությամբ ներկայացվել են թվագրում լուսնեցող գրառումները։ Այսուհետև դրանք խմբագրված են ըստ նշված թվագրության։

ձորի միջով։ Միայն ձիերի սմբակների ձայնն էր լսվում ու երբեմն էլ խրխիչներ...

Գյուղ հասանք լուսադեմին։ Այս ու այն կողմից հաշտյներ լավեցին և արագադի կանչեր։ Մեր քարավանը՝ մոտ 15 ձիավոր, հանգրվան գտավ տանը։

Այդ օրվանից ծայր առան գյուղացիների այցելությունները և հայրիկի շրջագայությունները գյուղից գյուղ, կայարանից կայարան, հայաբնակ ու թուրքաբնակ սարերն ու վայրերը։

Ջալալօղլուց հայրիկի համար մի ձի էին բերել, անունը Մարս. ուսական ցեղի մուգ կարմրավուն շատ մեծ ձի էր, այնքան բարձր, որ հայրիկը ձի նստելիս տան հարսները աթոռ էին բերում, որ աթոռի վրա բարձրանալով նստի։ Հիշում եմ, մի քանի անգամ կերակրելիս շամիչ տվին նրան։

Հիշողությանս մեջ մնացել է այն օրը, երբ հայրիկը մեկնեց խամբուլաղ թրքաբնակ սարը՝ թուրքերի հետ հաշտություն կայացնելու։

Գարուն էր, սար դուրս գալու ժամանակը։ Լուռ ամեն մի գյուղ, համաձայն հայրիկի կարգադրության, շրս-հինգ ներկայացուցիչ էր ուղարկել Դսեղ, որտեղից գյուղացիները, հայքիկի առաջնորդությամբ, պիտի գնային խամբուլաղ։

Հավաքվել էին մոտ հարյուր ձիավոր, գուցե ավելի։ Մեր տան պարտեզը, կտուրն ու պատշգամբը լիքն էին տեղացի ու եկվոր գյուղացիներով։ Այդ օրվա ճաշի համար հարեաններից սինիներ հավաքեցին, մեծ-մեծ սինիներով ձվածեղ արին ու ճաշ տվին հենց պարտեզում։ Շատերը պարտեզի պարսպի քարերի վրա էին նստել, մի քանիսն էլ ծառերին էին բարձրացել, որ հայրիկի ճառը լսեն ճանապարհ ընկնելուց առաջ։

Աստղիկը՝ հորաբուլբուրս, շտապ-շտապ կարում էր սպիտակ և կարմիր (հաշտության և կուլի) դրոշակներ, որոնք փաթաթեցին ու դրին խուրջինի մեջ։

Հայրիկն իր սենյակում նստած մատիտով գրում էր մի կոշ, որը հետևյալն էր։

«Մենք, լուսնեցիներս, չենք հարձակվում ու չենք կռվում մեր հարեան թուրքերի հետ և ոչ մի կողմի վրա, որովհետև

Եթէ ուժեղ ենք— անիրավութիւնն է, եթէ թույլ ենք— Հիմա-
րութիւնն է:

Մենք պահպանում ենք խաղաղութիւնն և հաշտութիւնն—
դրա համար բարձրացնում ենք սպիտակ դրոշակ և կոչ ենք
անում մեր հարեան թուրքերին էլ մեզ հետ միասին. պահել
խաղաղութիւնն: Եվ երգելում ենք միշտ մաքուր ու բարձր
պահել մեր սպիտակ դրոշակը:

Իսկ եթէ նրանք մեզ չեն լսիլ և կհարձակվեն մեր գյուղե-
րի վրա— կաշխատենք պետական ուժով դրա առաջն առնել,
և եթէ այդ անկարելի եղաւ, մենք ինքներս դուրս կգանք:
Նրանց դեմ ու անխնա, բայց այնուամենայնիւ դարձյալ չենք
գնալ նրանց գյուղերի վրա»:

Հայրիկի լիազօրները արտագրում բազմացնում էին «Կո-
չը» գյուղերում ցրելու համար:

Գնացողների երթը ճանապարհ դրին դուռնա-դհոլով: Հեծ-
յալները դնացին դեպի դաշտ՝ Դըղի փեշերը, Շամուտի և
Աթանի ուղղութիւնք:

Մենք բարձրացանք տան կաուրը՝ տեսնելու այդ ձիար-
շապը...

Նրանց ճանապարհ էր դնում Նանը, որ հանեց թաշկինակը
ու լաց եղաւ: «Տղես գնա՛ց...»: Տատիս օրինակին հետևեցին
մայրիկը, հորաբույրերս և հետո բոլոր երեխաները:

Երբ նրանք հաշտութեան դրոշակով վերադարձան, կով մոր-
թեցինք, գուռնա-դհոլով քեֆ սարքեցինք:

Արտիկն ու Համլիկը տասը-տասնմեկ տարեկան երե-
խաներ էին. դուրս եկան գեղամեջ, հանդում պատահած էշերին
հավաքեցին, նստեցին և գյուղի երեխաների հետ դուռնա-
դհոլով դնացին հայրիկին ընդառաջ:

1906 թվականի ամառը Դսեղ ամառանոց էին եկել նկա-
րիչներ Փ. Թերլեմեղյանը, Ալ. Միրզոյանը և կոմպոզիտոր
Գր. Սյունին:

Հաճախ միասին էին գնում գյուղի շրջակայքը:

1905—1906 թվականներին ստիպված եղանք տեական-
ժամանակ մնալ Դսեղում, նույնիսկ աշունն ու ձմեռն ամիս-
ներն անցկացնել Լոռում: Հայրիկը Դսեղի մեր հին պապենա-
կան տան-առաջին հարկի վրա ավելացնել ավելց մի հարկ:

Ճա՛ փայտաշեն երկու սենյակ: Դրանցից մեկն իր առանձ-
նասենյակն էր և ընդունարանը, մյուսը՝ մայրիկի ու երեխա-
ների սենյակը: Դիմացի պատի լուսամտի առաջ, որտեղից
Երևում էր Քոշաքար սարը, զրված էր հայրիկի գրասեղա-
նը, ձախ կողմից հայրիկի թախտը՝ խալիով ու մուսթաբա-
ներով: Դիմացի պատից կախված էր Աբիխի՛ քարտեղը. սե-
ղանի վրա Բրեմի բնագիտական, Պլատոնի բժշկական հա-
տորները, կողքին՝ բառայաններ:

1906 թվականի աշնանը եկանք Թիֆլիս: Մեր հին բնա-
նյարանը վերանորոգել էին:



Հայրիկին մտահոգում էին ժողովրդի անպաշտպան դու-
թիւնը, կյանքի ծանր պայմանները: Մտածում էր գյուղացուն
ապահովել նախ և առաջ հացով: Ձմեռը եղբորը՝ Վահանին,
ուղարկում էր Ալեքսանդրապոլ, ժողովրդի համար վագոնով
ալյուր փոխադրելու Դսեղ: Հայրիկն իր եղբորը մի նամակ
է տալիս Ավ. Իսահակյանին հանձնելու, որ նա աջակցու-
թիւն ցույց տա: Իսահակյանն իր հերթին դիմում է Վարդի-
կովների օգնութեանը: Եվ ժամանակին երկու վագոն ալյուր
է փոխադրվում Դսեղ: Ունեւորներին վաճառում են, իսկ շքա-
վորներին բաժանում ձրիաբար:



1907 թվականի ամառը ռուս գրող, ֆուլկլորիստ Վլ. Բոգո-
րազ-Տանի հետ դուրս եկան ճամփորդութեան՝ Երևան, էջ-
միածին, Հաղպատ, Սանահին:

Տանը իր սպավորութեանները հրապարակել էր «Рус-
ские ведомости». թերթում (հետագայում լույս է տեսել նրա
երկերի ժողովածուի 9-րդ հատորում):

1 Աբիխ Լեւման Վիլենլի— 19-րդ դարի խոշորագույն երկրաբան:
Կովկասյան երկրների հետազոտողը: Նրա մեծարժեք աշխատութեաններից
մեկն է՝ «Հայկական բարձրավանդակի երկրաբանութիւնը: Արեւմտյան
հատված»: 1844 թվականին Խ. Աբովյանն Աբիխին ուղեկցել է Արարատի
պագաթը կատարած վերելքին:



Հայրիկն ամառները, երբ Յիֆլիսից գյուղ էր գնում, նա-
խօրոք հայտնում էր տանեցիներին, որ ձի բերեն Քոլագերան:
կայարան: Գյուղի շահեղներն իջնում էին ձորը, երեխաներն:
ու աղջիկները Քարի գլուխն էին գնում ղիմավորելու, իսկ մո-
տիկ բարեկամները, գյուղի ծերերը գալիս էին տան կուերը:
հավաքվում ու սպասում հայրիկի գալուն:

Մի ամառ, կալի ժամանակ, կայարանի ձորից մենակ բարձ-
րանում է դեպի գյուղ: Համագյուղացիներից մեկը տեսնում է
հայրիկին, որ շոգին վերարկուն թևը պսած գնում է ոտքով:
Հարցնում է. «Բա խի՞ իմաց շարիր, աղաքը ձի բերեիր...»:
Հայրիկը թե՛ «Կալ ու կուտի ժամանակն է, աշխատանքի թե՛
ժամանակ, ձին կալից պիտի հանեիք բերեիք ձորը, — կալի
աշխատանքը կմնար. էդ մի վնաս: Զիտ հետ էլ մի մարդ:
պիտի գար կայարան. էդ էլ երկու վնաս: Հետո էլ դեղացիք
գեղի ծերը պիտի գալին սպասեին, բանախափան լինեին»
էդ էլ երեք վնաս: Էսենց ավելի լավ է»:



Ամառները, երբ գյուղ էր գնում, հարազատների, ազգա-
կանների, ընկերների համար նվերներ էր տանում:

Քույրերի և հորեղբոր աղջիկների համար գնում էր սպիտակ
կամ գունավոր գլխանոցներ, տան հարսների համար՝ կար-
միր, իսկ տան մեծերի համար՝ սև:

Գյուղի երեխաների համար մեծ արկղով կոնֆետ ու գա-
լեթ էր տանում, շաղ էր տալիս սեղանի վրա կամ բարձրա-
նում էր կուուրը, երեխաներին հավաքում շուրջը և բաժա-
նում:



Ամառները գյուղ գնալիս հետը մի քանի արկղ գիրք էր
տանում իր ձեռագրերի հետ միասին, որ նստի ու հանգիստ-
պարապի, բայց գրքերի մեծ մասը առանց կարդալու էտ էր
բերում:

Գյուղացիները՝ թե՛ մեր, թե՛ մտակա գյուղերից, շարու-
նակ մտոն էին գալիս տեսնելու, գրուցելու, բայց ավելի հա-
ճախ իրենց գործերով՝ դատական գործեր ու հողային վե-
ճեր, խնդիրքներ, Յիֆլիսի հետ կապված ղիմումներ, դպրո-
ցական և հաղար ու մի այլ խնդիրներ: Հիվանդներն էլ գա-
լիս էին դեղի կամ բժշկական խորհուրդներով: Նա այդ գիտեր
ու հետը միշտ տանում էր իրավաբանական, բժշկական և
ուրիշ գրքեր: Տանում էր մեծ քանակությամբ դեղորայք՝ խի-
նին, յոդ, լուծողական, ասպիրին և այլն:

Միրում էր գյուղացիների հետ գրուցել: Լիներ տանը,
կուուրի վրա կամ դուրսը՝ բնության մեջ, դաշտում՝ խոտհն-
ձի, անտառում՝ որսի ժամանակ, մշտապես գյուղացիների հետ
էր: Խորհուրդ էր տալիս, օգնում ամեն կերպ: Բոլոր ղիմում-
ներին ու նամակներին, որ անվերջ էին, հետևում, ընթացք
էր տալիս:



Մեծ կարևորություն էր տալիս գյուղի կրթական դրժին՝
դպրոց հիմնել ուսուցիչներին ուճիկով, աշակերտությանը՝
դասագրքերով և գրականությամբ ապահովել:



Մտահոգված էր նաև գյուղի ճանապարհներով: Հնում իր
պապերի մտահոգությունն է եղել կամուրջ և ճանապարհ
պցելը: Հայրիկին դբադեցնում էր նախ և առաջ Գսեղ-Շահալի
խճուղու խնդիրը, որ լուծվել է հենց այդ տարիներին (1905--
06 թթ.): Ապա՝ Քոլագերան կայարանից Դերեղ գետի աջ ափի
գյուղերը տանող ճանապարհը կառուցելը, որի համար 1906
թվականին ղիմել էր շրջանի գավառապետ Իվան Լևենին:



1908 թվականի դեկտեմբերի 23-ին, ձմռան մի ցուրտ դի-
շեր, ժանդարմները քաղաքամասի ոստիկանության պետի
հետ, եկել են մեր բնակարանը: Այդ ժամանակ մենք ապրում

էինք Բեհրուժյան փողոցում: Խուզարկությունը տեւել է մի քանի ժամ: Երբ քնից արթնացանք՝ տեսանք հայրիկի ձեռագրերը թափված գետնին, գրասեղանի արկղերը, գրադարանի պահարանի դռները բաց և գրքերը հատակին թափված: Մանրամասն խուզարկելուց հետո ձեռագրերը մեծ կապոցներով կապեցին ու խառը լցրեցին պարկերի մեջ: Հայրիկին ու մեծ եղբորս՝ Մուշեղին, սարան:

Դուրսը ձյուն էր, լուսնյակ գիշերն Լուսանում էր: Պատըզգամբից նայեցինք. ոստիկանները հայրիկին ու եղբորս շքր-չապատած տանում էին:



Իր մոր՝ Սոնա նանի երազները և նախազգացումները՝ հայանի էին:

1908 թվականին, դեկտեմբերի 24-ի առափոտը՝ հայրիկին ու Մուշեղին բանտ տանելու հաջորդ օրը, նանը գլուխից Թիֆլիս եկավ շատ տխուր, թե տղիս վրա երազ եմ տեսել ու եկել, Օհանեսս ո՛ւր ա...

Չէինք կարող թաքցնել, որ բանտումն է: Եվ նանը պատմեց, թե՛ երազիս տեսա թխականը իր ճուտերով մեր հողերի վրա պնաց, համա որձակը՝ երկու ճուտով ջգվեց, ներքի կուռը գնաց... ասի, տղիս մի բան ա պատահել, վեր կացա՛ եկա...



Հայրիկին Մեռելսի բանտ (№ 15 կամերա) տանելուց հետո շաբաթը մեկ-դնում էինք տեսակցության:

Բանտապետի օգնականը, մի շատ բարի ուս մարդ, մեզ աղատ տեսակցություն էր տալիս, առանց ցանցի: Գիտեին, որ տասը երեխա ունի և ամեն անգամ, երբ երեխաներով մայրիկի հետ բանտն էինք գնում, թույլ էին տալիս աղատ խոսելու: Ամենափոքրը Թամարն էր, մայրիկը նրան գրկած էր տանում: Մի օր, տեսակցության ժամանակ, հայրիկը Թամարին գրկելիս բարակ ծխախոտի թուղթ դրեց երեխայի գրկը: Եկանք տուն, տեսանք ծխախոտի թղթի վրա գրված «Մի կաթիլ»

«մեղրը» և «Վայրէջքը»: Վերջինը գրել էր իր ծննդյան 40-ամյակին՝ 1909 թվականի փետրվարին:

Դատաքննիչ Ն. Կիժինը հայրիկին առաջին անգամ հարցաքննության է ենթարկել 1909 թ. մարտի 20-ին:

Բանտի մուտքի պահակներից մեկը՝ Օբեդնիկով ազգանունով, բարի մարդ էր: Մեզ հետ շատ լավ էր վարվում: Հայրիկի ուսուցիչը երբեք չէր նայում, չէր խոսարկում, չէր լսառնում: Բացում էր, մի թեթև նայում և տանում հայրիկին: Հայրիկը հյուրասիրում էր նրան:

Մի ամսից Մուշեղին աղատեցին, իսկ վեց ամսից՝ հունիսի 13-ին, աղատեցին նաև հայրիկին՝ Ֆ. Վարդապարչյանի տրամադրած 5000 ռ. գրավականով:

1909 թվականին մեր ընտանիքը Բեհրուժյան փողոցից տեղափոխվեց Վոդնեսենսկայա փողոց, № 18, երրորդ հարկը, և դա եղավ հայրիկի վերջին բնակարանը: Նոր բնակարանը բազկացած էր յոթ սենյակից, չորսը՝ բակի կողմից ընդարձակ պատշգամբով նայում էին դեպի Բուսաբանական այգու սարք: Սրանք արևոտ էին և լուսառատ, իսկ մյուս երեք սենյակները հյուսիսային կողմն էին, նայում էին դեպի փողոց և գրեթե անարև: Ահա այդ երեք սենյակներից անկյան սենյակն էր ընտրել հայրիկն իբրև առանձնասենյակ. երեխաների աղմուկից հեռու: Ընտանիքը բազմանգամ էր, եկող-դնացողը՝ շատ:



Հայրիկի առանձնասենյակը մեծ էր և ընդարձակ. ուներ երկու մեծ լուսամուտ և երկու դուռ, մեկը բացվում էր դեպի Կենդանարան, մյուսը՝ ընդունարան:

Գրասեղանը դրված էր սենյակի գրեթե կենտրոնում և

1 Խոսքը վերաբերում է Նովոչերկասկի դատաքննիչ Ն. Կիժինին, որին հանձնարարված էր վարելու, այսպես կոչված, «Գաշնակցության գործը», որը սպազորվել է և կազմում է յոթ մեծագիր հատոր: Հովհ. Թումանյանի քանտարկության և դատավարության մանրամասնությունների մասին իր հուշերում գրել է բանաստեղծի ավագ դուստր Աշխեն Թումանյանը (տե՛ս «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» գիրքը, Երևան, 1969 թ.):

նալում էր դեպի լուսամուտները: Գրասեղանի առաջ ձոճաթոս էր դրված, իսկ գրասեղանի մյուս կողմը, իր դիմացը, մի բազկաթոս՝ այցելուների համար:

Սենյակը կահավորված էր հետևյալ կերպ. աջ պատին, լուսամուտին կից դրված էր հայագիտության պահարանը՝ № 5-ը, ապա բյուրոն, որն ուներ 36 դարակ: Սրանց մեջ խնամքով դասավորված էին ձեռագրերը՝ ըստ նյութերի և ամեն դարակի վրա իր ձևորով դրված էր համապատասխան խորագիր. օրինակ՝ պոեմներ, լեգենդներ, «Հաղարան բըլբուլ» և այլն: Գրա կողքին կար մեծ, երկար, բամբուկե գրադարակ, որի վերևում դասավորված էին ընտանիքի անդամների նկարները և այլ փոքրիկ, գեղեցիկ իրեր, ներքևում՝ կարևոր գրքեր, բառարաններ, Բրոգհատուղի և էֆրոնի հանրագիտարանը և այլն: Այնուհետև դրված էր Արևելքի պատմության գեղեցիկ պահարանը. այդ պահարանին ասում էինք «Իլյա Մուրոմեցի», որովհետև հայրիկը դա գնել էր «Իլյա Մուրոմեցի» թարգմանության հոնորարով: Ապա, սենյակի անկյունում, դրված էր ֆուլկլորի պահարանը (№ 2), մի հարուստ հավաքածու, որ ժամանակի ընթացքում մեծ սիրով հավաքել էր հայրիկը: Սրան հաջորդում էր կամոզը: Գիմացի պատի անկյունում դրված էր կովկասագիտության պահարանը (№ 9): Հայրիկն ինքն էր գրադարանը կարգավորել ըստ թեմաների՝ հայագիտություն, ֆուլկլոր, կովկասագիտություն, գեղարվեստ և այլն: Կովկասագիտության պահարանին հաջորդում էր թախտը, որի առաջ դրված էր մի ձվաձև սեղան, ծածկված արևելյան գեղեցիկ ծածկոցով, ծաղկամանով, երբեմն՝ իր սիրած ծաղիկներով՝ վարդ, մեխակ, մանուշակ: Դա «լրուլցի սեղանն էր»: Ո՞վ չի եղել այդ փոքրիկ սեղանի շուրջը. Աղայանն ու Կոմիտասը, Լեոն ու Շիրվանզադեն, Մառը՝ և Զիվիլեզովը², Շանթն ու Սիամանթոն, Իսահակյանն, ու Փափաղյանը, Հովհաննիսյանն ու Մատուրյանը, Բրյուստ-

1 Մառ Նիկողայոս Յակովլևիչ— հռչակավոր լեզվաբան, հնչաբան և հայագետ. երկար տարիներ գլխավորել է Անիի պեղումները

2 Զիվիլեզով (Զիվիլեզյան) Ալեքսեյ Կարպովիչ— վերածննդի դարաշրջանի գրականության և արվեստի ակադեմիոյի մասնագետ, հրատարակատու: Ամբողջ գործունեության ընթացքում գրադրել է հայ ժողովրդի

վը, Գորոդեցկին¹, Յաշվիլին, Տարիձեն, Գրիշաշվիլին² և շատ ու շատ ուրիշներ: Զրուցում էին, վիճաբանում...

Բացի հյուրերից, այդ սեղանի շուրջը հաճախ լինում էին զանազան վարչութիւնների նիստեր, խորհրդակցութիւններ, որոնց նախագահն էր հայրիկը: Օրինակ՝ Գրողների ընկերության, Հայկազյան ընկերության, Հայրենակցական միության և այլն. միաժամանակ յոթ վարչության նախագահ էր: Մի անգամ էլ փորձեցին վերսկսել վերնատան հավաքութիւնները, սակայն այդ երկար շունչ:

Թախտի և վառարանի արանքում պատից կախված էր հեռախոսը, իսկ երկու պատուհանների միջև դրված էր կարմիր, երկարավուն սեղան, որի վրա դասավորված էին զանազան փոքրիկ քանդակներ, իսկ մուտքի մոտ, ձախ անկյունում դրված էր փոքրիկ պահարան՝ զեղորայքի համար:

Մի ժամանակ ոգևորվել էր բրոնզի փոշիով, գնել էր զանազան գուլնի՝ ոսկու, արծաթի, կապույտ և այլ գույներ ու դրանց համար փոքրիկ ամաններ: Այդ գուլներով ներկել էր պահարանները, զանազան իրեր: Մինչև հիմա էլ գրապահարանների վրա մնացել է նրա ներկածը:

Պահանջում էր, որ սենյակը մաքրելուց հետո ամեն ինչ իր տեղում լինի և անմիջապես նկատում էր, եթե ալդպես չէր. այդ գործով զբաղվում էր հատկապես Անուշը, նա շատ զգույշ էր և ուշադիր:

Պատից կախված էին Փանոս Թերլեմեզյանի, Եղիշե Թադևոսյանի, Ալեքսանդր Միրզոյանի, Գևորգ Բաշինջաղյանի և ուրիշ հայ ու օտար նկարիչների կտավներ:

Երբեմն մտածում ես, թե որտեղից նրան այդպիսի բարձր կուլտուրա և նուրբ ճաշակ. չէ՞ որ հնարավորություն չունե-

պատմական հակատաղրի հարցերով (զրկել է հողվածներ և ուսումնասիրություններ): 1946-ին լույս է ընծայել իր «Հայաստանը և Թուրքիան» դատախոսությունը:

1 Կարոյեցկի Սերգեյ Մխրոբանովիչ— ռուս բանաստեղծ, առաջին ակադեմիստներից. Թումանյանի գործերի թարգմանիչներից մեկը

2 Պատրո Յաշվիլի, Տիցիան Տարիձեն, Իսուր Գրիշաշվիլի— վրաց բանաստեղծներ, Թումանյանի գրական ընկերները

ցավ ուսումն ավարտել, աշխարհ տեսնել, արտասահման գնալ, ինչպես իր ընկերներից շատերը:



1911 թ. հունիսի 20-ին, Ղաղարու Աղայանի թաղումից հերոս, հայրիկի հետ մեր տուն եկան Ավետիք Իսահակյանը, Ավետիս Ահարոնյանը, Գերենիկ Գեմիբճյանը և էլի ուրիշներ: Ճաշեցին հայրիկի սենյակում: Որտեղից որտեղ խոսք ընկավ խանդի մասին, հայրիկն ասաց մայրիկի մասին. «Երալավ կողմն էն է, որ խանդել չի իմանում»:

Երեկոյան դուրս եկան պատշգամբ. պարզ, լուսնյակ պիշեր էր: Ընթրիք արին, խոտոված կերան, դարեցուր խմեցին:

Ուշ գիշեր էր, երբ գնացին կայարան. Իսահակյանն ու Ահարոնյանը, որոնք նույնպես դատի տակ էին և աշատված գրամական գրավականով, դատավարությունից խուսափելու համար որոշել էին Ղարսի վրայով Թուրքիա անցնել և այնտեղից՝ Եվրոպա: Համոզում էին, որ հայրիկն էլ իրենց հետ դիմի փախուստի, բայց նա չհամաձայնեց:

Մեր քնակարանից իջնելիս Իսահակյանն ասաց. «Ո՞վ է իմանում, մեկ էլ ե՞րբ ենք այս սանդուղքներով իջնելու-բարձրանալու...»:



1911 թ. նոյեմբերի 7-ին հայրիկին բանտաբեկեցին երկրորդ անգամ: Մեկուկես ամիս Մետեխի բանտում պահելուց հետո, դեկտեմբերի 19-ի գիշերը քաղաքում լուր տարածվեց, որ բոլոր բանտարկյալներին Մետեխի բանտից տանելու են կայարան, այնտեղից ապրանքատար վագոնով՝ Պետերբուրգ՝ դատավարության:

Մենք բոլորս՝ մայրիկն ու երեխաները, ինչպես մյուս բանտարկյալների հարազատները, առավոտից մինչև երեկո Մետեխի բանտի մոտի փողոցներում ու նրբանցքներում անցկացրինք: Անհամբեր սպասում էինք բանտարկյալների դուրս բերելուն:

Օրը մթնում էր արդեն, երբ բանտի դռները ճոճալով բացվեցին...

Մեզ վրա շատ ծանր ազդեց բանտարկյալների սաքերի շղթաների զրնգոցը. գնում էին շարքերով՝ շրջապատված հրացանավոր սասիկաններով: Հայրիկը և մի երկու հոգի առանց շղթաների էին: Ասում էին, որպես ազնվական ծագում ունեցողների, ազատել էին շղթաներից:

Մի որոշ հեռավորության վրա ցրված, մթության մեջ, մայթերով գնում էինք նրանց զուգընթաց և հեռվից հետևում հայրիկին, որ գոնե հայացքով հրաժեշտ տալինք նրան: Քայլում էինք զգուշությամբ, վախենալով սասիկաններից: Երբ հասանք Չերկեզովսկայա փողոցը, անզգուշաբար մոտեցա բանտարկյալների շարքին. հայրիկն ինչ-որ բան էր ուզում հասկացնել, ասել, բայց երեւոյթին, որ տուն գնանք, ցրաին դուրսը շնորհ: Սասիկաններից մեկը նկատեց, հրացանն ուղղեց դեպի ինձ, ես փախա և մտա մոտակա դեղատունը: Երբ իմ թաքստոցից դուրս եկա՝ կալանավորներն արդեն շատ էի՝ հեռացել, այլևս չէի կարող հետեւել նրանց:

Շիշում եմ, երբ հայրիկին Պետերբուրգ էին տարել դատավարության, մայրիկը կատակով ասում էր. «է, ինչք հնարավորություն չունեցավ իր միջոցներով գնալու, գոնե կսպես աշխարհ կտեսնի»:

Արտավագ Թումանյանի նամակը

(Թիֆլիս-Պետերբուրգ)

«Միրելիդ իմ հայրիկ.

Երկու շաբաթից ավել է անցել մեր վերջին տեսակցությունից հետո և, չնայած էլքան ժամանակին, ես քեզ նամակ չեմ գրել:

Գիտես, որ նամակս գրում եմ քո սեղանի վրա, քո թանաքով, գրիչով, որոնք շատ են թանկագին և կարոտալի այժմ քեզ համար, սիրելի՛ հայրիկ:

Ոչինչ, քեզ է մնացել: Երկու ամսից հետո կգաս և ինքդ կտեսնես, որ քո գրասեղանը հենց էնպես է մնացել, ինչպես որ թողել ես: Պահարանները շատ կանոնավոր են, որոնցից

վերջին ժամանակներս երեսաները շատ են օգտվում: Եվ կրք երեկոները մեզ մոտ են գալիս մեր բարեկամները, նրանց համար գրամաֆոնով նվագում ենք քո սիրելի «Ռաստը», «Չոբան բայաթին», «Չարգիահն» ու «Մահուր հինդին», որոնք քեզ հիշեցնում են քո պաշտած Արևելքը—խաղաղ Արևելքը:

Էս քանի օրս գուցե ժողովրդական թատրոնում խաղան իմ «Ռուբենա» պիեսան:

Մանկական ցերեկույթներում խաղալու են նաև «Անբախտ վաճառականները»՝ պիեսի վերածած:

Գրելով այս փոքրիկ նամակը, խոստանում եմ գրել հաճախ:

Հենց էս րոպեիս ստացանք քո առաջին ուսուերեն նամակը: Իհարկե, շատ էր ցալալի, որ դու չէիր գրել քո մայրենի լեզվով: Եվ դրա համար մենք մի քիչ էլ ծիծաղեցինք: Թեպետ ինձ չէիր գրել նամակը, բայց ես քեզ մի բան եմ ուզում ասել:

Վա՛հ, դարմանալի է, մի՞թե էդտեղի надзиратель-ներն ու КЛОУЩИК-ներն էլ էն տեսակ բարի-մարդիկ են, ինչպես էստեղ:

Ասենք, ուրախալի է ոչ թե միայն էն բանի համար, որ լավ կլերաբերվեն դեպի քեզ, այլ որ կգան ապացուցանելու, թե ինչպիսի մեծ ժողովրդի ղավակներ են:

Սևուկն ու Սեդիկը շուտ-շուտ են պոկոտում օրացույցի թերթերը, որ «համ. Նոր տարին շուտ գա, համ էլ դու»:

Չերձ համբույրներով՝

որդիդ Արաիկ:

1911, 29 դեկտեմբերի, Թիֆլիս:

1912

1912 թվականի մարտի 20-ին Պետերբուրգից հեռագիր ստացանք, որ հայրիկին արդարացրել են և ազատ է արդեն:



Մուշեղ Թումանյանի նամակը
(Պետերբուրգ-Թիֆլիս)

«Մայրիկ ջան, ես նոր ճաշից տուն վերադարձա, տեսնեմ քո նամակը սեղանի վրա. էսօր լավ եղանակ էր, էնքան շոգ, որ համալսարան գնալիս շոգից քիչ մնաց տրաբվեի, 15—18 աստիճան է, մի խոսքով հրաշալի է: Ասում ես մերոնք, այսօրինք՝ հայրիկը, Աշխենը, Գիգան՝, ի՞նչ բանի են և կ՞րբ են գալու... Սա էնքան դժվար հարց է, որ ես չեմ համարձակվում պատասխանել: Ինչպես հիշում ես, ես առաջին մի քանի նամակներում գրել էի, թե 5—10-ին կլինեն էդտեղ, բայց էսօր 5-ն է ու դեռ էստեղ չեն. ասում եմ՝ մի քիչ երկար մնացեք, թե չէ գնում են ու գնում ու դեռ էստեղ են և մի նամակ էլ չեն գրում: Իսկապես հայրիկը էստեղ մեծ գործի վրա է. սրանք էսօր պիտի դուրս գալին դեպի ձեզ, բայց որովհետև շաբաթ օրը ժողով նշանակեցին հայրիկի առաջարկությամբ, այդ պատճառով էլ մնացին: Հայրիկը էս 400-ի տոնին² շատ բաներ է մտադիր անել, էստեղ Պետերբուրգի ու Մոսկվայի հայերից ուղում է մի բան սարքել, մի ֆոնդ: Իհարկե, շատ է ոգևորվել, հետևապես պարզ կլինի, թե հայրիկի քեֆը ինչպես է: Ամեն օր մի տեղ են լինում՝ թատրոն, ցուցահանդես, գրական մանկական հանդես, կոնծաբանություն, այցելություններ և այլն: Ամբողջ կուրսիայի հետ բարեկամացավ, սրանց բոլորի հետ դոստացավ: Անցյալ օրը մի ընթրիք էին սարքել հայկական ակումբում հայրիկի պատվին՝ մեծ քեֆ, ու տուն է եկել համարյա թե ծեղին, իսկ մյուս օրը հրավիրված էր էստեղի հայոց դպրոցի մանկական հանդեսին, մենք էլ, իհարկե, ներկա էինք. մասնակցում էին երեսաները: Ահա խմբական երգեցողության ծրագիրը մոտավորապես՝ «Մեր

¹ Խախիսյան Գրիգոր— իրավարան, բանաստեղծի ավագ դատեր ամուսինը. մասնակցել է 1912 թվականի դատավարությանն իբրև դատապաշտպան

² Խոսքը վերաբերում է հայ տոների դյուտի 1500-ամյակի և տպագրության 400-ամյակի տոնակատարությանը, որը կայացել է 1913-ին:

հայրենիք», «Զեյթունցիների մարշը», «Քրիստոս հարչավ»։ Մշակի 40-ամյա հոբելյանը, 400-ամյա տպագրության հոբելյանը, Խաղացին մի փոքրիկ պիես, մի երկու ոտանավոր արտասանեցին հայերեն, ռուսերեն ու ֆրանսերեն, ջութակի վրա նվագեցին, վիոլոնչելի վրա էլ և հետո տրիո, վերջը՝ մարմնամարդության¹ բժիշկ Բուդուդյանի¹ ձեռով, իսկ ամենավերջը ի պատիվ հայրիկի խաղացին «Շունն ու Կատուն»։ Վերջը երեխաներն ու մեծերը օվաջիաներ արին ու երեխաները (մասնակցողները) մոտեցան հայրիկին ի օրհնություն...

Ես չէի սպասում, որ մեր քթի տակին էսպիսի երեխաներ լինեն, իհարկե, արտասանությունը ռուսական է, բայց էլի հայերեն են խոսում։ Քիչ մնաց մոռանամ. հայրիկը էստեղ մի պաղվալ է գտել (Մակահի), գնում ենք շորսով ու կոնծաբանում։ Ահա, տեսեք ձեր պարոնները ինձ ինչպես են խրատում...

Էլ ի՞նչ ասեմ. դուք արանց հիմա սպասեցեք ապրիլի 20-ից ոչ վաղ, որովհետև եթե էստեղից դուրս դան 10-ին, Մոսկվա էլ մի 10 օր կմնան, ձեզ մոտ կլինեն հազիվ 22—23-ին։

Համբույրներով՝
Մուշեղ.

Ս. Պետերբուրգ, 1912, ապրիլի 5-ը, հինգշաբթի օրը»։



Պետերբուրգում, բանտից ազատվելուց հետո, հայրիկը հնարավորություն է ունենում բուլկինիստների խանութները պատել և իրեն հետաքրքրող գրքեր գնել։

Վերադարձին ասել էր. «Կալ առիթ կղավ ինձ համար, բուլկինիստներից բավականին լավ բաներ եմ հավաքել, հետո տանում եմ»։ Հինգ արկղ գիրք էր գնել, մեծ մասը ժողովրդ-

¹ Բուդուդյան Աբաղյան — բժշկապետ, հասարակական գործիչ, բժշկական բազմաթիվ գրքուկների հեղինակ. Թումանյանի մտերիմներից

պական էպոսին ու ֆուլկլորին վերաբերող գրքեր։ Մտածում էր հետագա տարիներին մի անգամ էլ անցնի Մոսկվա և Պետերբուրգ, հատկապես գրքեր գնելու համար, բայց չհաջողվեց։



Ապրիլի 16-ին «Տիտանիկ» խորտակման լուրը շատ էր բազդել բոլորի վրա։ Ժամանակի մեծագույն շոգենավը, Ատլանտյան օվկիանոսում ընդհարվելով սառցալեռան, խորտակվել էր բազմաթիվ ուղևորներով։

Մի քանի օր հետո, երբ հայրիկը եկավ Թիֆլիս, ասաց, որ իր վրա մեծ տպավորություն էր թողել նվագախմբի հերոսական քայլերգը՝ խորտակվողների ոգին բարձր պահելու համար։ Հայրիկը գնեց «Տիտանիկ» քայլերգի պլաստիկան։ Լսում էր, հիանում մարդկային հերոսությունք, աներկյուղ հայացքով մահվան հանդես։



Ապրիլի 18-ին, օ. 2-ին հեռագիր ստացանք հայրիկից, որ վաղը թամբ 10-ին Աշխենի և Գրգալի հետ կլինեն Թիֆլիսում։

Այդպես էլ կղավ։ Շատ մարդ էր կիկղ դիմավորելու։



1912-ին արդարացվելուց և ազատվելուց հետո, հայրիկը մի երկու շաբաթ մնացել էր Պետերբուրգի և Մոսկվայի ռուս մտավորականների և գրողների շրջանում։ Շատ գոհ էր այդ նոր ծանոթություններից։

Նրա վրա ուժեղ տպավորություն էր արել այդ շրջանում լսած ռուսերենը. «Պետերբուրգում և Մոսկվայում, ռուս գրողների շրջանում նոր հասկացա, թե ռուսերեն լեզուն որն է։ Նրանց շեշտը, արտասանությունը շատ էր տարբերվում մեկ

մոտ ուսերեն խոսողներից, էն խոսողների, որ իրենց համարում են ուսերեն լավ իմացող: Նոր տեսա, որ սրանք լավ չգիտեն ուսերեն...»:



1912 թ. գարնանը Մոսկվայում հայրիկը ներկա է եղել մի հայտարարի, որ եղել են Ալեքսանդր Մատուցյանը, Վահան Տերյանը, Պողոս Մակինցյանը և ուրիշներ: Խոսք է բացվել այն մասին, թե ուսերեն ինչպես դիմեն հայրիկին: Տերյանն ու Մակինցյանը կես-լուրջ, կես-կատակ առաջարկել են թումանյանի անուն-հայրանունը թարգմանել «Իվան Փաղեյի»: Եվ դա տարածվեց, ավելի ևս հաստատվելով բրյուսովյան օրերին:



Հայրիկի առողջության քայքայման և նկատելի ծերության նշանները երևացին 1912 թվականի գարնանը, երբ ազատվեց և վերադարձավ Թիֆլիս: Քառասուններք տարեկան էր, բայց դեմքի արտահայտությունը և գույնը փոխված էր արդեն: Առաջվա դվարթ խաղը, մաշկի վարդագույն առողջ գույնը կար այլևս: Քայլվածքն էլ փոխվել էր, մեջքը կոացել: Այդ բոլորը երևի բանտում երկար ամիսներ նստելու և ապա դատավարության հետ կասրված ապրումների ու հուզումների հետևանքն էր: Մանրամասն պատմում էր այդ ամենի մասին:



Մի օր տեսավ երեսուները սեղանատանը «բանտ են խաղում»:

Վրան շատ աղոթեց:



1912-ին Արտիկը գրել էր «Վան-Դեյկ» պիեսը, իսկ Համիկը «Խնչ է գեղարվեստը» հոդվածը: Հայրիկի Պետերբուրգ եղած ժամանակ Արտիկն ու Համիկը բանավեճ էին սկսել Մուշեղ Աղայանի հետ գեղարվեստի շուրջը: Լեոն, որպես խմբագիր, «Հորիզոնում» տպել էր նրանց ակնարկները: Հայրիկը, որ վերադարձավ Թիֆլիս, մի օր Լեոյին ասել էր. «Այ մարդ, ամբողջ աշխարհը կանգնել է ու չի կարողանում ապացուցել, թե ինչ է գեղարվեստը, սրանք գրում են՝ թե ինչ է գեղարվեստը, ավելորդ ենք համարում խոսել: Ասենք սրանք սարսաղ են, գրում են, դու ահագին մարդ, ի՞նչ ևս սրանց խելքին ընկել, տպել»: Լեոն ասել էր ծիծաղելով. «Դե, ասի, հերները բանտարկված է, տպեմ, սիրտները չկտրեմ»: Իսկ իր տղաներին հայրիկն ասաց. «Նախքան էդ տեսակ հարցերի մասին գրելը պետք է կարդալ, շատ կարդալ գեղարվեստի մասին, ճաշակ վարդացնել, հետո գրել»:



1912 թվականին, բանտից ազատվելուց հետո, մտածում էր «Մասունցի Դավիթը» նորից գրելու, մշակելու մասին: Առաջին գրածը չէր հավանում: Ասում էր. «Մա իմ առաջին «Անուշն» է, ինչպես «Անուշն» եմ հրկրորդ անգամ մշակել, գրել, էնպես էլ «Մասունցի Դավիթը» նորից պետք է գրեմ»:

Այդպես էր մտածում և «Մծիրի» մասին. առաջին թարգմանությունը նույնպես չէր հավանում: Հետագայում՝ 1913 թվականին, մտածում էր նորից թարգմանել, ինչպես ինքն էր ասում՝ «աչքի անցկացնել»: Արխիվում մնացել է նոր կատարած թարգմանության երեսուն տողը՝ սևագիր:

Բարձր էր գնահատում իր «Մի կաթիլ մեղրը». ասում էր՝ համաշխարհային գրականության մեջ դա կարող է տեղ ունենալ:



Հայրիկն ասում էր. «Գիբորը» շատ վաղ եմ գրել՝ 1895 թվականին և կարդացել եմ Շիրվանդադեին, բայց չի տարվել: Արտատուչ բան է, իրական դեպք. մեր ազգականներից մեկի երեխային, Ստեփան անունով, Դսեղից բերել են Քիֆլիս, գերձակի աշակերտ տվել: Ծանր հիվանդացավ: Ծնողները գյուղից եկան Քիֆլիս, երեխային տարան Դսեղ, էնտեղ էլ թոքախտից վախճանվեց»:

Գիբորը հայրիկի հորեղբայր Մամի փոքր տղան էր: Թիֆլիսում հայրիկը գնաց հիվանդանոց երեխային տեսնելու: Վրան շատ էր ազդել, մի շաբաթ ոչ կարգին քնում էր, ոչ հաց ուտում:

«Գիբորի» վերաբերյալ հիշում եմ նաև հայրիկի այս խոսքը. «Գիբորը» պատահական բան է: Ես արձակ գրում եմ պատահաբար, ես հո վիպասան չեմ, ես դրամատուրգ եմ»:

Ասում էր. «Իմ «Չարի վերջը» եթե մշակեմ՝ մանկական գրվածքներիս գլուխգործոցը կլինի»:



1912 թվականի ամառն էր: Հայրիկը թույլ էր, հոգնած ու հյուծված: Որոշել էր Դսեղ գնալ, թեկուզև կարճ ժամանակով, մի քիչ հանգստանալ:

1905—1906 թվականներից Դսեղ չէր եղել: Լեռն, որ վաղուց ի վեր մեծ ցանկություն ուներ Լոռին տեսնելու, բնկերացավ հայրիկին: Հուլիսի կեսերին նրանք ճանապարհվեցին Դսեղ:

Հայրիկը, որ ճանապարհից շեղվելու սովորություն ուներ, այս անգամ էլ՝ նախ եղավ Շուլավեր, ուր մնաց մի քանի օր՝ աչքիներում ու մոտակա աղբյուրներում իր հին ծանոթների հետ ժամանակ անցկացնելու:



«Գիբորը» իբրև պիես առաջին անգամ բեմադրվել է 1912 թվականի ամառը, Դսեղում: Պատմվածքն Արտիկն էր պիեսի վերածել: Դպրոցի շենքում բեմ էին պատրաստել, վարագույրը վերցրել էին եկեղեցուց: Դերակատարներն էին մեր ազգականներից մեկի տղան՝ Վաղարշակ Թումանյանը (Գիբոր), Արտիկը (Համբո), Վախթանգը (բազազ Արտեմ), Անուշը, Արփիկը, Համլիկը (հյուրեր):

Հունվարի 13-ին հայրիկին այցի եկավ Պ. Մակինցյանը: Մնաց ճաշի, հետո երեկոյան թեյի: Խոսում էին մեր գրականությունից, Վահան Տերչանից, ուսու գրականությունից, ուսու գրողներից:

Երեկոյան երեքով գնացինք թատրոն՝ Լ. Շանթի «Հին աստվածները» դիտելու:



Հայրիկը շատ ժամանակ ու եռանդ է տվել Հայ գրողների կովկասյան ընկերությանը, նրա ժողովներին՝ վարչական և ընդհանուր, երեկույթներին ու հանդեսներին: Այդ տարիները նա շարունակ դրական խնդիրներով էր գրառված և գրողների նյութական դրությունը բարելավելու հարցերով: Շարունակ դուրան էր ընկերության գործերով ու ժողովներով, տանն էլ՝ անվերջ գրույցներ մինչև ուշ գիշեր:

Ու թեև այդ ամենը նրան և հոգնեցնում էր, և խանգարում, տրամադրությունը միառժամանակ լավ էր, որովհետև գործի ընթացքը իրեն ոգևորում էր:

Ընկերության երեկույթները կայանում էին ամեն հինգշաբթի: Մուտքը ձրի էր, որպեսզի հայկական դպրոցների՝ ներսիսյան, Հովնանյան, Գայանյան և մյուս դպրոցների չքավոր աշակերտությունն ազատ մուտք ունենա: Աշակերտները գալիս էին և ոգևորված հեռանում այդ երեկույթներից:

Հաճախ տեղ չէր լինում դահլիճում, բայց դռները միշտ բաց էին թողնում հասարակության առաջ:

Այս ամենը ուրախացնում էր հայրիկին, հրճվանքի զվարթ ժպիտը ողողում էր դեմքը: Զրուցում էր աշակերտ-աշակերտուհիների հետ, ոգևորում ու ոգևորվում: Եվ հենց այդ օրերին էր, որ «Մշակ» թերթը իր հոդվածներով սկսեց վարկաբեկել ընկերության երեկույթները: Չեմ կարողանում մոռանալ նրա դայրույթն ու վրդովմունքը ամեն անգամ, երբ կարդում էր «Մշակի» այդ հոդվածները:

Թիֆլիսի ժողովարանում կայացավ գրական-երաժշտական երեկո Սայաթ-Նովայի շիրմաքարի բացման առթիվ: Նվագում էր աշուղ Հաղիբի խումբը: Հայրիկն արտասանեց Սայաթ-Նովայի «Մի խոսք ունիմ իլթիմազով...» բանաստեղծությունը:



Ամառը հայրիկը գնացել էր Ուրալի, Սո. Լիսիցյանի¹ հետ «Լուսաբեր» դասագրքի վրա աշխատելու:

Ես Աբասթումանում էի (Մելիք-Հայկազյանների տանը): Օգոստոսի կեսերին եկա Ուրալի, հայրիկի մոտ: Այստեղից մեկնեցինք Ախալցխա, ուր մնացինք մի երկու օր: Բժիշկ Արտաշես Բուրդուջանը Ախալցխայումն էր: Առաջարկեց զնալ Դուղրութ գյուղը՝ իր ծննդավայրը, որը գտնվում էր Ախալցըխայից չորս-հինգ վերստ հեռավորության վրա: Փոքրիկ գյուղ էր՝ շուրջ 120 տուն: Կալ ու կուտի ժամանակն էր, դաշտալին աշխատանքի ետուն շրջանը: Գյուղը, տները շատ էին մաքուր: Մի քանի տուն գնացինք, ամեն տեղ հյուրասիրեցին: Այդ փոքրիկ ճամփորդությունից հայրիկը շատ գոհ մնաց և հիացմունքով էր խոսում Ախալցխայի և Ախալքալակի շրջանի կանանց մասին՝ շատ մաքրասեր են, լավ տանտիկիներ են, համեղ թխվածքներ են սրատրաստում:

¹ Լիսիցյան Մանվան — մանկավարժ, թարգմանիչ, հասարակական գործիչ



Մի օր Ուրալիի ձորով բարձրանում է գետի հոսանքով դեպի վեր, իր սովորության համաձայն, լողանալու համար տեղ է պատրաստում: Քանի տեղը խորանում է, այնքան հրապուրվում է ու երկար ժամանակ մնում ջրի մեջ: Հանկարծ սառնություն է զգում, գետից դուրս է գալիս, շտապ հագնվում ու տուն գալի: Եկավ, հիվանդացավ ու սկսվեց ջերմը, մի ամբողջ շաբաթ պառկած էր: Հիվանդ ժամանակ շարունակ հիշում էր գետի ջուրը. «Զարմանալի պարզ էր, վճիռ ու սառը...»:

Առողջանալուց հետո սկսեց երկաթի ջրի վաննաներ ընդունել, որ շատ էր սիրում: Մեր տանից իջնում էինք դեպի վաննաները: Հետո գնում էինք մոտակա փոքրիկ խանութը: Հայրիկն այստեղ «Дезин» կոնֆետ էր գնում: Բարձրանում էինք անտառը դրոսանքի. ճանապարհին հանդիպած հովեկների՝ օրիորդներին ու տիկիներին հյուրասիրում էր կոնֆետով ու խումբը մեծանալով, ասել-խոսելով հանում էր անտառ: Հիշում եմ, մի օր էլ Ստեփան Լիսիցյանի, ջութակահար Սեմիդովի, գիմնազիայի ուսուցիչ Պայմովի, բժիշկ Գևորգ Մաղաքյանի և ուրիշների հետ գնացինք Սաֆարի վանքը:

Շատ էր սիրում Ուրալի: Մտածում էր երկու սենյակ ունենալ Ուրալիում, որ ուզած ժամանակ այնտեղ հանգրստանա:



Հոկտեմբերի 13-ին Ներսիսյան դպրոցի նոր շենքի բացումն էր: Հայ գրերի գյուտի 1500-ամյակի և հայ տպագրության 400-ամյակի առթիվ այդ շենքում տեղի ունեցավ հոբելյանական հանդես:

Հայրիկը կարգաց այդ տոնին նվիրված իր բանաստեղծությունը. «Բեպետե բախտը մեզ շատ հարվածեց...»:



Հոկտեմբերի 31-ին բանաստեղծ Սիամանթոն, որ Պոլսից Քիֆլիս էր եկել, մի քանի ընկերների հետ ճաշի էր մեր տանը: Հաջորդ օրը երեկոյան Գրողների ընկերության հերթական երեկույթն էր: Այդ օրը վերսկսվեցին Ընկերության գրական երեկոները: Առաջին երեկոն նվիրված էր արևմտահայ գրականությանը:

Դասախոսությունից առաջ հայրիկը բացման խոսք ասաց.

«...Գրական երեկույթների մեր նոր շրջանը բաց ենք անում տաճկահայ գրականությանը նվիրված երեկույթով և տարվա ընթացքում կաշխատենք մի քանի անգամ վերադառնալ մեր գրականության արևմտյան բաժնին, որին ցավալի կերպով անձանոթ ենք մնացել: Սա մի անբնական ու աննորմալ երևույթ է, որ վերացնելու առանձին հոգ պետք է ունենաք: Առաջին անգամն է, որ տաճկահայ գրականության մասին դասախոսություն է լինում մեզանում: Այժմ մեր առաջ կբացվի ազգային հարստության մի նոր գանձարան, մեր դեմաց կհանեն մեզ ծանոթ, բայց ավելի շատ՝ անծանոթ տաղանդավոր գրողների դեմքեր, և մենք այլևի հարուստ, ավելի ուժեղ ու ավելի հսկայտ կզգանք մեզ»:

Հետո, խոսքն ուղղելով բանաստեղծ Սիամանթոյին, ասաց. «Առանձին հաճույքով ուզում եմ հիշատակել, որ տաճկահայ գրականությանը նվիրված երեկույթին ներկա է տաճկահայ գրականության ամենախնքնատիպ ու տաղանդավոր ներկայացուցիչներից մեկը, մեր ազգային վշտի ու կորույթի ուժեղ երգիչը՝ պարոն Ատոմ Յարճանյանը՝ Սիամանթոն, որին հայտնում եմ մեր սերն ու հարգանքը»:

Դասախոսությունից հետո հանդես եկավ Հովնանյան դըպրոցի քառաձայն երգչախումբը՝ Արմեն Տիգրանյանի ղեկավարությամբ: Դերասան Վահրամ Փափաղյանն արտասանեց Սիամանթոյի և Դանիել Վարուժանի բանաստեղծությունները: Արմեն Արմենյանը՝ Պետրոս Դուրյանի «Տրտունջը»:



Սիամանթոն այդ տարի Քիֆլիսում մնաց բավական երկար, ավելի, քան կարծում էր: Ամեն երեկո լինում էր զանազան հրավերների, ցերեկույթների, ներկայացումների: Միասին եղանք մեր ուսանողական երեկույթին, որը կայացավ մեր համալսարանում: Գնում էինք Արտիստական թատրոն ներկայացումների և Գրողների ընկերության գրական երեկույթներին:

Հայրիկի մոտ նա հաճախ էր լինում: Մի երեկո երեքուկ գնացինք դերասանուհի Սիրանույշի մոտ, որ իր աղջկա՝ Աստղիկի հետ այրում էր հենց նույն փողոցում, մեր տանից մի քիչ ցած: Այդ երեկո Սիամանթոն իր հետ բերել էր արևմտահայ երկու բանաստեղծուհիների գրքուկները՝ Մանիկ Պերպերյան և Հերանույշ Արշակյան: Բանաստեղծությունները կարդում էր Սիամանթոն՝ դեղեցիկ և ներշնչված:

Մի երեկո Սիամանթոն, հայրիկը և ես եղանք կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի տանը. հրավիրված էր նաև տիկին Սիրանույշը՝ դասեր հետ:



Այդ տարի, հայ գրերի գյուտի 1500-ամյակի առթիվ Սիամանթոն Քիֆլիսում լույս ընծայեց «Սուրբ Մեսրոպ» պոեմը և նվիրեց իր նոր ծանոթներին ու բարեկամներին:

1914

Հունվար

Նոր տարուն մեծ քրոջս՝ Աշխենի տանը բեմադրեցինք հայրիկի «Մաղիկների երգը»: Կազմակերպողը մեծ եղբայրս էր՝ Մուշեղը: Նա, որպես բնագետ, բոլոր դերակատարների համար գունավոր թղթերից ծաղիկների զգեստ էր պատրաստել՝ նարգիզ, շուշան, կակաչ և այլն: Դերերը բաժանել էր այսպես.

Զուրը—Համլիկն էր,
 Արևը—Արեգը,
 Աղջիկը—Սեդիկը,
 Արևածաղիկը—Անուշը,
 Շուշանը—Արփիկը,
 Կակաչը—Թամարը,
 Նարգիզը—Սաթիկը,
 Մանուշակը—Վարսիկը:
 Սաթիկն ու Վարսիկը հորեղբորս աղջիկներն էին, որ ապ-
 րում էին մեր տանը:
 Ներկայացումը հաջող էր ստացվել, հայրիկը շատ հավա-
 նեց:



Երկրաբան Հովհաննես Կարապետյանն այցելեց հայրիկին:
 Նա նոր էր վերադարձել արտասահմանից, ավարտել էր կիժի
 համալսարանը: Հայրիկն ուրախ էր նրան հանդիպելու հա-
 մար: Կարապետյանի մասին շատ բարձր կարծիքի էր:
 Այդ օրերին հայրիկի համագյուղացիները Զաղի ձորի հան-
 քերից նմուշներ էին բերել: Հայրիկը ոգևորված էր, միտք
 ուներ հայտ ներկայացնել այդ հանքերը հետազոտելու և օգ-
 տագործելու համար:

Փնտրվար

13-ին հյուրեր շատ ունեինք: Մեր տանն էր նաև Ալեքսեյ
 Զիվելեգովը:

Ապրիլ

Ապրիլի սկիզբն էր: Վահան Տերյանը Պետերբուրգից Թիֆ-
 լիս եկավ և մեկնեց Գանձա՝ հոր թաղմանը: Գանձայից վե-
 րադառնալով, Թիֆլիսում մնաց մեկ ամսից ավելի: Հաճախ
 էր լինում հայրիկի մոտ: Գրողների ընկերության երեկույթ-
 ները ոգևորությամբ շարունակվում էին: Տերյանը դժգոհա-

նությամբ ներկա էր լինում այդ երեկույթներին: Միայն թե
 ափսոսում էր հայրիկի կորցրած ժամանակը: Նրան դուր չէր
 դալիս, որ հայրիկն էր երեկույթ կազմակերպում, բացման
 խոսք ասում, մանավանդ, երբ երեկույթի ժամանակ տեղից
 վեր էր կենում և ուշացած պատվավոր հյուրերին աթոռ առա-
 ջարկում կամ նման մանր բաներով զբաղվում: Տերյանը բար-
 կանում էր. «Իվան Ֆադեյիչը ամեն օր շպետք է քաղաքում
 երևա, ամեն երեկույթի գա, հասարակության մեջ լինի, խո-
 սի, ամեն բան անի, ամենքի համար վազվզի: Նա իրեն թանկ
 պիտի պահի, մեկ-մեկ պիտի երևա, էն էլ կառքով:
 Он должен иметь особую выезду, պրոսպեկտով մի անգամ
 անցնի, որ ժողովուրդը նրան հեռվից տեսնի во весь рост.
 տեսնողը փողոցում կանգնի, մատով ցույց տա, ասի՝ Հով-
 հաննես Թումանյանն է անցնում: Нелзя же так, в самом
 деле...»:

Հայրիկին էլ էր ասում, որ իրեն թանկ պահի, ժամանակը
 զնահատի, զբաղանությամբ պարապի: Հայրիկը ծիծաղում
 էր, ձեռքը թափ տալիս սովոր շարժումով և ասում. «Դատա՛րկ
 բաներ ես ասում, Վահան, էսպե՛ս է լինելու մեր կյանքը...»:



Ապրիլի 5-ին հասարակական ժողովարանի դահլիճում,
 Հայ գրողների ընկերության նախաձեռնությամբ կայացավ
 Սայաթ-Նովայի հիշատակին նվիրված իսկապես մի բացա-
 սիկ հետաքրքիր մի երեկույթ: Դահլիճը լեվելեցուն էր: Եկել
 էին ոչ միայն հայեր, այլև ռուսներ, վրացիներ, կային և օտար-
 ազգի հյուրեր: Շատ շատերը ստիպված էին հեռանալ տոմս
 չգտնելով: Բաղմուքյունը լցրել էր ընդարձակ դահլիճներն
 ու նախաբակները: Կին հանդիսատեսներից շատերը հա-
 դել էին Թիֆլիսի հին տարազ, ինչպես, օրինակ, իշխանուհի
 Մարիամ Թումանյանը, Օլգա Թումանյանը, Ժողեֆինա Զար-
 գարյանը և ուրիշներ: Ժամը 9-ին սկսվեց երեկույթը աշուղ
 Հազիրի և իր խմբի երգ ու նվագով:

Բեմը արևելյան գորգերով ու շալերով զարդարել էր նկարիչ

Բաշինջաղյանը: Թախտի վրա նստած էին հրգող ու նվագողը: աշուղները՝ նույնպես հին Քիֆլիսի տարազով:

Աշուղների հրգ ու նվագից հետո խոսեց հայրիկը:

Այս երեկույթը, որ ունեցավ արտակարգ հաջողություն, հասարակության խնդրանքով կրկնվեց նույն ժրագրով:

Այս երկու երեկույթի մուտքը հատկացվել է Սայաթ-Նոփայի մահարձանի կառուցման նպատակին:



Ամսի 30-ին կոնսերվատորիայի դահլիճում՝ Տերյանը՝ կարդաց «Հայ գրականության գալիք օրը» դասախոսությունը:

Մեծ աղմուկ հանեց այդ դասախոսությունը: Մտավորականներից շատերը վաղարկված էին և դժգոհ:

Մայիս

Ճաշին մեկ մոտ էին Լեոն: Եանթը, Վահան: Տերյանը, Գևորգենիկ Գեմիրճյանը, Ճաշեցինք և գնացինք կոնսերվատորիա:

Մայիսի 4-ին, հայ գրողների ընկերության հերթական երեկույթին, լավեց Գեորգենիկ Գեմիրճյանի ղեկուցման շարունակությունը՝ նվիրված գրական լեզվի հարցերին:

Ամսի 8-ի գրական երեկույթը նվիրված էր «Հայ գրականության ընդհանուր տեսությանը»: Ձեկուցեց Նիկոլ Աղբալյանը: Նրեկույթից հետո Մոսկվայի պատգամավորների և գրողների ընկերության վարչության անդամների հետ գնացինք Բոմոնդ հյուրանոցը, ուր, ի պատիվ Մոսկվայի հյուրերի բանկետ տրվեց: Ներկա էին Ալեքսեյ Զիլկելզոլդը, պրոֆ. Վահան Տոտոյանը¹, Վահան Տերյանը և ուրիշ մարդիկ: Թամապան հայրիկն էր: Տրամադրությունը՝ լավ էր, «Քյորոլի» երգեց: Ընթրիքը տևեց մինչև լուսադեմ:

Մայիսի ընթացքում Բաքվի պատգամավորները՝ ժամանեցին Քիֆլիս: Նրանց հետ և՛ հանդիպումներ, բանկետ և այլն:

¹ Տոտոյան Վահան — նշանավոր տնտեսագետ



Մայիսի 15-ին, Համբարձման օրը, նշանակված էր Սայաթ-Նոփայի շիրմաքարի բացման հանդեսը: Հայրիկը ոգևորված էր, տրամադրությունը բարձր: Ուրիշ ոչինչ աչքին չէր գալիս: Հիշում եմ այդ առիթով բարեգործական ընկերությունում հրավիրված լայն խորհրդակցությունը: Գնացի խորհրդակցության Վահան Տերյանի հետ:

Որոշվեց, որ այդ օրը բոլորը ս. Գևորգի եկեղեցի՝ շիրմաքարի բացմանը պիտի գնան կարմիր վարդերով:



Բժշկապետ Բագրատ Նավասարդյանը¹, որ ուներ սեփական այգի, այդ օրերին Գրողների ընկերությանը մեծաթիվ կարմիր վարդեր նվիրեց: Մեջ եմ բերում Գրողների ընկերության վարչությանը Նավասարդյանի առաքած նամակը:

«Մեծարգո պ. Հովհաննես Թումանյան: Մայիսը վարդի ամիս է, Սայաթ-Նոփայի վարդի երգիչ է և, իբրև վարդի սիրահար, իմ կոչեզան է:

Իմ սրտի ամենամոտ ընծան, որ ես հնար ունեմ բերել Սայաթ-Նոփայի հուշարձանին, ծաղիկների թագուհի վարդն է, որով կցանկանայի զարդարել նորա սուրբ հիշատակը:

Ուստի, եթե արժան կհամարեք, խնդրեմ բարեհաճեցեք վաղը, ամսույս 15-ին, առավոտյան 8—9 ժամին ուղարկել իմ պարտեզս՝ Великокипякская, № 58 (Տղայոց 2-րդ դիմնազիայի մոտ), ստանալու ինձանից մի հարյուր և մի տեսակ վարդ:

Խորին հարգանքը՝

Բժշկապետ Բ. Նավասարդյան

Տիպիս: 14-ը մայիսի, 1914 ամիս:

Հինգշաբթի, մայիսի 15-ին, Քիֆլիսի կաթուղիկե ս. Գևորգ

¹ Նավասարդյան Բագրատ — բժիշկ, գրական-հասարակական գործիչ

եկեղեցու բակում կայացավ Սայաթ-Նովայի մահարձանի հանդիսավոր բացումը:

Առավոտյան ժամը 10 և կեսին ասնաֆները՝ իրենց դրոշակներով Արհեստավորական վարչության շենքից (Ներսիսյան դպրոցի նախկին շինությունը) դուռնա-դհուլի՝ առաջնորդությամբ և մեծ բազմության ուղեկցությամբ՝ դիմեցին դեպի Հայ գրողների ընկերության վարչության գրասենյակը՝ Աբաբաբաբյան հրատարակ, որտեղ սկսեցին հավաքվել զանազան ընկերությունների և հիմնարկությունների ներկայացուցիչները: Ժողովուրդը լցրել էր հրատարակը:

Այդտեղ վաճառվում էին Սայաթ-Նովայի երգերի ժողովածուն և կարմիր վարդեր:

Առավոտյան ժամը 11-ից անց թափորը դիմեց դեպի ս. Գևորգի եկեղեցին: Թափորի առջևից շարքով գնում էին ասնաֆները իրենց դրոշակներով, ասնաֆների շարքի միջով տարվում էր դափնյա պսակ, որ գրվելու էր Սայաթ-Նովայի մահարձանի վրա Գրողների ընկերության կողմից, այնուհետև՝ հիմնարկությունների ներկայացուցիչները և ապա՝ երկսև բազմությունը: Ամեն ոք կրճերին կարմիր վարդ էր կրում: Տների պատշգամբները և պատուհանները՝ լիքն էին հանդիսատեսներով: Շեկովնիկյան փողոցում Գայանյան դպրոցի աշակերտությունը բազմությանը դիմավորեց՝ երգով, հոգաբարձական և մանկավարժական կազմերի հետ, դպրոցի տեսուչ Ս. Աբովյանի գլխավորությամբ: Թափորն ուղեկցող ժողովուրդը ցնծությամբ ընդունեց աշակերտների՝ երգը: Այնուհետև Գևորգի եկեղեցու հրատարակում բազմությանը, դարձյալ երգով, դիմավորեց Հովնանյան աղջկանց դպրոցի աշակերտությունը, հոգաբարձական և մանկավարժական կազմերով, դպրոցի տեսուչ Ս. Մալխասյանի գլխավորությամբ: Այստեղ հիստորիկության կանչերը թնդացրին օդը:

Ս. Գևորգ եկեղեցու բակի մուտքի մոտ բազմությանը ողջունի խոսքով դիմավորեց ս. Գևորգ եկեղեցու դպրոցի հոգաբարձական կազմի և ուսուցիչների ներկայացուցիչը՝ շնոր-

հավորելով մահարձանի բացման հանդեսը և շնորհակալություն հայտնելով Գրողների ընկերությանը, որ նախաձեռնել է այս նշանակալի հանդեսը: Բազմությանը եկեղեցու բակի մուտքի մոտ սպասում էր աշուղների խումբը թիֆլիսեցու հին սարազով՝ աշուղ Հաղիրի գլխավորությամբ: Ս. Գևորգի դպրոցի ներկայացուցչի ճառից հետո աշուղական երգ ու նվագի և ժողովրդի ցնծագին կանչերի ուղեկցությամբ բազմությունը մտավ բակը:

Ասնաֆները իրենց դրոշակներով շրջան կազմեցին սպիտակ սավանով ծածկված մահարձանի շուրջը՝ աշուղները, զանազան ընկերությունների, հիմնարկությունների և մամուլի ներկայացուցիչները և հրավիրած պաշտոնական անձինք տեղ բռնեցին մահարձանի առաջ, եկեղեցու մուտքի աջ կողմում:

Մինչ այդ եկեղեցու բակը և դպրոցի պատշգամբները արդեն բռնված էին բաղմահազար երկսև բազմությամբ. այստեղ էր նույնպես Ներսիսյան դպրոցի աշակերտությունը հոգաբարձական և մանկավարժական կազմերի հետ: Ոստիկանությունը հազիվ էր կարգ պահպանում:

Ժամը 12-ին եկեղեցում պատարագն ավարտվեց և հոգեվորականությունը թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի գլխավորությամբ տեղ գրավեց մահարձանի առաջ:

Հոգեհանգստից հետո ամբիոն բարձրացավ Գրողների ընկերության նախագահ Հովհաննես Թումանյանը: Բացման խոսքից հետո նա քաշեց մահարձանը ծածկող սավանը և ժողովրդի ծափերի ուղեկցությամբ Գրողների ընկերության դափնե պսակը դրեց մահարձանի վրա: Ժողովրդի միջից տեղացին վարդի փնջեր: Մահարձանի շուրջը շարվեցին պսակների հյուսված դալար ոստերից: Մահարձանի վերևը, եկեղեցու պատին, վարդերի և ոստերի պսակի մեջ կախված էր մի սագ:

Հայրիկից հետո հերթով ամբիոն բարձրացան զանազան ընկերությունների և հիմնարկությունների ներկայացուցիչներ՝ ողջունի և շնորհավորանքի խոսքերով:

¹ ասնաֆ — արհեստավորական համբարության (ընկերության անդամ)

Նույն օրը երեկոյան, Մայթ-Նովայի շիրմաքարի բացումից հետո, հայրիկը մասնակից գրողների մի խումբ հրավիրեց իր մոտ: Եկել էին Տերյանը՝ կնոջ հետ, Շանթը, Աղբալյանը, Կեօփրճյանը և ուրիշներ:

Հումիս

Մերոնք գնացին ամառանոց՝ Ցագվեր: Հայրիկը միառժամանակ մնաց Թիֆլիսում Ստ. Լիսիցյանի և Լ. Շանթի հետ միասին՝ «Լուսաբեր» դասագրքի վրա աշխատելու: Ես մնացի հայրիկի հետ: Ծաշերին երբեմն գնում էինք Միքայելյան փողոցի գերմանական ճաշարանը: Հայրիկն այդ ճաշարանն էր հավանում: Երեկոները գնում էր Լիսիցյանների տուն աշխատելու:

Ամառը Ցագվեր էինք: Մի քիչ կազդուրվելուց հետո սկսեցինք շրջել ամառանոցի շրջակայքը, դրոսնելու տեղեր էինք փնտրում: Հաճախ գնում էինք գետափ, հայրիկը լողանալու տեղ էր որոնում: Գտավ մի հարմար տեղ: Ամեն օր գնում էինք խմբով դրոսնելու, մոռ ու մորի հավաքելու:

Ցագվերում տրամադրությունը լավ չէր. ներքուստ ինչոր տխուր ապրումների ունենալով, Հաճախ խոստում էր իր անցած կյանքից և դեպքեր ու դեմքեր մտաբերում: Երեկոները բարձրանում էինք երկաթի ջրի աղբյուրը՝ ջուր խմելու: Աղբյուրի ճամփից բարձր մի ժայռոտ տեղ կար, նստում էր ժայռի գլխին, պատմում էր, դրուցում, իսկ ներքևը փռված էր Ցագվերը:

¹ Թերևս ավելորդ չի լինի հիշել, որ հայ գրողները և առհասարակ մտավորականությունը սիրում էր հավաքվել նաև «Над Купой» անստորանում (Վորոնցովի կամրջի մոտ), ինչպես և «Տիֆլիսուհուրի» կոչված անստորանում (Քամաձովի բարվանսարայի սակ):

Չեմ կարողանում մոռանալ Ցագվերում անցկացրած այն ժամերը, երբ հայրիկն ինձ գրաբարի դասեր էր տալիս: Դրանք դասեր չէին, այլ ոգեշնչված ընթերցանության ժամեր... Ներշնչված, խոր հուզմունքով հատվածներ էր կարդում Խորենացու գրքից, բայց ավելի հուզիչ էր, երբ կարդում էր Նարեկացու «Մատյանը». «Ի խորոց սրտի խօսք ընդ աստուծոյ...», կարդում էր, ոգեւորվում: Դեռ ականջիս է նքա ձայնը. ինչպե՞ս էր կարդում, ինչպե՞ս էր սիրում և ինչպե՞ս էր ապրում. այստողերը. «Ձայն հառաչանաց հեծութեան սրտի, ողբոց աղաղակի քեզ վերքնծայեմ, տեսողդ գաղտնեաց...»: Կարգալիս դեմքը պայծառանում էր: Հեռո սկսում էր խոսել Նարեկացուց:

Նարեկացու գիրքը (1875 թվականի փոքրիկ հրատարակություն) ամառները միշտ հետն էր տանում:

Բայց երկար չտևեցին մեր գրաբարի դասերը: Ամառվա կեսին պատերազմի բոթն ընկավ: Հովեկները ահաբեկված սկսեցին հեռանալ Ցագվերից, մեր կյանքն էլ փոխվեց, մի բանի օրում զվարթ և ուրախ վայրը դատարկվեց, ամայացավ: Կյանքը կարճես դադարեց ամառանոցում: Դադարեցին նաև հայրիկի գրական աշխատանքն ու պարապմունքները (Ցագվերում «Հազարան բլբուլն» էր գրում պատանիների համար):

Վերադարձանք Թիֆլիս: Քաղաքում բոլորի տրամադրությունն ընկած էր: Լարված, տագնապալի դրություն: Հայրիկի առողջությունն ու տրամադրությունը վատացան: Մենակ էր դգում իրեն: Տղաները ցրվեցին, գնացին, ընտանեկան շրջանը նեղացավ, տան անդամների թիվը պակասեց: Եվ որքան տան անդամների թիվը պակասում էր, այնքան դրսի շրջանն ընդլայնվում էր:

Գրողների ընկերությունն իր գրական երեկոյթներով ու հավաքույթներով մնաց մի կողմ, նույնիսկ միառժամանակ

դադարեց: Հայրիկն առաջվա-նման այլևս չէր զբաղվում ընկերության գործերով: Ներ ոգևորվում և գրականությամբ էլ չէր պարապում:

Այդ ամառ Մուշեղը արձակուրդներին Պետերբուրգից մեկնել էր Գերմանիա՝ «աշխարհ տեսնելու» և մնացել էր Հայսպիգում: Հայրիկն ու մայրիկը շատ էին մտահոգված:

Հոկտեմբերին մեր նյութական դրությունը բավական ծանրացավ: Հայրիկի խանդաված գրական կյանքը, գրական պարապմունքներն ավելի ևս խանդարվեցին:



Գրական դրույցներ հայրիկը մեկ հետ ուղ սկսեց՝ 1914—1915 թվականներից, երբ հոգնած գրսի կյանքից ու մեծ շրջանից, հեռացած և կտրված շատ շատերից, ձգտում էր տուն՝ իր տան կյանքով ապրելու:

Առաջին դրույցը, որ գրել էր ու լավ էլ հիշում էր օրը՝ 1914 թվականի հոկտեմբերի 2-ին էր, Լերմոնտովի ծննդյան 100-ամյակի օրը:

Աշխան տխուր երեկո էր: Հայրիկն ինձ իր սենյակը կանչեց: Թախտի վրա պառկած էր՝ թույլ ու հոգնած: Դրսից, սարի կողմից լսվում էր սրհակ՝ թռչունի միալար, տխուր ձայնը: Այդ երեկո հայրիկի տրամադրությունն ընկած էր: Երկար, շատ երկար խոսեց, սկզբում Լերմոնտովից, հետո անցավ Պուշկինին, ապա և իրեն:

Նրանց կյանքից ու ստեղծագործությունից էր խոսում, նրանց ներքին ապրումներից ու կյանքի ձախտող հանգամանքներից, թե ինչքա՞ն են երկուսն էլ տանջվել ու հալածվել: Թե ի՞նչ մեծ ու վճռական դեր է խաղում կինը բանաստեղծի կյանքում, և ինչպես հաճախ մի կնոջ պատճառով բանաստեղծի կյանքը խորտակվում է կամ փրկվում:

Հետո խոսեց իր անցյալից, 90-ական թվականներից, իր կյանքի ծանր պայմաններից: Ինչպես դեռ վաղ հասակից տանն

¹ Գիշերահավի ցեղից մի փոքրիկ թռչուն, որ գիշերները տխուր ձայն է հանում: Ժողովուրդը սրան «որբ» է կոչում:

էլ, դուրսն էլ իրեն մեկնակ է ղգացել ու հալածված: Մի կողմից նյութական պայմանները, մյուս կողմից մամուլի ու շրջապատի թշնամական վերաբերմունքը քայքայել ու հոգնեցրել են իրեն: Այդ երեկո առաջին անգամ խմացա, թե ինչպես են տանն ուղեցել ու համոզել, որ քահանա դառնա, ինչքան է տանջվել ու խանդարվել, և 19 տարեկան հասակից այդ բոլորը մոռացության տալու համար իրեն տվել է գրսի կյանքին:

Էսպես կոտրված ձայնով, ընկած տրամադրությամբ խոսեց երկար, մինչև ուղ գիշեր:

Մինչ այդ հայրիկի կյանքի մանրամասնություններին ծանոթ չեի, շատ բան չգիտեի. այդ երեկո ծանոթացա ու տեսա, թե նա ինչքա՞ն է տանջված ու մեկնակ, լարված ու հոգնած: Եվ այդ բոլորն աննկատ է դարձրել իր ժպիտով, իր մեծ լավատեսությամբ և տարել հպարտությամբ:

Տանն էլ, դուրսն էլ ամենքի հետ ապրել է ուրախ ու ղվարթ: Եվ ամենքն էլ, տեսնելով նրա կյանքի միայն այդ կողմը, ճանաչել են նրան որպես անհոգ, ապահով, ուրախ մարդու, որպես քեֆի, երգի մարդու, իսկ ոմանք էլ, նույնիսկ, որպես ծուլ մարդու:



Դեկտեմբերի 25-ին վերադարձավ ուղմաճակատից՝ ծանր տրամադրությամբ, զարհուրելի տպավորություններով: Ժողովրդի ողբերգական վիճակի մասին պատմում էր սարսափելի մանրամասնություններով:

Պատերազմի տարիներին, երբ գլխովին տարված էր ընդհանուրի կյանքով և քաղաքական-հասարակական խնդիրներով, հայրիկը գրականությամբ քիչ էր պարապում, շատ քիչ էր գրում: Երբ թերթերի կամ ամսագրերի խմբագիրները շտապ կերպով որևէ նյութ էին ուղում, հրաժարվում էր գրել: Ծայ-

¹ Հովհ. Թումանյանը պատերազմի վայրերում՝ Արևմտյան Հայաստանում եղել է 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր և 1915 թ. հունիս-հուլիս ամիսների ընթացքում:

լահեղ դեպքում իր ձեռագրերի բյուրոյից որևէ հին նյութ էր հանում, վերամշակում և տալիս իրենց:

Նման խնդիրքով հաճախ մտան էր գալիս «Նոր հոսանքի» խմբագիր Արշակ Ղազարյանը, որին հանձնել էր «Աղջկա սիրտը», «Երգչի վիշտը» և այլն: Մի անգամ, երբ նորից էր եկել նյութ վերցնելու, հայրիկը կատակով ասել էր. «էս նիկուլը էսքան մարդ բանտարկեց, շատերին անմեղ, դատարկ բանի համար, քեզ ինչի՞ շեն տանում, նստեցնում, որ էս քեզանից ազատվեմ...»:

Այս օրերին մտաբերեց. «Մի ժամանակ շատ էքսպրոմտներ էի ասում: Մի քեֆի, Օրթաճալում, «Մուրճի» հնգամյակին քառասուներկու հոգու կենացին էլ էքսպրոմտ ասացի: Ավետիք Արասխանյանը բոլորը հավաքեց»:



Չեմ հիշում որ ամսին հայրիկին այցելեց քանդակագործ Անդրեաս Տեր-Մարությանը: Նոր էր վերադարձել Փարիզից: Այնտեղ քանդակել էր խաչատուր Աբովյանի արձանը, որը Թիֆլիս փոխադրելու գործով եկել էր հայրիկի մոտ:

1915

Հունվար

Երեկոյան հայրիկի մոտ էին Տերյանը և Մակինցյանը: Խոսում էին հայ գրական լեզվի մասին: Լեզվի շուրջը նրանց գրույցները դառնում էին բուռն վիճաբանություն: Հայրիկն ասում էր, թե գաղութահայերի, մասնավորապես մոսկվաբնակ հայերի լեզուն խեղճ է, շինծու և աղքատ: Խոսում էր համոզված, մեծ ոգևորությամբ. «Երբ բոլոր հայերը միանան իրենց հայրենիքում, երբ ժողովուրդը սոբի կանգնի, ուժեղանա, էն ժամանակ մենք կունենանք հարուստ, ճկուն ու պարզ լեզու, ոչ թե բառերի հավաքածու:

Լեզուն բառերի տերողորմյա հո չի՞, լեզուն ոճ է, ո՞ճ»: Մակինցյանը հայրիկի էս-ն ու էն-ը չէր ընդունում, վա-

-հան Տերյանը թեև համակարծիք էր Մակինցյանին, բայց այդ կերեկո չէր վիճում. թախտի ծայրին նստած լուռ լսում էր և իր սև համրիչը գցում:



Մտաբերուցին այսպիսի մի գեպը. 1914 թ. նոյեմբերին, ռազմաճակատ գնալիս, երբ անցնում են Իգլիրով, հեռվից լավում է շների հաչոց: Ծիրվանդագեին այդ դուր չի գալիս.

— Սա ի՞նչ բան է... անընդհատ շները հաչում են, անհանգստացնում...:

Հայրիկը թե՛ «Դեռ հլա ո՛ւր ես... Սրան Ահարոնյանի հայրենիք կասեն. դեռ արաղաղները պիտի կանչեն, հավերջ խոսեն, օձերը ֆշշան...»:

Հետագայում, «Զիթենի» ժողովածուում կարդալով Ծիրվանդագեի «Պատերազմի վայրերից» տպավորությունները, հայրիկը դժգոհ մնաց: Վրդովված էր նրա զավեշտական տոնից ու մանրուքների նկարագրությունից:

— Էս տնաշենը էն տոնով է գրում, կարծես թե հարսանիք է գնացել ու էնտեղից է վերադառնում... Ավերված երկիրը, ժողովրդի գաղթն ու կոտորածը տեսողը մի՞թե էդ ձևով պիտի գրի: Աչքի առաջ մի ամբողջ ժողովուրդ է կոտորվում, կործանվում, իսկ նա ինչ-որ մանր, ծիծաղաշարժ դեպքեր է հիշում ու նկարագրում...:

Հայրիկը, որ մասնակցել էր այդ ուղևորությանը և իր օրագրում նշել էր տխուր փաստեր, դեպքեր, տպավորություններ, մտածում էր այդ օրագրի հիման վրա գրել ու հրատարակել իր ուղեկրությունները:

Փետրվարի 22

Երրորդ շաբաթն է, որ հայրիկը ոգևորված պարապում է Հայաստանի աշխարհագրությամբ: Կազմում է «Հայոց գետերը» և «Հայոց լիճները» խաղերը: Մեր տանը կազմեցինք «Մանուկ» ընկերությունը: Կարճ ժամանակում, հայրիկի նախաձեռնությամբ և Արտիկի ղեկավարությամբ, ընկերություն-

նը բավական բան արեց. կաղմեցինք մի շարք հայկական խաղեր՝ թանկագին քարերի, աստղերի, գույների, հայոց գետերի, տառերի մասին: Հայրիկի ցուցումներով հավաքում էինք աշխարհագրական տեղեկություններ, հայ գրողների երկերից, քաղվածքներ հայոց գետերի մասին, նկարներ՝ կլիշեների համար: Այդ առթիվ ասում էր.

«Գիտությունը, գեղարվեստը, գրականությունը — ամենինչ երեխան մանկությունից պիտի սովորի և որ գլխավորն է, խաղով սովորի, որ հեշտ ու հաճելի լինի: Ամեն ինչ կյանքում խաղ է ու հաճույք և կյանքում ամենալարջ բանին էլ պիտի նայել որպես խաղի. էն ժամանակ մարդիկ մի բան կսովորեն, մի բան կստեղծեն հաճույքով:

Բանը հաճույքով, խաղով պիտի անել — դա և՛ հեշտ է, և՛ գեղեցիկ: Էդ բանում ամենամեծ մասնակցությունը մայրը պիտի ցույց տա, որովհետև ընտանիքում մեծ դերը և առաջին դերը մայրն է խաղում:

Մայրը մեծ բան է:

Զգաում, բնավորություն, ուղղություն — ամեն ինչ մայրն է տալիս. մայրն է երեխային կրթում. նա երեխային խաղերով պիտի կրթի և ինքն էլ մասնակից լինի խաղեր կաղմե-
լուն:

Գյոթեի մայրը էդ լավ մայրերից էր:

Հեշտ բան հո չի մայր լինելը, երեխա կրթելը»:

Խոսելիս հայրիկի աչքերը փայլում էին, դեմքին լույս ու ծպիտ էր վառվում:

Տանը հայրենագիտական խաղեր էր կաղմում, դուրսը շարունակ ժողովների էր գնում, հասարակական զանազան գործերով զբաղվում:

Մարտի 3

«...Մի ակոս, հետո երկրորդը, երրորդը և արտը կվարվի»:
Զգիտեմ ո՞ւմ մասին էր խոսքը և կամ ի՞նչ գործի մասին, որ այս ժողովրդական առածով սկսեց իր զրույցը աշխատանքն սկսելու մասին:

Ապրիլի 22

Երեկոյան մեկ մոտ էր Վահան Տերյանը: Հայրիկը հայ գրողների կյանքից էր պատմություններ անում, Վահանը՝ ունա գրողների: Տերյանը մնաց մինչև ուշ գիշեր. հետաքրքրական երեկո էր:

Ապրիլի 25

Այսօր մեկ մոտ ճաշի էին Տերյանը, Գեմիրճյանը, Աղբալյանը: Ճաշկերույթների հոգսը գլխավորապես մայրիկի վրա էր ընկած: Եվ Գեմիրճյանը, մեր ընտանիքին մոտ կանգնած մարդ, մայրիկի կենացը խմելիս կատակով ասում էր՝ «Օլյա՛, քո համբերության կենացը», իսկ հայրիկի կենացին՝ «Օլյա՛, քո տանմեկերորդ երեխայի կենացը»:

Մայիս

Ա. Կ. Զիվիլեղովը Մոսկվայից Թիֆլիս էր եկել: Մի երեկո նրա հետ մեր տանն էին նաև պրոֆեսոր Վահան Տոտոմյանցը, Ստեփան Մամիկոնյանը¹ և Մենտոր Բունիաթյանը²:

Հունիս

Կարծեմ հունիսի առաջին օրերն էին: Մի երեկո հայրիկը տուն եկավ խաղաղ, լավ տրամադրությամբ: Այցելության էր գնացել Վաժա Փշավելային³, որ այդ ժամանակ հիվանդ պառկած էր Վերա թաղամասի կողմերը, իր բնակարանում: Գոհ էր այցելությունից. դեպի Փշավելան լցված էր ինչ-որ հարազատի, մոտ մարդու զգացմունքով: Հավանել էր նրա պարզ

¹ Մամիկոնյան Ստեփան — իրավաբան, հասարակական գործիչ, ուսական մի քանի թերթերի խմբագիր. գլխավորել է Մոսկվայի «Հայկական կոմիտեն» (կաղմ. 1914 թ.)

² Բունիաթյան Մենտոր — տնտեսագետ, հասարակական գործիչ

³ Վաժա Փշավելա — վրաց նշանավոր գրող, նահապետական վրաստանի երգիչը

ու հասարակ կենցաղավարութիւնը. «Սենյակն առանց արդ ուղարկի էր. իրեն թախտն էր, մի սեղան ու աթոռ, ինքն էլ շուտով...»:

Հուլիս

Նոր էր վերադարձել պատերազմի վայրերից¹: Եղև էր Ալաշկերտի հովտում, Աբաղայի դաշտում, ապա Վան... Տեսել էր նահանջ, գաղթ, դարհուրելի դեպքեր: Այդ ամենի ճշմարտութիւնը տակ էր և չէր կարողանում հանգստանալ: Հիասթափված էր, վրդովված, հոգնած, կես հիվանդ:

Օր օրի ավելի ընկճվեց, առողջական դրութիւնը վատանում էր ու ծանրանում: Այլևս առաջվա ժպտագեւ, դվարթ, ուշադիր մարդը չէր:

Կարիք ունէր բուժվելու, տեական հանգստի:

Բժիշկները խորհուրդ էին տալիս գնալ Հանքային Ջրեր²՝ Կիսլովոդսկ, բայց չհաջողվեց: Որոշվեց ընտանիքով գնալ Թիֆլիսի մոտակա ամառանոցներից մեկը՝ Տաբախմեկա. դա ավելի շուտ գյուղանման մի վայր էր, որտեղ հարմարութիւններ չկային: Աշտ Աթանասյանը² մի տուն գտավ և տրամադրեց մեզ:



Նոր էինք տեղավորվել ամառանոցում: Հայրիկին այցելութիւն էին գալիս Միքայիլ Մանվելյանը³, Լեոն Քալանթարը⁴, ուսանողներ: Ռոմանոս Մելիքյանը, որ ապրում էր Աշտ Աթանասյանի մոտ, ամեն կրեկո այցելում էր հայրիկին:

Մեր տան առջև, սպարտեղի մոտ, կանաչ ծաղկանոցին մո-

¹ Խոսքը վերաբերում է Թումանյանի երկրորդ ուղևորութիւնը. դեպի առգմահակատ (1915 թ. հունիս-հուլիս ամիսների ընթացքում):

² Արանասյան Աշտ (Մալման) — երգիծարան, թատերագիր, թատերական բնադատ

³ Մանվելյան Միխայիլ — դերասան և արձակագիր

⁴ Քալանթար Լեոն — արվեստարան և ռեժիսոր. Սունդուկյանի անվան թատրոնի հիմնադիրներից մեկը

տիկ, մարդագետնի վրա գորգ էինք փռում, ու երկուսով պառկած սկսում էին զրույցը: Խոսում էին թուղաններից, ծղրիդներից, «Հաղարան բլրուլից», ժողովրդական երգերից, պոզիայից մինչև ուշ գիշեր...

Մի օր Ռոմանոս Մելիքյանը հարցրեց, թե ինչ կարծիքի է Սարգիս Քամալյանի՝ հեքիաթների, նրա մշակման մասին: Հայրիկը թե՛ Սարգիս Քամալյանը նման է էն անտիկվարին, որը սարի դագաթին մի մարմարե արձան է դանում՝ օրինակ՝ Վենետիկի անդրին, վրից մի թուկ է կասում ու սարի վրայով քաշ տալի, բերում քաղաք, նրա նուրբ մասերը՝ մասերը, ականջը, քիթ-պոռնոզը ջարդած, փշրած... Հեքիաթի էութիւնն էլ հենց էդ նրբութիւնների մեջ է:

Ռոմանոս Մելիքյանը լավ զրույց անող էր և սիրում էր զրույցը: Հետագայում հաճախ էր հիշում հայրիկին:



Ժողովրդի նահանջի և գաղթի լուրը հասավ ամառանոց. նրա մտքերը նորից փոթորկվեցին և նույն երեկոյան որոշեց գնալ Էջմիածին, գաղթականութիւնն առաջին օգնութիւն հասցընելու:

Մյուս օրը, առավոտ վաղ, Ռոմանոս Մելիքյանի հետ երեքով Տաբախմեկայից իջանք քաղաք, հայրիկին ճանապարհակու էջմիածին:

Երեկոյան հայրիկը մեկնեց Էջմիածին:

Միառժամանակ անց, ես էլ, մի քանի ընկերուհիներով հետ, մեկնեցի Էջմիածին՝ գաղթականների մեջ իբրև դիմաբան քույր աշխատելու:

1915 թ. Ալաշկերտ, էրզրում, Մուշ, Վան — կոտորածներից ազատված հայութիւնն բեկորները գալիս էին դեպի Արարատյան դաշտը: Ծանապարհները, գյուղերը, Էջմիածնի անտառը և լիճը ամբողջապէս բռնկված էին գաղթականներով:

Եղբայրական օգնութիւնը մեծ քանակութեամբ մթերք,

¹ Քամալյան Սարգիս — հեքիաթագիր, ունի հեքիաթների և ավանդութիւնների մի շարք մշակումներ

հագուստ, ուտելիք էր ստանում, և տպարանի դահլիճը դարձել էր պահեստ:

Ճաշարանում աշխատում էր Լևոն Բակլաշևը, որ շատ ուշադիր էր հայրիկի նկատմամբ և ջանում էր նրան լավ խնամել: Հայրիկը սիրում էր բամբակ և մրգի պահածոներ: Մենք գնում էինք ճաշարան ուշ ժամերին, երբ բոլոր աշխատողները ցրված էին լինում:

Այդ ժամանակ վանքում ապրում էր Գարեգին Լախակոպոս-Հովսեփյանը:



Հայրիկն էջմիածնում ամբողջ օրը զբաղված էր գաղթականների և որբերի վիճակը թեթևացնելու, նրանց կերակրելու, բուժելու գործը կազմակերպելով: Ինքը ոչինչ չէր կարողանում ուտել, ո՛չ ժամանակ կար, ո՛չ էլ ախորժակ, միակ բանը թեյն էր և սուրճը, որ կոնյակով օրը մի քանի անգամ խմում էր զանազան հիվանդությունների առաջն առնելու համար:

Ապրում էինք Մատենադարանի շենքի ներքին հարկում. վերևում կաթողիկոսի տեղակալի, կարծես, Հուսիկ արքեպիսկոպոսի սենյակն էր: Նա ամեն առավոտ ափսեով պոմիդոր էր ուղարկում հայրիկի համար, հետն էլ կարմիր վարդեր պոմիդորը՝ բանաստեղծին, վարդերը՝ աղջկան:

Հայրիկն առաջին անգամ պատրաստեց ձվածեղ՝ պոմիդորով և սուխարիկներով: Դրանից հետո ամեն օր պատրաստում էինք: Դա եղավ նրա սիրած նախաճաշը:



Չեմ կարողանում մոռանալ շատախոյի բարձրահասակ ու նրբակազմ գեղեցիկ Թանգիկին: Ըստ երևույթին, նա մի ունեվորի, հարուստ տան աղջիկ էր կամ հարս. հագին ունեի մանուշակադույն թավշե շոր, ոսկեգույն արդուլարով, բայց արդեն մաշված, խամրած, ցնցոտի դարձած...

Թանգիկը իր նազելի հասակով ու գեղեցկությամբ գրավել

էր մեզ հետ աշխատող ուսանողների: (Ա. Բարխուդարյան, Լ. Աճեմյան, Լ. Լիսիցյան) ուշադրությունը:

Մեր տղաները հիացած էին նրանով, իսկ նա անտառի եղնիկի նման փախչում էր դեպի ծառերի խորքը, խուսափում աղամարդկանցից: Օրերով որոնում էին ու չէին գտնում նրան: Ով գիտի ում հարսն էր եղել Թանգիկը, ում էր փրնարում, Լևոն Լիսիցյանը որոշել էր ինչ գնով էլ լինի գտնել Թանգիկին, համոզել, իր հետ տանել Թիֆլիս, բայց նրան այլևս չգտանք...

Գաղթական որբերի մեջ գեղեցիկ անուններ շատ կային, ես իմ օրագրի մեջ գրում էի աղջիկների անունները՝ Սիրվարդ, Ալվարդ, Քարմիլե, Թանգիկ: Երբ Թիֆլիս վերադարձա և ցանկը մի օր կարդացի Դեմիրճյանին, նա ամենից շատ հավանեց Թանգիկ անունը և այդպես էլ կոչեց իր նոր դրամայի («Պատաստան») հերոսուհիներից մեկին:



«Հեղի բաժո... հեղի բաժո...», դեռ ականջիս է և հիշում եմ բրդական ժողովրդական այդ տխուր երգի աղեկատու հնչյունները, որ լսվում էին էջմիածնում գիշերվա ուշ ժամերին, ծով հառաչանքի մեջ:

Լսվում էր հեռվից. «Հեղի բաժո... հեղի բաժո...»: Ամեն գիշեր ուշ ժամերին: Արդյոք ո՞ր մայրն էր սգում իր որդուն, կամ ո՞վ էր, որ հիշում էր իր հայրենի վայրերը և այգբան տխրությունը կանչում. «Հեղի բաժո... Հեղի բաժո...»:

էջմիածնում անցկացրած օրերի միակ երգն էր, որ լսվում էր գիշերվա ուշ ժամերին ժողովրդի հառաչանքի ու մրմուռի միջև:



Մոսկվայից էջմիածին էին եկել սրբօրհաս Նիկողայոս Ադոնցը¹, նկարիչ Մարտիրոս Մարյանը, ռուսական թերթերի աշխատակիցներ, որոնց Գարեգին վարդապետը իր մոտ հրա-

¹ Այդուցե Նիկողայոս — նշանավոր պատմաբան, հեղինակը «Հայաստանը Հուստինիանոսի օրոք» և այլ աշխատությունների

վիրել էր ճաշի: Նրանց հետ միասին հայրիկն ու ես էլ առաջին անգամ գնացինք «Ղոփ բաղը» և առաջին անգամ կերանք բիշմիշի դեղին խաղողը:

Հյուրերն իջևանել էին ս. Գայանեի վանքում: Նրանք էջմիածնում մնացին միայն մեկ-երկու օր:



Օգոստոսի 19-ի գիշերն էր, Արարատյան դաշտի անմոռանալի, ծանր գիշերը...

Փոթորիկ, կայծակ, որոտ... Երկինքը հանկարծ մթնեց, սևակնեց, սև մութ ամպերով ծածկվեց ու սկսվեց հորդ անձրևը: Գաղթականությունը բաց երկնքի տակ էր:

Հայրիկը սև թիկնոցով, կեպին գլխին, շտապ դուրս եկավ իր սենյակից՝ գաղթականությանը շնքերում պատասպարելու: Առաջին հերթին նա նկատի ուներ վեհարանի նոր, կիսավարտ շենքը, որ կաթողիկոսը մերժել էր գաղթականությանը հատկացնել: Հայրիկը դալարացած էր: Հակառակ կաթողիկոսի արգելքին, նա գաղթականությանը տարավ դեպի նոր վեհարանի շենքը:

Ուսանողները՝ Առն Լիսիցյանը, Լյալյա Աճեմյանը, Ալեքսանդր Բարխուդարյանը ջահերով (երկար փայտե ձողերի ծայրին աթար էին ամրացրել, վրան նավթ էին ածել ու վանել) գնում էին հայրիկի երկու կողմից և լուսավորում էին նրա ճանապարհը:

Հայրիկը թիկնոցի մեջ փաթաթված, տեղատարափ անձրևի տակ առաջ էր գնում, նրան հետևում էր հազարավոր գաղթականությունը իրենց կապոցներով, երեսաներով, նույնիսկ հարազատների դիակներով... Սարսափելի տեսարան էր...

Այդ միջոցին հայրիկը հիշեցնում էր «Աղալնու վանքի» հայր Օհանյան...

Ամենայն Հայոց կաթողիկոսին դուր չէր եկել, որ հայրիկը կառուցվող վեհարանը դարձրել էր գաղթականների ապաստան: Հետևյալ օրը հայրիկին կանչում է իր մոտ բացատրության՝ այդ ինքնակամ արարքի համար. չէ՞ որ ինքն արգե-

լել էր: Հայրիկի բացատրությունը չի գոհացնում կաթողիկոսին և նա դալարացած հիշեցնում է՝ «Դուք գիտե՞ք, որ ես Ամենայն Հայոց կաթողիկոսն եմ», հայրիկն էլ պատասխանում է՝ «Գիտե՞ք, որ ես էլ Ամենայն Հայոց բանաստեղծն եմ»:

Օգոստոսի 29

Հայրիկի հետ միասին կառքով էջմիածնից Երևան էինք գնում որբերի գործով: Իրիկնադեմ էր. երկուսս էլ էջմիածնի ծանր տպավորություններից ու աշխատանքից հոգնած էինք ու թմրած: Հենց որ դուրս եկանք Արարատյան դաշտ և Մասիսն էլ երևաց, մի քիչ թարմացանք ու թեթևացանք: Հայրիկին դուր էին գալիս ճահճուտներում ման եկող կիվիլները: Խոսեց կիվիլներից ու հիշեց իր «Քաջ կիվիլը»:

Փարաքար գյուղի մոտ կանգ առանք՝ ձիերին հանդիսատալու: Այգիներից մեկի դռան առաջ կանգնած էր մի կին՝ երեխաների հետ: Նա մեկ հրավիրեց այգի՝ խաղող հյուրասիրելու: Մեր ուղեկիցը, ցանկանալով երեխաներին հայրիկի հետ ծանոթացնել, ասաց. «Գիտե՞ք ով է. լսե՛լ էք «Շունն ու կատուն», նրա հեղինակն է»։ Երեխաները թե՛ գիտեմք, դիտեմք, և «Շունն ու կատուն» արտասանեցին: Հայրիկը ծպտալով լսում էր. հետո երեսային համբուրեց, ձևորք մի բան դրեց և մենք կառք նստեցինք ու շարունակեցինք մեր ճանապարհը: Ծանապարհին հայրիկն ասաց, որ ինքը երբեք էդպիսի բարձր գնահատական չի ստացել:

— Էսպես բան կլինի՞, ինձ ժողովրդականացնողը էս «Շունն ու կատուն» է դարձել, որ մի տեղ էլ հյուր եմ գնում կամ փողոցով անց եմ կենում, երեսաները կանգնում են թե՛ ա՛յ՛ Շունն ու կատուն...

Մի տարի Ախալցխա եմ. հետս բժիշկ Բուդոլյանն էր. երեկ ճանաչում ես. մի օր կառքով Ախալցխայից գնում ենք Մուղրուտ գյուղը՝ իր ծննդավայրը: Ծամփին գրվածքներիցս էր խոսում.— Գիտես, Օհանես, քո գրվածքներից մեր երեխաները ամենից շատ սիրում են «Շունն ու կատուն». որ երեսային էլ որ բռնես, նույնիսկ առաջին պատահածին՝ ան-

գիր կասի: Ես առարկում էի, նա պնդում էր, վերջը հետո գրադ եկավ, կառքը կանգնեցրեց ու հենց առաջին պատահած երեխային բռնեց թե՛ «Շունն ու կատուն» անգիր ասա: Էս երեխան վախեցած ու զարմացած մեզ էր նայում: Բժիշկը որ շատ ստիպեց և մի բան էլ խոստացավ, երեխան «Շունն ու կատուն» մինչև վերջ անսխալ արտասանեց: Իրար երեսի նայեցինք և երկուսս էլ ծիծաղեցինք: Ես տարվեցի...



Մի երեկո հայրիկն ասաց. «Արի գնանք քեզ ծանոթացնեմ մի հետաքրքիր մարդու և մեծ գիտնականի հետ»:

Հետո իմացա, որ նկատի ուներ հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանին (Միաբան)¹:

Գնացինք նրա կացարանը, որ գտնվում էր վանքի բնակելի շենքի ներքին հարկի սենյակներից մեկում: Պառկած էր: Իններ սև, խիտ մազեր, խոշոր ու խոհուն աչքեր: Հիշում եմ, մահճակալի առաջ մորթի էր փռված: Ես չգիտեի, որ նա անգամալույծ է: Հայրիկը շատ էր սիրում Միաբանին: Հոգևորականների մեջ նրան համարում էր նշանավոր գիտնականներից մեկը: Երկար զրույց էինք անում:

Նույն այդ օրերին հայրիկն այցելեց և Սահակ Ամատունուն², որի մասին նույնպես բարձր կարծիքի էր:



Օգոստոսի վերջերին որբերի և գաղթականների գործով հայրիկը մի քանի օրով էջմիածնից եկավ Երևան. ես էլ հետն էի. իջել էինք Առաջնորդարանում, Խորեն եպ. Մուրադբեկյանի մոտ:

Երևանում դրուժյունն ավելի լավ էր. կարելի էր շնչել: Վատը նա էր, որ արգելել էին գաղթականներին էջմիածնից

¹ Տեր-Մկրտչյան Գալուստ — էջմիածնի միաբան: Ավարտել է Սորբոնի (Փարիզ) համալսարանը: «Արարատ» ամսագրի խմբագիրը: Հեղինակ է բազմաթիվ բանասիրական ուսումնասիրությունների:

² Ամատունի Սահակ վարդապետ — էջմիածնի միաբան: Հեղինակը նաև «Հայոց բառ ու բան» բառարանի, որ հատկապես զբաղվել էր Քումանյանի ուշադրությունը:




Նվարդ Քումանյան (1954)



Թումանյանն իր որդի Համբիկի հետ (1898)




Թումանյանը Վերնատան առանձնատանը (1901)



Քումանյանը և Իսահակյանը Անիում (1901)




Քումանյանը և Ազգյանը Բեկի կլյուբում (Վրաստան) (1902)



Քումանյանը դիտում է Քուտկ բերդի ավերակները (1902)




Քումանյան, Պուշլյան, Աղալյան (1903)




Վերնատան անդամները. նստած են՝ Բուհակյան, Աղայան, Թումանյան, կանգնած են՝ Շանթ և Դեմիրճյան (1903)




Թումանյանի աշխատասենյակը Վոզնեսենսկայա փողոցի № 18 տանը, այն տեսքով, որ ունեցել է գրողի կենդանության օրոք




Թումանյանը Առյի հորեղանակա՞ն խնջույքի ժամանակիցների հետ (1908)



Նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի արվեստանոցում. Ազալան,
Վրթանես Փափաղյան, Բաշինջաղյան, Չոպանյան, Կոմիտաս,
Քոստակյան, Քումանյան (1908)




Քումանյանն էր երեխաների հետ (1914)




Քումանյանն իր տան պատշգամբում՝ Հյուրերի և չափակների հետ: Ջախից աջ՝ Աշխեն Քումանյան, Հովհաննես Քումանյան, Սուսաննա Տերչան, Գերենիկ Գեփրճյան, նվարդ Քումանյան, Վահան Տերյան, Անն Շանթ, Մարտիրոս Սարյան և ուրիշներ (1914)




Քումանյանն իր բնուածիքի հետ: Ջախից աջ. նստած են՝ Արփիկը, Հովհ. Քումանյանը, Սեդան, Աշխենը, Օլգա Քումանյանը, Քամարը, Անուշը. կանգնած են՝ Արտավազը, Նվարդը, Արեղը, Մուշեղը, Համիկը (1915)



Թումանյանը իր կնոջ՝ Օլգայի հետ (1915)



Թումանյանը և իր դուստր նվարդը Էջիթանի սրբերի հետ (1915)



Քոմանյանն իր դուստր նվարդի հետ (1919)

դուրս հանել, փոխադրել այլ վայրեր, իսկ հիվանդությունները սաստկանում էին, տարածվում, եղանակները ցրտում:

Որբերի մի մասին միայն փոխադրեցինք Երևան:

Էջմիածնի դժոխքում մնացինք մոտ երկու ամիս: Աշխատում էինք գիշեր ու ցերեկ, իսկ երեկոները, երբ հավաքվում էինք մի քիչ հանգստանալու, հայրիկն իր դժգոհությունն էր հայտնում և՛ հոգևորականությունից, և՛ գաղթական զանազան կոմիտեներից, և՛ եղբայրական օգնության կոմիտեից, և՛ տեղի կազմակերպություններից, որ չեն կարողանում գործը կազմակերպել, ժամանակին օգնել գաղթականությանը: Հուզվում էր, վրդովվում, երբ պահեստներում տեսնում էր ուտեստեղեն և հագուստ, որ ժամանակին ու նպատակահարմար չէին բաժանում: Նա իր վրա առավ այդ դժվարին գործը: Կոմիտեների պահեստները բացեց և զանազան իրեր ու ամաններ, գզալներ, սպիտակեղեն, որոնց կարիքը շատ էին զգում գաղթականները, հանեց ու բաժանեց: Իրերն ու հագուստը որոշեց բաժանել գիշերը: Մենք օգնում էինք: Գիշերները, երբ գաղթականները քնած էին լինում, նրանց կողքին գալիս էինք դնում, ինչպես և սպիտակեղեն, շորեր: Ամեն օր տալիս էինք թեյ, ճաշ, զանազան ղեղորայք էինք բաժանում գիղենտերիայի դեմ:

Մեծ աղետի օրերին գաղթականներին շատ շատ բարձր էին եկել Մոսկվայից, Բաքվից, Թիֆլիսից, Երևանից և ուրիշ հայաշատ քաղաքներից: Օգնում էին նաև էջմիածնի ներկայացուցիչները: Բայց և այնպես դժվարություններն անպակաս էին:

Օգոստոսի կեսերին դրությունը որոշ չափով բարելավվեց: Բացվեց հինգ հիվանդանոց՝ 500 մահճակալով, որբանոց՝ 3000 երեխայի համար, ամբուլատորիա: Երեխաները օրական ստանում էին կես շունտ ալյուր և տաք կերակուր: Նրանց ցնցոտիները փոխարինվեին նոր զգեստներով: Այլ օրերին շատ զգալի էր Բաքվի օգնությունը. այնտեղի ընկերության ներկայացուցիչները իրենց հետ բերել էին մեծ քանակությամբ հագուստեղեն, ամանեղեն, մթերք:

Սեպտեմբերի 1-ին վերադարձանք էջմիածին:

Նույն ամսի 15-ին Երևանով եկանք Թիֆլիս:

Հայրիկը հոգնած էր, թույլ, առողջութիւնը քայքայված՝ Թիֆլիս գալուց երկու օր հետո, սեպտեմբերի 17-ին ստացավ իր եղբոր՝ Ռոստոմի սպանութեան լուրը և երկու օրով դնաց Գնեղ: Վերադարձավ բոլորովին փոխված. մոտ երկու ամիս մնաց հիվանդ պառկած: Տխուր էր. ոչ ոքի չէր ընդունում, ոչինչ նրան չէր հանգստացնում. երկկոնները խոսում էին եղբորից, հիշում կոտում նրա հետ անցկացրած օրերը: Զէք կայտղանում հաղթահարել վիշտը:



Սեպտեմբերի մի օր հայրիկի հետ գնացինք Օրթաճալա՝ չի որբանոցները: Որբերի համար տարանք մեր «Մանուկ» ընկերության՝ խաղերը՝ «Գետերի խաղ», «Գուլների խաղ», «Սրամիտ նախարարանը», «Աստղերի խաղը» և մյուսները: Հայրիկը զրուցեց որբերի հետ, իսկ նրանք գրական երկույթ տվեցին՝ ի պատիվ հայրիկի:



Մի երեկո, երբ իրեն վատ էր զգում, գրադարանից գիրք ուղեց կարդալու. «Մի գիրք գտիր, մի ուժեղ բան կարդա, որ կարողանամ ցրվել, մոռանալ...»: Կարդում էի, մի կարճ ժամանակ լսում էր, լսում, հետո քնում էր կամ նորից խոսում եղբորից, հայրական տնից:



1915 թվականի սեպտեմբերից հետո հայրիկը կռուի քիչ էր գնում և ծանր դժգոսումներով էր հիշում ծննդավայրը:

¹ Ընկերություն, որ ստեղծված է Թումանյանի ընտանիքով՝ իր գրական ժամանակցությամբ և նվարդ դատեր ղեկավարությամբ: Խաղերը լույս էին տեսնում ասպարանում և տարածվում գրավանձառանոցների միջոցով:

հայրական: ստանը: Սիրտը կոտրված էր: Երբ առիթ էր լինում գյուղ գնալու, չէր գնում:

Ո՞ր հեռանաս, կոխած տեղերդ արյունոտ...

Արյունոտ էր այդ ժամանակ ոչ միայն իր ծննդավայրը, այլև ողջ երկիրը: Պատերազմն իր արհավիրքներով արյունով էր շաղախել ամեն բան:

Ո՞ւմ մոտ գնաս, ծանոթդ, ընկերդ արյունոտ, Ո՞նց մոռանաս էս աշխարհը արյունոտ, Երգ ես լըսում, լըսածդ երգերդ արյունոտ:

Նոյեմբերի 14

Զրույցը քննադատների մասին էր: «— Ինքնուրույնությունը ամենաթանկ բանն է: Մեր քննադատները ամեն բանից խոսում են, բայց բանաստեղծությունից՝ երբե՛ք:

Էականը բանաստեղծության ոգին է և ոչ թե ձևը, գրկույն կղանակը: Էականը— ոգևորությունն է: Կյանքում ամեն մի անհատ տարբեր տեմպերամենտ ունի, տարբեր կյանք ու ձգտում, և եթե էդպես է, ամեն մի անհատ բանաստեղծ ևս առավել տարբեր է ու բարդ: Նա շատ գաղտնիքներ ունի:

Ամեն մի ոտանավոր իր պատմությունն ունի: Ոչ մի քրննադատ չի կարողանում մտնել բանաստեղծի տունը— ներսը. նրանք սովորաբար մնում են միջանցքում: Ներս գնալը քշերին է հաջողվում: Մինչդեռ քննադատը պետք է թափանցի գրողի ստեղծագործությունների մեջ, խորանա, ներսը տեսնի և դրսևորի:

Բանաստեղծը ազատ է, թեորիաներ, օրենքներ չի ճանաչում. մի Շեքսպիր, Բայրոն, Շևլի, Պոլշկին նոր բաներ են ստեղծում, ուժեղ, բաներ... Գրողն ականջ շախտի դնի գանաղան դասախոսների, տեսությունների, օրենքների. նա իր ճամփան պիտի ունենա, իր ճամփով դնա՝ ազատ և անկախ:

Ես ձե չեմ մշակել, ձե չեմ ճանաչում: Ոգևորութեան փափն իրավունք չի տալիս ձե մշակելու. դրելու ժամանակ չի կարելի ներշնչումը կանգնեցնել, կտրել՝ մտածելու ձե փնտրելու: Երաժշտութիւնը քո մեջ պիտի ապրի:

Եթե բանաստեղծն ունի ուժեղ անհատականութիւն, նա էլ գուցէ է տալիս ժամանակին: Ամեն մի աշուղ իր ժամանակն ունի: Քչերն են հավերժական:

Գրողը մնայուն, հավերժական գործեր պիտի տա՝ խիտ, խորը, ուժեղ...

Տաղանդները ապրում են մի որոշ ժամանակաշրջանում: Իսկ հանճարները՝ բոլոր ժամանակներում...»:

Նոյեմբերի 15

Երեկոյան գրույցը բանաստեղծների շուրջն էր ընդհանրապես, հետո անցավ Պուշկինին:

Սովորականի նման խոսում էր ոգևորված, բարձր տրամադրությամբ, առանց դադարի ու ընդմիջումի:

— ...Պուշկինը մեծ բանաստեղծ է. խոշոր, հոյակապ բանաստեղծ, նուրբ հոտառութիւն ունի և գեղեցիկ ճաշակ:

Սիրում եմ կարգալ նրա պոեմները— «Полютава», «Кавказский пленник», «Цыгане» և մյուսները, բայց նրա գրվածքներից գիտե՞ք որն եմ ամենից շատ սիրում, իսկի չեք կարող երևակայել.— «Зимний вечер»-ը: Սիրում եմ էդ բանը, որովհետև դերադանցապես ուսական է. շատ է սիրուն ու հաջող:

Ասաց ու գրասեղանի վրայից վերցրեց Պուշկինի ժողովածուն ու կարդաց:

— Գոհար է, գոհար ուսաց գրականութեան մեջ: Հիմի կացեք ձեզ մի բան պատմեմ: Էն տարին (1912 թ.), Պետերբուրգ, բանտից ազատվելուց հետո, ծանոթացա Կորոլենկոյի հետ. շատ մտտեցանք: Կա մարդ էր, կատարյալ ուս մարդ: Ընթրիքից հետո միասին գուրս եկանք ու խոսելով գնում ենք տուն. նա ինձ էր ճամփու գնում, ես՝ նրան: Զրից անելով գնում ենք... Խոսք ընկավ Պուշկինից: Սա ինձ հարց տվեց. «Թե Պուշկինի գրվածքներից ո՞րն է ինձ վրա ուժեղ տպավորու-

թիւն արել, ո՞րն եմ ամենից շատ սիրում: Նա երևի կարծում էր՝ ես Պուշկինի խոշոր գործերից մեկի անունը կտամ: Երբ որ ասի «Зимний вечер»-ը՝ շատ դարմացավ. ձեռնափայտը իսկեց գետնին և սասաց.

— Գիտե՞ք, Դուք իրավացի եք...

Էդ «Եվգենի Օնեգինը» հիշտն ասած, առաջին անգամ ամբողջը՝ սկզբից մինչև վերջը կարդացել եմ բանտում (1909 թ.) և իսկի էն տպավորութիւնը չի արել վրաս, թեպետ սովորաբար դա նրա մեծ գործն է համարվում: Զգալիս տեղեր ունի, երկրորդական, ավելորդ կտորներ. հաջող հատվածներ կան, մանավանդ, երբ Ռուսաստանն է տալիս, նրա բնութեան նկարագրութիւնը. էդ տեղերը շատ են լավ, բայց էդ նրա մեծ գործը չի. Պուշկինը եղտեղ չի. Պուշկինը էստե՞ղ է կատարյալ բանաստեղծ: Կարդացեք ու տեսեք, թե ինչքան է սեղմ, գեղեցիկ և ուժեղ. մի ավելորդ բառ չեք գտնի. իսկ բանաստեղծի համար մի բառը մի աշխարհ է, և մեծ նշանակութիւն պիտի տա բանաստեղծը բառին:



Մի օր Միրայել Մանվելյանը մեծ տրամադրությամբ երգեց մի շարք ժողովրդական երգեր՝ «Արալն անցա էն կունը», «Ծիրանի ծառ», «Աղջի Հայկո» և այլն: Երգում էր ժողովրդական երգերին հատուկ շեշտով ու զգացմունքով: Այդ երգերը մեծ տպավորութիւն թողեցին բոլորի վրա, մանավանդ հայրիկի, որ միշտ հիշում էր առանձին հաճույքով:

1916

Հունվարի 1

Նոր տարու առաջին օրը սովորականի նման, առավոտուանից այցելուները, հյուրերը շատ էին:

Այդ տարիներին հայրիկի ծանոթութիւնների շրջանը շատ էր մեծացել: Անվերջ այցելուներ, հյուրեր, զանազան շի-

Նարիններից դիմումներ, մասնավոր մարդկանց խնդրերն էր այս կամ այն գործի համար: Այցելուներ ոչ միայն Քիֆլի-նից, այլև Կովկասի այլ քաղաքներից ու դավառներից, Ռուսաստանից և արասասհմանից:

Հունվարի 5

Գիշերը ընթրիքին մեզ մոտ էին Վրթանես Փափազյանն ու Տ. Հովհաննիսյանը¹:

Հայրիկը ցերեկն իրեն լավ չէր զգում, բայց երեկոյան բացվեց ու սկսեց պատմություններ անել Աղայանի, Պոռոջանի, Արասխանյանի և ուրիշների կյանքից:

Հունվարի 16

«Գեղարվեստական կատարյալ գործերի մեջ միշտ մի նոր բան կարելի է դանել, նոր բացատրություններ կարելի է տալ և ինչ կողմից ու ինչ տեղից էլ որ մոտենալու լինենք, միշտ մի բան կգտնենք», — մի առիթով ասաց Հայրիկը:

Հունվարի 17

Երեկոյան Հայրիկի մոտ էր Աղբալյանը: Զրուցում էին բանաստեղծի ստեղծագործական աշխարհի, ստեղծագործական պրոցեսի շուրջը: Աղբալյանը խոսում էր փիլիսոփաներից — Կանտ, Պետրաժիլցի... Հայրիկը Բերգսոնի՝ գիրքն էր կարդացել ու շատ էր հաղթանակ. «Բերգսոնը շատ հետաքրքրական վերլուծություններ է անում ստեղծագործական պրոցեսում էսկանը ինտուիցիան է»:

¹ Հովհաննիսյան Տիգրան — իրավաբան, հասարակական գործիչ, Քարգմանի: Բարգմանել է Լ. Տոլստոյի «Հարություն», Զ. Սենկևիչի «Առանց դավանանքի» վեպերը և ուրիշ երկեր:

Հունվար

Վ. Տերյանը ժամեր շարունակ խոսում էր պոեզիայի երաժըշտայնությունից, տաղաչափությունից: Բանաստեղծության ձևը նրան շատ էր զբաղեցնում: Ֆրանսիական բանաստեղծներ Վեոլենն ու Բոդլերը նրան այնպես էին գերել, որ նա երազում էր տեսնել Փարիզը, մեծ ցանկություն ուներ Փարիզի կաֆեներում գիշերներ անցկացնելու, Վեոլենի ու Բոդլերի կաֆեներում, նրանց սեղանների շուրջը:

Հայրիկը համամիտ չէր Տերյանի հետ.

— Վահանը լիրիկ տրամադրության, մեղմ բնավորության բանաստեղծ է: Նա չի օգտվում ժողովրդական լեզվի անհուն գանձերից: Մինն ասի, դու Ախալքալակ ես ապրել, Լուսադրյուրից ես ջուր խմել, քո երկրից խոսի, քո ժողովրդի լեզվով բան ասա, նրա շունչը տուր, նրա ոճը բեր... Ի՞նչ ես գնացել Փարիզի մայթերն ու կաֆեները երգում, հետն էլ տերողորմյա քաշում. էդ հալա հերիք չի, գալիս է կստեղ ինձ հետ էլ միճում, ուղում է համոզի՝ թե սա է ճիշտը:

Նա ոչ մի բանում էնպես համոզված չեմ, ինչպես լեզվի խնդրում: Ճիշտը սա է — ժողովրդական կենդանի լեզվով պետք է գրել, որ ժողովուրդը կարդա, բան հասկանա:



19:3 թվականի հունվարյան ցուրտ օրերը կյանքում ու դրականության ինչ մնացին: Երպես տոնական ջերմ օրեր՝ բրյուսովյան օրեր, իսկ Բրյուսովի կյանքում՝ որպես Թիֆլիսյան պայծառ օրեր:

Առաջին անգամ էր, որ ողու մեծ կուլտուրայի մի նշանավոր գործիչ այնքան ջերմ խոսքեր էր ասում և այնքան բարձր գնահատական տալիս հայոց գրականությանը:

Բրյուսովը բացառիկ ընդունելություն ու վերաբերմունք գտավ ինչպես Բաբլում, այնպես էլ Թիֆլիսում, ապա և Երևանում: Պողոս Մակինցյանը, որ դասատուի պաշտոնով Երևանում էր, Բրյուսովի գալու առթիվ Թիֆլիս էր եկել, մասնակցելու այդ օրերին:

Բրյուսովի առաջին դասախոսություն մասին հայտարարված էր թերթերում և աֆիշներում: Տոմսերը վաճառվում էին Քիֆլիսի «Чайка чай» կաֆեում: Հենց առաջին օրը բոլոր տոմսերը սպառվեցին:

Բրյուսովի գալու օրը՝ հունվարի 12-ին, մի խումբ գրական-հասարակական գործիչներ հայրիկի առաջնորդությամբ գնացին կայարան: Բրյուսովը կնոջ՝ Յոաննա Մատվեննայի հետ էր. դիմավորեցինք ծաղկեփնջերով, ծանոթացանք: Սկանք «Гранд отель» հյուրանոցը (Գոլովինսկի պողոտա): Հայրիկը նախօրոք վերցրել էր երկու սենյականոց լավագույն համարն այդ առաջնակարգ հյուրանոցում: Մի կարճ ժամանակ հյուրանոցում մնալուց հետո, հայրիկը նրանց ընթրիքի հրավիրեց մեր տուն: Մտաը փող շունկը, Մակինցյանից պարտք վերցրեց: Տանն էլ նախօրոք ոչինչ չէինք պատրաստել, բայց հայրիկը ամենայն հանգստությամբ հյուրերին ու դիմավորողներին ընթրիքի հրավիրեց: Գնացինք Պուշկինի փողոցի շուկան, գնումներ արինք, բերինք տուն: Ժամը 9-ին հյուրերը եկան: Երեկոն անցավ ջերմ ու հետաքրքիր:

Մյուս օրը՝ հունվարի 19-ին, Արտիստական թատրոնում Բրյուսովը դասախոսություն կարդաց հայ պոեզիայի մասին, որը դտավ բացառիկ ընդունելություն: Նույն օրը, ի պատիվ Բրյուսովի, շքեղ բանկետ տրվեց. հարյուրից ավելի հյուրեր կային: Թամագան հայրիկն էր:

Հաջորդ օրը Բրյուսովը մեկնեց Երևան:



Բրյուսովի գալով հայրիկի տրամադրությունը բացվեց: Ստիպված տանից դուրս էր դալիս, ղբոսում Վալերի Յակովլևիչի հետ, երեկոները տուն էր հրավիրում կամ ինքն էր գնում նրա մոտ:

Մի օր ցերեկը, երկու կառքով, Կոշորի խճուղով գնացինք դեպի Բուսաբանական այգի, քաղաքը բարձրից բանաստեղծին ցույց տալու համար: Հետո այցելեցինք Սայաթ-Նովայի շիրիւր: Առաջին կառքում նստած էին բանաստեղծները, իսկ երկրորդում՝ Բրյուսովի կինը, Մակինցյանը և ես:

Հետո ճաշեցինք «Анонна» հյուրանոցում: Ճանապարհին խոսք ևղավ «Анонна» բառի մասին, և Բրյուսովը սկսեց ստուգաբանել: Զրույցների ժամանակ առհասարակ նկատելի էր նրա հետաքրքրությունը բառերի ծագման նկատմամբ:



Բրյուսովի գալստյան առթիվ Գրողների ընկերությունը գրական-երաժշտական երեկո կազմակերպեց արևելյան երգերով ու երաժշտությամբ՝ թառ, քլամանչա, սանթուր և այլն: Բայց, հակառակ սպասածի, երեկոն Բրյուսովի սրտին ոչինչ չէր տվել, խոստովանել էր, որ իրեն ավելի հարազատ է եվրոպական երաժշտությունը:

* * *

Մեր տան աստիճաններով իջնելիս հայրիկը տեսնում է Բրյուսովին սանդուղքին նստած. «Что с Вами, Валерий Яковлевич, устали или Вам плохо?», — դարձացած հարցնում է հայրիկը: Բրյուսովը ծոցատետրը հանելով, պատասխանում է. «Нет, Иван Фадеевич, у меня такая уж привычка — каждый день заносить в свою книжку свои мысли или какое-либо стихотворение и должен обязательно написать»:

Հետագայում հայրիկը մտաբերում էր այս դեպքը և ծիծաղելով ասում, թե ինքն այդպես չի կարող:

Հունվարի 23

Բրյուսովը և կինը մեզ մոտ էին: Բրյուսովը, ինչպես ընդունված է ուսաների մեջ, հայրիկին ասում էր Իվան Ֆադեյիչ: Բայց երբ իմացավ, որ հայրիկը ծնվել է այն ժամանակ, երբ հայրը դեռևս քահանա ձեռնադրված չի եղել (մեր պայքը քահանա է ձեռնադրվել 1874 թվականին, երբ հայրիկը 4—5 տարեկան երեխա էր) և անունն էլ եղել է Ասլան, այդ օրվանից նրա համար Իվան Ֆադեյիչը դարձավ Իվան Լվովիչ: Լեոն էլ ծիծաղելով, կատակի համար, հայրիկին ասում էր Իվան Լվովիչ:

Բրյուտովը հարցրեց հայրիկի կարծիքը «Անուշ» պոեմի վրա՝ չեստա՞յ Իվանովի Թարգմանության մասին: Հայրիկը թե՛ «Լավ է, բայց ափսո՛ս իմ Անուշը չէ, նրանը շեկ է դուրս եկել»:

Հունվարի 28

Հայրիկին այցելեց Վրթանես Փափազյանը, որ նոր էր վերադարձել Պարսկաստանից. նկարագրում էր տեսած քաղաքները: Ամենից շատ հավանել էր Շիրազը, որ իր կարծիքով Պարսկաստանի ամենագեղեցիկ քաղաքն է՝ վարդի, երգի և գինու քաղաքը: Իսպահանը (գեղեցիկ է, բայց կեղտոտ է: Հարուստ է այնտեղի երաժշտությունը: Հակառակ Իսպահանի, Թեհրանը մաքուր և կոկ քաղաք է:

Հայրիկը խոսում էր իր լեզվական «գլուտներից»: Հետանցավ իր գրական գործերին՝ և վերստին՝ «Ինձ դրամատու՛րդ եմ համարում...»:

Փետրվարի 20

Մեր տանն էին նիկոլ Աղբալյանը, Վահան Տերչյանը և Ստեփան Լիսիցյանը: Նրանց զրույցին ներկա չէի:

Փետրվարի 26

Գրական մարդիկ էին մոտը, խոսում էին գրականությունից ու մեր կյանքից:

— Մենք որոնումների շրջան ենք ապրում: Նոր մարդիկ չեն առաջ դալու, նոր, մեծ արվեստագետներ են երևալու, նոր ստեղծագործողներ, նոր առաջնորդներ,— ասում էր հայրիկը:— Մենք գնում ենք դեպի նոր դարեր... Նորի պահանջը կա:

Աղբալյանը սկսեց դժգոհել, որ հայերը հայերեն չեն կարդում, իրենց կյանքով չեն հետաքրքրվում. մենք գնում ենք դեպի ապագայնացում, աղգային դաստիարակություն

չկա, հայերեն չեն խոսում, հայերեն գիրք չեն կարդում: Ազգայինը որոշվում է լեզվով, կուլտուրան ծագման հետ կապ չունի:

Փետրվար

Լոնդոնից Արշակ Սաֆրաստյանի¹ հետ եկել էին Հարություն Բաքատոնը, Ալֆրեդ Բագհատուլը, Ջորջ Հարջկինը²:

Բաքատոնը և Բաֆֆու տղան՝ Արամ Բաֆֆին, ճաշին մեղ մոտ էին: Թարգմանը Արամ Բաֆֆին էր: Խոսում էին հայ ժողովրդի ներկա գրությունից, քաղաքական խնդիրներից, գաղթից և այլն:

Բաքատոնն ասում էր, որ Անգլիայից ոչինչ չպիտի հուսալ, միակ հուսալին Ռուսաստանն է:

Մարտի 14

Նրբ կյանքում այս կամ այն մանր բանի պատճառով վրդովվում էինք կամ հուսահատվում, հայրիկն աշխատում էր մեր տրամադրությունը բարձր պահել, որ առօրյա մանր դեպքերին կարևորություն չտանք, անցողիկ երևույթներին բարձրից նայենք՝ հեշտ ու թեթև.

«— Հետաքրքրվելով տիեզերական մեծ հարցերով, բնությունով, մարդ կմտտենա տիեզերքին ու կյանքի մանր խընդիրները կփոքրանան, մարդ էլ չի հուսահատվի,— ասում էր նա:

— Մարդը գիտության, գրականության, գեղարվեստի աշխարհում ապրելով, կյանքը վայելել պիտի իմանա: Գիրքն ու կյանքը իրար գցել իմանա»:

¹ Սաֆրաստյան Արշակ — լրագրող, պատմաբան, հնագետ, հրատարակիչ, լոնդոնահայ հասարակական գործիչ

² Բախտան Հարոյ, Բագհատուլ Ալֆրեդ, Հարջկին Ջորջ — անգլիացի լրագրողներ

Ապրիլի 16

Հայրիկն իրեն թույլ էր զգում, հոգնած էր: Շարունակ մոտը հյուրեր էին գալիս, խոսում, վիճում, վրդովում... Սենյակում ծխում էին և մնում մինչև ուշ գիշեր:

Այդ երեկո Պետրոս Աղամյանով էր ոգևորված: Հիշում էր մեծ դերասանի հետ բեմ ելնելու և ծանոթանալու ծիծաղաշարժ պատմությունը:

Հիացմունք ուներ Աղամյանի նկատմամբ. «Հոյակապ դեմք է Աղամյանը, ի բնե ինտելիգենտ, նրբազգաց ու նրբաճաշակ մարդ»:



Մեծ գրողներից ամենից շատ սիրում էր Շեքսպիրին: Գրական զրույցների ժամանակ միշտ նրան էր դառնում, նրանից խոսում:

Շեքսպիրի դրամաներից ամենից շատ սիրում էր «Համլետը», որից հատվածներ անգիր գիտեր: Տանը մեղ համար երկու անգամ կարդաց և ամեն անգամ բացատրություններով ու ծանոթություններով:

Կարդում էր մեծ տրամադրությամբ. մեկ գունատվում էր, մեկ պայծառանում, մեկ էլ տարվում, աշխարհից վերանում: Կարդում էր և ասես ամեն մեկի դերն ինքը խաղալիս չիներ, ապրելիս, մանավանդ, երբ հասնում էր հոր ուրվականի պատկերին կամ Պոլոնիոսին:

Հետո սիրում էր «Լիր արքան», «Մակբեթը», որ նույնպես կարդաց մեղ համար: Սիրում էր «Վինձորի ղվարճասեր կանայք» կատակերգությունը, հատկապես Ֆալստաֆի տիպը և այլն:

Համլետի համար պահանջում էր լավ խաղ: Ամեն անգամ վրդովվում էր, երբ դերասանները վատ էին խաղում Համլետի դերը: Ամենից շատ Աղամյանին էր հավանում, նրան համարելով իսկական Համլետ: Առհասարակ Աղամյանին շատ էր սիրում: Սիրանույշի Համլետը չէր հավանում: Կա-

ցապետ Գալֆայանի խաղից հավանում էր որոշ կտորներ և տեսարաններ:

Ապրիլի 24

Թեև միշտ ծրագրեր էր կազմում և մտածում էր գրականությանը պարասելու մասին, բայց, տեսնելով, որ չի լինում, ասում էր.

— Ինչքան էլ հարմարություններ լինեն, ոչինչ չի կարելի անել, քանի որ էականը չկա, հոգիս տակն ու վրա է կղած... Եվ էդ է պատճառը, որ հաճախ մարդիկ տարիներով ոչինչ չեն անում, իսկ երբեմն, ընդհակառակը, կարճ ժամանակում՝ շատ բան:

Ապրիլի 25

Երեկոյան մեղ մոտ էին վարդգես Սուրենյանցը, Եղիշե Թադևոսյանը, Մարտիրոս Սարյանը, վերնականներից՝ Գեմիրճյանը, Աղբալյանը և ուրիշներ: Զրույցը արվեստի և գրականության շուրջն էր: Վարդգես Սուրենյանցը մեծ ոգևորությամբ խոսում էր Շեքսպիրի մասին: Հետո անցավ իր թարգմանություններին:

Վերջում խնդրեց, որ հայրիկն իրեն այցելի, խոստանալով ցույց տալ իր նոր գործերը՝ արևմտահայերի կյանքից էստյուդների մի ամբողջ շարք, որ նկարել էր 1915 թվականին, էջմիածնում:

Մյուս օրը հայրիկի հետ գնացինք: Ապրում էր Գոլովինսկի պողոտայի հյուրանոցում: Ցույց տվեց նկարները: Հայրիկը մեծ տպավորությամբ հեռացավ:

Ապրիլի 28

Շեքսպիրի մահվան 300-ամյակի առթիվ գրողների ընկերությունը կազմակերպել էր գրական երեկո: Ներկա էին նաև անգլիացի հյուրերը՝ Հարչկինը, Բագճաուզը և Բաքստոնը:

Հաջորդ օրը նրանք այցելության եկան հայրիկին: Թարգմանը վ. Յոթովենցն էր: Խոստում էին անգլիական գրականությունից, մասնավորապես Շեքսպիրի և ժողովուրդների: Կուտուրական կապերի մասին:

◎

Գրական ընկերության երեկույթներին, երբ հասարակությունն աղմկում էր կամ աշակերտությունը լուրջ շէր վերաբերվում, հայրիկը վրդովվում էր:

— Ցանկացողը էնքան բան կարող է ստանալ, սովորել մեր երեկոներից, եթե կանոնավոր այցելի և ուշադիր լսի:

Շատ էր վրդովվում, երբ տեսնում էր այնպիսի հայերի, որ իրենց հարազատ լեզուն, գրականությունն ու պատմությունը չգիտեն: Մեծ կարևորություն ու նշանակություն էր տալիս ազգային արժանապատվության զգացումին և օրինակ էր բերում անգլիացիներին. «Հարգիր նախ և առաջ ինքդ ընդ»:

Մայիսի 1

Հայ արվեստագետները միության բացումն էր Շիրվանզադեի նախագահությանը: Նկարիչներից շատերը Թիֆլիսումն էին: Նիստից հետո հայրիկը բոլորին ճաշի հրավիրեց: Շիրվանզադեն էր, նկարիչներ Նդիշե Թադևոսյանը, Վարդգես Մուրենյանցը, Փանոս Թերլեմեզյանը, Մարտիրոս Սարյանը, Սարգիս Խաչատրյանը և ուրիշներ:

Մյուս օրը երեկոյան այցելեց Վարդգես Մուրենյանցը: զրույցը Շեքսպիրի մասին էր: Վարդգես Մուրենյանցն իր կատարած թարգմանությունները հետն էր բերել: և Պետերբուրգ մեկնելուց առաջ բոլոր տեսքերը հանձնեց հայրիկին:

Մայիսի 5

Երեկոյան տիկին Ե. Բահաթուրն¹ էր եկել և բերել էր «Արա Գեղեցիկ և Շամիրամ» գրաման: Հետո եկավ Գերենիկ Գեմիրճյանը:

Խոստում էին այն մասին, որ գրողները, նյութական աննրազատ պայմաններում լինելով, գրականությանը պարասելու հնարավորություն չունեն և դբազված են կողմնակի գործերով ու պաշտոններով:

— Էսպես է, էլի, գրականությունը պահանջում է լավ հասկացող հասարակություն և ապահովություն, որ չկա, — ասում էր հայրիկը:

Մայիսի 6, 1916 թ.

Անդրանիկն էր մոտը: Գարնան երեկո էր. պատշգամբում ներկուսով նստած զրույց էին անում և սուրճ խմում: Անդրանիկը խոսում էր իր անցկացրած օրերից, իր կյանքից ու իր երկրից: Դեպքեր էր պատմում, թե քանի-քանի անգամ դաշտում գնդակների տարափի տակ է ընկել, բայց չի վիրավորվել: գնդակը միշտ մոտովն է անցել:

Հետո խոսեց իր ձիերից: Շատ էր սիրում իր ձիուն. «Ձին թանկ բան է. լավ ձին գին չունի: Խաղաղ ժամանակ ձիուն պիտի լավ նայել, խնամել, սիրել, իսկ գործի ժամանակ՝ թշնախ, անխնա լինել»:

Անդրանիկը հետաքրքիր զրույց անող էր և լավ պատմող: Հայրիկը շատ բարձր էր գնահատում նրա այդ ձիքը, սիրուն էր նրան լսել, հետը զրույց անել:

Անդրանիկը լավ էր ճանաչում Հայաստանը. շատ էր ճանապարհորդել և՛ ձիով, և՛ ոտքով:

— Ափիս նման գիտեմ մեր երկիրը, — ասում էր: Գիտեր անթիվ ժողովրդական երգեր ու լեզենդներ: Այդ երեկո նա հայրիկին հետաքրքիր դեպքեր էր պատմում:

¹ Բահաթուր Եկատերինա — թատերագիր, պատմական ողբերգությունների ճեղհնակ

Անդրանիկը գիտեր քրդերեն և տաճկերեն: Դա նրան շատ էր օգնել կռիվների ժամանակ: Պատմում էր, թե ինչպես քրդերը հաճախ իրեն քրդի տեղ են դրել կամ լեզու իմանալու շնորհիվ կարողացել է քրդերի կամ տաճիկների շրջապատում ֆից ազատվել:



Հայրիկը Աղայանից հետո մտերիմ ընկեր, կարելի է սուկուռնեցավ: Անդրանիկը այն սակավաթիվ մարդկանցից էր, որ առաջին հանդիպումին ընկերական մտերմության կամուրջ ստեղծեց իրենց միջև:

Նա մեծ հայրենասեր էր և ժողովրդասեր: Խառնվածքով՝ ժողովրդական մարդ էր, հասարակ, շատ հասարակ մարդ: Զեքմ սրտի տեր: Ժողովրդական ավանդությունների, հեքիաթների և առակների շտեմարան էր, լավ պատմող էր, զրույց անող և իր զրույցներով ու հետաքրքիր պատմություններով գրավել էր հայրիկին, որի մեջ լավ զրույց անողի, պատմողի սերը շատ էր ուժեղ:

Նրանց մտերմացնող հանգամանքներից մեկն էլ հայ ժողովրդի ծանր վիճակն էր: Երկուսին էլ մտահոգում էին ժողովրդի ճակատագիրը, հատկապես 1915—1916 թվականներին: Երկուսն էլ քննադատորեն էին վերաբերվում դաշնակցությանը: Շատ հարցերում նրանց տեսակետները համընկնում էին: Երկուսն էլ օպոզիցիոն դիրք էին բռնել դիպլի աղզային խորհուրդը: Քանի-քանի երեկոներ մինչև ուշ գիշեր նստած զրույց էին անում, խոսում քաղաքական գործիչներից: Դժգոհում, վրդովվում և ջղայնանում...

— Հա է՛, հա՛... — ասում էին ու զարունակում իրենց: Խոսքը:

Անդրանիկն արտաքուստ խիստ արտահայտություն ուներ, խոժոռ էր, մի քիչ էլ կոշտ դիմագծերով: Բայց երբ ժպտում էր, մեղմանում էր նրա դեմքը, տալիս տանում և մանկական արտահայտություն ստանում: Ունենալով այդպիսի նկարագիր, կյանքում փնտրում էր հակառակը՝ նուրբը, մեղմը, գեղեցիկը: Նրան ձգում էր, գրավում էր կանացի քնքշությունը: Հի-

շում և՛ այդ ժամանակ Թիֆլիսում, Գոլովինսկի պողոտայում, Արտիստական թատրոնի մոտ բացվել էր «Чашка чая» կաֆե: Այնտեղ տեսել էր մի շահել, սիրուն աղջկա, որ մատուցողներից էր: Անդրանիկի վրա մեծ տպավորություն էր արել այդ աղջկա նազանքը, նուրբ ու կիրթ շարժումները: Մի անգամ ասաց. «Էդ աղջիկը իր նազանքով դիս կվանե, հոգիս կհանե...»:

Մայիսի 11

Զրույցը մեծ մարդկանց շուրջն էր:

— «Չեմ սիրում թագավորների ու նման մարդկանց կյանքը, նրանք կապված են բռնության, իշխանության հետ՝ նեղ են, կոպիտ ու շար: Ուրիշ բան է գեղարվեստագետների, գիտնականների կյանքը՝ փոթորկոտ, խորը, լիքը: Բայց նրանց կյանքից մեղ քիչ բան է մնում: Ծածկված է, փակված, չի երևում, չի գրվում: Նրանց ներքին կյանքը, որ շատ հետաքրքրական է, մեղ անհայտ է մնում:

Շեքսպիրի խորը կյանքը, Բայրոնի փոթորկոտ, Շելլիի նուրբ, բնության հետ կապված կյանքը — շատ են դեղեցիկ ու հետաքրքիր, բայց մեղ ոչինչ չի հասել:

Նրանք կապված են սիեզերքի, բնության հետ — խորն են ու գեղեցիկ, ծանր և լիքը»:

Զրույցի ժամանակ եկավ Անդրանիկը և մեր զրույցն ընդհատվեց:

Մայիսի 19

«Կյանքս էլ «Հաղարան բլրուս» է դառնալու... չի գրվելու, չի լինելու... Ամենալավ բաները հավաքեցի, ամենալավ ճանապարհներն ընտրեցի ու ամենալայն ծրագրերը կազմեցի և ոչինչ չեղավ, ոչինչ... Բոլոր ծրագրերս խորտակվեցին, հոգիս տակն ու վրա եղավ, խանգարվեց...»:

Մայիս

Յերեկը Մարտիրոս Սարյանն էր մեզ մտա: Նրան շատ գուշակավ մեր սան պիրքը— մեր դիմացի սարը, մի էությունդ արից, կարծեմ ծառ էր: Մտադիր էր Լուսիկի՛ հետ միասին Շուշի գնալ, բայց նոր նախիջևան մեկնեց:

Հունիսի 25, Բոբոմ

Խոսում էր հագնվելուց, կանանց անճաշակությունից:

— Մեր կանայք սովորաբար հագնվել չգիտեն, ճաշակ չունեն. շեն իմանում, թե ինչը կսազի իրենց, ինչը՝ ոչ. հենց էն է, մոդային են հետևում. մին էլ տեսար գլխներին մի-մի թաբախ ծաղիկ դրին կամ զանազան փետուրներ ցից արին:

Ինքը գերադասում էր անգլիական ձևով հագնվելը— պարզ ոճը: Հագուստը պետք է հարմար լինի՝ ազատ, թեթև, հանգիստ ու գեղեցիկ:

— Ամեն բանում առաջին տեղը պիտի տալ ոճին, ճաշակին: Ոճը մեծ բան է:

Հուլիսի 20

Ամառը Բորժոմում էինք: Ապրում էինք բարձր սարի վրա: Մեր ամառանոցը վերին խճուղու վերջին տունն էր: Հայրիկի տրամադրությունը լավ չէր. խուսափում էր մեծ շրջաններից, մարդկանցից, հոգնած էր և հաճախ մենակ էր լինում կամ մեզ հետ: Յերեկները իջնում էինք պարկ՝ ջուր խմելու. վաննա էր ընդունում, հետո գնում էինք մոտակա անտառը դրոսնելու: Մի երկար և հաստ ձեռնափայտ ուներ, որ միշտ ձեռքին էր լինում: Անտառում սիրում էր ավելի ծմակ ու ժայտոտ տեղերը և միշտ հիշում էր ու կարոտում Լուսիկ սարերը,

1 Աղայան Լուսիկ— Ղազարոս Աղայանի դուստրը, Մարտիրոս Սարյանի կինը

անտառները: Սուլում էր «Չխարի սարի» եղանակը կամ երգում թուրքերեն «Ախշամուղի» երգը:

Յրեկոները չէր սիրում պարկ գնալ, մեզ էլ չէր թողնում, որ իջնենք, «խոնավ է, օդը վատ»:

Հաճախ բարձրանում էինք մեր տան վերևի բլուրը, մի կանաչ, սիդավետ տեղ: Այնտեղ էինք անցկացնում մեր երեկոները և ականջ դնում պարկից լսվող երաժշտությանը:

Չիշում ևս, այդ բլրի վրա, ծառերի տակ հանգստանալիս, երգում էր «Անուշից» մի կտոր, որի եղանակն էլ ինքն էր: հորինել «Անուշը» գրելու ժամանակ:

Այս, ի՞նչ լավ եմ սարի վրա,
Անցնում օրերն անուշ, անուշ...

Այս երգը կապվեց Բորժոմի հետ և հետագայում երգելիս միշտ հիշում էինք Բորժոմը և ասում՝ «Բորժոմի երգը»:

Յրեկոները սիրում էր պատշգամբում նստել և սպասել աստղերի դուրս գալուն, նայում էր աստղերին և աստղերից խոսում: Հետո բերել էր աստղաբաշխության վերաբերյալ գրականություն. կարդում էր, զրուցում, պատմում: Գիտեր ո՞ր աստղը, համաստեղությունը կամ մոլորակը ամառվա ո՞ր ամսին, գիշերվա ո՞ր ժամին է ավելի լավ երևում կամ ավելի ուժեղ առկայծում: Կարդում էր Ֆլամարիոնի «Նրկնքի պատմությունը» գիրքը (ռուսերեն): Առանձնապես սիրում էր Սիրիուսը և Արուսյակը, նրանց փայլն ու գույները: Հաճախ մթնշաղին արթնացնում էր մեզ, որ մենք էլ տեսնենք Սիրիուսի հիասքանչ առկայծումը կամ Արուսյակի հրաշագեղ փայլը: Մենք էլ սիրեցինք աստղերը և ամեն մեկս մի աստղ էինք ընտրել մեզ համար. մեկս Արուսյակը, մյուսս՝ Սիրիուսը. Օրիոնը և այլն: Հայրիկի այդ ոգևորության արգասիքը եղան «Արուսյակ» և «Սիրիուսի հրածեղտը» բանաստեղծությունները:

1 Այս և հետագա տողերը (3 տուն) Թումանյանը դուրս է թողել պոեմից և հրատարակել իբրև առանձին բանաստեղծություն:

Ամառվա կեսից, երբ սկսեց լավ դգալ, երբեմն պարապում էր: Բարդամանեց սերբական էպոսից հատվածներ՝ «Մարկոն ուսմազանին գինի է խմում», «Մարկոն վերացնում է պսակի հարկը» և «Մարկոն վար է անում»: Բորժոմում գրեց «Մոծակն ու մրջյունը», որ գեղես Թիֆլիսում, գարնանը լսել էր Անդրանիկից:

Բավականին գրքեր էր բերել Արևելքի պատմությունից և գրականությունից: Զբաղվում էր պարսկական և շինական գրականությամբ: Միրում էր կարդալ շինական գրականությանը նվիրված «Сбирель Книгъ» ժողովածուն: Այդ գրքից թարգմանեց ևի Թայ Պոյի «Կարմիր վարդը»:

Երբ հյուրեր էին գալիս մոտը, սկսում էր իր սովորական գրույցը: Շատ հետաքրքրական էր այն երեկոն, երբ սկսեց պատմություններ անել իր կյանքից, 90-ական թվականներից: Երբ տանը ստիպելիս են եղել, որ քահանա դառնա: Պատմում էր իր տիրացության շրջանից, երբ 16՝ եկեղեցի էր փոխել, ամեն տեղ մի արկածի հանդիպելով, թողել ու փախել: Այդ երեկո նրա գրույցը տեղեց մինչև լուսադեմ: Պատմում էր բոլոր արկածները, թե ինչ ծանր պայքարով ու աղմուկներով է աղատվել քահանայությունից: Միծաղի, անվերջ ծիծաղի երեկո էր, թեև իրոք այդ ծիծաղի մեջ արցունք շատ կար:

Հուլիսի 22

Երեկոյան մեր ամառանոցի պատշգամբում հավաքված լսում էինք հայրիկին. նա գրույց էր անում և խորհուրդներ տալիս մեզ:

« — Սովորական, հասարակ դրությունից դուրս գալու համար երկու ճանապարհ կա՝ վերև ու ներքև, և դա մարդու ձեռին է: Մարդն ինքը պիտի իրեն ճամփու վրա դնի, իրեն ճանաչի, իրեն ուղղություն տա ու դարգանա:

Մեծ բան է և չափի դգացումը, ներդաշնակի դգացումը: Մարդն ամեն ինչ պիտի կրթի, մշակի՝ աչքն էլ, ձեռքն էլ, լիզուկն էլ: Արջն էլ է ման գալիս, եղնիկն էլ, կաբավն էլ, ադ-

տավն էլ, բայց տես ի՞նչ տարբերություն կա նրանց շարժու-
-ձևի մեջ:

Ամեն մարդ իր ձեռն ու շարժումը պիտի ունենա՝ կիրթ և վայելելու: Խոսելը հանաք բան հո չի. կխոսեն շեշտով, հաստատուն, մարդու նման:

Ուշադրությունը պիտի կրթել, կենտրոնացած լինել: Կսելը ոչինչ չի նշանակի, բանը հասկանալն է. բանը տեսնելն է և ոչ թե նայելը»:

Այսպես զրույց էր անում, ուզում էր, որ երեկոները շիջանինք պարկը, այլ մնանք իր մոտ:

Օգոստոս

Շարունակում էր իր կրթական գրույցները. «Ստեղծել ամբողջական ուժեղ բնավորություն: Ամեն խնդրում լինել վճռական, հաստատուն: Աշխատել կենտրոնացած: Կարողանալ կարևորը անկարևորից տարբերել. բարդը՝ պարզից:

Գլուտեք պիտի անել, ստեղծել: «Ցառուստի» հեղինակը կյանքն է ընդգրկել: «Ցառուստ» հասկանալ, կնշանակի կյանքը հասկանալ:

Ամեն բան մարդուն մատչելի է, կարող է, պետք է անել պամենալ: Որոշել նպատակը ու գնալ, պիտակից կյանքով ապրել: Առողջ լինել, խոր ինտուիցիա ունենալ, ամեն ինչ զգալ լիմանալ»:

Օգոստոսի 5

Հիվանդ էր, թույլ, հոգնած. նախորդ օրը երեկոյան շատ էր ոգևորված լեզվական խնդիրներով, խոսում էր զանազան քառերի ծագումից: Կարդում էր Վ. Վ. Ռադլովի բառարանը՝ «Опыт словаря тюркских наречий»:

Երեկ բարձր տրամադրությամբ գրույց էր անում իր լեզվական գլուտերից, իսկ այսօր գունատ էր և իրեն թույլ էր դգում, պարապելու և կարդալու անտրամադիր:

Սեպտեմբերի 1

— Բանաստեղծներից շատերը ոտանավորներ են գրում նույնիսկ մեծ բանաստեղծների գրվածքի մեջ դուք շատ ոտանավոր կգտնեք: Հենց Պուշկինի, Լերմոնտովի գրվածքների մեջ էլ կան: Ոտանավորը բանաստեղծությունից ջոկել պիտի իմանալ: Եթե մեկի յոթը ոտանավորից մեկը բանաստեղծություն է, նա անսպասան բանաստեղծ է:

Նոյեմբերի 28

Երեկոյան սենյակս եկավ, պառկեց կարմիր կանապեի վրա՝ կրակի դիմաց: Տխուր էր, գունատ, դեմքն ինչ-որ հուզմունք էր արտահայտում:

Դեռ նախորդ օրը իրեն լավ չէր դրում: Կարդում էր Վ. Շչեգլովի «Дуэль и смерть ПУШКИНА» ուսումնասիրությունը: «Հետաքրքրական դիրք է. նոր բան շատ կա և շատ բան էլ պարզվեց: Ինչքան է տանջվել մարդը— կինն էլ, մոտիկներն էլ, շրջանն էլ— բոլորը, բոլորը խորթ, բոլորից հալածված ու զզված...»: Գիրքը շատ էր ազդել վրան: Գտել էր նմանություններ Պուշկինի ու իր կյանքի միջև:

Նվ երկար խոսեց Պուշկինից ու իր կյանքից:

Դեկտեմբերի 1

Կրկին խոսում էր գրականության և գրողների արհեստության մասին. մուրհակներ, գանգառներ, նեղ, ծանր դրություն:

Գրողների նյութական նեղ դրությունը նրան շատ էր մտահոգում: Դիմումներ էր անում, հոգվածներ էր գրում և աշխատում էր ամեն կերպ, ամեն միջոցով օգնել, թեթևացնել ամեն մեկի դրությունը: Այդ օրերին նա գրում էր «Գրականությանը ազգային սպառնալուծություն պետք է լինի» հոդվածը:

Ինչքան էլ օգնում էր ու հասնում, ամեն ինչ անում և՛ ընկեր գրողների, և՛ սկանակների համար, բայց նրանք միշտ տրտնջում էին ու զանգատվում իրենց պայմաններից: Հայ-

քիկին այդ գուր չէր գալիս՝ նրանց լավանությունը, անվերջ գանգառն ու տրտնջը:

Ինքն իր սակասությունից երբեք չէր խոսում, ցույց չէր տալիս՝ ոչ դուրսը ծանոթներին ու ընկերներին և ոչ էլ ներսը՝ ընտանիքի անդամներին, թեև քիչ էր պատահում, որ ապահովված լինելու Տունը պարտքով էր պահում, հյուրերին պարտքով էր հյուրասիրում, բայց ապրում էր ապահովված մարդունման, անհոգ, հանգիստ, զվարթ:

— Մեկանում ընդունված է, որ հայ գրողը միշտ զուրկ ու նեղ ապրի, ներքի հարկում, մութ ու խոնավ փոքրիկ սենյակում, իսկ ես, ընդհակառակը, միշտ բարձր հարկերումն եմ ապրում, լին ու բոլ, ուրախ և լավ էլ ապրում եմ ու հյուրասիրում, ցույց տալիս, որ հայ գրողը կարող է և պետք է լավ ապրի:

Էսպես էր ասում ճաշկերույթներին կատակով:

Սկսնակ գրողներն էին մոտը, իրենց նոր գրվածքներն էին բերել կարդալու: Հայրիկը մի քանի կտոր կարդաց, քնննադատական խոսք էլ ասաց, ոգևորող է:

«Բանաստեղծը իր սեփական աշխարհը, իր թագավորությունը պիտի ունենա: Ձեր գրածները ջահել ժամանակի տրամադրություններ են: Մարդ որպեսզի խորանա և ոգևորության աղբյուր դառնա, պետք է բովանդակություն ունենա, բազմակողմանի զարգացում ձեռք բերի, բարձրանա, խորանա, լցվի: Ամենագովար բանը, որին ձգտում են մարդիկ՝ ինքն իրեն ճանաչելն է: Ճանաչի՛ր ինքդ քեզ: Եվ մարդը պետք է ճանաչի ինքն իրեն, իր ուժերը, կարգավորի իրեն և իմաստուն կերպով առաջնորդի, ուղղություն տա իրեն:

Բանաստեղծին կարդալիս նրա երեսը պիտի գտնես, նրա աշխարհը մտնես, մի սրբազան, բարձր տրամադրությամբ համակվես, և ամենակարևորը բանաստեղծի էջ ոգևորություն է, որ համակում է, վարակում է ընթերցողին»:

Աշխատանքը Սպենդիարյանն էր մտաբ. խոսում էին ժողովրդական երգերից և արևելյան եղանակներից: Այդ երեկո հրավիրել էին Բեմիա Տեր-Մինասյանին՝ հատկապես Սպենդիարյանի համար ժողովրդական երգեր երգելու:

Նրա երգերից Սպենդիարյանը շատ հավանեց «Ալագզու աչերդ», «Ջան, մարալ ջան», «Թաուլան, թաուլան իմ յարը», «Վարդ կոշիկս» և այլն: Մի քանի անգամ կրկնել տվեց, իր մոտ նշումներ արեց, կարծես մեղեդի էր գրի առնում:

Այդ երեկո հայրիկը Բեմիա Տեր-Մինասյանին նվիրեց «Թմկաբերդի առումը»՝ «Թմկաբերդի սոխակին...» մականգրությամբ և երկուսով ստորագրեցին: Այդ օրինակը պահպանվում է Գրական թանգարանում:

Դեկտեմբերի 9

Թիֆլիսի կոնսերվատորիայի դահլիճում Հայ գրողների ընկերությունը ի պատիվ Սպենդիարյանի երեկույթ էր կազմակերպել: Հայրիկը բացման խոսք ասաց, այնուհետև կայացավ համերգ: Ութ հոգուց բաղկացած աշուղ Հաղիրի խումբը երգեց և նվագեց բացառապես Սայաթ-Նովայի երգերից: Դյուլթիչ էր Ռուբենի նվագը՝ քյամանչայով: Հայտնի երաժշտական ընկերության նախագահ Հովսեփ Տեր-Դավթյանը՝ զեկուցեց: Հայ ժողովրդական երգի մասին: Հարությունի սազանգուրների խումբը նվագեց ու երգեց ժողովրդական երգեր: Երրորդ բաժնում նույն խումբը նվագեց պարսկական եղանակներ, իսկ Բաբաչիկի փոքրասիական սանթուրի խումբը նվագեց արաբական և քրդական եղանակներ, նույն բաժնում նվագեց և Սանդրոյի դուդուկի խումբը: Հաջորդություն գտան նաև օրիորդ Բեմիա Տեր-Մինասյանի և Մուշեղ Աղայանի երգերը («Անտունի» և «Դուն էն գլխեն»):

1 Տեր-Մինասյան Բեմիա — նվարդ Թումանյանի դասընկերուհին, որը լավ ձայն է ունեցել

2 Տեր-Դավթյան Հովսեփ — երաժշտական գործիչ, դաշնակահար, արևելապետ երաժիշտ

վերջում ժողովրդի խնդրանք Սպենդիարյանը դաշնամուրի վրա նվագեց իր հեղինակած Ղրիմի-Թաթարական եղանակներից երկու երգ՝ «Սաղլամա» և «Ղայթարմա», որոնք ընդունվեցին փոթորակից ծափերով: Սպենդիարյանը այդ երեկո հավանեց ու գրի առավ մի քանի երգ ու եղանակ:

Հաջորդ օրը Սպենդիարյանը մեկ և աշուղներին հրավիրեց երբոր՝ իրավաբան Հովհ. Սպենդիարովի տուն, որտեղ իջևանել էր ինքը: Արևելյան ծրագրով հարուստ երեկո էր, ի տարբերություն Սպենդիարյանի առաջին այցի (1916-ի գարնանը) նույն այդ բնակարանում կայացած երեկույթի, որ կրում էր եվրոպական բնույթ (երգում էին «Այ վարդը...» և այլ ումաններ):

Այդ օրերին Սպենդիարյանի արամադրությունը բարձր էր: Հայրիկի հետ հաճախ էր լինում. ճաշերին երբեմն մեր տուն էր գալիս: Երեկոները հայրիկի հետ էր անցկացնում:

Սպենդիարյանը հետաքրքրվեց «Անուշ» պոեմով, ուղում էր ճայնագրել: Բայց ծանոթանալուց հետո նյութը գտավ միանգամայն անծանոթ: Որոշեցին ամառը միասին կոտի գնալ: Հետո հայրիկը կարդաց «Փարվանան», որ կոմպոզիտորը հավանեց և ավելի հարմար գտավ օպերայի համար, բայց նկատեց, որ սյուժեն փոքր է:

— Хорошая вещь, но скато написано, лирики много. Негде развернуться.

Խնդրում էր, որ հայրիկը որոշ տեղեր ընդարձակի, երգեր ավելացնի և այսպիսով իրեն հնարավորություն տա օպերա գրելու: Հայրիկը կարծես թե գլխի ընկավ նրա ցանկացածը և կարդաց «Թմկաբերդի առումը»: Սպենդիարյանը ուրախացած տեղից վեր կացավ. — Вот это да! Вот это я и хочу!

Ու սկսեց սենյակում ոգևորված ման դալ: Սպենդիարյանը խնդրեց, որ ամբողջ պոեմը բառացի թարգմանի իր համար: Առանձնապես հավանել էր նախերգանքը: Ոգևորված քայլում էր և արնասանում. «Հե՛յ, պարոններ...» ու շէր կարողանում շարունակել, դիմում էր հայրիկին:

— Ну, как дальше, парон Ованес? — նա հայերեն շփոթեր, խնդրում էր, որ նորից կարդա: Նա

խերզանքից բացի, հավանել էր խնջույքի տեսարանը, Թաթուլի-
երազը և դավաճանության հատվածը: Խնդրում էր Թաթուլի-
համար որոշ երգեր գրել, որպեսզի նրա գերերգը հարստանա-
և ամբողջանա:

Երկուսով նստած, մինչև ուշ գիշեր, պոեմը արարների էին
բաժանում, պատկերներ գծում: Սպենդիարյանն ուզում էր
շեշտել Թմկա տիրուհու փառասիրությունը, որ պատկերաց-
նում էր այսպես.

«На сцене, вдали будет виден трон Надир Шаха, за-
тем надо ярко и сильно показать сон Татула. Вот эти
драконы, все эти предчувствия Татула во время пира...».

Հետևյալ երեկո շարունակում էին աշխատել: Սպենդիար-
յանը պոեմի պատմական կողմով էր հետաքրքրվում: Հայրիկը
պահարաններից զանազան գրքեր էր հանում, հատվածներ
կարդում ու բացատրում: Հայրիկի առանձնատեսակում նրանց
ըրույցը տևում էր մինչև ուշ գիշեր: Կողք-կողքի նստել էին
Թախահին, «լըրույցի սեղանի» շուրջը: Հայրիկը հանգիստ կար-
գում էր ու թարգմանում, իսկ Սպենդիարյանը, հանգիստը
կորցրած, լսում էր և ամեն հատվածից հետո սեղից վեր կե-
նում, թեթև քայլերով սեղանի մի ծայրից մյուսը գնում,
իրեն-իրեն խոսելով.

— Трон шаха, драконы, неснь ашуга — замечательно,
замечательно!

Որոշեցին, որ ամառը հայրիկը գնա Ղրիմ՝ Սուդակ, Սպեն-
դիարյանի ամառանոցը, որպեսզի լիբրետոն այնտեղ գրեն:

Սպենդիարյանի հրավերները մնացին անպատասխան. քա-
ղաքական հանգամանքները խանգարեցին, այնպես էլ նրանք
չկարողացան միմյանց հանդիպել:

Հայրիկի ցանկությունը օպերան պիտի կոչվեր «Դոհար»՝
իշխանուհու անունով: Բայց, ինչպես հետագայում Ալ. Սպեն-
դիարյանն է բացատրել, երկու ձայնավորների՝ օ-ի և ա-ի
մոտիկությունը սուսերենում խանգարել է երաժշտությունը:
գրելիս, ուստի և «Դոհարը» փոխարինել է այդ անվանը հո-
մանիշ «Ալմաստ» անունով:

Կարեն Միքայելյանը՝ դասախոսություն կարդաց կոնսեր-
վատորիայի դահլիճում, վերնագիրը՝ «Որբերի աշխարհում»:

1917

Հունվարի 1

Ճաշին հայրիկի մոտ շատ հյուրեր կային: Բուրեն Զար-
գարյանի կինը՝ տիկին Վերոնը իր սղաներով, Անդրանիկը,
Դեմիրճյանը, Տերյանը, Մերուն Թորգոմյանը, Զալալ Տեր-
Գրիգորյանը, Զապել Եսայանը, Միքայել Մանվելյանը և մի
խումբ արևմտահայ սկսնակ գրողներ: Բոլոր հյուրերը ստա-
րագրություն տվեցին, որ հաջորդ տարին նույն օրը նորից
հավաքվին մեր տանը:

Հունվարի 6

Նոր տարվա նախօրյակին հայրիկը Տերյանին ուղարկել էր
սպիտակ շեփորուկի (յասամանի) տունը: Մյուս օրը եկավ
այցի, ճաշին մեկ մոտ էր: Իրեն վատ էր զգում:

Մի քանի օր շերեաց: Հայրիկը թե՛ քանի օր է վահանը
չի երևում, գնանք տեսնենք: Գնացինք այցելության: Նրա մոտ
հյուրեր էլ կային — Կ. Միքայելյանը, Գրոնը, Ա. Խոնդկարյա-
նը: Վահանն իրեն թույլ էր զգում. պակաս էր: Երբ հայ-
րիկին տեսավ, վեր թռավ տեղից.

— Իյան Ֆադեիչն ինձ մոտ... իմ տանը... — ու նստեց
ըրույցի: Ընթրիք պատվիրեց: Ուշ գիշեր էր: Իջանք ներքև՝
ճաշարան, ընթրիքի:

1 Միքայելյան Կարեն — արձակագիր, թարգմանիչ, գրական-հասա-
րակական գործիչ

2 Դոն — Տեր-Հակոբյան Գրիգոր, պրոֆեսոր, հոդված

3 Խոնդկարյան Արշամ — թարգմանիչ և լրագրող

Սրտալի, լավ երեկո էր: Հայրիկը հանաքներ էր անում, դվարձալի, ուրախ դեպքեր պատմում: Տերյանի տրամադրութունը բարձրացավ: Մոտը մնացինք մինչև գիշերվա ժ. 3-ը:

Հունվարի 8

Երեկ Երաժշտական դպրոցի դահլիճում Հայ դրողների ընկերության հերթական երեկոն էր: Դասախոսը Մամբրե Մատենճյանն էր, նյութը՝ «Սիամանթո և Վահան Տերյան»:

Տերյանն այդ ժամանակ թեև Թիֆլիսումն էր, բայց դասախոսութան սկզբից չէր եկել: Դասախոսության կեսին, երբ Մատենճյանը Տերյանի բանաստեղծություններին բացասական որակումներ էր տալիս, դահլիճի դուռը բացվեց և դանդաղ քայլերով ներս մտավ Տերյանը, սև համրիչը ձեռքին: Կահլիճում շշուկ բարձրացավ: Մատենճյանը նույն ստեղծված շարունակեց ղեկուցումը: Տերյանը եկավ նստեց կողքիս: Նրավրա վատ տպավորություն գործեցին Մատենճյանի խոսքերը. ղեկուցումից հետո դուրս եկանք դահլիճից ու միասին գնացինք «Училища» կաֆեն:

Ահա ինչու այսօր երեկոյան մեր տան դրույցը Մատենճյանի դասախոսության շուրջն էր: Հայրիկն ասում էր.

«— Մեզանում սովորաբար քննադատել չգիտեն. մոտենում են արտաքինին, չեն թափանցում, ներս չեն մտնում: Գլխավորը գրողի շունչն է: Շորը— մոզա է. շորը երկրորդական է, անցողական, չէ որ Վենեթան իսկի հագին շոր էլ չունի...»

Քննադատելը հեշտ բան չի և ամեն մարդու բան չի: Գրողի արժանիքները պիտի գտնել, էդ արժանիքներով մոտենալ ու բնորոշել նրան: Բանաստեղծին իր հաջող գործերի մեջ պետք է ճանաչել, նրանցով պետք է գնահատել:

Մատենճյանը որոշ բաներ ճիշտ էր նկատել, սրամիտ ու տեղին ասաց, բայց շկարողացավ ազդեցուցել: Ինչպե՞ս էր Վահանի հետաքրքրությունը հաղթել. նա չպիտի դար դասախոսութանը, չէ՞ որ գիտեր՝ իր մասին խոսք է լինելու:

Հունվարի 16

Երեկոյան Աղբալյանն էր մոտը: Տրամադրությունը լավ չէր, տխուր էր. երկար դրույց էր անում իր կյանքից ու գրական գործերից:

— Վերջերս հաճախ եմ ենթարկվում ուժեղ հուզումների. սրտնեղությունների,— ասաց հայրիկը:

— Մոռացություն տուր:

— Մի՞թե ինձնից ավելի մոռացության տվող մարդ կա... Ես ներքուստ շատ եմ ապրում, տանջվում, արտաբուստ՝ ամեն ինչ սուտ է...

Հունվարի 20

Մեր տանն էր պրոֆեսոր Նիկողայոս Մառը:

Հունվարի 27

Հայրիկի անվանակոչության օրն էր¹, հյուրեր շատ կային՝ Շիրվանդադեն, Անդրանիկը, Ստեփան Լիսիցյանը և ուրիշներ: Հետո եկան երիտասարդ դրողները՝ Ստեփան Զորյանի և Պահարեի գլխավորությամբ, մոտ քսան հոգի: Բաղձամարդ երեկո էր:

Սկսնակ բանաստեղծներն արտասանում էին իրենց ոտանավորները: Թամադան հայրիկն էր: Շիրվանդադեն և Անդրանիկը պարում էին: Ստեփան Լիսիցյանը կենաց ճառի էր ասում:

Փետրվարի 1

Վերնատան ընկերներից երկուսը եկան հայրիկի մոտ, խոսում էին նրա կյանքից: Հայրիկն ասում էր.

— Շատ եմ լցվել, շատ եմ ապրել... հոգնել եմ արդեն...

¹ Հունվարի 27-ը (հին տոմարով՝ 14-ը) Հովհաննես Մկրտիչ և Կարապետ անվանակոչյալների տոնն էր:

Մն էպիկ եմ և կարծում են հենց էն եմ, որ կարողում են և կամ հենց էն եմ, ինչպես երևում եմ կյանքում... Գրվածքներիս մեջ օբյեկտիվ եմ, ծածկված. հասկացողը կտեսնի ինձ: Ներքինս չգիտեմ, փակ է շատերի առաջ. օտար եմ և անծանոթ:

Փետրվարի 2

Զրույցը գրական խնդիրների շուրջն էր:

— Մեծ ու խոշոր բանաստեղծներով պետք է դբադվել և մեծ խնդիրներով հետաքրքրվել: Հարկավոր է լրջանալ, խորանալ ու սուզվել: Թափանցել, ոգևորվել, նվիրված ու լուրջ պարապել: Եղևք և՛ թե ոչ ընտրյալներ, գոնե հասկացողներ: Վերցրեք Գյոթեի, Բայրոնի, Պուշկինի, Լերմոնտովի կյանքը, նրանց ստեղծագործությունն ուսումնասիրեցեք, խորասուզվեք:

Առաջարկեց, որ ամեն մեկս մի-մի նյութ առնենք՝ մի-մի հեղինակ, պարապենք ու տանը գրական երեկոներին հերթով կարդանք: Արեգն ընտրեց Պետրոս Գուրջանին, — նրա կյանքըն ու ստեղծագործությունը, իսկ ես՝ Բայրոնին:

Փետրվարի 14

«Մարդու կյանքի նպատակը երջանկությունն է... Լիք լավագույնի ձգտումը մարդու մեջ չկա, էլ ի՞նչ կյանք»: Մտաբերեց Ավետարանի խոսքը. «Բախեք դուները և կբացվեն»: Իմաստալից խոսքեր են սրանք: Երջանկության հասնելու համար հարկավոր է կամենալ, ցանկություն պիտի ունենալ, կամք պիտի լինի դրա համար»:

Այսպես սկսեց զրույցը մեզ հետ, իր սենյակում: Երեկոյան հյուրեր չեկան: Մենք ու մենք էինք:

— Մարդ ամեն ինչ ինքը պիտի անի, իր ձեռքով, իր աշխատանքով. ակտիվ պիտի լինի ամենից առաջ:

— Գեղեցկություն, բարություն, ճշմարտություն, — սրանք են կյանքում հիմնականք:

— Լինել առողջ, զվարթ, դու՛հ, բնական, ամեն ինչ հաս-

կացող և զլխի ընկնող, նրբազգաց: Պետք է ճաշակ ունենալ, որ շատ մեծ բան է: Հարմոնիա ստեղծել ամեն բանում և ամենուր:

— Մարդ ինքն իրեն պիտի կրթի, իրենից մարդ պիտի ստեղծի և միշտ կատարյալին ձգտի:

— Կյանքս ուղածիս պես չի եղել. դուք աշխատեցեք, դուք եղեք էնպես, ինչպես կուզենայի:

— Բնագրի հետ միշտ բանականությունը պիտի լինի...

Մարտի 2

Ցերեկը մեր տուն եկավ Ալեքսանդր Մատուրյանը: Հայրիկը տանը չէր: Հնդունեցի նրա կաբինետում: Թեև իրեն լավ չէր զգում, դունատ էր և թուլ: Բայց տրամադրությունը բարձր էր: Հենված էր սպիտակ փղոսկրի գեղեցիկ ձեռնափայտին: Գոհ էր նախորդ օրվա գրական երեկոյից, որ կազմակերպել էր Հայ գրողների ընկերությունը: Եկել էր իր գոհունակությունը հայտնելու:

Մարտի 15

— Բանաստեղծը նոր տիպ է տիեզերքի մեջ. եթե մարդկության հետ դործ ունի — հանճար է, օրինակ՝ Շեքսպիրը, եթե ազդի հետ գործ ունի — սաղանդ է:

Ապրիլի 12

Մեզ մոտ էին Գեմիրճյանը, Տերյանը, Շանթը, Աղբալյանը: Աղբալյանը կարդաց իր հոդվածը Ալեքսանդր Մատուրյանի մասին:

— Գիպլոմատիկ հոդված է, — ասաց հայրիկը, — հասկացողի համար շատ է խիստ գրված:

— Գեղարվեստի մեջ ամենից թանկն ու արժեքավորը նա է, որ գալիս է սրտից, ներշնչումից, ոգևորությունից. իսկ հետո ուրիշ կողմեր էլ կան նույնպես արժեքավոր՝ արվեստը, ձևը և այլն:

Յուտուրիստների կտավները չէր սիրում:

— Կարծես թե էջի պոչը թաթախել են ներկի մեջ, կանգ-
նեցրել կտավի մոտ ու քսմանել:

Ամառ

Ռազմավիրական ճանապարհով գնում էինք Պյատիգորսկի:
Հայրիկի հետ էինք ես և իմ շորս քույրերը: Մի օմնիբուս
վերցրինք և ճանապարհ ընկանք դեպի Վլադիկավկազ: Ճա-
նապարհը շատ էր գեղեցիկ ու հմայիչ: Բոլորս գոհ էինք, ամե-
նից շատ՝ հայրիկը...

Երբորդ օրը հասանք Վլադիկավկազ, իջանք Հակոբ Սա-
ռիկյանի¹ տանը:

⊙

Պյատիգորսկում ապրում էինք Պրովալում, Լերմոնտովի
տնից ոչ հեռու: Երեք սենյակ ունեինք վերանդաշտով, որտե-
ղից գեղեցիկ տեսարան էր բացվում դեպի Կովկասյան լեռ-
ները:

Տեղի գաղութը ջերմ վերաբերմունք ցույց տվեց:

Հայրիկը այդտեղ գրեց «Թագավորն ու շարչին»: Առաջին
անգամ կարդաց զբոսանքի ժամանակ, երբ խմբով գնում
էինք Լերմոնտովի մենամարտի վայրը տեսնելու: Ճանապարհի
կեսին, թե՛ դորզը փոռք, նստեք, ձեզ մի բան կարդամ... Բո-
լորս հավաքվեցինք ու նա կարդաց այդ ավանդությունը:

⊙

Այցելեցինք Լերմոնտովի տունը, մենամարտի տեղը, ման-
կեպոս վայրերը: Մի երեկո, հայրիկի հետ միասին Լերմոնտո-
վի տունը այցելելուց հետո, վերադարձին, երբ անցնում էինք
երկու կողմից խիտ ծառերով շրջապատված ծառուղիով, կի-

¹ Սատիկյան Հակոբ — բաճանա, ուսուցիչ և թարգմանիչ

ախավարի մեջ սպիտակին էր տալիս ու փայլվում կայծ-
քարի մանր բեկորներով ծածկված ծառուղին: Այդտեղ էր, որ
հայրիկը հիշեց Լերմոնտովի «Выхожу один я на дорогу...»
բանաստեղծությունը, ավելացնելով՝ «Նոր եմ հասկանում, թե
ինչու է Լերմոնտովը ասում. «Сквозь туман кремнистый
путь блещит...»:

Հետո սկսեց խոսել այն մասին, թե ինչ մեծ կապ կա
բանաստեղծների երկերի և նրանց շրջապատի ու բնության մի-
ջև:

Լերմոնտովի տունը, իրերը, տան առջևի պարտեզը հայ-
րիկի վրա փխուր տպավորություն արին: Երբ անցնում էինք
Լերմոնտովի սիրած ծառուղիով, նա խոսում էր կյանքի ունայ-
նություններից:

Պյատիգորսկում մեզ հետ հաճախ էին լինում պրոֆեսոր
Վահան Տոտոջյանը, Հակոբ Սատիկյանը իր աղջկա հետ, որ
մեր հարևաններն էին նույն շենքում:

Օգոստոսի սկզբներին Պյատիգորսկի հայ գաղութը ի պա-
տիվ հայրիկի երեկույթ կազմակերպեց: Կազմակերպողնե-
րից մեկը թերթի խմբագիր Պետրոսյանն էր:

Այդ օրերին ոռու բանաստեղծ Կոնստանդին Բալմոնտը
գտնվում էր Պյատիգորսկում: Երեկույթը կայացավ օգոստո-
սի 3-ին: Բալմոնտը էքսպրոմտ բանաստեղծություն արտա-
սանեց, ապա գրի առավ և նվիրեց հայրիկին: Զեռագիրը
նվաճվում է Գրականության և արվեստի թանգարանում:

Մինչ այդ ես Բալմոնտին տեսել էի Թիֆլիսում: Նա Թիֆ-
լիս հաճախ էր գալիս Շ. Ռուսթավելու «Վազրենավորը» թարգ-
մանելու գործով: Վրաց գրողները շատ ջերմ էին ընդունում
նրան իրենց ափսոսում (Դվարցովայա փողոց), միշտ ճաշ ու
ընթրիքով հյուրասիրում էին: Մի-երկու անգամ հայրիկին
էլ հրավիրեցին բանկետի:

⊙

Մարիետա Շահինյանը եկել էր Պյատիգորսկ երկու զե-
կուցում կարդալու: Առաջինը, կարծես, Միքայել Նալբանդ-
յանի մասին էր, իսկ երկրորդը՝ հայկական հեքիաթները:

Հրավեր էր ուղարկել, հայրիկը գնաց նրա երկրորդ դասախոսությունը, բայց գոհ չէր.

— Էսքան տարի հեքիաթ եմ հավաքում, ուսումնասիրում, ես դեռ ոխակ չեմ անում հրապարակ գալու, հեքիաթի մասին խոսք ասելու, սա էս ինչե՞ր է ասում...

Դուր չէր եկել և այն, որ Շահինյանը հենվել էր գրեթե միայն Տ. Նավասարդյանի՝ ժողովածուների վրա:

— Հլա հերիք չի հեքիաթների մասին դասախոսություն է կարդում էդ պաշարով, ինձ էլ հրավիրում է թե՛ արի լսի՛ ինչ եմ ասում:



Պյատիգորսկ գնալու առաջին օրերը մեզ մոտ էր լինում կոմպոզիտոր Եղիշե Բաղդասարյանը:

Զրույցը երգի, երաժշտության շուրջն էր: Ասում էր, թե ամբողջ «Անուշը» ձայնագրել է, Պետերբուրգի բանկերից մեկում պահ տվել: Հայրիկը շատ էր հավանում նրա հորինած «Աղջիկ բախտավորը»:

Մի երեկո էլ հետք բերեց ֆոնոգրաֆոն՝ ձայնագրեց հայրիկի մի ճառը՝ արտասանված սկսնակ գրողների երեկույթին: Ես էլ երկու ժողովրդական երգ երգեցի, որ նույնպես ձայնագրեց:

Հետագայում շատ որոնեցինք, բայց ոչինչ չգտնվեց:



Վերադարձանք Թիֆլիս:

Ն. Աղբալյանն էր մոտը. «Օհանես, քեզ ո՞նց է դուր գալիս մեր էս նոր բանաստեղծը. գլխի՞ ես ում մասին եմ ասում՝ Զարենցի: Երեկ ձեռքիս նրա նոր դիրքն էր՝ «Միածանը». մի կարգա, տես, տաղանդավոր տղա է երևում: Նոր բան է ասում, էն էլ նոր ձևով. թարմություն կա մեջը, թափ ունի. մտքումս

1 Նավասարդյան Տիգրան — բանահավաք, լույս է ընծայել հայ ժողովրդական հեքիաթների հատորների շարքը

Այա մի դասախոսություն կարդամ նրա մասին»: Որոշեցին Գրողների ընկերության հերթական երեկույթներից մեկը նվիրել Զարենցին:



Աղբալյանն էր մոտը: Խոսում էին Զապել Եսայանի նոր լույս տեսած «Վերջին բաժակը» պատմվածքի մասին:

— Լավ գրվածք է, խելոք, ճիշտ դիտողություններ ունի, կոկիկ է ու մշակված, բայց ոչ ցայտուն. ուժ, թափ չկա, նման է մի լավ տանտիրուհու — опрятно и приято: ожур-ная работа, — ասում էր Աղբալյանը:

— Կարող հոգի չէ անպայման, բայց կարող գրիչ է, իր գրչին տիրում է, վարպետ է, լավ արտահայտվող, ինտելիգենտ ու նուրբ, — ասում էր հայրիկը:

1918

Փետրվարին հայության առջև ծառայած մոտեցող ֆրոնտի պատանալիքը: Գրությունը շատ էր ծանր և խառը: Հայրիկը, որ Հայրենակցական միությունների միության նախագահն էր, գնալու էր Լոռի: Որոշեց նախ Ղարաքիլիսա գնալ:

Փետրվարից մինչև մայիսի վերջերը մնացինք Ղարաքիլիսայում:

Փետրվար և մարտ ամիսներին արագ անցան մեր օրերը: Ապրիլի սկզբներին ձկսեցին ծաղկել մեր տան պարտեզի խնձորենիները՝ նուրբ, հոտավետ, բաց վարդագույն թերթիկները սպիտակ թիթեռների նման թափվում էին թարմ կանաչ խոտի վրա և, նոր բացված կապույտ մանուշակների վրա փռվելով՝ գեղեցիկ պատկեր էին ստեղծում...

Չեմ կարողանում մոռանալ Ղարաքիլիսայի խնձորենու այգիները վաղ գարնանը:

Ամեն ինչ խանգարվեց, երբ լուր բերին, թե Ղարաքիլիսան երեք կողմից շրջապատված է: Սկսվեց ժողովրդի պաղթը:

Մերոնք գնացին գյուղ՝ Դսեղ: Հայրիկը մնաց, որ օգնի գաղթականությունը: Ես էլ մնացի հետը: Նա այդ ժամանակ մրսած էր և իրեն թույլ էր զգում:

Օր օրի գաղթականության, փախչող ժողովրդի և զորքի թիվը ավելանում էր: Ղարաքրիխայի փողոցները և կայարանը լիքն էին մարդկանցով: Եղանակը անձրևային էր, թուխպրորտ, ցեխ, վտանգը՝ մոտ ու մեծ, ուժերը՝ սպառված ու ցրված:

Վերահաս վտանգի առաջն առնելու համար կաղմվեց ժամանակավոր կոմիտե: Հայրիկը գրեց լուսնայիններին ուղղված կոչը, որ ցրեցին գավառները: Ամեն ինչ խառնվել էր իրար. տեղացի ու եկվոր, լքված զինվոր ու նոր կամավոր, զինվորականներ ու գյուղացիներ: Կիզորներն իրենց իրավունքներով և դաշնակցական գործիչները հաճախ իրար էին բախվում, վիճում, կռվում: Սրանց վարքագիծը հայրիկին վրդովմունք էր պատճառում: Նա հանգիստ չունեի, հուղված էր, գունատ, անքուն:

Կոչին բոլոր գավառներից արձագանքեցին. Լոռու, Փամբակի, Ղաղախի գյուղացիները զինված եկել էին Ղարաքրիխա:

Մայիսի 13, Ղարաքրիխա

«Եթե նոր Ռուսաստանն ամրանար և մենք նոր Ռուսաստանի հետ միանայինք, դա կլինեի մեր փրկությունը:

Երևանի առումը և Հասան խանի փախուստը ի՞նչ հետաքրքիր և թանկարժեք պատմություն է մեզ, հայերիս համար: Եդ տեսակետից շատ է գնահատելի մեծ Աբովյանի «Վերջ Հայաստանին»»:



«...Մեղադրում ենք մեր ժողովրդին, բայց խեղճն իսկապես շատ է հալածվել ու նեղ օրեր քաշել. է՛լ էդպես չլինեի»:



Մայիսի սկզբից Ղարաքրիխայում չափազանց ծանր վիճակ էր ստեղծվել. խուճապ, գաղթ, բնակչությունը վտանգի մեջ էր: Ղարաքրիխայի շրջապատված էր երեք կողմից, ազատ էր մնում միայն կայարանը, ժողովուրդը միայն այդտեղից էլք ուներ դեպի Լոռվա ձորերն ու գյուղերը: Սայլերով, ձիերով, ոտքով բնակչությունը բռնեց գաղթի ճանապարհը ավաստան գտնելու Լոռու գյուղերում:

Օրերն անձրևային էին, մեզ ու մշուշ:

Մայիսի 27

Ուշ գիշերը լուր բերին, թե ճակատը ճեղքված է և թշնամին ներս է խուժում: Հայրիկն ուզում էր մնալ Ղարաքրիխայում, իսկ ինձ, գյուղացիների և հորեղբորս հետ, ուղարկել Դսեղ: Եղբայրս և գյուղացիները նրան համոզեցին, որ ինքն էլ գա մեզ հետ, քանի որ բնակչությունները, որ նա ուզում էր սկսել թուրքերի հետ, ոչ մի արդյունք են տա: Անձրևը սաստկացել էր, մութ ու մուսլ գիշեր էր, իսկական հայի գիշեր... Դուրս եկանք Ղարաքրիխայից և երկաթգծի ուղղությամբ, ոտքով շարժվեցինք դեպի Լոռու ձորը, որ լիքն էր գաղթականների բեռնակիր սայլերով: Մի կողմից գրսի գաղթականությունն էր ներս գալիս փախած, սոված ու դատարկ, մյուս՝ կողմից տեղացիները, բնիկ ժողովուրդն էր գաղթական դառնում և գաղթականության հետ միասին տեղահան լինում դեպի Լոռի, Բորչալու, Թիֆլիս: Խուճապը սկսվել էր, անձրևը սաստկացել: Երկու ժամ անձրևի տակ քայլելով ուշ գիշերին մտանք Շահալվի ձորը: Թրջված էինք մինչև վերջին թևը, անձրևը գալիս էր ու գալիս, երկաթգիծը բռնված էր փախչող ընտանիքներով:

Մայիսի վերջը՝ Ղարաքրիխայից գնացինք Դսեղ, իսկ հունիսին, երբ թուրք ասկյարները երևացին գյուղում, ամբողջ ընտանիքով իջանք Չաղի ձորը, ուր մի քանի օր մնացինք Մելքոնյանց դպիտում:

Այնուհետև գնացինք Կոնձաձոր՝ Իսկուհի հորաքրոջս սարը և այնտեղ գոմերում մնացինք 10—15 օր:

Հետո իջանք Սանահին կայարանում գտնվող էրեկույի աչքին: Մեր խումբը արդեն հասել էր 100-ի, ճանապարհին միշտ նորանոր մարդիկ էին միանում՝ զանազան տեղերից գաղթած. իմանալով, որ Թումանյանը մեզ հետ է, իրենց կյանքն ապահով էին համարում:

Ճանապարհին հայրիկը խոսում էր հայ ժողովրդի կյանքից ու բախտից, նրա պատմությունից:

«Հայ ժողովուրդը նորից թափառական դարձավ...», — ասում էր հառաչելով:

Երբ մտանք Շահալվի ձորը, անձրևը դադարեց, լուսնյակը դուրս եկավ և ամբողջ ձորը լուսավորվեց: Իջանք Մովսես Գիմաքսյանի տանը, հայրիկի վաղևի ընկերներից մեկի մոտ, որ ասրում էր հենց այդ կայարանում:

Ի՞նչ դարնանային թարմություն էր այդ ձորում... Ի՞նչ շքեղ տեսարան, ի՞նչ վեհ ու խաղաղ երեկո՝ հակառակ ժողովրդի գրության ու տրամադրության:

Գիշերն անցկացրինք Շահալվի ձորում, առավոտը վաղ, վաղոճնեականերով մեզ ճանապարհ դրին դեպի Քոլազերան կայարան¹, որտեղից ձիերով բարձրացանք Դսեղ:

Քոլազերան կայարանում գաղթականությունը մնացել էր բացօթյա, ծառերի տակ: Երկաթգիծը բռնված էր փախչող ընտանիքներով, որոնք սալաքարի վրա հաց էին թխում, կրակ անում և շուրջը տաքանում:



Քուլոյս՝ Աշխենը², պատմեց. շեմ հիշում 18 թվի որ ամիսն էր. նստած դահլիճում, թախտի վրա պիրք էի կարդում: Զանգը տվին: Մուշեղը՝ դուռը բացեց և արագ-արագ գնաց հայրիկի

¹ Այժմ կրում է Թումանյան անունը:

² Նպատակահարմար գտանք Աշխեն Թումանյանի հուշերը ղեկավարել ոչ թե առանձին, իրրև հավելված, այլ տեղադրել ըստ ժամանակագրության՝ ամեն անգամ առանձին նշում անելով (կ. շ.):

առանձնասենյակը՝ ասելու ով է եկել: Նույն արագությունը, դարմանքով ինձ նայելով, գնաց հյուրին ընդունելու: Ներս եկավ Համբարձում Առաքելյանը¹. Ինձ շտեմավ, ուղիղ գնաց հայրիկի մոտ: Նա սարսափեցի, անհանգիստ սպասում էի, թե հիմա վեճ կսկսվի և անախորժություն: Բայց այդպես չեղավ: Մի 15 րոպեից դուրս եկան, Առաքելյանը արդեն դիմացից էր գալիս, ինձ գլխով արեց, և անցան միջանցք: Հայրիկը նրան ճանապարհ դրեց և ժպտալով, ձեռքերը դրպանը դրած, վերադարձավ: Նա իսկույն հարձակվեցի. «Ինչո՞ւ ընդունեցիր»: Հայրիկը թե՛ «Ժողովուրդն ասում է, որ դուշմանդ էլ դուռդ գա՛ պետք է ընդունես: Եկել էր ներողություն խնդրելու անցածի համար»:

Գեկանսրերի 3, Թիֆլիս

Առավոտյան ստացանք «Հորիզոնի» համարը, որտեղ լուրերի բաժնում գրված էր. «Բեջարից Համադան տանող ճանապարհի վրա քյուրդերից սպանվել են դուրս. վարդանյանը, Միքայելյանը, Թումանյան Արտավազը և օր. Սահակյանը» («Հորիզոն», 1918, դեկտեմբերի 3):

Կարգաց... բոթը շանթեց հայրիկին... Թերթը ձեռքին հեկեկում էր: Մանր, շատ ծանր տեսարան էի:



Այս կորստից հետո միատիկ տրամադրության մեջ հաճախ էր լինում: Մտքերը մահվան շուրջն էին պտավում, կրոնի, կեցության, փիլիսոփայության, կյանքի ունայնության վրա:

Արևելքի մեծ բանաստեղծներին, հատկապես պարսիկ

¹ Առաքելյան Համբարձում — գրող, հրատարակախոս, 1913—18 թթ. Լոզել է «Մշակ» լրագրի խմբագիրը: 1914-ին «Մշակում» տպագրել է տղեղ ու անճշմարիտ հողվածներ Հայ գրողների ընկերության զեմ և արժանացել 2-րդ. Թումանյանի խիստ պատասխանին («Երկերի ժողովածու, 4-րդ հատոր, 1951, էջ 287»):

բանաստեղծներին էր կարդում, հնդիկ փիլիսոփայության մեջ էր խորամուխ լինում:

Սեղանի վրա էր Տարոյի «Священные Арканы» և հրնդ-կական յոգերին վերաբերող գրքեր:

Դեկտեմբերի 15

Երեկոյան հայրիկը «Դեպի անհունը» կարդաց: Կարդաց ու դառաց. որ դա իսկապես շատ ուժեղ, խորը հոգեբանական գործ է, սահուն է ու սիրուն:

Միրում էր իր «Դեպի անհունը» ու զարմանում, որ քսան-չորս տարեկան հասակում էդ տեսակ բան է գրել:

Ափսոսում էր, որ երկրորդ մասը չի տպել. պատճառը Շանթն է եղել: Պոեմը մի օր կարդացել է նրան, որի վրա պոեմի երկրորդ մասը ծանր ու ճնշող տպավորություն է թողել: «Դեպի անհունը» գրելու ժամանակ հայրիկն այնպիսի ճնշող ապրումներ է ունեցել, որ դիշերը չի կարողացել քնել, զարթեցրել է մայրիկին: Հայրիկը պոեմի երկրորդ մասը ոչնչացրել է, առաջին մասը կրճատել է, վերջացրել կրոնական երգերով ու մի քանի տնով պոեմը փակել՝ ի վնաս գործի ամբողջության:

Շատ էր ափսոսում, որ պոեմը չի վերջացրել ու չի մշակել:

«Դեպի անհունի» սկզբնական վերնագիրը «Ճերմակ աղավնի» էր. գրել է 1894 թվին, Նորաշենի փողոցում, Տեր-Ղևոնդյանի տանը. էն ժամանակ ո՛չ առանձնասենյակ ունեի, ո՛չ էլ գրասեղան. մի եռոտանի, հին, կոտրած սեղանի վրա է Գրել: էդ պոեմը իմ մտածողության արդյունքն է:

Աղայանն առաջին անգամ 1898 թվին կարդաց. շատ էր հավանել. կարդալուց հետո լռեց. երկար վրես նայեց ու զնաց զբոսնելու: Գնաց, ման եկավ, ման եկավ, մին էլ կարդաց ու ասաց. «Գրել ես, բայց ինքդ էլ չգիտես, ինչ ես գրել»: Նրա սիրած գրվածքն էր:

«Դեպի անհունը» հայրիկի գրվածքների գլուխգործոցն էին համարում պատմաբան Հակոբ Մանանդյանը, Սիրեկան Տիգ-

րանյանը¹, Միաբանը՝ Գալուստ Տեր-Սկրտչյանը, որն անգիր գիտեր:

Դեկտեմբեր

Դեպի քաղաքական գործիչը շատ խիստ էր ու պահանջ-կոտ: Վրդովմունքով էր խոսում հայ-վրացական եղբայրասպան անմիտ պատերազմի մասին:

«Երբ ժողովրդի արյունն է հոսում, մենք, բանաստեղծներս, ալիկի իրավունք ունենք խաղաղության ձայնը բարձրացնելու, որովհետեւ մենք ենք ժողովրդի կոչված ներկայացուցիչները, մենք ենք, որ վշտանում ենք նրա տառապանքներով ու խնդում նրա ուրախությամբ»:

Այդ առթիվ մի քանի անգամ խորհրդակցություն ունեցավ ինչպես մեր տանը, այնպես էլ դուրսը՝ խմբագրություններում: Դժգոհ էր գործիչների վարած քաղաքականությունից ու գործելակերպից:

«Ժողովրդին խոսք ասողը խոշոր պիտի լինի և ոչ թե նեղ ու կլբոտ: Նեղսիրտ, նեղհոգի մարդը սոցիալիստ չի կարող լինել, ինչպես շարժ՝ քրիստոնյա»:

Դեկտեմբերի 31

Երեկոն տխուր էր: Հայրիկի սենյակում հավաքված կարդում էինք Բելլեի «Миссодовь к природе» գիրքը: Հայրիկը հավանում էր այդ հեղինակի գրելու ձևը, պատկերները: Մեծ հետաքրքրությամբ մի քանի գլուխ կարդացինք այդ գրքից՝ բույսերի ու թռչունների կյանքից:

Հետո մեզ համար կարդաց Արիստակես Լաստիվերտցու պատմությունից մի հատված:

¹ Տիգրանյան Միսեկան — իրավաբան, հասարակական-քաղաքական գործիչ, հետագայում դաշնակցական Հայաստանի արտաքին գործերի նախարար. 20-ական թվականներին Երևանի համալսարանի հայ իրավագիտության պատմության դասախոս

1918 թ. դեկտեմբերի 3-ից, Արտիկի սպանությունն բռն առնելուց հետո, մեր տունը մոայլվեց: Թեև մինչ այդ թև ընդհանուր և թե անձնական վշտի ծանրությունն տակ հայրիկն արդեն կրել էր, կորցրել անողջությունը և ուրախ բնավորությունը, բայց դեռ չէր բեկվել:

1814 թվի պատերազմն ու 1915-ի եղեռները, գաղթն ու հետագա աղետները, ավելի առաջ հոր մահը, Աղայանի և իր եղբայրների մահերը նրան արդեն քայքայել էին, սակայն վերջինը՝ Արտիկի սպանությունը, մեջքը հանկարծ կոտրեց:

Այդ օրվանից՝ դեկտեմբերի 3-ից, հայրիկի սիրտը, ասես, ծածկվեց մի մեծ, անփարատ տրամոսթյամբ:

Մինչ այդ, որքան էլ ծանրաբեռնված հոգսերով ու վշտերով, դեռ շարունակում էր և՛ հյուրեր ընդունել, և՛ հյուր գնալ, կատակում էր ու սրախոսում, բայց դրանից հետո այլևս չէր կարողանում քողարկել ապրումները և սկսեց խոսափել դրսի մարդկանցից:

1919

Հունվարի 1

Առաջին այցելուն բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին էր: Հետո եկան Տիգրան Հովհաննիսյանը, Ռոստոմը՝ (Ստեփան Զորյանը), հայրիկի մանկության ընկերներից մեկը: Խոսում էին Արտիկից: Ռոստոմը նոր էր վերադարձել Պարսկաստանից: Խոստացել էր տեղեկություններ բերել Արտիկի մասին, բայց, ըստ երևույթին, ոչ մի լավ լուր չէր բերել, քանի որ նրա գնալուց հետո հայրիկի տրամադրությունն ընկած էր:

Այդ օրը եկավ և Վրթանես Փափաղյանը:

1 Ստեփան Զորյան (Ռոստոմ) — Թումանյանի մանկության ընկերը

Հունվարի 2

Հայրիկի տրամադրությունը անփոփոխ էր: Ամբողջ օրը շրջում էր իր սենյակում, նայում էր Արտիկի լուսանկարին, աչքերը արցունքոտ, գլուխը կախ, մեջքը կոր, ինքը տխուր, տխուր...

Հայացքը ուղղված էր նրան. ասես հարցնում էր — ո՞ր ես, ո՞ր ես, մի՞թե չես գալու...

Այդ օրը նա մեկ հետ չէր, բոլորիս մոռացել էր:

Հունվարի 3

Ամբողջ օրը տխուր էր և մտազբաղ: Երեկոյան ժամը տասին մեկ իր սենյակը հավաքեց դրուցելու:

Սենյակը կնդրոսկի բուրմունքով էր լցված. վառարանի կրակը առատ էր ու վառ, սենյակի լույսը՝ թույլ, կիսախավար: Միստիկ տրամադրությամբ էր համակված:

«Հարցասիրությունը մեծ բան է. պետք է թափանցել բոլոր գիտությունների մեջ՝ խորանալ, բարձրանալ — վե՛հ ու վսեմ հարցերով ապրել, բարձունքները գնալ... գեղարվեստով, փիլիսոփայությամբ դբաղվել:

Արևելցի պիտի լինել — լայնորեն ու ամբողջովին նվիրվել փիլիսոփայական մտքերի:

Ի՞նչ է կյանքը, մահը... Միստիկները գտել են, որ ներքին կապ կա մեռածների և նրանց ապրող հարազատների միջև: Մետեֆիզիկը՝ էդ տեսակետից շատ հետաքրքրական, նուրբ և խորը գրող է:

Շեքսպիրը համախապապիակ, խոշոր դեմք է, որ խորացել է բոլոր խնդիրների մեջ:

Զրույցի վերջում նորից Արտիկից խոսեց, ափսոսաց, ցավեց: Մեկ հուսադրված հավատում էր նրա վերադարձին, մեկ էլ վշտացած որդու կորուստն էր սգում:

1 Մետեֆիզիկ Մոբիս — բելգիացի գրող, բանաստեղծ, թատերագիր: Միավորական թատերագրության հիմնադիրը և խոշորագույն ներկայացուցիչը: Գրել է նաև բնափիլիսոփայական երկեր. «Մեղունների կյանքը», «Մադիկների բանականությունը», «Մրջյունների կյանքը»:

կասեմ ցուցակը կկազմի կտա քեզ: Մյուս օրը հայրիկը 10—12 անուն հիշեց, գրեցի: Առաջինը Վարսամն էր (Մանուկ Աբեղյանը), հետո՝ Լ. Մանվելյան, Ղ. Աղայան, Ս. Մանդինյան, Ա. Տերտերյան, Ա. Ահարոնյան և այլք: Ցուցակը կազմեցի և տվի Աղբալյանին: Հետագայում, երբ սկսեցի կազմել Թումանյանի բերլիոգրաֆիան՝ այդ դարձավ հիմք:

Այդ օրերին հայրիկին այցելեցին նաև Ս. Գորոզեցիկին և Վ. Ահարոնյանը¹: Սրանք էլ կենսագրական տեղեկություններ էին ուղում և այդ օրվանից սկսեցի հայրիկի կենսագրությանը վերաբերող նյութեր գրի առնել:



Խրիմյան կաթողիկոսի կյանքից հայրիկը դեպքեր շատ էր պատմում: Մեծ մարդ էր համարում նրան և հետաքրքիր զրուցակից: Նրանց համակրանքը փոխադարձ էր: Խրիմյան կաթողիկոսը հաշվի էր նստում հայրիկի, նրա գրական ճաշակի ու հայացքների հետ: Հայ-թուրքական ընդհարումները ժամանակ (1905—1906 թթ.), երբ կաթողիկոսի Թիֆլիս գալու կարիքը կար և առաջին պատգամավորության հրավերը Խրիմյանը մերժել էր, երկրորդ անգամ հայրիկին են ուղարկում էջմիածին, որ համոզի ու Թիֆլիս բերի:

Կաթողիկոսին Թիֆլիս բերելու դեպքը հայրիկը պատմում էր այսպես. «Խրիմյանը մեծ ժողովրդականություն էր վայելում, դա ոգևորում էր նրան: Չեմ կարողանում մոռանալ մի դեպք. Բաքվի ծանր օրերին, 1905—06 թվերին Թիֆլիսից պատգամավորություն ուղարկեցին էջմիածին՝ Խրիմյանին բերելու, որ նրա միջնորդությամբ ու ներկայությամբ կարողանան հայ-թուրքական ընդհարումները մեղմացնեն: Նա հիվանդ էր ու շեր եկել: Վերջը ստիպեցին ինձ, որ ես գնամ ու բերեմ: Վեր կացանք մի քանի հոգով գնացինք էջմիածին: Գնանք ի՞նչ տեսնենք՝ Հայրիկը չկա... Դեպքերը նրա վրա ճնշող տպավորություն էին արել. անկողնում ցամաքած, կուշ

¹ Ահարոնյան Վարդգես — իրավաբան, գրական քննադատ. հետագայում՝ դաշնակցական գործիչ. զրոյ Ավետիս Ահարոնյանի որդին

էկած, ձեռից գնացած... Հայտնեցի մեր միսիայի մասին: Տեղումը վրա նստեց, թե՛ խիվանդ եմ, իսրիկ ծերացել է ըշտե... և այլն:

Խոսեցինք հայ ժողովրդի ծանր դրությունից և Բաքվի դեպքերից, վերջը համոզեցի. համաձայնվեց: Հայրիկին հազարին, սարքեցին: Հիմի գալիս ենք Թիֆլիս: Վազոնում պառկած ենք բերում. կծկված, կուշ եկած, կատարյալ դիակ էր դարձել. կարծում էինք, թե տեղ չենք հասցնի: Սկանք հասանք Թիֆլիս, կայարանում ահագին բազմություն էր հավաքվել. դորգերը փռած, ծաղիկներ, դրոշակներ և այլն, ամեն ինչ իր կարգին: Գնացքը կանգնելուն պես ժողովուրդը սկսեց գոչել՝ Կեցցե՛ Հայրիկը, կեցցե՛ Հայրիկը... Մենք էլ կոներն ենք ընկել բարձրացնում ենք, որ մի կերպ վագոնից դուրս բերենք, բայց տեսե՛ք ինչ կատարվեց: Վազոնի դռան մոտ էր ծով բազմությունը. տեսնելուն պես Հայրիկս կենդանացավ, ջահելացավ, իրեն թափ տվեց, ուղղվեց, դիք կանգնեց ու մի ճառ ասաց, որ մենք մնացինք ապշած, հրա՛ջք բան...

Մյուս օրն էլ վանքի բակում մեծ թափոր եղավ, ոգևորված քարոզ ասաց... Ա՛յ, ի՞նչ է անում մարդուն ժողովրդի ձայնը...»:



Նրբ Խրիմյան Հայրիկը Թիֆլիս էր եկել, մի անգամ հայրիկին ասում է, թե երեսնաներիդ ուղում եմ տեսնել, ամբողջ ընտանիքդ:

Մենք այն ժամանակ վերնատանն էինք ապրում: Մի օր ցերեկով հայրիկը բոլորիս տարավ կաթողիկոսին այցելության:

Չույզ-զույզ մտանք կաթողիկոսի մոտ: Բոլորիս տեսավ, օրհնեց, ծիծաղեց: Հետո մայրիկին ասաց.

— Ապահարդան տալը դժվար գործ է, հեշտ չենք տալիս, բայց եթե դու ուզես, քեզ կտանք: Բանաստեղծին պահելը, դիմանալը դժվար գործ է: Տաս երեսան մեկ դժվարություն, բանաստեղծը՝ մյուս, բայց բանաստեղծ պահելն ավելի դժվար է:

Հայրիկի անվանակոչության օրն էր: Հյուրեր շատ կային: Դատերն էին եկել շնորհավորելու: Սովորականի նման ընթրիք չեղավ, այլ միայն թխասեղան: Թեյից հետո ցրվեցին, մնացին միայն մի քանիսը՝ Ստ. կիսիցյանը, Ս. Հովհաննիսյանը և ուրիշներ: Երեկոյան հայրիկի սենյակում հավաքված երկար, շատ երկար զրույց էին անում: Հիշեցին Ռոստոմին՝ Ստեփան Զորյանին ու բացվեց հին հուշերի դուռը: Պատմություններ էին անում անցած դեպքերից ու դեմքերից, իրենց ժողովներից ու հավաքություններից, դանազան գործիչներից: Ամեն մեկն իր տպավորությունն էր պատմում, իր հանդիպումներից խոսում: Ծատ գրավիչ երեկո էր:

Հայրիկն իր կյանքի առաջին շրջանից շատ բան հիշեց ու պատմեց և քանի պատմում էր, այնքան ավելի էր բզեւորվում, չնայած դեռ հիվանդ էր, նոր էր վեր կացել անկողնից:

Ծատ պատմություններ արավ գրողների հետ անցկացրած օրերից, Նրիմյանի կյանքից:

Հետո հիշեց 1890 թվականը, իր կյանքն ու կրած հալածանքները:

— Տանը չէին ուզում, որ բանաստեղծություններ գրեմ, խանգարում էին և ստիպում, որ տերտեր դառնամ:

Առաջին դիրքս տալեց 1890 թվականին, Մոսկվայում, Արամ Առաքելյանի ու Գրիգոր Վանցյանի՝ ջանքերի շնորհիվ: Էդ ժամանակ մի գովասանական ճառ ասաց Բեգնազարյան քահանան: «Նոր դարում» նույն թվականին Մանուկ Աբեղյանը՝ Վարսամ ստորագրությամբ, առաջինը գրեց զըրբիս մասին:

¹ Առաքելյան Արամ և Վանցյան Գրիգոր — Թումանյանի դպրոցական տարիների ընկերները, որոնք մեծ աջակցություն են ցույց տվել նրա առաջին գրքի հրատարակությանը (1890, Մոսկվա): Առաքելյանը հետագայում զբաղվել է հասարակական գործունեությամբ Բարվում: Վանցյանը հայտնի է իբրև մանկավարժ և լեզվաբան:

Ասել էին, որ ուզում են ծննդյան 50-ամյակը տոնել. հասձայնվիլ էր այն պայմանով, որ ընտանեկան բնույթ տան, նե՛ծ աղմուկ չբարձրացնեն:

Երեկոյան մենակ էր: Սենյակս եկավ, կարմիր կանապի վրա պառկեց, կրակի դիմաց: Աջ կողքին թեք բնիած, գլուխը ձեռքին հենած կրակին էր նայում ու իր կյանքից հիշողություններ պատմում:

Հենց այդ ժամանակ եկավ Սերգեյ Գորոդեցկին. նախասենյակից, երբ հայրիկին տեսավ այդ դիրքով, թույլ շտվեց շարժվի, վեր կենա, իրեն դիմավորի. ներս մտավ ու հենց հայրիկի մոտ, հատակի գորգին պառկեց:

Գորոդեցկին կենսագրական բնույթի հարցեր էր տալիս իր հոգվածի համար: Հայրիկն իր կյանքի վաղ շրջանից պատմություններ էր անում, դեպքեր մտաբերում, Զալալօղլի անցկացրած շրջանից վերհիշումներ անում: Հետո իր առաջին բանաստեղծությունը՝ «Հոգուս հատորը» թարգմանեց ուսաներն: Այնուհետև պատմեց Ավ. Արասխանյանի և իր «Շունն ու Կատվի» դեպքը: Ծատ ծիծաղեցին, Գորոդեցկին՝ շատ հավանեց այդ պատմությունը²:

Մինչև ուշ գիշեր զրույց էին անում փոքրիկ սեղանի շուրջն: ու սուրճ խմում:

Լավ երեկո էր:

¹ Ս. Գորոդեցկու այդ հոգվածը տպագրվեց «Закавказское слово» թերթի 1919 թ. փետրվարի 20-ի № 27-ում:

² Խոսքը վերաբերում է այն դեպքին, որ Թումանյանը մտաբերել է գրականագետ Յուլալի հանգադյանին գրած նամակում: «Եվ «Շունն ու Կատուն» եթե իմ առաջին գրքում (Մոսկվայի) չկա՝ պատճառը հանգուցյալ Արասխանյանի դարմանքն է, որ նա հայտնեց ինձ 1889 թվականին, երբ տարա նոր «Մուրճում» տպագրելու կարգաց, շատ դարմացավ ու հարցրեց թե՛ ասացե՛ք խնդրե՛մ՝ շունն ու կատուն և բանաստեղծությունն, սրանք ի՞նչ կապ ունեն իրար հետ, էն էլ էս տեսակ վայրենի լեզվով...» (Երկերի ժողովածու, հատոր 5, նամակներ, էջ 415):

Փետրվարի 8

«Կինը կյանքի հիմքն է, կյանքի աղբյուրը. ամենամեծ ուժը. նա դեռ շատ մեծ ապագա ունի:

Կնոջ հարցի լուծումը կապ ունի տնտեսական հարցի հետ: Կնոջը տնտեսապես պետք է ապահովել, որ նա ոչ ոքից կախույթ չունենա և ազատ լինի: Ազատագրումը կարևոր է: Կինը չպիտի էն ձեռք ապրի, ինչպես հիմա է. նա ազատ պիտի լինի:

Կին հանճար չկա, մեծ տաղանդներ էլ քիչ կան, ինչպես Սաֆոն¹: Գուցե պատճառը նրա կյանքի պայմաններն են, բայց բնատուրանը անսպասան դեր է խաղում: Կինն ինքն արդեն մարդ է ստեղծում. նա չի կարող և՛ մարդ ստեղծել, և՛ ստեղծագործել»:

Փետրվարի 10

«Վերնատունը կազմակերպեցինք 1899 թվին, բժիշկ Քոշարյանի տանը:

Աղայանն էր, Շանթը, Ավոն, Դերենիկը, Նիկոլը:

Հավաքվում էինք մինչև ուշ գիշեր, կարդում ու զրուցում գրական խնդիրներից:

Պատահում էր, որ գիշերը, հենց նույն սենյակում էինք մնում ու քնում:

Նախ սկսեցինք կարդալ Հոմերոսը՝ գրաբար թարգմանությամբ, հետո՝ էսքիլես, Սոփոկլես, Շեքսպիր և առհասարակ կլասիկներին:

Կարդում էինք նաև մեր նոր գրածներն ու քննադատում:

Մեզնից ամեն մեկը մի անուն ուներ: Իմը Շեքսպիր էր, շատ էի սիրում նրան և ես էլ նրա նման շատ երեխաներ ունեի: Նիկոլը՝ Բրանդես— նա էր մեր քննադատը: Դերենիկը՝ Բայրոն— բայրոնիզմով էր տարված: Շանթը՝ Հայնե— Հայնեին էր սիրում, միտուքն էլ նրա նման սուր էր, Ավոն՝ Նիցշե—

¹ Սաֆո— Հին Հունաստանի հռչակավոր բանաստեղծուհի

ներանով էր ոգևորված, իսկ Աղայանին— մեզնից ամենամեծագին՝ Նահապետ էինք ասում:

Կա՛մ ժամանակ էր. շատ լավ շրջան էր՝ ջե՛րմ, հարա՛զատ, մտերի՛ մ... ափսոս էլ չկա՛ն էն օրերը...»

Փետրվարի 11

Իր սենյակումն էինք. կարդաց Տիցիան Տաբիձեի¹ նամակին դրած իր պատասխանը ու սկսեց զրուցել:

«Ահա՛ ձեզ մի հարց, շատ հետաքրքրական ու կարևոր ո՞րն է բանաստեղծությունը և բանաստեղծը. ովքե՞ր կարող են դոնել, որոշել բանաստեղծին»:

Հեշտ բան հո չի՞ բանաստեղծությունը ոտանավորից ջուրը և դա ամեն մեկի բանը չի. դրա համար պետք է ունենալ դրական հոտանություն, ճաշակ, նրբություն, զգացում... Մի Հայնե՛, Պուշկին՛, Գյոթե՛, Միցկևիչ՛²,— հոտանություն, նուրբ ճաշակ ունեն զգալու, որոշելու, տարբերելու բանաստեղծությունը ոտանավորից:

Բանաստեղծի տաղանդի հատկություններից առաջինը շունչն է. այն սրբազան սարսուռը, դողը, որ անմիջապես զգացվում է և մարդուն իսկույննեթ բռնում, և դա չի կարելի տեսականորեն որոշել, բացատրել:

Հետո, կարևորը կանխատեսությունն է, ինտուիցիան, երեւակայությունը, հարմոնիայի զգացումը, հոգու խորությունը, երբ բանաստեղծը խորասուզվում է ստեղծագործական ոլորտները, երբ շարժվում են նրա ինտուիտիվ զգացմունքները, երբ լցված, ներշնչված, մեծ ոգևորությամբ համակում է նրան էն մեծ սարսուռը— էն ժամանակ է բանաստեղծը բանաստեղծ:

Եվ բանաստեղծը, ստեղծագործողը նախօրոք չի՛ մտածում, չի՛ ասում. հանկարծ է լինում, աննկատելի, ոչ նախամտածված:

¹ Տաբիձե Տիցիան— վրաց բանաստեղծ, Թումանյանի գրական բանակամներից

² Միցկևիչ Ադամ— 19-րդ դարի լեհ մեծ բանաստեղծ, ոտանակալեհ ժողովրդի ազգային-ազատագրության երգիչը

Ուսու բանաստեղծներից ամենամեծը Պուշկինն է: Եվրոպայում նման մեծ բանաստեղծ չկա. Բայրոնը կրակոտ է, կրքոտ, իսկ Պուշկինը հավասարակշռված գեղարվեստ է, մեծ բանաստեղծ:

Շելլին նուրբ է, երեխայական նախնություն ունի, շատ է նուրբ. Հայնեն էլ է նուրբ, բայց նրա նրբությունը շունի. սա սատանա է, շատ սուր— սա պատի էն կողմն էլ է տեսնում:

Մեծ է Միցկևիչը իրեն աշխարհքով, հոգով նման Պուշկինին: Շատ է հաջող նրա «Պան Տադեուշը»:

Իսկ ամենից մեծը Շեքսպիրն է. նա ինքը բնությունն է՝ խոշոր, մեծ, անմահ ու համայնապարփակ. ամեն ինչ ընդգրկող, տվող, հասկացող և բոլորը նրա մեջ գտնում են ինչ որ ուղում են, նրա գրվածքներում ամեն ինչ կա և ամենն էլ իր տեղն է: Շատ է մեծ, շատ մանկուց սիրելի եմ նրան ու սիրում եմ, թեպետ նրա բոլոր գրվածքները դեռ չեմ կարդացել:

Նա է տվել առաջին մարդուն— անհատին՝ իր հոգեբանությունամբ, իր ամբողջ կյանքով: Հետաքրքիր են նրա կանացի տիպիկը:

Շեքսպիրը թեպետ շատ է մշակել իր գրվածքները, օրինակ՝ «Համլետը» տասներեք անգամ է գրել, բայց ձեռքը չի երևում, գրում է սահուն, մի շնչով, հեշտ, թեթև, կարծես թի չի գրել— հոսում է, բնական կերպով ստեղծվում:

Այլ բան է Գյոթեն. նույնպես խոշոր, նույնպես հանճար, բայց սա ուրիշ է, սա խելոք գրող է, սրա գրելն զգացվում է, կարդալիս զգում ես, որ գրելիս մտածել է»:

Գնել էր Մորիս Մետերլինկի «ՄԱՅՆՆ ՍՈՒՐ» գիրքը: Մեծ համար էլ կարդում էր հատվածներ, խորհուրդ տալիս ամբողջը կարդալ: Առհասարակ կենդանական աշխարհը շատ էր հետաքրքրում հայրիկին՝ թռչուններ, մեղուններ, ծղրիղներ, մրջյուններ... հաճախ էր ասում՝ «Բրեմ՝ կարդացեք»:

«Նոր գրողներից,— ասում էր,— ինձ դուր է գալիս Մե-

1 Բրեմ Ալֆրեդ— գերմանացի կենդանաբան, «կենդանիների կյանքը» վեցհատորանոց աշխատության հեղինակը.

տերլինկը՝ հոգու աշխարհն է տալիս, հոգու նրբությունը՝ լավն է և մեծ Թագորը՝ Արևելքի բարությունն ու խաղաղությունը տվող»:

Փետրվարի 15

Երեկոյան սեղանատանը հավաքված, թեյի ժամանակ, հայրիկը հիշեց իր մանկության լավ օրերը, առաջին տպավորությունները: Պատմություններ էր անում իր կյանքի վաղ շրջանից՝ գյուղից, մանուկ օրերից, հորից, որին շատ էր սիրում.— մեծ մարդու մասին գաղափար եմ կազմել իմ հորով,— ասում էր նա:

Հետո հիշեց 1895 թվականի գարնան այն օրը, երբ ֆուրգոնով Զալալօղլուց գնալիս են եղել Դսեղ. «Սկանք հասանք վարդաբլուր, գիշերը մնացինք էդտեղ: էդ իրիգու մի ծեր գյուղացի ներս եկավ մեզ մոտ, դրան հեքիաթներ պատմել տվի: Նրա պատմածներից ինձ ամենից շատ դուր եկավ «Հաղարան բլբուլը» որ ոգևորված և մեծ տրամադրությամբ էր գիշերը իսկույն գրեցի:

Հերս մի տիկ արաղ բերել տվեց, էդ գյուղացուն խմացրի: էն օրվանից է, որ սկսել եմ հավաքել «Հաղարան բլբուլի» զանազան վարիանտները, բայց նրա պատմածն ամենահինն է և ամենալավը:

Սկզբնական վարիանտը սա է որ կա:

Երկրորդ վարիանտը էլի կոռի եմ գտել: Ս. Գրիգորի մտտերը, Չաղի ձորի գոմահանդումը, մի պարսիկ էր եկել թրուշուն բռնելու, էդ էլ նրա պատմածն է»:

Վարիանտներից մի ուրիշը ջրաղացպանից էր լսել ու գրի առել՝ նույնպես կոռի, Դսեղի մոտակա Քարինջ գյուղի ջրաղացպանի հետ զրույց անելիս, մի քանիսն էլ՝ Թիֆլիսի բաղնիսի քիսաչիներից է լսել. ասում էր, որ սրանք հետաքրքիր, յուրահատուկ ձևով էին պատմում:

1 Թագր Թաթևադրանատ— հնդկական (բենգալական) նշանավոր բանաստեղծ, արձակագիր, թատերագիր, փիլիսոփա

Վարիանտներ շատ էր հավաքել. մոտ 60 հատ, որոնցից 15-ը գրած է իր ձեռքով: Թեև մեծ քանակությամբ վարիանտներ ուներ հավաքած ու միշտ ոգևորված խոսում էր «Հազարան բլրբուլից», բայց քիչ էր պարապում. ուշ-ուշ, մեկ-մեկ: Երբ տրամադրությունը լավ էր լինում, հանում էր «Հազարան բլրբուլի» պորտֆելը, հատվածներ էր կարդում, իսկ շփոթված. աեղերը ոգևորված պատմում: Թվում էր, թե գրված է արդեն, այնքան ուժեղ էր տպավորությունը:

1914 թվի ամառը Յագվերում մտածում էր. «Հազարան բլրբուլով» դբադվել, թեև թույլ էր ու հոգնած:

Ձևի ընտրության երկմտանքի մեջ էր. «...էն, ինչ որ ուզում եմ գրել՝ որպես դրամատիկական պոեմ՝ ժամանակը չի. դրա համար ուրիշ օրեր են հարկավոր, ուրիշ տրամադրություն՝ հանգիստ կյանք ու հարմարություն, որ ինձ չխանդարեն... էդ հիմա անհնար է»:

— Եվ որոշեց թողնել առաջին ձևը՝ դրամատիկական պոեմը ու գրել արձակ երգախառն՝ պատանիների համար:

Յագվերում այդ ձևով էլ սկսեց գրել. բայց հենց այդ ամառն էլ պատերազմն սկսվեց ու այդ օրվանից թողեց «Հազարան բլրբուլը» և, եթե չեմ սխալվում, այդ օրվանից այլևս չի գրավել «Հազարան բլրբուլով»: Հիշել է, ոգևորվել, կտորներ կարդացել, բայց չի գրել, չի պարնպակ:



Մի երեկո մոտը հավաքված. կարդում էին «Դեպի անհունը», հետո «Անուշին» անցան ու իր պոեմներից էին խոսում. հայրիկը լսում էր, լսում, բայց մտքերն ասես ուրիշ տեղ էին:

— Ի՞նչ եմ գրել մինչև հիմա. մի քանի տող բան, էն էլ ձեռագ, ոտի վրա կամ հիվանդ ժամանակս... կացեք մի սարքը վեմ, նստեմ պարապեմ, «Հազարան բլրբուլս» գրեմ, տեսեք թե ի՞նչ է լինելու... ի՞նչ Անուշ, ի՞նչ բան — էնպես մի բան եմ տալու, որ մեր նկարիչները, երաժիշտները գնան ու գնան, ինչքան նյութ ուզենան՝ թող առնեն...

Վյանքի վերջին տարիները շարունակ «սարքվելու» մասին էր մտածում, որ կտրվի մեծ շրջանից ու իրեն խանդարող գործերից և նստի գրականությամբ պարապի...

Փետրվարի 16

Մ. էփրիկին՝ էր մոտը: Քառյակներ էր ուզում հրատարակել: Մի երեսուն քառյակ ընտրեց առանձին գրքով հրատարակելու համար. խոսում էր տպելու ձևից: Նրա գնալուց հետո ասաց. «Ափսոս, թուղթ լիներ, տարիները առանձին թերթերի չլրա կդնեի, ավելի գեղեցիկ կլիներ»:

«Քառյակները» սկզբում ինքն էր ուզում հրատարակել, բայց հրատարակությունը կապված էր ծախսերի հետ. «Քառյակներ տպելը ահագին փող է նստում, թուղթը թանկ է, տան եղած թղթից կարելի է երկու-երեք հազար օրինակ տպել, միայն տպարանի ծախսը կլինի, զինը դնել 10—15 ոտրլի»:

Ինքը չկարողացավ հրատարակել: «Քառյակներն» առաջին անգամ լույս տեսան 1920-ին՝ 30 էջ, «Մ. էփրիկյան և քնկ.» հրատարակությամբ:



Այդ օրը խոսեց Տերյանի մասին.

— Բանաստեղծի ամենակարևոր բաներից մեկը լեզուն է: Տերյանը մեծապես ազդվել է ու հետևում է Վյաչեսլավ Իվանովին, Բալմոնտին, Ֆեոդոր Սոլոգուբին², որոնք մեծ առդանդներ չեն: Պետք է բանաստեղծի աշխարհը գտնել, երբեմն մարդիկ իրենց մի բառով բնորոշում են. օրինակ՝ մթնշաղ, ցնորք, երազ...

Նա Շեկլիի նման չի. Շեկլին պարզ է, արեգակի ճառագայթի նման, նա կարող է անհունը թափանցել...

— Գեղարվեստական ստեղծագործությունը ամենաուժեղ

¹ էփրիկյան Միսակ — հրատարակել, «Պատանի» արվանախի խմբագրության անդամներից

² Վյաչեսլավ Իվանով, Կոստանդին Բալմոնտ, Ֆեոդոր Սոլոգուբ — առաջին միջուխտ բանաստեղծներ

չարումն է: Բանաստեղծութեան մեջ մինիմումը բարձր տրամադրութեանն է: Ամենակարևոր բանը ոգևորությունն է: Իմ բանաստեղծությունների մեջ քիչ բան կա ոգևորությամբ գրած: Բարձր տրամադրությունը, էն священный трепет-ը լինեա՞մ է ավելի հաճախ, իսկ պաթոսը — քիչ: Հայնեն, Գյոթեն, Միցկևիչը, Պուշկինը հասկանում էին պաթոսը: Բայրոնը էնպէս պարզ չի հասկանում, ինչպէս Պուշկինը, նա շատ փոթորկալի մարդ է:

— Մեր գրականութիւնը պետք է վերանայել, ամէն մեկի տեղը պիտի որոշել:

— Մեր թարգմանական գրականութիւնը շատ է աղքատ ոչինչ չունենք: Եղ կողմից ուստաց գրականութիւնը շատ է հարուստ, նա թարգմանել է եւրոպական գրականութիւնը, ծով է ստեղծել և էղ ծովի մեջ լողանում է ու մեծանում:

— Ինչքա՞ն են շարշարվելու հետո մեր քննադատներն ու բանասերները մի դատարկ բանի վրա ու էղ դատարկ բանն էլ ի՞նչ սխալ են հասկանալու, բացատրելու ու երբեք ճիշտը չեն գտնելու, չեն ասելու...

Այսպէս էր ասում, երբ խոսք էր ընկնում իր երկերից որևէ մեկի կամ իր կյանքի մասին:

— Գրողներ ունենք, քննադատներ կան. չե՞ն հետաքրքրվում իրենց մարդկանցով, չե՞ն հարցնում, չե՞ն տեղեկանում. տարիներ հետո նստելու են քրքրելու, տանջելու ու ճիշտն էլ չեն գտնելու: Գրականութիւնը, արվեստը դարձել են տոնօրերի բուրվառ հոբելյանների ժամանակ կամ որևէ առիթի հանում են, խոսում, բուրվառում ու էլ ետ տանում դնում իր տեղը՝ խորանում և մոռանում:

Փետրվարի 18

— Հե՛յ գիղի մեր վերնատուն... մեր երեկոներ... ինչքա՞ն ենք հավաքվել, վիճել, լուսացրել...

Հիշեց վերնատան երեկոները, իր բյուրոյի արկղից հանեց հին թղթեր, ձեռագրեր, ծաղրանկարներ. նայում էր, վերնականներից հետաքրքիր պատմություններ անում ու ափսոսում անցած օրերը: Շատ ծիծաղեցինք այդ գիշեր:

Փետրվարի 19

Ուշ երեկոյան վարդգես Ահարոնյանը բերեց հաշորդ օրվա թերթերը՝ «Աշխատավոր», «Закавказское слово», «Ժողովրդի ձայն»: Կարդացինք հոբելյանին նվիրված հոդվածները: Հայրիկը հավանեց «Աշխատավորի» առաջնորդը, նաև Վ. Խորենու՝ «Գյուղական աշխարհի երգիչը», Նորենցի «Նոր սերնդի բարեկամը»: Ասաց, որ Սերգեյ Գորոդեցկին և վարդգես Ահարոնյանը կարողացել են նախորդ օրը իրենից վերցրած տվյալները շնորհքով օգտագործել:

Գիշերն ուշ քնեց: Եկավ սենյակս, պառկեց կարմիր կահույքի վրա և երկար զրույց էր անում: Թեև տրամադրությունը խաղաղ էր ու հանգիստ, բայց տխուր էր. նորից խոսեց վերջին տարիների դեպքերից, ժողովրդի ցավերից, Արտիկից:

Փետրվարի 20

Առավոտը վաղ վեր կացավ: Առաջին այցելուն Շիրվան-զադեն էր՝ իր Մարգարիտ դստեր հետ, հետո Միքայել Պապաչանյանը՝ եկավ, այնուհետև խումբ-խումբ ծանոթներ ու բարեկամներ:

Կեսօրին երրորդ արական դիմնազիայի աշակերտները եկան հայոց լեզվի դասատուի՝ Ռաֆայել Մելիք-Աղամյանի առաջնորդությամբ: Վեց տարեկան մի փոքրիկ երեխա խոսեց, վերջում ավելացրեց. «Ցանկանում ենք Ձեզ երկար կյանք, որ մեզ համար նոր բաներ գրեք. շատ-շատ հեքիաթներ, որ մենք կարդանք»: Հայրիկը հուզված էր: Երեխաներն անգիր ասացին «Զրահեղձը», ներկայացրին «Շունն ու Կատուն»: Ռ. Մելիք-Աղամյանն ասաց. «Գուր ժողովրդի սրտից եք խոսել, նրա ամոապանքից և համայն ժողովուրդը սիրում է Ձեզ որպէս իր ամենամեծ բանաստեղծին, որպէս իր սիրելի և թանկագին երգչին»:

1 Խորենի (Տեր-Կեռզյան) վաճառ — գրական քննադատ
2 Պապաչանյան Միխայել — իրավաբան, հասարակական գործիչ

Հայրիկը գունատ էր, հուզված. իր շնորհակալական խոսքն ասաց, ավելացնելով.

«Ես էլ ձեզ նման մի երեխա եմ: Հարազատ են ինձ բոլոր երեխաները, ձեր աշխարհը, որ և իմ աշխարհն է. սիրում եմ ձեզ և ձեր աշխարհը: Այո՞, մենք երգել ենք ժողովրդի վիշտն ու տառապանքը, և հրք ասում են՝ բանաստեղծը ժողովրդի սիրտն է, ճիշտ են ասում: Բայց ինչպես որ հայ ժողովուրդը հազար ու մի տեղից վիրավոր է, այնպես էլ մեր սիրտն է... Մենք երգել ենք նրա ցավը, տանջանքը, վիշտը, երգել ենք տխուր երգեր ու շենք կարողացել ձեզ տալ ուրախ ու զվարթ երգեր: Կցանկանալի, որ մեզնից հետո ունենաք երջանիկ բանաստեղծներ, որ երգեն ձեր հոգուն համապատասխան, զվարթ ու պայծառ երգեր...»:

Ասաց ու համբուրեց երեխաներին:

Հետո եկան նկարիչներ Եղիշե Թադևոսյանը, Գևորգ Բաշինջաղյանը, Գիգո Շարբաբչյանը, Օզանեղովը և ուրիշներ՝ իրենց կտավները նվեր բերելով, ապա՝ արտիստների Հովհաննես Աբելյանը, Իսահակ Ալիխանյանը, Ոսկանյան ամուսինները: Այնուհետև «Hex ποѳтов» խմբակցության բանաստեղծները՝ Սերգեյ Գորոդեցկու գլխավորությամբ, նրա կինը՝ Նիմֆա Բել-Կոն-Լյուբովիցայան և Ալ. Կուլբեբյակինը իրենց բանաստեղծություններով, սրբանոցների ներկայացուցիչները՝ ծաղիկներով ու երգերով:

Սրտառու էր որբերի այցելությունը: Սիրով ու զարմանքով նայում էին հայրիկին և ուրախանում:

Այնուհետև եկան Դեմիրճյանը, Փափաղյանը, Լեոն, Նար-Դոսր, գրողների ընկերության վարչությունը, Հայրենակցական միությունների միությունը, հասարակական գործիչներ, ընկերներ, բարեկամներ, հեռու-մոտիկ ծանոթներ... Սենյակներում և պատշգամբում այլևս տեղ չկար:

Երեկոյան նոր հյուրեր եկան ծաղիկներով, նվերներով ու ջերմ խոսքերով. այսպես մինչև ուշ գիշեր:



Հայրիկի ծննդյան 50-ամյակը պաշտոնական ձևով շոտնվեց: Ինքը հենց սկզբից հրաժարվեց: Թե ընդհանուր և թե բնատանկան կորուստները նրա տրամադրությունը խախտել էին և նա անհասարակ խտաբախում էր ուրախություններից:

Բայց ինքնաբերի կերպով ժողովուրդը տոնեց՝ տարերային ձևով: Համարյա ամեն հիմնարկ ու դպրոց առանձին-առանձին նշեց հոբելյանը՝ երեկույթ կամ ցերեկույթ կազմակերպելով: Հայրիկին իրենց մոտ էին հրավիրում: Այսպես, մոտ երկու ամիս շարունակ, գրեթե ամեն օր տոնվում էր հոբելյանը: Ինքն էլ էր հոգնել: Ստիպված եղավ մի քանի տեղից հրաժարվել:

Այդ օրերին հայրիկին երեկույթի հրավիրեց Լոռեցիներին հայրենակցական միությունը:

«Գնում եմ լոռեցիներին քեֆին, շաշերը հավաքվել են...»:

Թամարը թե՛ դու ամենամեծ լոռեցին ես, ուրեմն դու ամենամեծ շաշն ես:

Փետրվարի 21

Տիգրան Հովհաննիսյանն էր մոտը: Զրույցը գրական քնննադատների շուրջն էր: Գիտական քննադատություն չունենք, — ասում էր հայրիկը, — ամեն մի քննադատ նախ և առաջ պետք է ունենա հոտառություն և ճաշակ:

Տիգրան Հովհաննիսյանն այդ երեկո կարդաց հայրիկի մասին գրած իր հոդվածը, որը նախորդ օրը «Հանաչում» չէին տպել: Նա հայրիկին բնորոշել էր որպես թախծի, կյանքի ունայնության երգչի: Երևում էր, որ հայրիկը նրա հոդվածից գո՛չ չէր:

Փետրվարի 23

Երեկոյան Շիրվանդադեն, Դեմիրճյանը, իրավաբան Ալ. Պատովյանը հայրիկի սենյակում հավաքված նախազգացումներից էին խոսում:

Հայրիկն իր կյանքից ղեպեր հիշեց և սկսեց պատմել:

« — 1905 թվականի ամառը Շուշուվեր էինք. երազիս տե-
սա, որ Ռուսաստանի տափաստանի վրա երկինքը պատուվեց
և արյուն ու վահր թափվեց, կարմրեց, սևացավ... Մյուս օրը
ծանոթներին հանդիպեցի: Ռուսաստանը կհաղթվի, տակն ու
վրա կլինի, հեղափոխություն կսկսվի և այլն, և այլն... Չհա-
վատացին, գրազ եկանք: Մերոնց մեծ պաշարով ուղարկեցի
գյուղը: Էդպես էլ եղավ: Հետո էլ հայ թուրքական ընդհա-
րումները սկսվեցին:

Պարզ զգացել եմ հորս մահը: 1898 թվականն էր. ջրը-
օրհնեքի երեկոն. Թամամշյանների¹ տանը ընթրիքին հան-
կարծ թվաց, թե հայրս մեռավ: Տրամադրությունս վատացավ,
տխրեցի, հյուրերը նկատեցին, հանգստացրին, բայց ոչինչ
չօգնեց: Սկա տուն: Երեք օր հետո մարդ է գալիս գյուղից,
թե՛ հայրդ ջրօրհնեքի գիշերը մեռել է (հունվարի 5-ին):

Նույնպես պարզ զգացել եմ Աղայանի մահը: 1911 թ.
ամառվա մի շոգ օր էր²: Սենյակումս նստած պարապում եմ:
Առավոտ ժամը ինը և կեսը կլիներ, հանկարծ աչքիս երևաց
Աղայանը, որ ընկավ մայթի վրա և մեռավ: Սարսափահար
վեր կացա: Սենյակումս ման եմ գալիս ու չեմ կարողանում
ինքս ինձ հասկանալ: Ներս եկավ կինս, տեսավ ինձ գունատ
և շփոթված: Ասի՝ բա՛ն ես ուզում ասել: Սկսեց ընտանեկան
գործերից խոսել: Ասում եմ՝ չե՛ս տեսնում, Ղազարը մե-
ռավ... Նա զարմացած նայում էր վրաս: Հենց էդ ժամանակ
ներս է գալիս տղաս՝ Արտիկը, թե պապեն³ փողոցումն ըն-
կավ, ուշքից գնաց, տարան տուն...

Վեր կացա, գնացի, բայց զգում էի, որ կենդանի չեմ տես-
նելու Ղազարին: Երրորդ գիմնադիպալի մոտ պատահեցի Գրի-
գոր Վարդանյանին. ձեռքով արավ, թե՛ արդեն...

Առհասարակ Աղայանի կյանքի լավ ու վատ պայմաններն
զգում էի, նա էլ իմս էր տեսնում, նախազգում:

1906 թվականին, երբ դեռ Բեհբուջյան փողոցում էի ապ-

¹ Թամամշյաններ — Թիֆլիսի ունևոր ընտանիքներից մեկը, որի հե-
Ռուսանյանը մտերմություն ուներ

² հունիսի 20-ը

³ Մենք՝ երեխաներս, Աղայանին պապա էինք ասում (ձան, հեղ.):

րում՝ վերնատանը, մի գիշեր ինձ շատ վատ զգացի... Ամ-
բողջ գիշերը շքեցի...

Առավոտը վաղ, դեռ լուսը չծագած մեր դանգը տալիս
էն. կինս դուր բաց է անում, տեսնում է՝ Աղայանը. սա թե՛
Օհանեսը տա՛նն է, լա՛վ է: Թե՛ հա՛: — Դե՛ լավ, — ասում է
ու գնում:

Հետո իմացա, որ գիշերը ինձ պատկերացրել է տանջվելիս,
ճիշտ էնպես, ինչպես եղել եմ:

Մայրս էլ էր զգայուն և ինձ պատահած դժբախտություն-
ները զգացել է, պարզ տեսել:

Նոր նշանված տարիս, 1888 թվականի գարնանը, շատ ծանր
հիվանդ էի, բժիշկները հույս չունեին. գրեցին գյուղը, որ հերս
ու մերս գան ինձ տեսնելու: Լուրը գյուղ տանողը գնում է
տեսնում՝ մեր դռանը ձիերը թամբած, մատաղ անելիս: Բա-
նից դուրս է գալիս, նանը գիշերը երազում ինձ տեսել է հի-
վանդ, ծանր դրուժյան մեջ: Գիշերը վեր է կացել, թե՛ ձիերը
թամբեցեք, գնանք տղիս տեսնելու: Մատաղ է անում, որ գա
Թիֆլիս: Հավատում եմ երազներին, իմ նախազգացում-
ները երազների վրա են հիմնված»:

Մեր կամ իր կյանքում պատահած խոշոր դեպքերը հայ-
րիկն իրոք նախազգում էր: Իր կենսագրական նյութերի մեջ՝
«Երազներ, նախագուշակություններ և նախազգացումներ»
վերնադրի տակ գրել է. «Երազը իմ կյանքում: Չեմ սխալվի
վերնադրի տակ գրել է. «Երազը իմ կյանքում: Չեմ սխալվի
եթե ասեմ՝ իմ կյանքում մի որևէ դեպք չի պատահել, որ նա-
խազգացած կամ նախատեսած չլինեմ: Նախազգացած ու
նախատեսած որ ասում եմ — ասում եմ ոչ միայն արթուն
ժամանակ, այլև քնած ժամանակ, երազում, այլարանորեն,
պատկերներով, խորհրդանշաններով...»

...Ես էնքան շքեղ ու թանկ երազներ եմ տեսել, որ ամեն
մինը ինձ համար մի գեղեցիկ կյանք արժի...»:



Կյանքի ծանր ժամերին կամ նեղ օրերին, երբ երազում
տեսնում էր հորը՝ լավ նշան էր համարում, թեթևանում էր
և ուրախանում:

Պատմում էր, թե ինչպես Պետերբուրգի բանտում, 1912 թվականին մի գիշեր երազում տեսնում է հորը կանգնած ճամփաբաժնում՝ երկու ճամփի մեջտեղը՝ մոտիկ և լույս. ինքը մոտիկ ճանապարհի վրա, հայրը՝ լույս: Հայրը մատով ցույց է տալիս լույս ճանապարհը: Ինքը լույս ճանապարհով առաջ է գնում. և հայրիկին էլ իր ետևից տանում: Հայրիկն ասում էր, թե այդ երազը տեսնելուց հետո բանտում հանգիստ էի, գիտեի, որ կազատվեմ: Թեև առաջ էլ էի հանգիստ, բայց այդ երազը տեսնելուց հետո ավելի հանգստացա:

Երբ 1921 թվականին հայրիկը հիվանդացավ, համոզված էր, որ վիրահատումն անխուսափելի է: Ասում էր. «Ես իմ երազը տեսել եմ. առանց օպերացիայի բան չի լինի: Պոլսից դուրս գալու նախօրյակին, գիշերը երազումս Արտիկին տեսա. բռնել էր, չէր թողնում գամ, ես արյան մեջ էի, չորս կողմս սև արյուն էր թափված, նա էլ ինձ փաթաթված...»: Այս՝ երազը հիվանդության օրերին պատմում էր սարսափով:

1922-ի աշնանը մի անգամ տեսել էր հորը Թիֆլիսում. սև շորերով եկել է անցել և ոչինչ չի ասել:

Աշխեն Թումանյանի հուշերից. «Հայրիկը մի անգամ, 1922 թ. աշնանը, պատմեց տեսած երազը. «Իբրև ինձ թաղում են, ես էլ աչքերս բաց նայում եմ վերև. շատ մարդկանց պուխներ եմ տեսնում, բայց պարզ միայն Աղայանին եմ տեսնում գլխիս վրա կախված և խորը հայացք գցած վրաս»:

Երբ Մոսկվայում Սաղյանը հայրիկին մնաս բարով ասաց դռան մոտ, մի անգամ էլ հո նայեց: Հայրիկը հետո ասաց ինձ. «Էն որ նայեց, շատ էր նման էն հայացքին, որը երազումս տեսել էի»:

1923-ին, Մոսկվայում, հիվանդ ժամանակ, հորը երազում էր բեր շտեսավ: Շատ էր ուզում, որ գոնև մեկ անգամ հորը

տեսնի: Ասում էր. «Եթե հորս մեկ անգամ երազումս տեսնեմ, ամեն ինչ լավ կլինի...»: Բայց չեղավ... Շարունակ ուրիշ մարդկանց էր տեսնում. հաճախ Աղայանի հետ քեֆ էր անում: Տեսնում էր մոտիկ ու հեռու ծանոթներին: Մի օր ասաց. «Էլ մեռած մարդ չմնաց, որ շտեսնեմ»:

Երբ մեղանից հեռու էր լինում, հանկարծ վեր էր կենում՝ գալիս կամ հեռագրում էր, կամ թե չէ անհանգստացած նամակ էր գրում, թե երազումս տեսա... «Էս գիշեր մի տխուր երազ եմ տեսել — էս նամակը նրա համար եմ գրում: Ինչ որ երեխեքը եկել են, մի նամակ չեք գրում իմանամ ինչպես եկան կամ ոնց եք ամենքդ» (1917, Պյատիգորսկ):

Իսկապես որ պատճառ ունեի անհանգստանալու, որովհետև այն գնացքը, որով եկել էինք Թիֆլիս, ճանապարհին խորտակման վտանդի ենթարկվեց:

«Երազներ կան, որոնց հավատում եմ, ինչպես ցերեկը նախազգացումներին: 1915 թվականի ամառը, էջմիածին եղած ժամանակ, երազիս բեխերս թրաշում էի: Վախեցա, վեր թռա, սիրտս վատ բան էր զգում: Մյուս օրը հեռագրեցի Լոռի՝ հղբորս, որ գա Թիֆլիս, ես էլ շուտով գալու եմ: Աշնանը եկա Թիֆլիս ու մի քանի օրից խաբար բերին, թե հղբորս սպանել են:

Հիմա էլ երեկ երազումս էի երեսու թրաշում էի...

Է՛հ, ասված ա՛ շալ օձից վախեցածը շալ թոկից կվախենա»:

Այսպես էր գրում հայրիկը 1916 թվականին: Եվ իսկապես, 1915 թվականի աշնանը Ռոստոմը հեռագիրը գրպանը գնում է սարը նանին տուն բերելու, որ հետո գա Թիֆլիս՝ ճանապարհին սպանվում է: Իսկ երեք ամիս անց փոքր հղբայրը՝ Արտաշն է սպանվում. ճակատում (Բաթումի մոտ, Արխավա գետի ափին):

Լիտիցյանների հայկական գիմնադիայում (Արեդն այնտեղ շէր սովորում) տեղի ունեցավ հայրիկի 50-ամյակին նվիրված մի շատ ջբեղ և գեղեցիկ երեկույթ: Դպրոցի մուտքից այդքան սկսվում էր հոբելյանական հարդարանքը: Աստիճանների երկու կողմի պատերից փակցված էին հատվածներ հայրիկի երկերից: «Թ՛մկաբերդի առումը» պոեմից կային հետևյալ հատվածները.

Գործն է անմահ, լա՛վ իմացեմ,
Որ խոսվում է դարեդար,
Երևե՛կ նրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար...

...Ա՛խ, երանի՛ ով մարդ կգա
Ու մարդ կերթա անարատ:

«Չարի վերջը» առակից՝

Չարի առջև թե վաղ, թե ուշ,
Էդ է պահված, Ազվես աղա...

«Թագավորն ու շարշին» ավանդությունից՝

...Ու միշտ, քանի որ կա
Շան ու գերի, ըստուկ ու սեր,
Չի լինելու երկրի վրա
Ոչ շխտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր:

Ուսուցիչները և աշակերտությունը իրենց ծնողների հետ միասին դահլիճի մուտքի մոտ հայրիկին դիմավորեցին ծաղիկներով ու երգերով: Դպրոցի խումբը կոմպոզիտոր Անտոն Մալիլյանի ղեկավարությամբ դահլիճում երգեց հայրիկին նվիրված մի ձոն, որի և՛ խոսքը, և՛ երաժշտությունը պատկանում էին Անտոն Մալիլյանին: Չոնն սկսվում էր այսպես.

Քերեք ծաղիկներ, պսակներ հյուսե՛մ,
Հայոց պոետի նակատը զուգե՛մ.
Քերեք ծաղիկներ, վաղեր ու լալա,
Հայոց տաղանդը գալիս է անա...

Այնուհետև սկսվեց երեկոն, աշակերտներից մեկը ղեկուցեց հայրիկի կյանքի և ստեղծագործության մասին: Աշակերտ-աշակերտուհիները բանաստեղծություններ արտասանեցին:

Հայրիկի հետ էին նաև Գեմիլըճյանը, քույրերիցս Անուշը և ես: Երեկոն անցավ շատ ջբմ: Հայրիկը մեծ գոհունակությամբ և առատ ծաղիկներով վերադարձավ տուն:

Փետրվար

Յկել էին քաղաքային դպրոցի ներկայացուցիչները հրավիրելու իր ծննդյան հիսնամյակի երեկույթին:

Նրանց գնալուց հետո տխուր էր:

— Էս բոլորը դատարկ բաներ են... ամենից լավը էն կլիներ, որ մի խաղաղ ու հանգիստ անկյուն ունենայի ինձ համար, քաշված կյանքի աղմուկից, մարդկանցից, ապրելի հանգիստ ու պարապելի: Լավ էի մտածել, բայց չեղավ...

Վերջին տարիները կարծես զգում էր, որ իր այդ իդճը՝ Իգատակում՝ առանձնանալ ու պարապել՝ իրականություն չի դառնալու:



Փետրվարի վերջերին, հայրիկի 50-ամյակի տոնակատարության օրերին, մեր նանը՝ Թումանյանի մայրը, գլուղից Թիֆլիս եկավ: Յկել էր մասնակից լինելու որդու մեծարմանը:

Մեր նանը բարձրահասակ էր, կարմրաթուշ, առողջ ու

1 Իգատակ— Դսեղի մոտակա գեղատեսիլ վայրերից մեկը, ուր Թումանյանն ուղում էր ամառանոց ունենալ իր և գրական ընկերների համար

առույգ: Աչքերը խոր ընկած, մանր, բայց խելացի, արծվա-
հայաց:

Գեղեցիկ էր մեր նանը: Ժպտուն դեմքով, բայց և վշտոտ,
թախճոտ կին էր: Գլուխը սև շալով փաթաթած, ծնոտը նույն-
պես ծածկած, դեմքի միայն վերևի մասն էր երևում՝ խոհուն
ու մի քիչ էլ խորամանկ աչքերը:

Մի առաւելոտ, երբ հայրիկը դեռ քնած էր, երեխաները
դպրոց էին գնացել՝ նանը սեղանի ծայրին, ինքնաեռի կող-
քին նստած թեյ էր խմում: Հարցեր տվեցի նրան հայրիկի
մանկության մասին. ինչպիսի՞ երեխա է եղել, ինչպի՞ս է
պահել, խնամել նրան, ի՞նչ է հիշում նրա մանկությունից:
Նանը, որ շատ հետաքրքիր պատմող էր, ասաց բաներ, որ
նորություն էին ինձ համար: Անմիջապես գրի առա նանի
պատմածները, որոնք հետագայում ինձ շատ օգնեցին հայրիկի
մանկության մասին գրելիս:



Վերջին տարիները մտածում էր ինքնակենսագրությունը
գրել իր ղեկերների, ժամանակակիցների, ժամանակի դեպքերի
հետ հյուսված:

Սկսեց նշումներ անել, ուրվագծել ու... մնաց կիսատ:

Մարտի 12

Ս. Գորոդեցկու գլխավորությամբ հայրիկին կրկին այցե-
լություն եկան «Цех поэтов» խմբակցության երիտասարդ
բանաստեղծները շնորհավորելու նրա ծննդյան 50-ամյակը:

Ալբոմում գրեցին իրենց բանաստեղծությունները:

Մնացին ընթրիքի:

Հետաքրքիր և ուրախ երեկո էր:

Մարտի 16

Երեկոյան հոգնած էր, թույլ և անտրամադիր. պառկեց
հանգստանալու:

Մննդյան 50-ամյակի առթիվ ուսանողները հրավիրել էին
իրենց երեկույթին: Գնալու տրամադրություն չունեի, բայց
հետո, քիչ ուշ, միասին գնացինք: Ծանապարհին խոսում էր.

— Շնորհքը մեծ բան է, ամեն ինչ է: Մարդ կարող է ամեն
բան ունենալ, բայց եթե շնորհք չունի, ունեցածը կփչացնի:

— Չափը կյանքում և ամեն բանում կարևորագույնն է:
Չափը՝ ոսկե սանձը, մարդը երբեք ձեռից բաց չպետք է թող-
նի. «Հազարան բըլբուլում» պատկերավոր եմ տվել՝ հրեղեն
ձին ոսկե սանձով: Էդ ոսկե սանձը հենց էն շափն է, շափի
զգացումը...

Այդպես զրուցելով դնացինք երեկույթի: Վերադարձանք
շատ ուշ: Գիշերը նույնպես թույլ էր, լավ չէր զգում իրեն:
Մայրիկը զարթեցրեց ինձ: Վատ էր քնել, սիրտը թույլ էր:
Նորից սկսեց Արտիկից խոսել:

Մարտի 19

Երեկոյան մեզ մոտ էր Բաբլի հասարակական գործիչներից
մեկը: Հայրիկը խոսում էր էպոսից, ժողովրդական ստեղծա-
գործությունից: Հետո անցավ կենդանական աշխարհին՝ ձիուն,
շանը, եղնիկին ու նրանց կյանքից սկսեց դեպքեր պատմել:

— Կենդանիներ ես շատ եմ սիրում. մենք կենդանիներից
շատ բան ունենք սովորելու, — մեկից նրա հայացքը, մյու-
սից քայլվածքը, երրորդից նազանքը: Շարժումների ի՞նչ
շնորհալիություն, ի՞նչ նազանք, աչքերի ի՞նչ արտահայտու-
թյուն ունի պախրեն: Դա ամենագեղեցիկ կենդանին է: Մեր
սարերը հարուստ են պախրով ու կխտարով: Մեծ տպավո-
րություն է արել ինձ վրա պախրին...

Եվ նորից պատմեց պախրայի որսի դեպքը:

«Մի օր գնացինք որսի. ես էլ լավ կրակել գիտեմ: Գիշեր
է. ցուրտ եղանակ: Գիշերով գնացինք, որ լուսադեմին, երբ
պախրաները գալիս են սարի դոշը ջուր խմելու՝ խփենք:

Առաւելտը վաղ լուսն ու մութը բաժանվելիս, բնության
ցողապատ ժամին, որ աչքս բաց արի մութ անտառի միջին,
սարի դոշին դուրս եկավ մի պախր՝ գեղեցիկ վզով ու ճա-
կատով — հայացքը... կանգնվածքը... քայլվածքը... էն-

քան էր շքեղ ու գրավիչ, որ հրապույրից մնացի տեղս կանգնած, շշմած, ամոթից կարմրած, հրացանս աշխատեցի պահել, վայր դնել, ծածկել, որ շտեննի:

էն օրվանից էլ որս չարի»:

Մարտի 24

Երեկոյան հայրիկի և Դեմիրճյանի հետ գնացինք Արքունական թատրոն՝ Խոսեք Գրիշաշվիլու երեկույթին: Մուծունավայրի օթյակում մեզ հետ էին վրաց գրողները և Սերգեյ Գորոդեցկին:

Երեկույթը հաջող էր: Վերջին բաժնում վրացուհիներն ազգային տարազով երգեցին ժողովրդական երգեր ու պարեցին: Շատ նուրբ էր ու գեղեցիկ: Հայրիկի վրա մեծ տպավորութիւնն արավ: Շատ էր հավանել, խոսում էր ընդհանրապես վրացուհիներից՝ նրանց նազանքից ու շնորհքից:

Վրաց գրողները մեքենայով մեզ ճանապարհեցին տուն:

Մարտի 25

Երեկոյան Աշխենի տանն էինք ընթրիքի: Հյուրեր շատ կային: Հայրիկը թեև պատմութիւններ էր անում, ասում, խոսում, ծիծաղում, բայց տխուր էր:

Շատ ստիպեցին ու խնդրեցին, որ Քյոթոլին երգի: Վաղուց չէր երգել և չէր էլ ուզում, բայց որ շատ ստիպեցին, մեծ դժվարութեամբ համաձայնեց ու երգեց:

Երգեց, ինչպես միշտ, կանգնած, ձախ ձեռքը գրպանում, աջը օդի մեջ խաղացնելով, առաջվա նման սրտալի շեշտով, հեշտ ու թեթև, ասես անհոգ էր ու քեֆ էր անում: Բայց... էլ առաջվա Քյոթոլին չէր:

— Տասը տարի է քեֆ չեմ արել, տասը տարի է Քյոթոլին չեմ երգել: Աղայանի մահից հետո թամազա չեմ եղել: քսանհինգ տարի մոտ ընկերներ ենք եղել. շատ, շատ մոտ: Ընկերը լավ բան է. թանկ բան: Կյանքին առաջին հարվածը Աղայանի մահն էր. ինձ շատ կոտրեց: Դրանից ավելի վաղ

հորս մահն էր, նույնպես ծանր. մեծ էր հորս կորուստը: Երբորդը, կթե ստուգվեց, տղայինս կլինի...

էլ շխտեց: Աչքերը լիքն էին:

Մարտի 26

Հայրիկի հետ գնացինք զբոսնելու: Եղանք Պուշկինի փողոցի գրավաճառանոցում. փնտրում էր հին գրքեր, հատկապես կովկասագիտական և արևելագիտական:

Գնեց Մարիա Կոնոպնիցկայայի «Сизиф и Прометей» գիրքը: Թերթեց ու հիշեց 90-ական թվականները:

— Հե՛յ գիղի, մի ժամանակ էս գիրքը շատ էի սիրում. ու մի կտորն էլ «Պոետն ու մուսային» բնաբան դրի:

Այդ երեկո, զատիկի տոների առթիվ, մի քանի այցելութիւններ սիրտի աներ, բայց չուղեց, տրամադիր չէր: Գոլովինսկի պոզոսայի գրախանութներից նոր գրքեր գնեց: Երեկոյան դեմ վերադարձանք տուն:

Մարտի 27

Ցերեկը Փ. Վարդապարտյանի մոտ էինք: Խոսք բացվեց հայրիկի քնարական բանաստեղծութիւնների մասին:

Վարդապարտյանը դրանք համարում էր ազգեցութիւններու պոետներից, ինչպես, օրինակ, «է՛յ, աստղերը» և Պուշկինի «Брожу ли я вдоль улиц шумных» բանաստեղծութիւնը, «Վաս օրերը» և Լերմոնտովի «Тучки небесные»-ն, «Գութանի երգը» և Կոլցովը, «Մերժած օրենքը» և Լերմոնտովի «Մծիրին»:

Հայրիկն ասում էր. «Ճիշտ է, «Մերժած օրենքը» գրելիս աղդվել եմ Լերմոնտովից, բայց էն լիրիկ կտորները գրելիս ողու բանաստեղծները ոչ մի ազգեցութիւն չեն արել վրաս, Կոլցովի գոյութիւնը նույնիսկ չգիտեի: Լիրիկ բանաստեղծութիւններս անավարտ են ու պակասավոր և այդ պատճառով էլ դուրս եմ գցել երկրորդ գրքից: Նմանութիւնները կարելի է բացատրել հոգիների հարազատութիւնով, ազգակցութիւն-

նով, խոհերի նմանութիւնով և ոչ թե ազդեցութիւններ համարել»:

Այդտեղից ժամը 2-ին դնացինք Հովնանյան դպրոց՝ իր հոբելյանական ցերեկույթին:

Յերեկույթի ծրագիրը կազմողը Գեմիրճյանն էր: Ամեն ինչ հաջող էր, հարադատ ու ջերմ: Հայրիկը հուզվեց, մանավանդ այն ժամանակ, երբ մի վանեցի աղջիկ կարգաց Վանա հուշերից. այստեղ արդեն իրեն զսպել չկարողացավ...

Աշակերտուհիները հայրիկին նվիրած շորս-հինգ բանաստեղծութիւն կարդացին՝ զգացմունքով, անկեղծ ու սիրուն:

Շնորհակալական խոսք ասելիս հայրիկը գունատ էր, տխուր և բոլորովին փոխված. հուշումը դեմքի արտահայտութիւնը փոխել էր. «Ձեզ եմ դիմում, սիրելի աշակերտուհիներ: Այստոնը զրական տոն լինելուց բացի, հասարակական մեծ տոն է, ևս առավել, երբ տոնվում է օրիորդաց կողմից: Եթե մի տղա կրթելով մի անհատ ենք կրթում, ապա մի աղջիկ կրթելով կնշանակի մի ընտանիք կրթել:

Դուք չեք ինձ պարտական, այլ ես եմ՝ ձեզ երախտապարտ, իմ թանկ մանուկներ, կյանքիս ամենապայծառ և ամենալավ օրերն ու վայրկյանները դուք եք ինձ տվել, ձեզ հետ եմ եղել, ձեզանով եմ ապրել:

Նդեք միշտ՝ այդպես պարզ ու պայծառ, աստղերի նման շողշողուն և ինչպես աստղերը արտացոլվում են ծովի մեջ, այնպես էլ դուք եղեք միշտ այդպես զվարթ ու աշխույժ: Եվ երանի ձեր հասուն կյանքում շտեմներ չայն, ինչ որ ապրում ենք մենք հիմա...»:

Ճանապարհին խոսելով՝ տուն էինք դառնում. շատ էր դուր եկել աշակերտուհիներից մեկին՝ Լուսիկ Հովսեփյանի պարը. «Ինչքան նրբութիւն ու կանացի վայելչութիւն ուներ, ինչքան էր գրավիչ ու սիրուն:

Գերենիկը նուրբ ճաշակի տեր, տաղանդավոր և շնորհքով մարդ է. ափսոս կյանքը ձախող է եղել նրա համար, պայմանները՝ վատ. ինքն էլ մի խարաբ շեշտ ունի իրեն մեջ, որ փչացնում է ամեն ինչ և թերևս դրա պատճառով է, որ սիրված չի էնպես, ինչպես կարող էր լինել»:

Ապրիլ 1

Երեկոյան, սենյակումս հավաքված, ընկերուհիներիս հետ զրույց էինք անում. խոսքը կանանց մասին էր, սիրո, երջանկութեան:

Այդ ժամանակ հայրիկը ներս եկավ սենյակս, և զրույցը ավելի հետաքրքիր դարձավ:

— Երջանկութիւնը դո՛հունակութեան զգացմունք է. մարդուցն է կախված: Երջանկութիւնը ամեն օր կա. մարդը պիտի ուզենա, կարողանա,— ասաց հայրիկը:— Սերը խանդ ունի, բայց քանի մարդը կուտուրական է և ինտելիգենտ, խանդը այնքան նուրբ է ու թույլ. և ամեն մարդ Օթելլո չի լինի, որ սերը սպանի: Սիրողը չի կարող սերը սպանել:

— Բարոյական աշխարհում փոփոխութիւնները դժվար են կատարվում:

— Կինը չի ապրում հիմա. նա պիտի փոխվի, նոր կինը պիտի գա— էն կլասիկ ազատ կինը պիտի գա իր կլասիկ գեղեցկութիւններով և առողջութիւնով, նաև փր հոգեկան արժանիքներով ու կարողութեամբ:

— Էս խալխովն էն երջանկութիւնը բերելն անհնար բան է:

— Նոր պայմաններ պիտի ստեղծել, էն ժամանակ միայն հնարավոր կլինի նոր ու երջանիկ կյանք:

Ապրիլ 14

«Բնազգը մեծ բան է,— ամենաէականն է ու ամենակարեւորը. և առողջ բնազգը քչերին է տված. շատերն են զգում, քչերն են կանխատեսում:

Այդ օրը «Աղբյուր-Տարազ» հանդեսի Գեղարվեստական սալոնում կայացավ հայրիկի ծննդյան 50-ամյակին նվիրված երեկո: Հայրիկն իր շնորհակալութեան խոսքում շեշտեց այն նշանակալից հանգամանքը, որ իր հոբելյանը տոնվում է Տ. Նազարյանի՝ հարկի տակ, բժիշկ Նավասարդյանի նա-

1 Նազարյան Տիգրան— «Աղբյուր» մանկական հանդեսի և «Տարազ» պատկերազարդ շաբաթաթերթի խմբագիրը

խաղաճուճամբ և Ջ. Տեր-Գրիգորյանի՝ քարտուղարութեամբ.
«...Առաջին անգամ իմ բանաստեղծութիւնները տպւել են
«Աղբլուրում», երբ ես դեռ անհայտ մի պատանի էի: Մոսկ-
վայի ժողովածուն 1890 թ. լույս տեսնելուց հետո, լավ եմ
հիշում, նավասարդյանը, պատահելով ինձ, գտվեց, խրախու-
սեց, թե տվա՛վ ինձ: Դա նշանակալից է մանավանդ այն
պատճառով, որ ես ու իմ շրջանի մյուս սկսնակ բանաստեղծ-
ները անբարյացակամ ընդունելութիւն գտանք շատերի կող-
մից: Ջ. Տեր-Գրիգորյանն էլ իբրև իմ վաղեմի բարեկամ ըն-
կեր, հեռւից միշտ խրախուսել, դրվատել է իբրև գրականու-
թյան նախանձախնդիր մի մարդ, հենց նա էլ իմ ծննդյան
տարեդարձի դադոնիքը բաց արեց և հորելյանս տոնելու
պատճառ եղա՛վ»:

Ապրիլի 17

«Մարդ ինչ որ տա, էն կըշահի, շուայլ եղիր, սիրտդ բաց»,—
հիշեց հին իմաստուն խոսքը:

Ապրիլի 20

Ձատկի առավոտյան հայրիկին այցելութեան եկան Շիր-
վանդադեն, ապա և ԴեմիրՏյանը: 1

Ապրիլի 22

Հայրիկի մոտ հյուրեր կային: Խոսում էին մեր կյանքից,
վերջին տարիների շարժումներից:

— Մեր մեջ հայդուկային բան կա, հայդուկային մի ամ-
բողջ գրականութիւն ունենք և դա շատ է բնորոշ:

Հետո անցավ վրաց գրականութեանը:

— Շոթա Ռուսթաւիլին մեծ գրող է. նրա գրվածքը՝ շատ

է գեղեցիկ, պատկերներով լիքը, սահուն հոսում է մեծ ու
խաղաղ գետի նման, բայց Բալմոնտը հաջող չի թարգմանել,
թեև նա վիրտուոզ է, խոսքի վարպետ... կարողանում է հան-
գեր սարքել, իրար գցել, բայց հոգին, շունչը չի տվել, չկա,
մեղցրել է:

— Լավ թարգմանիչներ մենք չունենք, Սաղաթյանը «Դեի»
ոգին, շունչը տվել է, բայց եթե բառացի հետեւելու լինենք.
կտեսնենք, որ էն չի: սխալ թարգմանած տեղեր ունի:

Մտքումս կա եթե ոչ բոլորը, գոնե մի քանի հատված
թարգմանելու Շոթա Ռուսթաւիլուց և Ֆիրդուսու «Ռուստամ
ու Զոհրաբից»¹:

Մայիս

Վերջին ամիսները հոգնել էր բազմաթիւ այցելութիւն-
ներից, անվերջ դիմումներից, դանազան խնդրատուններից:

Պարապելու մեծ պահանջ էր ղգում, կենտրոնանալու, խո-
րանալու մեծ ցանկութիւն կար մեզը, բայց շարունակ խան-
գարում էին և հնարավորութիւն չէր ունենում պարապելու:

— Ի՞նչ լավ կլինէր, եթե մի անհայտ մարդ լինէի, էսքան
կապերն ու մեծ շրջանը չունենայի: էս բոլորը շատ են խան-
գարում: Ա՛յ թե Իգատակը կարողանամ գրելս բերեմ, գրա-
դարանս էլ տեղափոխեմ, մենակ ձեզ ու մի քանի մոտ մարդ-
կանց հետ հեռանամ, կտրվեմ էս գործերից էլ, աշխատանքից
էլ ու նստեմ ինձ համար պարապեմ:

Իմ գիրքն ու դրութիւնը շատ են խանգարում ինձ, շատ:

Հունիսի 25

Ճաշին Հովհաննես Հովհաննիսյանն էր մոտը. Բաքվից
նոր էր եկել: Խոսում էին գրականութեանից, գրողների անա-
պահճուղ դրութիւնից:

— Գրականութիւնը պատահականութեան ենթակա չպիտի
լինի,— ասում էր հայրիկը,— այլ ընդհանուրի հոգացողու-

¹ Ֆիրդուսու «Շահամեի» գլուխներից մեկը

¹ Տեր-Գրիգորյան Ջալալ— Թումանյանի երիտասարդական տարիների
ընկերներից

² «Վագրենավորը» պոեմը

թյունը պիտի ունենա, բայց մեզանում էդպես չի մեր գրողները ամեն պատահարի ու պատահականության միշտ էլ ենթարկվել են: Մեր գրականության ու գրողների դժբախտությունն է սա — միշտ ցրված, իրարից կտրված ու զրկված և անապահով դրություն մեջ:

Հովհաննես Հովհաննիսյանն ամսոսում էր, որ ապրում էր Բաքվում և կտրված է հայ կուլտուրայի կյանքից:

— Արդեն ծերացել ենք, — շարունակեց Հովհաննիսյանը, — հիմա մեզ հարկավոր է հանգիստ, անպահով կյանք, որ նստենք ու մեզ համար գրականությամբ պարապենք: Գրականությունն ինձ համար ազատ ժամերի պարապմունք է եղել, ի միջի այլոց եմ պարապել, շարունակ պաշտոններ եմ ունեցել ու դանադան հոգսեր: Հիմա թարգմանում եմ էսքիլևսի «Պրոմեթեոսը»: Օտար լեզուները լավ գիտեմ, եթե հնար լինի կթարգմանեմ և ուրիշ գործեր գրական շատ արժեքավոր երկեր կան, կարող էի թարգմանել հունարենից: Ա՛խ, էս էջմիածինը ինձ շատ է վառել...

— Ինձ էլ, — խոսքը շարունակեց հայրիկը, — 1915 թվի գարնանը, կաթողիկոսի կոնդակով, իմ ծախսով՝ գնում եմ Ալաշկերտի հովիտը: Էջմիածնով անցնելիս խոստացան տղիս թեպետև թոշակով, բայց պահել ճեմարանում՝ մինչև վերադարձս: Ինձ ճանաչող, բաներով ճամփու են դնում, ես դենն եմ գնում, սրանք, դեռ ես չվերադարձած, տղիս ճեմարանից հեռացնում են, դեսը զրկում:

— Բա ինձ մի կտոր հողի համար ինչքա՛ն ղալմաղալի մեջ գցեցին..., — մտաբերեց Հովհաննիսյանը: Հետո անցավ ուրիշ նյութի.

— Շատ եմ սիրում ձկնորսությունը, որսորդությունը: Ապրելու ձևը, անտեսությունը լավ գիտեմ: Էդ կողմից հերս հե՛՛ձ շատ բան է տվել ու շատ բանով եմ պարտական նրան: Շատ եմ սիրել իմ հորը, մեծ ու լավ մարդ էր, — ավարտեց Հովհաննիսյանն՝ իր խոսքը:

Երեկոյան, երբ խոսք ընկավ կանանցից, թե որն է իսկական լավ կինը, մենք էս կամ էն աղջկա կամ կնոջ անունն էինք տալիս, հայրիկը ոչ մեկին չհավանեց, ոչ մեկի վրա կանգ չառավ. ամեն մեկի էս կամ էն բացն էր տեսնում:

— Կուրջ, լավ կին չկա: Մենք շունենք հետաքրքիր կանայք, որ ունենան հողու խորություն, նրբություն և ղգայնություն. նրանք ունեն ֆիզիկական ղգայնություն, բայց ոչ հոգեկան. x-ը հետաքրքիր է որպես ղրուցակից, ունի գրական, գեղարվեստական տեղեկություն, ծանոթություն, բայց կանացի չէ, կնոջ նրբությունն ու գրավչությունը չունի, որ հետաքրքիր:

Եզակի դեմք է ժորժ Զանդը: Դա՛... շունենք, չկա՛ էլի, հեշտ բան հո՛ չի՞ լավ կին լինելը...

Նա բարձր կարծիքի էր ուսս կանանց մասին: Այդ տպավորությունը խորացել էր 1912 թվականին Պետերբուրգ եղած ժամանակ. — Ռուս կինը ինտելիգենտ է, գրականություն գիտի, կարդում է, գրում, հետաքրքրվում է գիտությունով և իր շրջապատի կյանքով:

— 1912 թվականի մարտին. բանախց աղատվելուց հետո, ինձ հրավիրեցին րնթիքի. մի փոքրիկ շրջանում քսանից ավելի ինտելիգենտ ուսս կին կար. իրենց բանաստեղծներին անդիր գիտեին և լա՛վ գիտեին: Եվ ի՛նչ գեղեցիկ էին արտասանում: Ինչքա՛ն պարզ բնավորություն ունեն նրանք, հեշտ, թեթև, հաճելի...

Այնտեղ ծանոթացել էր Շչեպկինա-Կուպերնիկի և մի բանի այլ մտավորական կանանց հետ, էքսպրոմտ ոտանավորներ փոխանակել:



1919 թվականի ամառը, հուլիս ամսին, մենչևիկները Թիֆլիսում ձերբակալեցին Աղայանի որդուն՝ Մուշեղին, որպես բողևիկի: Հայրիկը միջամտեց, որ ազատեն:

Այդ օրերին հայրիկի հետ միասին գնացինք Օրթաճալի բանտը: Շոգ օր էր. տեսակցություն թույլ տվին բոլորի հետ

միասին: Երկու կողմից հեռու տարածության վրա ցանկապատված էր, մեր խոսակցությունը դժվար էր լսվում, բոլորն աղմկում էին, չէինք կարողանում իրար հասկանալ: Ուտելիք էինք տարել, հանձնեցինք ու վերադարձանք:

Մի քանի օրից հետո հատուկ ջոկատի պես Կեղիան իր մոտ հրավիրեց հայրիկին որպես երաշխավորողի: Հայրիկը համոզում էր, որ Մուշեղ Աղայանը քաղաքական գործերի չի խառնվում: Ասել էր. սա ի՞նչ բուլլեիկ է, սա հայ քրիստոնյա է, իսկի միս էլ չի ուտում, վեգետարյանեց՝ է...

Երբ դուրս են գալիս Կեղիայի մոտից, հայրիկը Մուշեղ Աղայանին ասել է. «Ի՞նչ էիր սարսաղ-մարսաղ խոսում. ոս ասում եմ դու բուլլեիկ չես, դու թե՛ երևի մի բան կա, որ մեզ բանտարկել են... Գործդ ուզում ես քո ձեռքով նորից փչացնես ու նորից նստեցնեն»:

Երեք օրից, կարգադրության համաձայն, Մուշեղ Աղայանը մեկնեց Հայաստան, որտեղ դեռևս դաշնակցական կառավարությունն էր: Մայիսյան ապստամբությանը մասնակցելու համար նրան Դիլիջանում ձերբակալում են և ապա փոխադրում Երևանի բանտը. ջուլթակը վերցնում են: Այդ օրերին դարձյալ հայրիկը միջամտում է և միջնորդում դաշնակցական կառավարության առաջ՝ մեղմացնելու նրա պատիժը և վերադարձնելու ջուլթակը:

Օգոստոսի 1

Ամառը մնաց Թիֆլիս: Երեկոները երբեմն գնում էինք կինո: Թեև էնքան էլ չէր սիրում կինոն և գնալիս էլ հիշում էր Աղայանին, որը շատ էր սիրում և ազատ երեկոներին կինո էր գնում:

Այդ երեկո գնացինք Արտիստական թատրոն, «Ժաննա դ'Արկ» կինոնկարն էր ցուցադրվում: Գեղեցիկ կտորներ կային. առանձնապես գրավիչ էին հայրենասիրական ոգևորության պատկերները:

Վերադարձին ասում էր.

¹ բուսակեր

Ոգևորությունը ամեն բանի գաղտնիքն է: Մեծությունը սղեորություննով է: Ոգևորությունը և կամքի ուժը ամեն ինչ կարող են անել. շարժող գործոններ են դրանք: Նույնը և գեղարվեստի մեջ է. առանց ոգևորության, շնչի՝ գեղարվեստը յշինչ է: Բայց էս տեսակ ոգևորությունը— հայրենասիրությունը— հիմն անախրոնիզմ է: Շատ ավելի արժեքավոր են կուլտուրական, հոգևոր մեծությունները և ոգևորությունը:

Օգոստոսի 3

Կարդում էինք Գերշենդոնի «Образы прошлого» գրքից Պուշկինին վերաբերող գլուխը՝ «Мудрость Пушкина»: Հայրիկն ասաց.

— Այսպես կոչված ապատիայի շրջանը իսկապես հղացումի շրջանն է, մեծ ստեղծագործությունների շրջանը: Էդ ժամանակն է, որ մարդ լցվում է, խորանում է, հասունանում է, թեպետև առանց հուզումների ու արեկոծումների: Ինչպես շերամի որդը բոժոժը շինելիս, երբ սկսում է ծածկը վիլ, փակվել ու ներսից հյուսում է իր բոժոժը, ասում են՝ մեռնում է. բայց դա հենց էն ժամանակն է, որ նա մեռաբար շինում է:

...Ամբոխը բանաստեղծին պարապ է կարծում, երբ որ նա չի գրում. մինչդեռ նա հենց էն պարապ ժամանակն է, որ ստեղծագործում է, կազմակերպվում է. էդ նրա ամենախորհրդավոր շրջանն է. բանաստեղծն էդ ժամանակ նման է հղի կնոջ:

Օգոստոսի 11

«Չեմ սիրում էն սովորական, заурядный մարդկանց, որոնք ապրում են միայն ուտելու համար, շունեն հոգեկան բարձր պահանջներ ու ցանկություններ:

Մարդը ձգտում պիտի ունենա լավանալու, բարձրանալու միշտ պիտի ձգտել դեպի կատարյալը»:

Երեկոյան եկալ Ռոմանոս Մելիքյանը՝ նոր ձայնագրած ժողովրդական երգերով: Նվագելուց հետո զրույցը երգի, պոեզիայի շուրջն էր: Հայրիկի տրամադրութիւնը բարձր էր: Ժողովրդական երգերի մասին խոսելուց հետո, անցալ «Հաղարան բլրուլին»:

— «Հաղարան բլրուլը» առաջին անգամ սկսել եմ գրել Շուպովերում 1898 թվականին: «Երգչի վիշտն» էլ էն ժամանակ եմ գրել:

Մոտ 50—60 վարիանտ ունեմ հավաքած: Սկսել եմ գրել որպէս պոեմ. հետո ուզում էի որպէս դրամատիկական պոեմ գրել, քաղաքական հանգամանքները խանգարեցին:

Բայց շատ հոյակապ, շքեղ ու գեղեցիկ բան է մեր «Հաղարան բլրուլը»: Եվ եթե մեր «Հաղարան բլրուլը» համեմատենք արևմտյան «Կապույտ թռչունի» հետ, հսկայական տարբերութիւն կա: Արևելյանը խոշոր առաւելութիւն ունի՝ սանձարձակ ֆանտազիա՝, էկզոտիկ բնավորութիւն, խորութիւն, նրբութիւն. շատ քշերն ունեն էս տեսակ բան: Կատարյալ հեքիաթ է: Միայն հունական միֆոլոգիան թերևս ունի էս հարստութիւնը:

Մի ժամանակ մեր «Վերնատունը» շատ էր զբաղվում «Հաղարան բլրուլով»: մեծ տրամադրութիւն կար. և մեծ ազդեցութիւն արալ վերնականների վրա: Գերենիկի «Կյանքի տեսիլը», Շանթի «Հին աստվածները» ազդեցութիւններ են «Հաղարան բլրուլից»:

Մեկ էս պոեմը, մեկ էլ մի բանի դրամա ունեմ սկսած, եթե գրեմ, գոհ կլինեմ: Ես ինձ դրամատուրգ եմ համարում: Գրած էլ ունեի՝ «Արտավազդը», «Հովհաննէս թագավորը» և ուրիշները, ու ոչնչացրի: Զարմանալի լալ աշխարհ է էդ աշխարհը՝ ինձ լալ էի զգում և ինքնիշխան էի միանգամայն: Մեծ տրամադրութիւն ունեի դրամա գրելու, իսկ հիմա փակվեցին իմ առաջ էդ աշխարհի դուները: Էս ժամանակը, դրութիւնը չեն տրամադրում, չեն թողնում, որ մարդնստի պարապի: ոչինչ չկա... Ես էլ հիմա էն կորովը, էն առողջութիւնը չունեմ, էն սանձարձակ ֆանտազիան էլ չկա...

Գրասեղանի աջ արկղից հանեց «Հաղարան բլրուլի» պորտֆելը և կարդաց մի կտոր: Հետո շարունակեց. — «Հաղարան բլրուլը» գեղարվեստի աշխարհն է— է՛ն կախարդական աշխարհը, ուր քեզ կտանի ոգևորութիւնը: Ոգեվորութիւնն էստեղ հրեղեն ձին է՝ Պեգասը: Ոգևորութիւնը խենթ է ու սանձարձակ: Շատ նուրբ պիտի լինել, կոպտութիւնը նա չի տանի: Բայց ոգևորութիւնը սահման չի ճանաչում՝ նա կտանի, կգնա... զգույշ պիտի լինել, ոսկի սանձով պիտի պահել— այսինքն՝ շափի զգացումով, որ ամենակարևորն է կախարդական աշխարհը մտնելուց հետո: Նորից կարդաց մի կտոր:

(Համփարածնում կանգնած է ծերը, գլուխն ամպերում):
— Բարձ՛վ, պապի, որ կանգնած ես գլուխը վեր ամպերում:

(Ծերը ամպերից).
— Ես նա եմ, որին ամենքն են նայում, ինքը ոչ ոքի, Ես նա եմ, որին ամենքն են հարցնում, ինքը ոչ ոքի. Սկիզբն ու վերջն եմ ես— Եգեբե՛ն ու մեջն եմ ես, Անհունն եմ ես, Անհունն եմ ես— Անհուն, անես— ամենն եմ ես...

Սմբողջ հատվածը կարդալուց հետո շարունակեց զրույցը. «...էստեղ այգին զգացումներն աշխարհն է, ծերը՝ ժամանակը: Եվ ապարանքը գնալու համար շատ դժվարութիւններ գան առաջը՝ դաւանութիւններ, ծա՛ղր, նեղութիւններ, ամեն ինչ պիտի տանես, մաքառես՝ ապարանքը մտնելու համար: Հաստատուն ու համարձակ պիտի գնալ էդ անդարձ ճանապարհով, կյանքի ցավերին նշանակութիւն շտալ, անցնել: Շա՛տ հետաքրքիր, շա՛տ բարձր ու խորը աշխարհ է...
...Գիտե՛ս ինչ կա, բարոյական աշխարհում գիտութիւնն անկարող է. ցավեր կան, որի դեմ գիտութիւնը թուլ է, գեղարվեստը՝ կարող:

Հետո գալիս է «Հաղարան բլրուլի» երկրորդ մասը՝ Մի-

նամ թագավորի հեքիաթը՝ վշտերի աշխարհը, երբ հերոսը Արեգը, գնում է, սրտագետ դառնում, թե Սինամը գյուլին ինչ արավ, գյուլը Սինամին ինչ արավ — այսինքն՝ սիրտը սերին ինչ արավ, սերը սրտին ինչ արավ...»:

Նոյեմբերի 13

— Հովհաննեսի փիլիսոփայություն մեզ ամենից շատ սիրել եմ նրա՝ ամենքի հետ «ցոցխալ ուտելը»: Ամենքի հետ քեֆ է անում, լավ վերաբերվում: Կյանքում դա է կարևորը, — ասաց Շանթը, երբ ճաշին մեզ մոտ էր:

— Բանը դա է, ախպեր, լավ եղիր, լավ կողմից բռնիր, լավը փնտրիր ու լավ վերաբերվիր, — հաստատեց հայրիկը:

Նոյեմբեր

Շանթը մեզ մոտ էր: Ճաշից հետո հայրիկի հետ միասին խոսում էին բանաստեղծներից:

— Ամենից ազվորը նա է, որ մարդը գրական որևէ աշխատանքի կամ մտածմունքի մեջ խորանուզված աշխատում է և ստեղծագործում: Մենք փակ գրքեր ենք հասարակության համար, նա մեղ չի կարող հասկանալ, մեր խորությունն իմանալ, մեր աշխարհը տեսնել... — ասաց Շանթը:

— Բանաստեղծը և բանաստեղծությունը դժվար հասկանալու բաներ են, — հաստատեց հայրիկը:

Դեկտեմբերի 6

Առավոտը կարդաց իր նոր գրած քառյակներից չորսը, բոլորն էլ լավն էին և լսողները հավանեցին:

Հետո սկսեց Արևելքից խոսել. «Արևելցի ենք, բայց Արևելքը չենք ճանաչում. ամոթ է: Չենք ճանաչում ընդհանրապես մեր հարևաններին, ծանոթ չենք նրանց գրականությանը: Դարերով ապրում ենք իրար կողքի, հարևանություն ենք անում իրար հետ, բայց չենք իմանում ի՞նչ է նրանց միտքը, նրանց արվեստը...»:

Դեկտեմբերի 8

Այդ օրերին հայրիկի հետ գնացել էինք Դոստոևսկու «Ապուշը» դիտելու: Իրենց դերերում հաջող էին Խաչակ Ալիխանյանը (Իշխան Միշկին) և Միքայիլ Մանվելյանը:

Վերադարձին խոսում էր Դոստոևսկու մասին. «Դոստոևսկուն չեմ սիրում. դժվար է, ծանր, մռայլ. պայծառ չի, մութն է ու դաժան»:

Նա ունի հանճարեղ տեղեր: Շատ մեծ ու հետաքրքրական տիպ է Ապուշը: Դոստոևսկին խլի է նրանից խելքը, որպեսզի ցույց տա նրա միամտությունը, պարզամտությունը, սիրտն ու խղճմտանքը:

Մեծերի գործերը պետք է կարդալ ու տեսնել...»:

Դեկտեմբերի 10

Տրամադրությունը շատ էր վատ: Սենյակում փակված պարապում էր. գունատ էր, դժգոհ ինչ-որ բանից:

Դեկտեմբերի 11

Շատ էր դյուրագրգիռ ու զգայուն. տրամադրությունը հաճախակի փոխվում էր: Մարդկանցից խուսափում էր. այցելություններ չէր անում, գերադասում էր ընտանեկան երեկոներն ու զրույցները և այդպես իրեն ավելի թեթև էր զգում:

1919 թվականի աշնանից արդեն շատ էր հոգնած. ոչ ոքի չէր ուղում տեսնել... Սկզբներում շարունակ հետը մարդ էր բերում տուն՝ ճաշի, զրույցի. մենակ չէր մնում, իսկ հիմա սիրում էր մենակ մնալ:

«Էլ մարդ չեմ ուղում: Երեխաներիս հետ եմ ուղում լինել, իմ մոտ, շատ մոտ մարդկանց հետ»:

Ման գալու, մարդկանց տեսնելու տրամադրություն էլ չունեմ»:



Հայրիկի կյանքի հոգնած ու կոտորված տարիները զուգարկապես ցրտեցին մեր շահել, թուլուտու տարիներին:

Այն ժամանակ, երբ մենք տասը երեխա թե առած թռչում էինք դուրս՝ վազում, վառվում ու որոնում, հայրիկն ամենքից հոգնած, ամենքից փախած, դարձել էր տուն, հանգիստ էր փնտրում՝ խաղաղ օրեր, գրական հանգիստ աշխատանք: Եվ բնական էր մեր ներքին դժգոհությունն ու հայրիկի անհանգրստանալը, բարկանալը. «Ի՞նչ կա դուրսը, ամեն ինչ ներս եմ բերել, տունը լցրել: Նստեցեք, կարդացեք, խորացեք, մի հարցով դբաղվեք, մի՛ թոեք, մի՛ ցրվեք...»:

Իսկ երբ խոսք էր լինում մեղանից որևէ մեկի Մոսկվա կամ Պետերբուրգ գնալու, ուսումը շարունակելու, նույնիսկ Թիֆլիսից դուրս որևէ էքսկուրսիայի մասնակցելու մասին, ասում էր. «Մեր տունը ձեզ համալսարան, նստեցեք, կարդացեք ու դարդացեք: Ո՞ւր պիտի գնաք, որ էստեղից լավ լինի. ուր էլ գնաք նորից տուն պիտի դառնաք...»:

Դեկտեմբերի 12

«Կենսագրությունս եմ ուզում գրել, հիշողություններ իմ կյանքից: Շրջանների պիտի բաժանեմ, մի տասը շրջան երևի կլինի: Առաջին շրջանը գյուղի կյանքն է — Դսեղը, ամենագեղեցիկ շրջանն է կյանքիս, հեռու և անձանոթ քաղաքի կյանքին, կտրված էր կյանքից. փարթամ ու խիտ անտառների մեջ եմ անցկացրել մանկությունս և լավ էլ հիշում եմ:

Հետագայում ունեցել եմ ավելի հետաքրքրական շրջաններ, բայց դա կողմնակի մարդու համար, իսկ ինձ համար էն տարիներն էին լավը, հետո էլ Զալալօղլու երկու-երեք տարին»:



Երեկոյան իրեն լավ չէր զգում. տխուր էր ու վշտացած. մե՞ք հյուրեր էինք ընդունել առանց իր տրամադրությունն

իմանալու, այդ բանից դժգոհ, մեզ իր սենյակը հավաքեց ու սկսեց երկար խոսել. «Ոչ ոքի մի ընդունեք. ժամանցի համար են դալիս ինձ մոտ: Ես խոսելու ցանկություն չունեմ. ոչ էլ ֆիդիկական հնարավորություն. նրանք կարող են չհասկանալ, բայց դուք պետք է հասկանաք, որ խորտակված մարդ եմ արդեն ու հոգնած»:

Շատ են բարդ բանաստեղծի հոգեկան ավելոծումները, վայրիվերումները, հասկանալն էլ շատ է դժվար, ամեն մարդու բան չի. և բանաստեղծը ամենից շատ նուրբ, մտերիմ մարդու կարիք ունի, որ ամենայն անձնվիրությամբ հասկանա ու սիրի:

Ամեն մեկը ինձ հարազատ էր ու մոտ: Ամեն ինչ ձեզ համար է, ձեզ հետ եմ ուզում լինել, սիրոս բանալ. չուզե՞ի տեսնել ամենքիդ կատարյալ ու լավ: Միայն հայրական ղգացումը չի, դրա հետ միասին կա ավելի խորը, ավելի ուժեղ ու նուրբ ղգացում, մի ղգացում, որ նվիրել եմ ձեզ:

Հենարանի կարիք ունեմ, հոգեկան ջերմության: Կորուստների ու ավերի ժամանակ մարդ ավելի կարիք ունի ջերմ, մոտ մարդու:

Դուք վայելքից եք խոսում և կարծում եք ես կյանք եմ վայելել: Կյանքս կոխվ է եղել ու տանջանք. ջահելությունս անցել է դժվար ու ապարդյուն: Զահելությունը շատ թանկ բան է, օգտվել պիտի իմանալ, ապրել, վայելել՝ և դա հեշտ չի. դա էլ մի տաղանդ է, ճաշակի խնդիր:

1915—1916 թվականները, մեր օրերի ավերն ու ժողովրդի գաղթը, Արտիկը կյանքս խորտակեցին:

Արդեն մինչև եղերքն եմ հասել, սահմանը շատ է մոտ, մնացել էք դուք միայն:

Ոչ ոքի չեմ ուզում, ոչ մի տեղ. նույնիսկ ամենամոտիկ բարեկամներին ու մարդկանց չեմ ուզում տեսնել, հետները խոսել...

Քիչ բան չեմ կորցրել՝ հայրենի տունս ու նրան՝ Արտիկին, մեծ կորուստներ են, որպեսզի նույնը մնայի:

Կրթչ ու խորը պիտի նայել, զգուշ ու նուրբ պիտի լինել. հասկանալը մեծ բան է. լավ վերաբերմունքը, ղգացմունքը ինքնաբերաբար, խորը պիտի լինի:

Բարձր ցանկություններ պիտի ունենաք, ոչ սովորական, անօրյայից բարձր: Ամեն ինչ ձեր ներքին աշխարհում փրկաբեր, տեսեր: Մի՛ ցավեք, մի՛ մանրացեք. կենտրոնացե՛ք, բարձրացե՛ք, խորացե՛ք:

Գուցի սա իմ կյանքի դժբախտությունն է, որ ամենաբարձրը, ամենախորը ու նուրբ կապերով կապված եմ ընտանիքիս հետ, ձեզ հետ, այդքան ուժեղ սիրում եմ ձեզ. բոլորը զարմանում են այս նախրական զգացմունքիս վրա: Շանթն ասում է.— Բանաստեղծություններդ ինձ այնքան շեն զարմացնում, որքան այն, որ դու այդքան հմտորեն ու անձնվիրությամբ ընտանիք ես պահում, բարձրացնում ու այդքան հոգում:

...Վայրկյանը շատ թանկ ու կարևոր բան է. մի վայրկյանում անմիջապես շատ բան կարելի է զգալ, հասկանալ, քան տարիների ընթացքում: Արթուն եղեք, շրջահայաց, միշտ պատրաստ:

Ամեն մեկիդ պակասությունը ինձ ցավ է պատճառում...

Վերաբերմունքը, խորը, անկեղծ զգացմունքը սրտից պիտի գա, որ մարդ զգա այդ և ոչ թե ստիպված անի:

Մարդ խոր ու տևական զգացմունքների ընդունակ պիտի լինի: Ես կուզեի ամեն մեկիդ մեջ տեսնել իմ շունչը, իմ հոգու մի մասը...»:

Դեկտեմբերի 13

Կարդում էր Պ. Սենտիվի «Симуляция чудесного» գիրքը: Իրեն վատ էր զգում. գունատ էր, տխուր, վշտացած: Մենակ էր, առանձնացած. ինչ-որ բանից դժգոհ էր: Նյութական դրությունն էլ ծանր էր, թեև մեղ չէր ուզում ցույց տալ:

Դեկտեմբերի 14

Անտրամադիր էր: Ճնշում էր նաև նյութական նեղ վիճակը: Անուշը հիվանդ էր:

Կարդում էի Գ. Սրվանձությանի գիրքը, ժողովրդական երգեր էի ընտրում հայ կնոջ մասին: Մեր ուսանողական միությունը:

Եւոսմ զեկուցում պիտի կարգայի «Հայ կինը ժողովրդական երգերի մեջ»: Հայրիկն այդ օրն ինձ մի թանաքաման նվիրեց:



Երեկոյան Դեմիրճյանն էր մտաը, երկուսն էլ հոգնած էին և գրական խաղաղ կյանք էին երազում:

— Կարճ է մարդու կյանքը, բայց իմաստուն, խորհրդալից, — ասում էր հայրիկը: — Պապս մոտ 105 տարի ապրեց, մեռնելիս ասել էր. «Արժե՛ր էս մի քանի օրվա համար ծնվել ու տանջվել...»:

— Իմ իդեալն է մի տարի շխտել, — ասաց Դեմիրճյանը:

— Ես կուզեմ այդ ոչ թե մի տարի շխտել, այլ մի տարի քնել, — պատասխանեց հայրիկը:

Դեկտեմբերի 15

Բժիշկ Զարգարյանը և Դեմիրճյանը հայրիկի մոտ էին: Հայրիկը իր նոր քառյակները կարդաց. շատ հավանեցին:

«Քառյակը պոեզիայի մի նիստույուն է, նուրբ ճաշակի բան: Քառյակները պիտի կարդալ հանգիստ ու ծանր, և ամեն մարդ չի կարող հասկանալ, զնահատել: Մարդիկ կան, որ քառյակները ոտանավորի նման են կարդում. պարզ տեսնում ես, որ չի հասկանում ինչ բան է քառյակը»:

Չէր կարողանում տանել, երբ իր ներկայությամբ քառյակները վատ էին կարդում կամ շտապ: Ինքը կարդում էր զանդաղ շեշտով, հատ-հատ, ընդմիջումներով և ամեն մեկը կարդալուց հետո գրուցում էր, բացատրում: Այդ երեկո իր նոր գրած քառյակներից մի քանիսը կարդաց: «Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն...», «Հե՛յ, ագահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքըդ կարճ...», «Քուն թե արթուն օրերիս շատը երազ եղավ...»:

— Քառյակներ գրելը համաճարակ է դարձել Իսպանիա. արդեն շատերն են գրում, բայց դրանք փայլուն քարեր են և ոչ գոհարներ, հասկացողը կշոկի:

Մեր գրականության մեջ թյուրիմացություններ շատ կան։
Մի լավ քննադատի մեծ կարիք ունենք, որ ամեն մեկին իր
տեղը ցույց տա, ամեն մեկին իր տեղը դնի։



«Անուշի» վերջին կտորը անմուրազ սիրահարների մասին
(«Համբարձման գիշեր, էն դյութիլ գիշեր, կա հըրաշալի, եր-
ջանիկ վայրկյան») կարծում էի ժողովրդական ավանդություն-
ներից է, մի այլաբանություն, մանավանդ, որ «Ակնա երգերի»
մեջ նման երկու ժողովրդական երգ կա։ Հարցրի հայրիկին,
պարզվեց, որ նան է (իր մայրը) պատմել և շատ ուշ, պոե-
մը գրելուց հետո, երբ տպվելին է հղել, գրել է ու կցել
պոեմին։

Ասում էր, որ նանը ավանդություններ ու զրույցներ շատ է
պատմել։

Գեկտեմբերի 16

Երեկոյան հավաքված էինք հայրիկի սենյակում. մեր ըն-
տանեկան հերթական գրական երեկոներից էր։

Կարդաց մի հատված Նիզամու «Լիլլի և Մեջնունից» ու
հետո սկսեց իր զրույցը «Սա Արևելքի «Ռոմեո և Ջուլիետն»
է, անմուրազների սերը։ Սկսվում է էն երգով, ինչ հրգով հս
լու «Անուշն» եմ վերջացրել։ Ափսոս Նիզամու իսկական թարգ-
մանությունը չկա...»։



Այդ երեկոն Օմար Խայամինն էր. կարդում էր Խայամի
քառյակները Գ. Փառնակի՝ թարգմանությամբ։ Այդ երեկո
առանձին շեշտով կարդաց հատկապես երկու քառյակ, որոն-
ցից մեկը հետևյալն էր.

1 Փառնակ Գ. (Ֆեհլյան Գառնիկ) — արևմտահայ առևտրական,
գրական հետաքրքրությամբ՝ թարգմանիչ. թարգմանել է Շեքսպիր և Օմար
Խայամ

Որչափ կրճատ և ոչ մեկին ցավ մի պատճառեք.

Քո բարկոտքյան հուրին յ՛բա ոչ մեկին մի նստեցներ,
Երե հավիտեական հանգիստ կփափագես —
Ցավակրե միշտ ու մի՛ ցավեցնե ոչ մեկին։

Օմար Խայամը մեծ անարխիստ է. չի ճանաչում ո՛չ կրոն.
ո՛չ ժամանակի բարոյական ուսմունքներ կամ հայացքներ։
Մեծ է, ուժեղ ու բարոյական բարձր գաղափարներ ունի. օրի-
նակ, ասում է. «Ցավակրե միշտ ու մի ցավեցնե ոչ մեկին»։
Խայամը Արևելքի խոշոր դեմքերից է։

Կարդաց Քուշակի երգերից։ Հետո, ինչպես միշտ, երբ
խոսք էր ընկնում գրական դեմքերից, անցավ Շեքսպիրին։
Հարցրինք, թե ո՞րն է մեծ՝ Գյոթե՞ն, թե Շեքսպիրը։ Սխալ հա-
մարեց հարցադրումը, և ոգևորված խոսեց Շեքսպիրից.

— Գյոթեն հանճարեղ ստեղծագործող է, բայց Շեքսպի-
րը ավելի մեծ է։ Նա դարհուրելի թափ ունի, խորություն,
ուժ, նրբություն։ Նա տարերային է, նա ինքը բնությունն է։
Ռնություն բոլոր երևույթները կան նրա մեջ՝ և՛ կայծակ, և՛
հեղեղ, և՛ արև, և՛ ծով, և՛ ամեն ինչ, բայց իշխողը արևն է։
Շեքսպիրն ինքը տիեզերքն է։ Գիտե՞ք նա ի՞նչ անդունդներ
սւնի և ի՞նչ խորություններ։ Հեշտ չի Շեքսպիրին կարդալը,
հասկանալը։ Պետք է նրան կարդալ, լավ կարդալ, շատ կար-
դալ, միշտ կարդալ։

— Փիլիսոփայությունը, կրոնը և բանաստեղծությունը ներ-
դաշնակված են նրա մեջ։ Նա ամբողջական է, կատարյալ։

— Մեծ գեղարվեստագետի հատկությունն է, որ թափանցել
գիտի, խորությունները սուզվել գիտի։

— Ո՞րն է Դոստոևսկու մեծությունը. նա մարդկանց մեջ
լավն ու վատը հավասար կերպով տեսնում է և ցույց տալիս։
Ամենաառաքինի մարդու մեջ տեսեք թե ի՞նչ կողմեր է դուրս
հանում և սրիկաների մեջ ի՞նչ լավ կողմեր գտնում։

Գեկտեմբերի 17

Երեկոյան խոսքը կանանց մասին էր, կանանց ազատու-
թյան, նբանց տնտեսական դրության։

— Մեծ բան է պայծառատեսությունը: Ես պարզ տեսնում եմ, թե ինչ լուծում պիտի ունենա էս խնդիրը: Օրինակ, կանանց հարցը: Էդ հարցի լուծումն ինձ համար պարզ է. ես գիտեմ, որ էս դանազան տրադիցիաները վերանալու են և մի օր շատ ծիծաղելի պիտի թվան մեզ էս բոլորը: Տնտեսական է, որ խանգարում է. եթե կինը տնտեսապես և իրավապես անպահովվի, խնդիրը շատ հեշտ կլուծվի:

Գեկտեմբերի 20

«Ամենաուժեղ բանը — ինտուիցիան է, պայծառատեսությունը, հայտնությունը: Նա կայծակի թուրք ունի՝ վայրկենապես լուսավորում է, հրաբուխի ուժ՝ կատաղի կերպով ժայթքում է:

Երազ, նախազգացում — դրանք մեծ բաներ են և կարևոր: Ինքնակենսագրության մեջ առանձին տեղ պիտի տամ իմ էրազներին, նախազգացումներին»:

Գեկտեմբերի 24

Երեկոյան հյուրեր շատ կային՝ պրոֆ. Տոտովյանը, Կիսիցյանը, Գորոզեցիին կնոջ հետ, Կուլեբյակինը և ուրիշներ: Այդ երեկո հայրիկն իր նոր քառյակներից մի քանիսը կարդաց: Տպավորությունն ուժեղ էր, բոլորը հավանել էին: Հետո ինքը սկսեց խոսել քառյակների մասին:

«Քառյակները շատ նուրբ, աղնիվ, խորը և գեղեցիկ բաներ են: Ես առաջ Պուշկինի, Լերմոնտովի ազդեցության տակ էի, հիմա Արևելքին եմ գալիս. գալիս եմ դեպի մերը — ազատագրվում ենք:

Քիչ բանաստեղծներ կան, որոնց միտքն ու սիրտը իրար ներդաշնակ լինեն, որ կյանքի փիլիսոփայությունն ու բանաստեղծությունն իրար զգեն: Էդ հազվագյուտ բանաստեղծներից է Օմար հայամը»:



«Հաղարան բըլբուլին» հաճախ էր վերադառնում տրամադրության լավ պահերին և հատվածներ կարդում: Այսօր նորից գրասեղանի արկղից հանեց «Հաղարան բըլբուլի» պորտֆելը, մի հատված կարդաց, նայեց ձեռագրին և ասեց ինքն իրեն խոսում էր. «Ինչքան քար եմ ժողովել, ամեն տեսակի ու գույնի անգին քարեր՝ գոհար, զմրուխտ, լալ, անվերջ... Ասես մի գեղեցիկ պալատ պիտի կառուցեմ...»:

Գեկտեմբերի 25

Երեկոյան Լևոն Բաշինջաղյանն էր մեզ մոտ (նկարչի տղան, Ն. Մառի աշակերտը): Հայրիկը նոր քառյակներ կարդաց, հետո սկսեց զրույցը:

«...Ստեղծագործության համար առանձին տրամադրություն է հարկավոր. ֆիզիկական և հոգեկան պայմաններ. հանգիստ ջղեր, պայծառ տրամադրություն:

Դժբախտաբար, մեր կյանքի պայմանները շատ են աննպաստ. վայրիվերումներն անվերջ ու ամեն տեսակի. շատ է դժար էս պայմաններում ապրելը, ստեղծագործելը:

Քառյակները հասուն շրջանի արդյունք են՝ իմաստության վեհություն:

Քառյակները մեղմ են, քնքուշ, խորը, շատ սեղմ ու բովանդակալից: Քառյակը գոհար է և անսպասան հղկված պետք է լինի:

Մի բան եմ նկատել, վերջին քառյակները գրել եմ միշտ ձմեռը՝ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, ինչպես երևում է, դա ավելի հարմար ժամանակն է. վառարանիս կրակն է տրամադրում, թե՞ դրսի ցուրտը, որ փակվում եմ սենյակում:

Գրածներին էլ մեծ մասը անկողնում եմ գրել և գլխավորապես հիվանդ ժամանակ»:

Իր գրական գործունեության սկզբնավորման թվականը համարում էր 1886-ը՝ «Շունն ու Կատուն» գրելու տարին:

Առանձնասենյակում, թախտի կողքին, որի վրա քնում էր,

պատից կախել էր կարմիր փայտից ծաղկազարդ, ծրարի նման մի թղթապանակ՝ թուղթն ու մատիտը հետը, գիշերները գրում էր, մեջը գցում:

Դեկտեմբերի 31

«Կնոջ համար ամենադժվարը և կարևորը — առողջությունն է, որ նույնիսկ տգեղ կնոջը դեղեցկություն է տալիս: Առողջ դեմքը վառվում է, աչքերը փայլում են, էդ կրակը շատ բան է մոռացնել տալիս մարդու: Կինը պիտի լինի աստղով, շախտով — կարևորը դա է:

Կինը զարգացած պիտի լինի. նա պիտի զարգանա գեղարվեստի ու գեղեցիկ գրականության վրա: Նա իրար պիտի գցի գեղեցկությունն ու գիտությունը, կյանքն ու գիրքը:

Տնտեսականը մեծ դեր է խաղում կնոջ կյանքում. նա ապահով պիտի լինի: Եվ մի անհաջող ամուսնություն, մի սխալ կամ ձախտոդ քայլ և ամեն ինչ կարող է կորչել. նոր տակվելը:

Այսպես կանանց մասին զորաց արինք մինչև ուշ գիշեր: Հարցեր էինք տալիս իրեն, ինքն էլ մեզ էր հարցեր տալիս:

1920

Հունվարի 1

Նոր տարին դիմավորեցինք տանը, առանց հյուրերի: Մյուս օրը առավոտյան եկան Դեմիրճյանը, Վրթանես Փափաղյանը, Տիգրան Հովհաննիսյանը: Իմ սենյակում էինք հավաքվել սենյակս տաք էր ու լավ, բուխարու կրակը առատ էր ու սիրուն: Սեղանիս վրա էր Նիցշեի «Զրադաշտը»: Հայրիկը Նիցշեին չէր սիրում. «Նիցշեն դաժան է, իսկ հանճարը դաժան լինել չի կարող: Նա հիվանդոտ մեծություն է ու տկար հոգի»:

Նորից ոգևորված սկսեց խոսել Շեքսպիրից. «Շեքսպիր կարդալ, Շեքսպիր հասկանալ, կնշանակի մեծանալ. նա շատ է

տարերային. մեծ հանճար է: Կավագույներին պիտի կարդալ, սիրել Բայրոն, Գյոթե, Շելլի, Շեքսպիր...»:

Երեկոյան մենք՝ տննցիներս, հավաքվեցինք հայրիկի սենյակում: Բայրոնի «Մանֆրեդը» կարդաց, նրա մենախոսությունը էյանքի ունայնության մասին, հետո՝ Աստվածաշնչի «Բանք ժողովողին» բաժնի սկիզբը՝ «Ունայնություն ունայնութեանցը», վերջում Բրեստետի եգիպտոսի պատմության գրքից կարդաց եգիպտացիների երգը էյանքի ունայնության մասին՝ «Ուրախ ապրիր, սրտովդ ապրիր, էս օրով ապրիր...» և համեմատեց Օմար Խայամի քառյակների հետ:

Հյուրեր եկան և մեր ընթերցանությունն ընդհատվեց: Սերգեյ Գորոդեցկին էր իր կնոջ հետ. հետը բերել էր հայրիկի քառյակների ռուսերեն թարգմանությունը. մի քանիսը կարդաց, բայց այնքան էլ հաջող չէին, հայրիկը շհավանեց:

Հունվարի 2

Հայաստանի դաշնակցական կառավարությունից իր գրադարանը վաճառելու առաջարկ էր ստացել: Գնահատությունը թողել էին իրեն:

Այդ առիթով մեզ իր սենյակը հավաքեց. վրդովված էր, վշտացած, որ գրողին ապահովելու փոխարեն նրան զրկում են գրադարանից: Մեզ՝ երեխաներիս էլ դա դուր չեկավ:

Որոշեց մերժել առաջարկը և հրատարակել իր երկերի նոր ժողովածուն: Ամեն մեկիս մի-մի բաժին տվեց, որ նյութերը հավաքենք, արտագրենք և կազմենք ցանկը: Ես վեցերի հեքիաթները:

Հունվարի 4

Մեզ մոտ էր Իոսեբ Գրիշաշվիլին: Իր բանաստեղծություններից մի քանիսը կարդաց: Նրա գնալուց հետո հայրիկն ասաց, որ տաղանդավոր բանաստեղծ է, բայց խորություն, մեծ զարգացում չունի:

Երեկոյան տրամադրությունը լավ էր. անվերջ սրախտում էր:

Հունվարի 5

Քաջախմբան երեկո էր: Մի խումբ տղաներ նվագախմբով մտան մեք տուն: «Այսօր տոն է» երգելու փոխարեն ինչպես կարգն էր). նվագեցին «Աղջիկ բախտավորը»: Հայրիկը հուզվեց, տղաներին հրավիրեց սեղանատուն, հյուրասիրեց:

Հունվարի 6

— Կինը աշխուժության հետ միասին խելոք ու լուրջ պիտի լինի: Անճաշակությունը, գոհակությունն ու ռամկությունը անտանելի բաներ են կյանքում, ևս առավել կնոջ կյանքում:

— Կինն իր գինը պիտի իմանա, իր արժանիքները բարձր պահի. թագուհու նման պիտի պահի իրեն՝ հպարտ, բարձր, լուրջ:

— Ճաշակը շատ մեծ բան է: Կյանքում ամենամեծ բաները շատ են էժան, նույնիսկ ձրի, բայց շատ դժվար ձեռք բերվող: Մարդիկ պիտի ձեռք բերեն. կարողանան ձեռք բերել էդ մեծ հարստությունը:

Հունվարի 15

Մի կիրակի օր շուկայում հին գրավաճառներից մեկի մոտ տեսել էր նկարիչ Ալեքսանդր Միրզոյանի յուղաներկ նկարներից մեկը՝ կոտու տեսարաններից: Տեսել էր, գնել և բերել տուն. շատ էր ուրախացել այդ նկարով: Բերեց տուն, կասեց իր սենյակում, իր մահճակալի մոտ: Կանգնած նայում էր այդ նկարին և հիշում գյուղում անցկացրած մանկության օրերն ու տեղերը...

— Հե՛յ գիդի... էս միջնակներում ինչքա՛ն մորի եմ հավաքել, ծմակներում կխտարի որս արել...

Մյուս օրը նորից գնաց նույն գրավաճառի մոտ և Դսեղի տեսարաններից մի շորս-հինգ նոր նկար գնեց, բերեց դրեց իր գրասեղանին: Շատ էր ուրախացել այդ գյուտի վրա:

Հունվարի 20

«Մեծ բան է և շատ կարևոր՝ առանձնանալը, մենակ մնալը ու երկա՛ր, երկար մտածելը, լինի սենյակում, թե բնության մեջ: Հոգեկան խորասուզումը, ինքնախորասուզումը շատ է կարևոր»:

«Մարդիկ սովորաբար բանաստեղծին չեն հասկանում, պարապ են կարծում, երբ նա չի գրում»:

Ես շատ եմ լսել և ասում էլ են ինձ, թե ծուլլ ես, չես գրում, պարապ-սարապ ման ես գալիս ու բան չես անում: Նրանք չեն հասկանում, որ հենց էն պարապ ժամանակ է, որ բանաստեղծը պարապում է, ստեղծագործում է: Էդ պարապ ժամանակը հղացումի, լցվելու ժամանակն է և դա ավելի կարևոր է գրողի համար, քան թե գրելը: Բանաստեղծը էդ ժամանակ նման է հղի կնոջ, գրելիս նա միայն հասարակ գրապիր է:

Ես հաճախ երբ ձեզ հետ եմ լինում, կատակներ եմ անում կամ երբ մենակ ման եմ գալիս սենյակումս կամ թե չէ նստում եմ ու երկար մտածում— դրանք շատերին դատարկ ու պարապ բաներ են թվում, մինչդեռ էդ ժամանակ է, որ ես ստեղծագործում եմ: Դա է կարևորը»:

Հունվարի 27

«Դեռենիկն անպայման տաղանդ է, խորն է, բայց ամբողջական բան չի կարողանում տալ. ունի լավ կտորներ, խորասուզումներ, բայց մեծ, ամբողջական գործ դեռ չունի»:

Հունվարի 30

Մի կիրակի օր, ցերեկը, Մամբրե Մատենճյանն իր բանաստեղծությունների տեսլը վերցրած եկել էր հայրիկը մոտ նրա կարծիքն իմանալու: Կարդում էր մեծ ոգևորությամբ և շատ էր ուզում, որ հայրիկը խոսք ասի իր գործերի մասին: Հայրիկը լսեց ուշադիր, բայց չհավանեց, հասկացրեց, որ

նա բանաստեղծ չի, գրածները թույլ բաներ են և անհարմար է բանաստեղծի առաջ կարդալ...

Նախաճաշից հետո Մատենճյանին հրավիրեց իր սենյակը, պահարանից հանեց նկարչական գեղարվեստական ալբոմներ, արվեստի պատմության գերմանական մի հրատարակություն, որ նոր էր գնել: Յույց էր տալիս իր նոր գնած նկարները, դիտեր, որ նա աշխարհ տեսած, ճաշակով մարդ է, սիրում է արվեստը: Խոսում էր նկարիչներից, նրանց մեծ գործերից: Այդ օրերը երկու նոր մեծ նկար էր գնել և դահլիճում կախել: Մեկը Տիցիանի «Դանալայի» պատճենն էր, մյուսը՝ Գիտենբերգերի «Մարիամ Մագթադինացու»: Սկսեց խոսել այդ նկարներից:

«Երկու խոշոր գեղարվեստական գործեր— տարբեր ու նման, երկուսն էլ իրենց առողջության ու գեղեցկության հետ միասին կապված են ոչ թե հասարակ բաների հետ, այլ աստվածների— մեկը՝ Յուպիտերի, մյուսը՝ Քրիստոսի: Մեկը հեթանոսական է՝ մարմինը կրքոտ, որ մոռացնել է տալիս հուսահատությունն ու հոռետեսությունը՝ համարձակ է և ազատ: Մյուսը քրիստոնեական է, խորունկ վիշտն է արտահայտում՝ տառապանքը: Երկուսն էլ խոշոր, երկուսն էլ գեղեցիկ»:

Այսպես էր ասում հայրիկը ոգևորված: Հետո խոսեց նկարիչներ Կալֆի, Ռյուզզարի և Գրյոզի մասին:



«Քառյակները հրատարակելիս մի զգացում կար մեջս, մի ցանկություն՝ քննադատ լինել, որովհետև լավ քննադատի համար հոգեբանական և գեղարվեստական խորասուզումներ, վերլուծություններ անելու շատ ավելի բան քառյակներն են տալիս՝ քան որևէ մեծ գործ: Քառյակները շատ վտանգավոր բաներ են բանաստեղծի համար, բայց մանավանդ քննադատի»:



Հայրիկի համար նվիրական էին ստեղծագործական ոգևորության պահերը, որոնք, սակայն, հաճախ էին խանգարվում:

«Ստեղծագործելու հաճույքի հետ ոչինչ չի կարող համեմատվել, ոչինչ, և դա շախտի խանգարվի:

Հիմա ես խուսափում եմ ստեղծագործական ոգևորությունից, նույնիսկ վախենում, որովհետև տեսնում եմ, որ իրականությունն ու տրամադրությունը իրար չեն բռնում, իրար չեն համապատասխանում: Հիմա ես մեծ տրամադրություն ունեմ և ցանկություն կա մեջս գրականությամբ պարապելու, բայց չեմ անում, չեմ սկսում, որովհետև գիտեմ՝ կարճ է տևելու, խանգարելու են: Ստեղծագործելու վայրկյանին սենյակիս դուռը շախտի բացվի:

Եղ խանգարումները ֆիզիկական քայքայում, ցնդում են առաջ բերում: Մեկ է թե՛ մեկին սառը ջրից սաք ջուրը պցես:

Եվ ինչքան են խանգարել ու ի՞նչ դատարկ բաների պատճառով... Խանգարումներ շատ են եղել իմ կյանքում շատ...

Ես մի քանի անգամ եմ ոգևորվել մեկ՝ «Դեպի անհունի» ժամանակ, էնքան, որ ոգևորության վայրկյանին վախից ու սարսափից մայրիկին զարթեցրել եմ քնից ու էդտեղ էլ կրտրել եմ պոեմը: Մեկ էլ երկրորդ «Անուշի» ժամանակ, 1902 թվին: Եվ շատ կարճ ժամանակում եմ գրել «Անուշը», շատ կարճ:

Փետրվարի 11

Երեկոյան եկել էին Ստեփան Լիսիցյանը և Տիգրան Գյուզալյանը: Հայրիկը նոգևորված էր մեր էպոսով, տրամադրությունը բարձր էր: Բյուրոյի արկղից հանեց «Մասունցի Դավթի» նյութերն ու վարիանտները: «Դավթի» երկրորդ մասից սկսեց կարդալ հատվածներ:

1 Բնագետ, ներսիսյան դպրոցի ուսուցիչ

Ընկալ Մեկի՛ն ամբարտավան ու պատերազմն
արշունուս,
Խաղաղ կյանքի, ուրախ օրվան բացվեց հայոց
առավուս...

Հետո կարգաց խանդութ խանոմի գովքը և սկսեց շքեղ պատկերներով նկարագրել մեր էպոսի գեղեցկուհուն: Ոգևորված խոստամ էր հայկական էպոսի մասին:

— էպոսը շատ մեծ բան է, առավել ևս մերը, հարուստ է, շքեղ և թերևս ավելի մեծ, քան մյուս ազգերի էպոսները: Համաշխարհային գրականության մեջ մեծ տեղ է բռնում մեր էպոսը: Մենք ունենք մեր հոգու ներկայացուցիչը, մեր հոգու արտահայտությունը. դա Սասունցի Դավիթն է: Մյուս ժողովուրդներից հարուստ է և լավ սերբերի էպոսը:

Փետրվարի 21

«Լեզվի խնդիրը կարևոր և մեծ խնդիրներից է:

Շատ քիչ բանում եմ էնպես համոզված, ինչպես լեզվի խնդրում:

Պետք է ցույց տալ լեզվի իսկական ճանապարհը, էդ ճանապարհը որոշել, բռնել, հիմնավորել: Ժողովրդական լեզվով և ոչ թե սարքովի, խեղճ լեզվով գրել:

Մեր ժողովրդական բարբառները պարզ են ու հատու:

Իմ լեզվական պատերը բանաստեղծական թռիքներ են. մի տաս-տասնհինգ պլուտ ունեմ արած: Ես համոզված եմ, որ մի օր մեր գիտնականները մեջտեղ կգան, էլ պլուտերով կզբաղվեն»:

Փետրվարի 25

Երեկոյան Պեշիկթաշլյանի և Դուրյանի բանաստեղծություններն էինք կարդում: Երկուսին էլ շատ էր սիրում և հաճախ էր վերագոռնում նրանց. «Մեծ բանաստեղծներ են և իրենց բնավորությամբ նման մեկը Պուշկինին, մյուսը՝ Կեր-

մոնտովին... Պեշիկթաշլյանը գեղեցիկ ձևով գրում է տիրաբար, հեշտ և հանգիստ, իսկ Դուրյանը՝ անբուժելի թախիծով»:

Փետրվարի 26

«Հեքիաթները անգունդներ են՝ խորը, անծայր, անվերջ... հարուստ ու շքեղ աշխարհ է: Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է. նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում: Նոր-գրողներից փորձեր անողներ կան. Օսկար Ուայլդը, Մետերլինկը և ուրիշներ»:

Մարտի 10

«...Հեշտ ու թեթև գրելու ձև ունեն բոլոր գրողները, և Պեշիկթաշլյանը էլ գրողներից է. նա զորեղ տեղեր ունի. հիգեր չի անում և դրա շնորհիվ էլ հանգիստ է ու խաղաղ»:

Պեշիկթաշլյանի երգերից սիրում էր «Գարունը» (Ո՛հ, ի՞նչ անուշ և ինչպես զով...), «Մերն Վանա» («Մու՛թն է գիշերս, ինչպես սիրտս ալ...»), «Թաղումն քաջորդուն» («Ո՛հ փող զարկինք...»):

Մարտի 11

Ուշ գիշեր էր: Հանկարծ քնից զարթնեցի, հայրիկի երգի ձայն էր, որ ալանջիս հասավ. երգում էր շատ մեղմ ու նուրբ, բայց զվարթ ու թեթև: «Սուրբ-սուրբն» էր երգում:

Սկզբում թվում էր, թե երազի մեջ եմ, այնքան հեռվից ու մեղմ էր լսվում ձայնը... Հետո տեղիցս վեր կացա, կարծեկով, թե արդեն առավոտ է կամ մոտը հյուս է եկել: Գնացի սեղանատուն: Տեսնեմ՝ սեղանի վրա դրված է մազերա գինի, սեղանը սարքած, ինքը մենակ նստած խմում է ու երգում. տրամադրությունը լավ էր, ավելի ճիշտ՝ շատ էր վատ: Իրեն թվացել էր, թե Արտիկը պիտի գա ու շէր կարողացել քնել,

վեր էր կացել ընդ, սեղանատուն եկել, սեղան սարքել ու սպասել...

Գիշերվա ժամը երկուսն էր: Երգում էր ու երգելով, ասես, կանչում էր նրան. երգը համակ արցունք էր, վիշտ, կարոտ ու կանչ...

Երգի ելևէջների մեջ այնքա՛ն խորություն ու վեհություն կար, այնքա՛ն վիշտ, վշտի մեջ այնքա՛ն արցունք ու դեմքին՝ այնքա՛ն լույս ու պայծառություն...

Երգում էր «Լույս զվարթը», «սորհուրդ խորինը...» և ուրիշ շարականներ ու բայաթիներ:

Մարտի 15

Աշխեն Թումանյանի հուշերից. «Հովիկի՛ հետ մերոնց մոտ էի, տրամադրությունս վատ էր իմ անձնական գործերի պատճառով: Իմ ծննդյան օրն էր, բայց չէի էլ հիշում: Երեկոյան դանդաղ ավին: Ինձ մի մեծ ծաղկեփունջ էին ուղարկել: Բոլորը զարմացան, հետո հիշեցին, որ ծննդյանս օրն է: Հայրիկն ասաց՝ դե որ էդպես է, գնանք ինձ մոտ ժողով անենք, թե ինչ նվիրենք Աշխենին: (Այդպիսի ժողովները սովորական էին մեր տանը): Գնացին հայրիկը և բոլոր երեխաները: Շատ առաջարկներ են եղել՝ է՛ս ինչ ձեռագիրը, ալբոմը, նկարը, — համաձայնության չեն եկել: Եկան ինձ ասացին, որ գնամ ես ընտրեմ: Երեխաներից մեկն ասել է՝ եթե Աշխենը ասի ամբողջ կաբինետը. հայրիկը թե՛ որոշումը որոշո՛ւմ է: Ներս մտա, տեսնեմ բոլոր պահարանները բաց, սեղանի վրա դանաղան իրեր: Ինչպես ասացի, անտրամադիր էի, և մի բան վերցրած լինելու համար, ձեռքս առա սաղափե կազմով մի ծոցատետր:

— Հիմա՛ր աղչիկ, — ասաց հայրիկը, — էսքան բան առաջն ենք թափել՝ է՛դ ես ընտրում: Դե լավ, թող մնա ինձ մոտ, հետո կտամ: Մյուս օրը տվեց, մեջքը ոտանավոր՝

Ինչ էլ բաշխեն,
Քեզ, իմ Աշխեն,
Մեռնից վեր
Զրկա նվեր:

Հայրիկ

1920, մարտի 15, Թիֆլիս:

Մարտի 20

Գորու երկրաշարժի օրերին հայրիկը Բաքվից մի գումար էր ստացել՝ 30.000 ռուբլի, որ երեք ամսի բաժանեց՝ 10.000-ը երկրաշարժից վնասված երեխաներին նվիրեց և այդ առթիվ մի հոդված գրեց ու կոչ արեց բոլորին նվիրաբերություններ անելու, օգնելու վնասված ժողովրդին: 10.000-ը Ռուսաստանի սովյալներին նվիրեց, մի հոդված էլ հետը, իսկ 10.000-ը՝ վանի գաղթականությանը:

Աշխեն Թումանյանի հուշերից. «Մարտի 20-ին վրաց անընդլականների ակումբում՝ ճոխ երեկույթ էր հրավիրել երկրաշարժից վնասվածների օգտին: Հայրիկը հրավիրված էր, բայց անառողջ էր, շուգեց գնալ: Ասաց, որ ես գնամ մի կես ժամով: Որքան էլ չէի ուզում՝ հագնվեցի ու գնացի: Մտածում էի դուրս կանչել բանաստեղծ Պատլո Յաշվիլուն, հայրիկի նամակը տալ իրեն և վերադառնալ: Ժ. 10-անց էր, որ գնացի: Մեկին ուղարկեցի Պատլոյի հետևից: Քիչ հետո նա եկավ, իմ առարկությունը լսել իսկ չուզեց, ստիպեց հանվել և իր հետ բարձրանալ վերև: Մտանք ճոխ զարդարված դահլիճ՝ սեղաններով լիքը: Ինձ մոտեցրեց մի երկար սեղանի, որը գրողներին էր: Ծանոթացրեց նրանցից մի քանիսի հետ, հյուրերը դեռ չէին հավաքվել: Էդ սեղանին կանաչք դեռ չկային: Բանաստեղծ Տիցիան Տաբիձեն իսկույն գնաց կնոջը բերեց մեր սեղանի մոտ: Քիչ անց հյուրերը հավաքվեցին: Մեր սեղանին նստած էին մի 10—15 հոգի: Կոնֆերանսիեն Պատլոն էր:

1. Նախկին Արծրունու թատրոնը, որի տեղում կառուցվեց Գրիբոյեդովի անվան թատրոնը:

1 Աշխեն Թումանյանի որդին

Անաջինը կարդաց Տաբիձեի կնոջ անունը (որ ուս էր, որ էր վերադարձել կոնդոնից): Սա՛ երեկույթի «տիրուհին», քսանհինգ հազար ուրբլի էր նվիրել: Երկրորդը, չեմ հիշում ում անունն էր, նվիրել էր 15 հազար: Երրորդ անունը հայրիկինն էր: Պատուն կարդաց հայրիկի նամակը, ասաց, որ նա չի եկել հիվանդության պատճառով և նվիրել է 10 հազար: Հետո նա մի քանի խոսք ասաց հայրիկի մասին և առաջարկեց խմել դատեր կենացը և նրա միջոցով Հովհաննես Թումանյանին հայտնել խորին երախտագիտություն: Ես, որ մեջքով էի նստած դեպի դահլիճը, բարկացա Պատույի վրա, բայց իմ սեղանակիցներն ասացին՝ վե՛ր կացեք, բոլորը ձեզ են սպասում: Ետև եկա տեսնեմ՝ ամբողջ դահլիճը, երեք-չորս հարյուր մարդ, ոտքի կանգնած, բաժակները մեկնած ինձ: Ենորհակալություն հայտնեցի: Թե՛ Պատուն, թե՛ ուրիշներն ինձ շարունակ ուղարկում էին լիկյոր, շոկոլադի տուփեր, ծաղիկներ: Մի խոսքով, մնացի մինչև առավոտյան 6-ը: Լուսաբացին վրաց գյուղներն ինձ նվերներ տվեցին և ավտոմեքենայով տուն հասցրին: Նրանցից մի քանիսը փողոցից կանչում էին՝ «Գառնամարջո՛ւ, Օհանեսի»:

Խնջուլքի վերջում նրանք մի քարտի վրա փոքրիկ նամակ էին գրել հայրիկին:

Հիշում եմ նաև, որ դահլիճում էստրադա էր սարքված պարերի համար. առաջին անգամ էի տեսնում այդքան շատ սլարոդ վրացուհիներ: Ծատերը գավառից էին եկել Թիֆլիս. կարծես ջոկած լինեին՝ բարձրահասակ, լավ կազմվածքով, գեղեցիկ, լավ էլ հագնված»:

Ապրիլի 5

«Ամենաբարձր բանը աստվածանալն է՝ բարձրանալ, խորանալ, ներշնչվել խոհերով ու զգացմունքներով և ստեղծագործել»:

Ի՛նչ շատ բան է մեզ տված ու ինչքան փչել բան ենք անում: Էս բոլորը խելքի հարց է, ճաշակի, հասկացողության»:

Ապրիլի 24

Երեկոյան խոսում էր Շեքսպիրի մասին:

«...Շեքսպիր, Գյոթե հասկանալու համար պետք է ունենալ մեծ երևակայություն, դրական ուժեղ հոտառություն և ըմբռնում: Շեքսպիր կարդալը հաճույք է: Նա շատ է տարբերացին. նրա հետ կարող է համեմատվել Գյոթեն իր «Փառատով», էն էլ ոչ ամբողջապես...»:

Մայիսի 2

Ճաշին հյուրեր շատ կային: Ճաշից հետո ցրվեցին, մնացին վերնակահանները՝ Դեմիրճյանը, Շանթը, Աղբալյանը:

Երեկոյան հավաքված հայրիկի սենյակում զրույց էին անում: Խոսքը Դեմիրճյանի քառյակների շուրջն էր, որը «Գառուն» վերնագրով նոր էր լույս տեսել: Չէին հավանել: Խոսեցին, քննադատեցին: Բոլորի կարծիքն էլ բացասական էր: Այդ բանը Դեմիրճյանին դուր չեկավ. շատ դժգոհ ու ջղախնացած տեղից վեր կացավ. «Դուք բոլորդ սաստիկ սխալվում եք. ձեր երեքիդ զգայարաններից մեկը փշացած է»:

— Դու միայն արձակ գրի և արձակներդ են, որ ինձ վրա խորը և գեղարվեստական տպավորություն են արել, — ասաց Շանթը:

— Ես էլ նույն կարծիքի եմ. արձակդ շատ ավելի հաջող է: «Ոչ այս աշխարհի» պոեմդ հանդուգն խոյանքներ ունի, մյուսները թույլ են, ամբողջականություն չկա, — ավելացրեց հայրիկը:

Հետո հարցրին, թե տպելուց առաջ ինչու իրենց մոտ չի կարդում, իրենց կարծիքը հարցնում: Այդ առթիվ ամեն մեկն իր կարծիքն ասաց, իր անձնական վերաբերմունքն իրենց իսկ գրվածքների հանդեպ:

— Ստեղծագործությունը մի տեսակ ամոթխափություն ունի. ես իմ գրվածքները չեմ սիրում կարգալ ուրիշների առաջ, ոչ գրելիս, ոչ էլ վերջը. գրում եմ, տպում և հրատարակ հանում, եթե կարդում էլ եմ՝ միայն Ջավոյին¹, — իր սկզբունքը հայտնեց Շանթը:

¹ Ջավանիր — Լ. Շանթի կինը

— Ես, ընդհակառակը, սիրում եմ կարգալ՝ գրելու ժամանակ էլ, վերջացնելուց էլ՝ ավելի հաճախ: Իմս բաց է բոլորի առաջ ու միշտ կարդում եմ,— ասաց հայրիկը:

— Իսկ ես չեմ կարդում և չեմ էլ սիրում կարգալ. ես բոլորովին փակ եմ և մեջս էլ վախ կա մի տեսակ, որ քան է, եթե չհավանեն՝ ինձ վրա շատ կազդի,— խոստովանեց Դեմիրճյանը: Հետո դժգոհեց, որ մոտ մարդիկ իր մասին չեն խոսում, որ գրականության մեջ իր մասին ոչ չի լուրջ հոգված չկա մինչև հիմա: Մասնավորապես դժգոհ էր Աղբալյանից:

— Նիկոլի լուսթյունն ինձ համար դաժանություն է: Սա ոտբինգոնական գրականություն է՝ կղզիացած, մենակ ու փակ ինքս իմ մեջ: Ես չգիտեմ՝ սա բժշկի լուսթյունն է թոքախտավորի հանդեպ, թե առողջ եմ, ու ոչինչ չի ուզում ասել:

Մայիսի 6

«Էն մարդն արժեք ունի, որ մի ճամփով է գնում, էն է: Երկար, և ոչ թե քսան ճամփով»:

«Գիտությունը, գեղարվեստը և նման բաները շատ հեշտ են լարում, էլեկտրականացնում, և դրանց պիտի սիրվել ու շարունակել մինչև վերջը գնալ: Մեծ մարդկանց պիտի կարգալ. էնտեղ է, որ ես ինձ գտնում եմ»:

Մայիսի 19

Մենք ու մենք էինք իր սենյակում. իր բանաստեղծությունները կարդաց նոր հրատարակության ընտրություն անելու համար:

Կարդում էր մեկ-մեկ, հետո էլ ամեն մեկի պատմությունն անում, քննադատում, իր վերաբերմունքը ցույց տալիս, պահում էր, ջնջում կամ հարցական դնում:

Առաջին շրջանի գրվածքներից շատերը ջնջեց, էլ չէր հավանում, համարելով թույլ բաներ: Լեզենդներից «Ախթամարը»

չէր սիրում, ուզում էր հանել, հետո, կատակի ձևով, թե՛ Քամարի՛ խաթեր համար դեռ մնա:

Թարգմանություններից էլ մի քանիսը հանեց. «Մծիրին» դրեց մի կողմ, որ նորից մշակի նոր ձևով. «Սա դեռ մնա, մի աչքի պիտի անցկացնեմ»: Բանաստեղծություններից մի քանիսի գրելու պատմությունն արավ, մի երկուսի պատմությունն է մնացել հիշողությանս մեջ:

— Հիշում եմ «է՛յ աստղերը»² գրելու օրը: Դսեղ էի. Չաղի ձորն էի գնացել որսի: Կալի ժամանակն էր. ձորից դուրս եկա մեր կալը. կալի մոտ էլ դազան էր. աստղալի գիշեր էր. պակեցի դազից հեռու, կալի մոտ ու էնտեղ է, որ գրել եմ «է՛յ աստղերը»...

Կալ եմ հիշում էդ օրը:

«Հայ ուխտավորին» էքսպրոմտ է. Խրիմյանի ընտրության առթիվ շորս հոգի քեֆ սարքեցինք Օրթաճալում, էն քեֆին գրեցի:

«Վայրէջքը» իմ ամենալավ բանաստեղծություններից է. շատ է լավը. Մետեխի բանտումն եմ գրել, ծննդյանս 40-ամյակի օրը:

«Պատրանքը» նույնպես ուժեղ է, անմիջական:

Շատ եմ սիրում սըհակ թռչունի ձևը, մանավանդ Չաղի ձորումը. լեն ու խորը մութ. ձորի մեջ նրա ձևը միստիկ տպավորություն է անում վրաս: «Որբը» շատ է հայկական, շատ բնորոշ:

Խիստ հայկական է նաև «Աղավնու վանքը»: Հոյակապ բան է. հիվանդ ժամանակս եմ գրե (1912 թ.):

Մայիսի 26

Հայրիկը, Անուշն ու ես գնացինք մեր տան դիմացի սարը գրոսանքի: Գարուն, թարմ կանաչ, թարմ օդ, հանդիստ ու պայ-

1 Իր ամենաիրոքը զավակը (ծն. 1907 թ.): Թումանյանի Թանգարանի տնօրենը՝ ավագ դուստր Աշխեն Թումանյանից հետո:

2 Խորը վերաբերում է 1891 թվականին գրված «Գիշերային մտածմունք» (հետագա մշակմամբ՝ «Աստղերի հետ») բանաստեղծությունը, որ սկսվում է «է՛յ աստղեր, աստղեր» բառերով:

ծառ օր: Մարում մարդ շկար, իսկ քաղաքը լիքն էր ժողովրդով:

Երեկոյան եկավ բծիշկ Սաղյանը: Զրույցը Արևելքի մեծ բանաստեղծների՝ Օմար Խայամի, Ֆիրդուսու, Հաֆեզի, Նիզամու շուրջն էր, հետո անցավ «Ճառաստին»:

— «Ճառաստին» մեջ երկու խնդիր է իրար դեմ դրած՝ կյանքի վայելքների տենչը և հավիտենական գաղտնիքների մեջ թափանցելը, էդ առեղծվածի լուծումը, — ասաց հայրիկը, պահարանից հանեց «Ճառաստը» (Խոլոդիլովսկու թարգմանությունը)՝ ու սկսեց հատվածներ կարդալ: Կարդում էր երկրորդ պատկերը՝ գիշերը Ճառաստն իր սենյակում, նրա մենախոսությունը և թարգմանում էր հայերեն:

Հունիս

Սեղանի վրա էր Գյոթեի «Ճառաստը»: Մեզ իր սենյակը հավաքեց, խոսում էր Գյոթեից: Կարդաց «Ճառաստին» նախերգանքը, հատվածներ թարգմանելով և ոգևորված մեկնաբանելով:

«Մարդու կյանքը պիտի լինի իմաստալից: Գյուտեր պիտի անել, ստեղծագործել: Որոշել նպատակը ու գնալ՝ հաստատուն ու վճռական: Ամեն բան մարդուն մատչելի է. նա ամեն բան կարող է, միայն պետք է կամենալ, պետք է անել, անելիս էլ շնորհքով անել և վերջակետի հասնել:

«Ճառաստին» հեղինակը ամբողջ կյանքն է ընդգրկել ու տվել: Պետք է էդ մեծ գործերը կարդալ, հասկանալ, ըմբռնել:

«Ճառաստը» հասկանալ, կնշանակի կյանքը հասկանալ»:



1920 թվականին մի քանի գերմանացիներ եկել էին հայրիկի մոտ «Սասունցի Դավիթը» նիբելունգների ձևով նկարահանելու համար:

Բանակցություններ սկսեցին: Հայրիկը համաձայնվել էր, բայց գործն այդպես էլ մնաց:

Հուլիսի 7

Երեկոյան նստած էինք պատշգամբում: Ամառվա շոգ օր էր: Կոշոր՝ պետք է գնայինք ամառանոց, բայց Թամարի հիվանդության պատճառով միշտ հետաձգվում էր: Այդ երեկո հայրիկի տրամադրությունը լավ էր: Վտանգն անցել էր արդեն և Թամարը լավ էր դգում: Բծիշկ Գր. Սաղյանն էր մեզ մոտ, մնաց մինչև ուշ գիշեր: Հայրիկը Պոռշյանի, Աղայանի կյանքից դեպքեր պատմեց, հետո անցավ Նրիմյանին:

— Նրիմյանը մեծ մարդ էր. շատ մեծ... Աղայանը ուժեղ մարդ էր, շատ լավ, համակրելի, բարձր ոգևորությունների մարդ, բայց սա փիլիսոփա բանաստեղծ էր, ունենալով Աղայանի խառնվածքը: Օրենք չէր ճանաչում, օրենք չգիտեր, օրենքից բարձր էր, ինքն էր օրենք ստեղծում, մեծ անարխիստ էր: Ինքնատիպ դեմք էր, մեծ ու անսխտամ:

Հուլիսի 10

1920 թվականի ամառը Կոշոր էինք: Բծիշկները հայրիկին խորհուրդ չէին տալիս, սրտի թուլության պատճառով, այդքան բարձր ամառանոց գնալ, բայց գնալուց հետո հակառակը դուրս եկավ, հայրիկն իրեն շատ լավ դգաց: Կենտրոնից հեռու մի լավ տուն էինք վարձել այդու մեջ՝ լայն, մեծ պատշգամբով, առաջը սիրուն տեսարան:

Գր. Սաղյանը հաճախ էր Թիֆլիսից մեզ հյուր գալիս: Մոտակա ամառանոցներից մեկում ապրում էին Տիգրան¹ և Ալեքսանդր² Բեկդադյանները: Հետաքրքիր զրույցներով ու երգերով երեկոներ էինք անցկացնում: Հայրիկը քիչ էր պարապում, ավելի շատ կարդում էր: Կարդում էր Լ. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղության» երկրորդ հատորը: Սիրում էր

1 Բեկդադյան Տիգրան — ինձևներ, Բաբվի նավթարդյունաբերողների միության համագումարների նախագահի տեղակալ. հետադադում՝ Հայաստանի դաշնակցական կառավարության ներկայացուցիչը մենշևիկյան վրաստանում

2 Բեկդադյան Ալեքսանդր — կոմունիստական կուսակցության ակաճավոր գործիչ. Վ. Ի. Լենինի ղեկավար

Գոգոլին և նորից էր կարդում «Մեռած հողիները»: «Լուսաբերի» համար թարգմանեց Լ. Տոլստոյի «Երեք արջի հեքիաթը»:

Երեկոները ուկրաինական և ռուսական երգեր էինք երգում՝ «Ребе та стогне Дуіпр широкої...»: Այդ երգի վերջին տունը հայրիկը թարգմանեց և այդ տունը հայերեն էինք երգում.

Մրին է դեռ, ու շի ծեգում,
Լուս ամենուր և ոչ մի ձեռն,
Ուրբն է որբին կանչում ծրմակում,
Ու հացեմին ցրտում մեն-մեն...

Ուկրաինական երգերը առիթ եղան Շեչենկոյից խոսելու: Կարդում էր «Կորդարը»: Միրում էր այդ դիրքը և առհասարակ Շեչենկոյին:

Ինչպես հիշում եմ, այս տարվա ամռանն էր, երբ Լ. Շանթը, որպես դաշնակցության դիվանագիտական պատվիրակության ղեկավար, Երևանից Մոսկվա էր մեկնում: Նա այցելության եկավ հայրիկին ամառանոցում: Հայրիկը, երբ իմացավ նրա միսիայի մասին, խորհուրդ տվեց Մոսկվա չգնալ և հրաժարվել այդ միսիայից, քանի որ այդ իր գործը չի, ինքը չաղաքագետ չի, վերջապես «Դու ռուսերեն էլ չգիտես, ինչպիսի ես գնում այդ հարցով Մոսկվա»:



1920 թվականի աշնանը Տիրայր արքեպիսկոպոսը¹ Ամերիկա մեկնելուց առաջ այցելության էր եկել հայրիկին. նրա հետ էր և Աղավնի Մեսրոպյանը², որ եկել էր հայրիկի հետ ծանոթանալու:

Զրույցը ձեռագրերի շուրջն էր: Հայրիկն իր գրած հին

¹ Մելիք-Մուշկամբարյան Տիրայր — արքեպիսկոպոս, բանասեր. հրատարակել է Ֆրեդի գիվանը

² Մեսրոպյան Աղավնի — Կոմիտասի սաներից մեկը, երամիշտ և նկարիչ

ձեռագրերը հանեց, ցույց տվեց: Խոսում էին միջնադարյան տաղերգուներից, նրանց երկերի հրատարակման գործից:

Այնուհետև անցան նկարչությանը: Հայրիկը դժգոհում էր, որ մանկական գրականության համար նկարիչներ չունենք:

— Եթե մանկական գրականությանը պարապելիք, — ասաց հայրիկը, խոսքն ուղղելով Աղավնի Մեսրոպյանին, — ինչքան մեզ պետք պիտի գայիք: Ի՞նչ լավ գրքեր կարող ենք հրատարակել մանուկների համար, եթե այդ գործին նվիրված գրողներ և նկարիչներ ունենանք:

Հայրիկին շատ էր մտահոգում մանկական գրականության վիճակը: Դեռևս 1907—1908 թվականներին, երբ հրատարակության էր պատրաստում իր մանկական երկերը, նա իր մաս հրավիրեց մի քանի նկարիչների՝ Ռոտտերին, Գ. Երիցյանին, Վ. Սխիդյանին և մյուսներին:

Հայրիկը մանկական գրքերի պատկերադարձանը մեծ կարևորություն էր տալիս: Տարիների ընթացքում, հատկապես Պետերբուրգում և Մոսկվայում եղած ժամանակ (1912 թ.), ձեռք էր բերել մանկական պատկերադարձ զեղևցիկ հրատարակությունների մի ամբողջ շարք՝ դանադան լեզուներով:

Դեկտեմբերի 31

Նոր տարին դիմավորեցինք հայրիկի հետ, առանց հյուրերի: Սև սուրճ պատրաստեցինք, մրգերի ու խաղողի հյութի հետ: Թեև գոհ էինք և երեկոն լավ անցավ, բայց հայրիկը տխուր էր: Ոգեշնչված կարդաց հատվածներ Արիստակես Լաստիվերտուց, Եսայի ու Եղիկելի մարգարեներից, «Երգ երգոցից»: Կարդում ու մեկնաբանում էր այդ հատվածները:

Հայրիկը, որպես գրողների ընկերության նախագահ, պետք է գրողներին հատկացված մի գումար բաժաներ ըստ նրանց տաղանդի և վաստակի:

Ամեն մի գրողի տեղն ու արժեքը մեր գրականության մեջ էիշտ որոշելու համար հայրիկն սկսեց նորից կարդալ նրանց երկերը:

Երեկոյան թեյի ժամանակ իր տպավորութիւններէից էր խոստում.

— Էս ի՞նչ խեղճ գրականութիւն ունենք... Ինչքա՞ն ենք աղքատ. քիչ բան է մնալու ժամանակի ընթացքում...

1921

Փետրվար

25-ի լուսադեմին Կոչորի կողմից լսվում էին կրակոցներ: Քաղաքը խուճապի մեջ էր:

Ավելի ուշ կրակոցները սաստկացան, քիչ հետո դիմացի սարը լցվեց զորքով, ապա փողոցներում նրեացին առաջին կարմիրբանակայինները՝ մոխրագույն կոմունարկաներով: Բանակայինների մեջ կային նաև մի խումբ լոռեցիներ:

Կարմիրբանակայինները փողոցով անցնելիս երգում էին՝

Смело мы в бои пойдем за власть Советов,
И как один умрем в борьбе за это...

Բոլորս դուրս եկանք փողոցի կողմի պատշգամբը. հայրիկը ոգևորված նայում էր կարմիրբանակայիններին և նրանց համեմատում «Իլյա Մուրոմեցի» դուրսագողներին հետ:

Մարտ

Երևանում, երբ դաշնակցութեան «Հայաստանի փրկութեան կոմիտեն» հայրիկին ննջարկել էր տնային կալանքի¹, նա իր այցելուներից մեկին պատմել էր հետևյալը. «Մի անգամ Իվան Կուպալան և Նիկոլայ Ուզոզնիկը զգեստավորված գնում են ուխտ: Ճանապարհին տեսնում են մի ճահիճ, մեջը մի

¹ Խոսքը վերաբերում է այն տնային կալանքին, որին ննջարկվել է Թումանյանը 1921 թ. մարտին, երբ Երևան է եկել դաշնակցական խողովուրդը դադարեցնելու միտիայով:

մարդ խեղդվում է և օգնութիւն է կանչում: Էս Իվան Կուպալան չի ուզում ճահիճը մտնի, թե՛ մտնեմ— զգեստս կկեղտոտվի, իսկ Նիկոլայ Ուզոզնիկը, առանց զգեստն ափսոսալու, մտնում է ճահիճը ու խեղդվող մարդու կյանքը փրկում: Գրանից հետո ողա ժողովուրդը Նիկոլայ Ուզոզնիկի տոնը տարին շորս անգամ է տոնում, որովհետև նա ցեխի մեջ խեղդվող մարդու կյանք է փրկել, իսկ Իվան Կուպալայի տոնը՝ շորս տարին մի անգամ:

Հիմա իմն է, մեր ժողովրդին փրկելու համար եկել և՛մ բնկել էս ցեխի մեջ»:

Ապրիլ

18-ին հայրիկն արտաքին գործերի ժողովում Մաւվանից ստանում է Երևանից մեկնելու անցաթուղթ:

Երևանից մեկնում են ապրիլի 19-ին առավոտյան, երկու ավտոմեքենայով: Առաջին մեքենայում Սերգո Օրջոնիկիձեն իր ընկերների հետ, իսկ երկրորդում՝ հայրիկն իր դստեր՝ Աշխենի և Թուռնի հետ: Քանաքեռում Օրջոնիկիձեի ավտոն փշախում է, կանգ են առնում մեկ-երկու ժամ մինչև նորոգումը. այդ ժամանակամիջոցին հայրիկն ու Օրջոնիկիձեն զրուցում են և ապա շարունակում են ճանապարհը: Ախտայում հայրիկի ավտոն է փշանում: Սկսում են նորոգել. օրը մթնում է: Օրջոնիկիձեն հայրիկին խորհուրդ է տալիս գիշերել Ախտայում, խոստանալով Գիլիջանից նոր մեքենա ուղարկել:

Գիշերում են Ախտայում: Առավոտը Օրջոնիկիձեի մեքենայով շարունակում են ճանապարհը, Գիլիջանով գնում և՛ Ղարաքիլիսա, որտեղ, Օրջոնիկիձեի կարգադրութեամբ, հայրիկին սպասում էր հատուկ վագոն:

Ղարաքիլիսայի կայարանում՝ հոծ բազմութիւն, ժխոր, Քիֆիլիս մեկնողները շատ, նրանց մեջ զերասանուհի Հասմիկը: Հայրիկին տեսնելով, խնդրում են, որ նա իրենց տեղ միկը: Հայրիկին տեսնելով, խնդրում է սպասել ընդհրթաթարվում է հատուկ վագոնից և որոշում է սպասել ընդհանուր գնացքին, որ Քիֆիլիս պիտի մեկնել մի քանի ժամ հետո, գիշերը: Գրող Ստեփան Զորյանը եղել է կայարանում:

ում: Իմանալով այդ հայրիկին հրավիրում է բր...
Գիշերը հայրիկը վերադառնում է կայարան և բոլորին, ում
խոստացել էր Թիֆլիս ճանապարհել, տեղավորում է:



Երբ հայրիկը Երևանից Թիֆլիս վերադարձավ, շատերը հարց-
նում էին, թե ինչու էր այդ խառը ժամանակ մեկնել Երևան,
ո՞վ էր սանկցիա տվել: Նա այսպես էր պատասխանում.

— Հայ ժողովրդի բախտը, ժողովուրդն ինձ տարավ...
Չէի կարող հանգիստ լիմ տեղում մնալ և գրականությանը
պարասել, երբ ժողովուրդը վտանգի մեջ էր, իսկ հետո արդեն
Օրջոնիկիձեից սանկցիա ստացա:



Երբ Թիֆլիսում տարածվեց կեռն կիսիցյանի (Ստեփան
կիսիցյանի որդու) սպանության լուրը, բարեկամները և ծա-
նոթները ցավակցություն հայտնելու համար նրանց տուն էին
գնում: Այդ լուրը շատ ծանր էր ազդել հայրիկի վրա: Մի
երեկո այցելության գնացի՞ք կիսիցյաններին: Մոտեցանք
նրանց բնակարանին, հինգ-վեց անգամ նրանց տան առաջով
անցավ, բայց չէր կարողանում տուն մտնել: Հուզված էր և
շարունակ ասում էր.

— Խեղճ Ստեփան... խեղճ Կատարին... էդ տեսակ
տղային, միակ տղային ինչպես կորցրին... էն էլ էդ ձևով:

Մայիսի 1

«Մեծությունը օրենքներ ու կանոններ չի ճանաչում. իրեն
ցանկապատով չի փակում, եղած ցանկապատն էլ քան-
դում է»:



1921 թվականի ամառը Թիֆլիսում կազմակերպվեց Վ.
Տերյանի անվան Հայարտունը (Հայ արվեստի տուն) հայ-

րիկի նախագահությանը: Հիմնվեց «Հայ գրչի մշակներ»: Ըն-
կերությունը: Հայրիկը նախաձեռնեց նաև «Նոր օրեր» ամսա-
գրի հրատարակության գործը, որը մնաց անկատար:



Եղիշե Չարենցին նվիրված երեկույթ կայացավ: Զեկուցողը
Վիվանն էր: Հայրիկը գոհ չմնաց զեկուցողից:

— Չարենցին քննադատողը պիտի Չարենցի պես լիներ
ունենա:



1921 թվականի ամառը Բաթումից մի ուսուցիչ հայրի-
կին նվիրեց կերմոնտովի մենամարտի պատմությունը՝
«Дело о дуэли Пермонтова», կարծեմ մոտ 21 մեծադիր
էջ: Հայրիկը գնեց Գրչի մշակների ընկերության կողմից և նվեր
ուղարկեց Մոսկվա՝ Ա. Լունաչարսկուն, գտնելով, որ կերմոն-
տովին վերաբերող բոլոր գործերը պետք է կենտրոնանան
Մոսկվայում²:



Թիֆլիսում կազմակերպվում էին հայ-վրացական կուլ-
տուրական մերձեցման երեկոներ՝ երկու ժողովուրդների
գրողների ու արվեստագետների մասնակցությամբ:

Հերթական երեկոներից մեկը նվիրված էր վրաց բանաս-
տեղծ Սիկո Փաշայիշվիլու ստեղծագործությանը: Հայրիկը
հիվանդության պատճառով չկարողացավ գնալ և նամակ
ուղարկեց:

1 Վիվան — Անուշավան Զիդեշյան. Թարգմանիչ, արձակագիր
2 Այդ «Գործը» հիմա էլ գտնվում է Լենինգրադի Ռուս գրականու-
թյան ինստիտուտում:



1921 թվականի ամռանն ինչքան էր ուզում գնալ Կոչոր: Սերգո Օրջոնիկիձեն Կոչորում ամառանոց էր հատկացրել հայրիկին, որ գնա բուժվի, հանգստանա: Բայց դա էլ չհաջողվեց:



Ամառը մնացինք Թիֆլիս: Մեր նյութական դրությունը լավ չէր: Հայրիկը Հայարտան նախագահն էր, ղբաղված էր երեկույթներով ու ժողովներով: Տանը շարունակ այդ ժողովներից ու հավաքույթներից էր խոսում. ջղայնանում էր, հոգնում: Մե՛ս ոտոշում էր թողնի հեռանա, մեկ էլ ոգևորվում էր, և րեր կազմում և լուրջ գրական երեկոների՝ ակադեմիս յուցումների շարք կազմակերպելու մասին մտածո:

Տանը ազատ ժամերին հայկական էպոսի դիտական ուսումնասիրություններ էր ղբաղված: Մտոր մարդ եկած ժամանակ էպոսից էր խոսում, «Սասունցի Դավթի» երկրորդ մասից հատվածներ կարդում: Այդ ուսումնասիրության («Հայկական էպոսի բառարանից») նախաբանը մի երեկո Հայարտանը կարդաց:

Կարգալու գիշերը, Թեթրիքին, երկար ժամանակ այդ մասին էր խոսում: Դժգոհ էր իր ընդգիմախոսներից՝ Մանուկ Սեբեղյանից, Ստեփան Կանայանից¹, Լեոյից և մյուսաներից, որ իր առաջադրած հարցով չէին ղբաղվել, ըստ էության չէին խոսել:



Ամբողջ ամառ հայրիկը Հայարտան գործերով էր ղբաղված: Տանը մեղ հետ քիչ էր լինում, գրականություններ համարյա չէր պարապում:

1 Կանայան Ստեփան — բանասեր, Գևորգյան ճեմարանի ուսուցիչ



Օդոստոսի վերջերին Երևանից Թիֆլիս էր եկել Խորհրդային Հայաստանի լուստղկոմ Աշոտ Հովհաննիսյանը: Մի երեկո հայրիկի հետ նստած հին ձեռագրեր, գրքեր ու նկարներ էին նայում: Հովհաննիսյանը Հայաստանի Պետական թանգարանի համար գնեց Տիցիանի «Դանայա» մեծ նկարը (պատճենը), մի գումար տվեց, որ ժամանակին էր ու շատ տեղին: Միառժամանակ մեր դրությունը թեթևացավ. հայրիկն սկսեց գրականություններ պարապել: Բայց հենց նույն օրերին Երևանից Թիֆլիս եկավ հոդժողկոմ Արամայիս Երզրնկյանը և Հայարտանը խորհրդակցություն հրավիրեց՝ ընտրելու մի պատգամավորություն, որ պետք է մեկներ Երևան Հայաստանի տնտեսական օգնության գործը կազմակերպելու համար:

Սեպտեմբերի 5-ին պատգամավորությունը ճանապարհվեց Երևան կառավարության մարդկանց հետ՝ Սահակ Տեր-Գաբրիելյան, Սերգո Խանոյան, Աշոտ Հովհաննիսյան, Արամայիս Երզրնկյան¹, Սուսաննա Շահվերդյան²: Պատգամավորության մեջ էին հայրիկը, Լեոն, Դեմիրճյանը, Մամիկոն Գևորգյան³, Լեոն Թումանյանը (իշխանուհի Մարիամ Թումանյանի որդին) և ուրիշներ: Խումբը մեծ էր: Գնացրում, ճանապարհին, հայրիկը պատմություններ էր անում, խոսում, ղբաղեցնում բոլորին: Հենց որ Լոռու ձորը մտանք, հայրիկի ղրույցի նյութը ղարձավ Լոռին: Ողևորված խոսում էր Լոռու բնությունից, ղանաղան պատմություններ էր հիշում, հետն էլ ցույց տալիս այս կամ այն ծանոթ ժայռերն ու վայրերը:

1 Կոմունիստական կուսակցության և Խորհրդային Հայաստանի հայտնի պետական գործիչներ

2 Կոմունիստական կուսակցության հնագույն անդամ. մանկավարժ, թարգմանիչ

3 Գևորգյան Մամիկոն — բառարանագետ, թարգմանիչ, թատերագիր



Երևանում ապրում էինք Աֆրիկյանների¹ տանը, որ այգու մեջ էր (Էջմիածնի ճանապարհին):

Պատգամավորներն օրը երկու անգամ քաղաք էին գնում խորհրդակցության: Երկու-երեք շաբաթ տևեց, մինչև որ կազմակերպվեց 204-ը՝ Հայաստանի օգնության կոմիտեն: Ընտրվեց վարչություն, խմբագրվեց կոմիտեի կանոնադրությունը, հայրիկը գրեց կոչը, որոշեցին չհտազա անելիքները: Երեկոները, պատշգամբում հավաքված, պատգամավորները մինչև ուշ գիշեր զրույց էին անում ու վիճում: Երբեմն այցելության էին գալիս կառավարության մարդիկ՝ Ա. Երզնկյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Կարինյանը² և ուրիշներ:

Հայրիկը 204-ի նախագահ էր ընտրվել և առաջարկ կար, որ գնար արտասահման: Գնալու ցանկություն չունեի, չէր ուզում, մանավանդ որ այդ օրերը ժողովուրդի նախագահ Ալ. Մյասնիկյանն իր մոտ էր հրավիրել գրողներին և նրանց խոստումներ արել պարապելու հնարավորություններ ու հարմարություններ տալու մասին: Որոշվել էր Գրողների տուն կառուցել Երևանում, իսկ Արամյանցի կալվածքը (Ախթալայում) գրողների հանգստի տուն դարձնել: Ալ. Մյասնիկյանի սրտալի վերաբերմունքը դեպի գրողն ու գրականությունը հայրիկին շատ էր ոգևորել, ինչ-որ թեթևություն էր զգում այդ օրերին, տրամադրությունը բարձր էր:

— Վերջապես գրականությունը պաշտպանված է: Կառավարություն կա. սրանից հետո քեզ համար հանգիստ նստիք ու պարապիր. մեզ էլ է՞ք է հարկավոր, — այդպես էր խոսում Լեոյի, Դեմիրճյանի հետ:

Այդ օրերին Երևանի դրությունը դեռևս ծանր էր. փողոցներում, պատերի տակ թափված մերկ ու սոված երեխաներ, տանջահար մարդիկ: Հայրիկի վրա ծանր էին ազդում այդ տեսարանները: Ամեն անգամ տուն դառնալիս հայրիկը տեսնում էր նրանց և լցվում խորին տխրությունով:

¹ Աֆրիկյաններ — Երևանի ուներ ընտանիքներից մեկը

² Կարինյան Արտաշես — բնադատ-գրականագետ, կոմունիստական կուսակցության գործիչ



1921 թվականի սեպտեմբերին, 204-ի կազմակերպման շրջանում, հայրիկը մի քանի անգամ հանդիպումներ ունեցավ ժողովուրդի նախագահ Ալ. Մյասնիկյանի հետ:

1921 թվականի սեպտեմբերի 21-ին 204-ի ժողովրդական կոմիտեի օրը, Ալ. Մյասնիկյանի նախագահությամբ, ընդունեց «Գեղարվեստական աշխատողների ապահովման մասին» դեկրետը:

Հայրիկը շատ էր ոգևորված այդ ամենով: Մտադիր էր 204-ի գործերով Պոլիս մեկնելուց ու վերադառնալուց հետո ամբողջովին նվիրվել գրականությանը:

Հայրիկն այդ օրերին էր՝ հոկտեմբերի 4-ին, որ նամակ գրեց Վենետիկ Ավ. Իսահակյանին, հորդորելով նրան վերադառնալ Հայաստան, միասին աշխատելու և միասին անցկացնելու իրենց կյանքի վերջին տարիները: Նա Իսահակյանին գրում էր.

«Արի՛, Ավո ջան...»

...Գրականությունն ու գեղարվեստը երբեք էսքսն ուշադրության առարկա չեն եղած մեր աշխարհքում...

Թերևս այժմ կազմենք մեր Վերնատունը մեր երկրում ու վերջին օրներս միասին անցկացնենք...»:



Հայրիկի Պոլիս մեկնելու պատճառը եղան գաղթականները, հատկապես սովյալ գաղթականների մի պատիկը:

204-ի կազմակերպման շրջանում, երբ Ալ. Մյասնիկյանն առաջարկել էր մեկնել արտասահման՝ հայրիկը հրաժարվել էր, ասելով, թե այժմ պետություն կա արդեն և ինքը ազատ է ժողովրդի մասին հոգալու բոլոր պարտականություններից, խնդրել էր հնարավորություն տալ միայն գրականությամբ պարապելու: Որոշել էր ոչ մի զիջում չանել և մնալ Հայաստանում: Բայց հենց այդ որոշման մյուս օրը, ցերեկը, երբ Աֆրիկյանի այգուց (որտեղ ապրում էր մյուս պատգամավորների հետ միասին) Լեոյի հետ ոտքով անցնում է Աբով-

յան փողոցով, տեսնելով մի խումբ կիսամերկ գաղթականների պատերի տակ թափված, որոշումը փոխում է և ասում Աեոյին. «Չէ, Առաքել, քանի հայ ժողովուրդը դեռ սոված է ու մերկ, մենք չենք կարող մեր գործով՝ գրականությամբ պարապել...»:

Եվ հենց այդ օրն էլ մտնում է Մյասնիկյանի մոտ, համաձայնություն է տալիս մեկնելու Պոլիս՝ հանգանակություն, հրկրի տնտեսական օգնության գործերով:

Այս որոշմամբ էլ Երևանից մեկնեց Թիֆլիս:



Դեռ Երևանում հայրիկը որոշել էր վերադարձին իջնել Քոչարի կայարանում ու մի քանի օր մնալ Գսեղում: Բայց երբ մեջտեղ եկավ 204-ի գործերով Պոլիս մեկնելու խնդիրը՝ Գսեղ գնալը մտքից հանեց: Այլ Մյասնիկյանը, իմանալով հայրիկի ցանկությունը, նրան հատուկ վագոն էր առաջարկել, որպեսզի իր տրամադրության տակ մնա կայարանում, բայց հայրիկն այդ առաջարկից հրաժարվեց: Երբ Լոռու ձորը մտանք, նա մի պահ տրամադրվեց Քոչարի կայարանից, բայց որոշեց շարունակել ճանապարհը: Կենտրոն, ժայռերին, ձորերին կարոտով նայեց, Դերեզի վշտոցը լսեց, կայարանում եղած գյուղացիներից մի քանիսին կանչեց, հետները խոսեց և ճանապարհը շարունակեց դեպի Թիֆլիս... Ի՞նչ իմանար, որ վերջին անգամն էր...



1921 թվականի հոկտեմբերի սկզբներին, Պոլիս մեկնելուց առաջ, հայրիկն ընտրվել էր Վրաց գրողների միության պատվավոր անդամ: Այդ առթիվ իր մոտ հրավիրեց տարբեր բնագավառների և ազգությունների ներկայացուցիչների, մոտ 40 հոգու. գրողներ, նկարիչներ, կոմպոզիտորներ, հասարակական գործիչներ: Ինքը ոգևորված կենացներ էր խմում, ճառեր ասում, բոլորին ոգևորում:

Վրաց գրողներից այդ երեկոյին ներկա էին Գրիշաշվի-

լին, Տիցիան Տաբիձեն, Պաուլո Յաշվիլին, գործիչներից՝ Ալեքսանդր Կանչելին, կոմպոզիտորներից՝ Զաքարե Փալիաշվիլին, հայ և ռուս ականավոր գործիչներ:

Այդ օրվա թամազան Ալեքսանդր Կանչելին էր: Նա, կենացներ խմելիս, վրաց պոետների կենացը խմում էր Թումանյանի աղջիկների հետ զույգ-զույգ, երբ անցավ Թումանյանի շորորոզ աղջկա կենացին, թամազան շորս կողմն էր նայում վրաց բանաստեղծ գտնելու. «Како, наши поэты коптились, у Туманяна больше дочерей, чем у нас поэтов...»:

Հայրիկն ի՞նչ իմանար, որ դա իր կյանքի վերջին խնջույքն էր լինելու...



Հոկտեմբերի սկզբներին պատրաստություն էր տեսնում Պոլիս մեկնելու: Ամեն ինչ անում էր շտապ, անհանգիստ և ջղային. «Մի շուտ գնամ, գործս վերջացնեմ, գամ սենյակումս սարքվեմ ու նստեմ պարապեմ»:

Գնալուց առաջ նոր վառարան գնեց, դրեց սենյակում, որպեսզի Պոլսից վերադառնալիս բուխարի շինել տա: Գնալու օրերին, հենց որ իր սենյակն էր մտնում, տեսնում էր դրադարանը, դրասեղանը և իր թղթերը, Պոլիս գնալը ծանրանում էր սրտին. «Ի՞նչ լավ կլիներ արդեն գնացած ու հտ եկած լինելի...»: Գնալու օրն էլ ճաշի ժամանակ տխուր էր, քիչ էր խոսում: Կառքին սպասելիս նալեց տան իրերին և անպակ՝ շէր ուզում լինալ, որ ասաց. «Երանի՛ էս բոպեին մի բան պատահի ու գնալս խանդարվի, էլ չգնամ. կարծես թե սպանդանոց են տանում ինձ»:



Պոլիս գնալը շխանգարվեց. երեկոյան դեմ կառքով գնացին կայարան ճանապարհելու: Կայարանումն էլ տխուր էր: Հայրիկին խոստացել էին մինչև Բաթում հատուկ կուպե, բայց ինչպես պարզվեց, ոչ միայն դա, այլև ընդհանուր վա-

գոններում ոչ մի ազատ տեղ չկար: Ճամպորուկը մի կերպ մի տեղ դրին, ինքն էլ վազոններից մեկի միջանցքում դառն մոտ հազիվ կանգնելու տեղ գտավ: Տեսնելով այս վիճակը, ասացինք, որ տուն դառնա, գնալը հետաձգի ավելի բարեհաջող պայմանների: Չհամաձայնվեց.— Շուտ դնամ, գործերս վերջացնեմ, որ շուտ էլ վերադառնամ:



Պոլսից վերադարձավ դեկտեմբերի 22-ին, Երեկոյան: Շատ էր գունատ, հոգնած ու նիհարած:

Այդ օրը մայրիկի ծննդյան հիսնամյակն էր: Մենք, Երեխաներս, որոշել էինք տոնել: Պատրաստութուն էինք տեսել, հյուրեր հրավիրել, բայց հայրիկի անսպասելի վերադարձը և այն էլ հիվանդ՝ ամեն ինչ խափանեց: Հյուրերի մեջ էր և բժիշկ Գր. Սաղյանը: Թեյից հետո տեսնելով հայրիկի ծանր դրությունը, բժիշկը հյուրերին առաջարկեց ցրվել:

Սաղյանը երեք-չորս օր մենակ էր բուժում, իսկ հետո հրավիրեց բժիշկներ Մակարովին, Բաղևոսյանին, Մաղաքյանին: Բոլորն էլ եկան այն եղրակացություն, որ դեղնախոր է: Դրությունը վատանում էր, հրավիրեցին նաև վիրաբույժների՝ Տեր-Ներսիսյանին և Չաչիկյանին: Գիշերները բորն անհանգստացնում էր: Չէր քնում:



Մոտավորապես ամիս ու կես մնալով Պոլսում, նա միևնույժ միախալով պետք է անցներ Փարիզ և ապա Ամերիկա, բայց հիվանդության պատճառով բժիշկները խորհուրդ են տալիս վերադառնալ Կովկաս:

Պրոֆեսոր Աղաջանյանը, հայրիկի դրությունը բավական լուրջ համարելով, խորհուրդ է տվել Կովկաս վերադառնալ Բեռլինով, այնտեղ բուժվելուց հետո, բայց հայրիկը, շտապելով հայրենիք, գերադասել է վերադառնալ գնացած հաբապարհով:

Բաժնում է հասնում արդեն հիվանդ վիճակում: Սեկ օր անց

է կացնում քահանա Մեսրոպ Մելյանի տանը, իսկ մյուս օրը դնացքով ճանապարհովում Թիֆլիս:



Հայրիկի Պոլիս մեկնելու օրերին նանը վատ երազ էր տեսել: Գյուղից եկավ, պատմեց երազը, լաց եղավ և խընդրեց. «Դու ծովի Ֆրեսը դուրս մի՛ գա, էն երկիրը մի՛ գնա...»: Բայց հայրիկը չսկեց ու գնաց:

Ամիսներ անց, Պոլսից վերադառնալուց հետո, երբ հայրիկը հիվանդ պառկած էր տանը, նանը գյուղից Թիֆլիս եկավ տղային տեսնելու: Հիշեցրեց իր երազն ու ավելացրեց. «Օհանես ջան, երազս տեսել էի, բա որ ասի ծովի երես դուրս մի՛ գա...»:



Պոլսում ի պատիվ հայրիկի կազմակերպվել են բազմաթիվ երեկույթներ, ճաշերույթներ, հանդիպումներ: Հայրիկն ամենուրեք հանդես է եկել ճառերով, կոչ անելով համախմբվելու նոր Հայաստանի՝ խորհրդային Հայաստանի շուրջը, օգնել ժողովրդին շինացնելու իր նոր հայրենիքը:



1921 թվականի նոյեմբերին հայրիկը Պոլսում տեսել էր «Անուշը»: Շատ էր հավանել հատկապես Անուշի գերակատարին՝ տիկին Մաշա Սուրաբյանին: Իմացել էր, որ տիկին Սուրաբյանն իր հայրենակիցն է՝ ջալալօղլեցի: Հայրիկը ծաղկեփունջ էր ուղարկել երգչուհուն՝ էքսպրոմտ գրած մի քանակի հետ միասին:



Պոլիս մեկնելիս հայրիկը հետը տարավ իր երկերի 1919 թվականի հրատարակության նյութերը: Պոլսում նա հրատարակության էր տվել այդ ժողովածուն:

1922 թվականի ամառը, հիվանդ օրերին, Պոլսից ստանում է այդ գրքի մամուլները սրբագրության համար. սրբագրելիս տեսնում է բազմաթիվ սխալներ, պոեմներում՝ նույնիսկ էջերի բացթողումներ: Կարմիր մատիտով ուղղումներ, լրացումներ էր անում լուսանցքներում և վրդովված խոսում այդ անփույթ հրատարակության մասին:

Նույն թվականի դեկտեմբերին, երբ Պ. Մակինցյանը արտասահման էր մեկնում, հայրիկը նրան հանձնարարեց, Պոլսով անցնելիս, գրքի սրբագրված մամուլները հանձնել հրատարակչին՝ Հայկ Բերբերյանին: Այդ հանձնարարության հետ, նա մի նամակ գրեց տպարանատիրոջը՝ և մամուլների հետ միասին տվեց Մակինցյանին:

Սակայն, ինչպես հետագայում պարզվեց, Մակինցյանը նամակը և գրքի սրբագրված մամուլները տեղ չէր հասցրել, և Պոլսի ժողովածուն լույս տեսավ սխալներով: Հայրիկն արգելել էր լույսընծայումը, բայց Հայկ Բերբերյանը իր ծախքերը հոգալու համար վաճառքի էր հանել և շատ արագ սպանել տպագրանիւն:

⊙

Պոլիսը չէր հավանել... «Նրանք մարդկանց տուն չեն հրավիրում, այլ սրճարան:

— Մի բաժակ սուրճի համեցեք սրճարան...

Զսիրեցի, Պոլիսն իմ տեղը չի: Ես չեմ կարող էնտեղ ապրել»:

⊙

Պոլսում ամենից շատ հավանել էր Նրվանդ Օտյանին. «Միակ մարդը, որ սիրում էի Պոլիս— Նրվանդ Օտյանն էր: Սոսու էր գալիս շուտ-շուտ: Թեև խմում էր, բայց երբեք իրեն չէր կորցնում»:

Պոլսից իր հետ բերել էր Օտյանի նոր գիրքը՝ «Փառնչունի», բայց դա այնքան չէր հավանում, ինչպես «Առաքելություն ի Մապրվարը»:

⊙

Շատ էր խիստ դեպի՝ իր գրենական պիսուլքները՝ թղթեր, գրիչները, մատիտները, թանաքը և այլն: Գնում էր մեծ քանակությամբ դանազան տեսակի ու գույնի, ընտիրը, լավը, գեղեցիկը:

Դասավորում էր սեղանի արկղների մեջ, մեծ խնամքով, կարգով:

Վերջին անգամ Պոլսից մեծ արկղով թուղթ, թանաք, մատիտ, ծրարներ և գրենական պիսուլքներ բերեց, նաև մատիտ սրելու, տետրեր կազմելու փոքրիկ գործիքներ, բայց բոլորն էլ մնացին առանց գործածելու...

1922

Հունվարի 4

Հայրիկն իրեն լավ էր զգում: Արեղը Երևանից եկավ:

Հունվարի 10

Կոնստիլիումը որոշեց, քանի որ իրեն լավ է զգում, կարող է վեր կենալ անկողնուց: Բայց մյուս օրը նորից վատ զգաց և պառկեց:

Հունվարի 11

Վիզայի համար եկան հայրիկին լուսանկարեցին, հետո էլ՝ մեզ:

Աշխեն Թումանյանի հուշերից. «Տուն հրավիրված լուսանկարիչն առաջարկեց, որ միասին էլ լուսանկարվենք՝ հայրիկը շուգեց (շատ էր նիհարել ու փոխվել):

Երբ Բեռլին մեկնելու վիզան բերին, հայրիկն ասաց, որ իր փոխարենն էս ստորագրեմ՝ մեր ձեռագրերը միմյանց շատ նման էին: Ստորագրեցի: Հայրիկը նայեց՝ ոչ մի տարբե-

րություն: Միծաղեց. «Լալ է բանկում փող չունեմ, թե չէ դու ազատ կհանիր...»:

Հայրիկը համոզված էր, որ ես պետք է գրական ասպարեզում աշխատեմ, կարծում էր, թե իրենից շատ բան եմ ծանոթել: Մոսկվայում շարունակ ասում էր. «Մի՞թե սխալվեցիքս վերաբերմամբ»: Մի անգամ խոսքի արանքում ասաց. «Էդ որ ձեռագիրդ իմին նման է՝ դատարկ տեղից չի»: Ես կատակի տվի. «Դատարկ տեղից չի, բայց դատարկ տեղումն է»:

Հաճախ էր ասում. «Աշխեն ջան, իմ ամենամեծ հոգսը դու ես»: Առարկում էի. «Ինչո՞ւ եմ ես, ընդհակառակը, ձեռիկը կսովորի, ես կաշխատեմ: Ա՛յ, մյուսներն են հոգս, որ դեռ ոտքի չեն կանգնել, դեռ սովորում են»: Ասում էր. «Զե՛ս հասկանում է՛, չե՛ս հասկանում»:

Եվ այդպես էլ շհասկացա:

Հունվարի 19

Կոնսիլիում:

Հունվարի 23

Փոքր կոնսիլիում:

Հունվարի 24

Մեծ կոնսիլիում, տասը բժշկի մասնակցություն:

Հունվարի 30

Իրեն լավ էր դգում. լոգանք ընդունեց:

Փետրվարի 1

Որոշվեց վիրահատել: Հեռագրեցինք Երևան, կառավարությանը՝ դրամի համար: Հրավիրեցինք Մերցվելեոին (գերմանացի բժիշկ):

Փետրվարի 8

Մերցվելեոը վիրահատությունը տասն օրով հետաձգեց: Քորն ուժեղանում էր: Գիշերներն անքուն էր մնում:

Փետրվարի 9

Բժիշկներ Իսախանյանը և Կիրշենբլատը որոշեցին վրահատությունն անել երեք օրից:

Փետրվարի 10

Բժիշկ Մակարովը կողմնակից էր վիրահատությունը հետաձգելուն:

Փետրվարի 11

Բժիշկ Մարկելիշը քննեց և նույնպես հետաձգեց: Բժիշկ Սաղյանը մինչև գիշերվա ժամը երկուսը մոտն էր, զրույց էին անում:

Փետրվարի 12

Սաղյանն էլ կողմնակից էր վիրահատությունը հետաձգելուն:

Փետրվարի 14

Բժիշկ Տեր-Ներսիսյանը քննեց և որոշեց տանել Բեռլին և Բեռլինում անել վիրահատությունը: Այդ օրերին հայրիկը դժգոհ էր Սաղյանից: Հրավիրեցինք Մարկովին, որ այդ օրվանից նա խնամի հիվանդին:

Փետրվարի 20

Տեր-Ներսիսյանը նորից էր պնդում, որ հայրիկին Բեպին տանեն: Հրավիրեց մեծ կոնսիլիում և որոշվեց տանել Բեպին:

Փետրվարի 22

Նրևանից բժիշկ կազարեղ եկավ. նա էլ քննեց:

Փետրվարի 23

Մուշեղը Շուլավերից բերեց ժեն-շեն՝ դեղնախտի դեմ (ինքն էր գլուղացիների ցույց տալով որոնել ու գտել սաբերում): Հայրիկը ընդունեց ախորժակով և հույսերով: Գիշերը գրքեր էր կարդում ժեն-շենի մասին: Վատ քնեց:

Փետրվարի 25

Բարեկենդանի օրերն էին. դեղնախտը պակասել էր, իրեն լավ էր զգում, դեմքի գույնը պարզ էր:

Դեղնախտը բուժող բժշկին մի անգամ ասաց, թե «Կացեք մի լավանամ՝ ժելտուխով հիվանդներին, բոլորի՛ն բժշկեմ: Թուրքերեն մի առած կա, ասում է՝ ում գլխին ինչ՝ դա, դրա վարպետը կդառնա»:

Փետրվարի 26

Մեծ կոնսիլիում, բժիշկներ Մարկելիչի, Մարկովի, Զաչիկյանի, Սաղյանի մասնակցությամբ: Որոշեցին Բեպին շտանել, վիրահատությունն անել Թիֆլիսում: Ժեն-շենից հետո իրեն լավ էր զգում, ախորժակը լավ էր, որոշվեց երկրորդ անգամ զեղը կրկնել:

Մարտի 2

Մուշեղը Շուլավերից նորից նույն զեղը բերեց:

Մարտի 3

Հայրիկն իրեն լավ էր զգում, վեր կացավ:

Մարտի 5

Կոնսիլիումը որոշեց հինգշաբթի՝ մարտի 9-ին, վիրահատությունն անել Շահապարոնյանի հիվանդանոցում:

Մարտի 6

Պատշգամբում, ճոճաթեում նստած էր: Արև, տաք օր էր:

Մարտի 7

Առավոտը պատրաստություն էինք տեսնում հայրիկին հիվանդանոց փոխադրելու: Բժիշկները, երկար փահրիզից (դիետա) հետո, թույլ էին տվել ամեն ինչ ուտել: Ուշ երեկոյան ցանկություն հայտնեց, որ բոլորս հավաքվենք, երեկոն միասին անցկացնենք և լսենք իրեն: Հավաքվեցինք մահճակալի շուրջը: Հարցրեց՝ չե՞ք ուզում արդյոք լսել իմ վերջին ցանկությունները, դժբախտության դեպքում իմանաք ձեր անելիքները: Նա ուզում էր, որ մենք, որպես հասուն մարդիկ, առողջ դատողությամբ, հանգիստ նայենք իր վիճակին: Մեծ եղբայրս՝ Մուշեղը, այդ հարցը դառավ միանգամայն ավելորդ, դրույթունը համարելով անվտանգ, իսկ մայրիկը թե՛ կյանքում ամեն ինչ կարող է պատահել. լավ կանցնի— լավ, սրտի ցանկություն է, պիտք է լսել:

Հայրիկին դուր եկավ մայրիկի խոսքը:

«Նախ, ինչ էլ պատահի ու լինի ինձ հետ, դուք ձեզ հասուն մարդու նման պահեցեք, խելոք ու զուսպ եղեք: Բժիշկների վերաբերմամբ, եթե նույնիսկ մի սխալ անեն

ու նրանք պատճառ դառնան իմ կյանքի վերջին, ոչինչ չա-
սեք, ոչինչ չանեք ու մեր լավ հարաբերությունները բոլորի
հետ միշտ լավ պահեցեք:

Տունը լինի միշտ համերաշխ, իրար հետ մոտ ու խաղաղ,
սիրով և միշտ միասին, իրար օգնեցեք, հավասար նայեցեք,
դիջող ու ներող եղեք:

Տունը պահեցեք էնպես, ինչպես հիմա է. ես միշտ ձեզ
հետ եմ, ձեր մեջ եմ: Տունը պահեցեք և իրար լավ նայե-
ցեք:

Գրադարանս թանկ պահեցեք. դժվարությամբ եմ հավա-
քել գրքերը. երկար տարիների ընթացքում. օգտվեցեք, կար-
դացեք, խնամեք ու պահեք:

Բոլոր ձեռագրերս կայրեք: Ես ինքս էլ վերջերս շատ բան
եմ ոչնչացրել, բայց ոչնչացնելու բան շատ ունեմ դեռ: Հին
դրած բաներս բոլորը կայրեք: Անավարտ ձեռագրերիցս կի-
սատ-պոատ ոչինչ չհրատարակեք:

Իսկ ինձ, շատ կուղենայի, որ տանեիք մեր գյուղը՝ Դրզի
ուսը, էն տեղը շատ եմ սիրել մանկուց ու սիրում եմ: Եվ
աշխատեք Արտիկին գտնել, եթե կենդանի եղավ ու եկավ,
էլ ի՞նչ ասեմ... Իսկ եթե մի օր նրան գտնեք, կրեիք ինձ
մոտ, թող էնտեղ կողքիս լինի, միասին լինենք: Չէ՞ որ ինձ
համար նա ամենաթանկն է... ես թանկ չեմ էնքան ինձ հա-
մար, որքան նա ինձ համար. կուզեի, որ մոտս լինեք...»:

Մարտի 8

Ցերեկը ժամը 1-ին կառքով հայրիկին տարանք Շահպա-
րոնյանի հիվանդանոցը:

Մարտի 9

Վիրահատության օրն էր: Առավոտը ժամը 10-ին բժիշկ-
ները խմբով հինգ-վեց հոգով ներս եկան հիվանդին տեսնե-
լու, վիրահատության սենյակը տանելու համար: Հայրիկը,
երբ տեսավ բժիշկների այդ մեծ խումբը, ծիծաղեց: Տանե-
լուց առաջ՝ թե՛

«Կացեք ձեզ մի առակ յառմեմ:

Մի օր մոլլի էլը տանում են գեղամեջ՝ պոչը կտրելու...
մոլլի կնիկը թե՛ այ մոլլա, էլդ գեղամեջ տարան՝ պոչը
կտրեն, հասի՛... Մոլլեն թե՛ ո՞վ տարավ. թե՛ գեղովի, մոլլեն
թե՛ այ կնիկ, հանգիստ կաց, բան չեն անի, տանողը որ մեկը
լինե՛ր՝ պոչը կկտրեր, հիմա որ սաղ գեղն ա կտրելու՝ չեն
կտրի. կտրելու ժամանակ մինը կասի՝ երկար կտրենք, մյուսը
թե՛ կարճ, մեկը կասի՝ մկրատով, մյուսն էլ թե՛ դանակով, ու
չեն կտրի... Եվ ճիշտ որ չեն կտրում...»

Հիմի իմն է, հասարակության հիվանդ եմ դառել, էդքան
որ եկել եք օպերացիա անելու, ով է իմանում, կտրելու՞ եք,
թե՛ չէ...»:

Բժիշկները ծիծաղեցին:

Վիրահատումը սկսվեց առավոտյան ժամը 11-ին, տեղ
երեք և կես ժամ: Հինգ բժիշկ էին: Վիրահատողը վիրաբույժ
Մարկկիչն էր, օգնականները՝ վիրաբույժներ Տեր-Ներսիս-
յանը, Չաչիկյանը, դարկերակին հետևում էր բժիշկ Սաղ-
յանը, մի քանի բժիշկ և բույրեր շրջապատել, օգնում էին
նրանց: Վիրահատման ընթացքում բժիշկները երկու անգամ
խորհրդակցություն ունեցան, որոշելու համար՝ ուռուցքը
կտրե՞ն, թե թողնեն... և այդ խորհրդակցության ժամանակ
էլ նրանք որոշել էին լեղուղիների մոտ եղած ուռուցքը թողնել,
չկտրել և լեղու համար նոր ճանապարհ էին բացել...

Բժիշկները չէին վստահել կտրելու այդ ուռուցքը, վախե-
նալով ծանր հետևանքներից: Հայ վիրաբույժները, հատկա-
պես Տեր-Ներսիսյանը, հրաժարվել էր հայրիկին վիրահա-
տելուց, վախենալով, որ հետագայում կասեին, թե հայ
բանաստեղծը բժշկի զոհ դարձավ: Այդ ծանր պարտականու-
թյունը հանձնարարել էին բժիշկ Մարկկիչին, որը ազգու-
թյամբ լեհ էր: Զութակահար էր Մարկկիչը և շատ հմուտ վի-
շաբույժ:

Վիրահատումից հետո, ժամը 6-ին հայրիկն արթնացել
էր: Գիշերվա ժամը 10-ին հանգիստ էր, թույլ էր, չէր խո-
սում:

Մի շաբաթ տաքությունը բարձր էր: Զուր խանկն արգել-

ված էր, ջրի մեծ պահանջ էր զգում և կռուվա կարողութե քաշում... կռուվա աղբյուրներից էր խոստում՝ կաթնաղբյուրի, ս. Գրիգորի աղբյուրների ջրիցն էր ուզում:

Մարտի 10

Գիշերը հանգիստ էր մի քիչ բորժում ցովինք: Չէր խոսում:

Մարտի 12

Լավ էր:

Մարտի 13

Լավ էր: Մածուն կերավ:

Մարտի 14

Հավի կոտլեա տվին:

Մարտի 18

Գյուղից եկան նանը և հորեղբայր վահանը: Նանի գալուստով շատ էր ուրախացել:

Մարտի 20

Թույլ էր զգում իրեն: Մայրը փիփերթ եփեց, տարանք հիվանդանոց, մեծ ախորժակով կերավ:

Մարտի 21

Հայրիկն իրեն լավ էր զգում:

Մարտի 22

Արդեն լավ էր զգում, առաջին անգամ անկողնում նըստեց: Եղանակը լավ էր, գարնանային, տաք օր:

Մարտի 23

Արևոտ եղանակ էր, իրեն լավ էր զգում:

Մարտի 24

Ճոճաթոռով տարանք պատշգամբ, ստոդոտալու, համար գոհ էր և ուրախ: Պատշգամբում զրույց էր անում՝ Ստեփան Մանուկյանի հետ, որը նույնպես բուժվում էր այդ հիվանդանոցում:

Մարտի 25

Հայրիկի սենյակը կարգի բերինք: Սկզբնատունը դահլիճ փոխադրեցինք:

Մարտի 26

Հայրիկին հիվանդանոցից կառքով բերինք տուն:

Մարտի 27

Լավ էր զգում իրեն. ախորժակով ճաշեց: Հիվանդ ժամանակ զգուշությունն էր ծայրահեղության հասցնում, առողջ ժամանակ՝ անհոգությունը: Հիվանդության օրերին ամեն ցավ ու տանջանք տանում էր անտրտուն, ժպիտը դեմքին, ամեն ինչ անում էր, որպեսզի շուտ, շուտ վեր կենա ու պարապի:

Բժիշկ Չաչիկյանը զարմանում էր հայրիկի վրա, թե ինչպես էր դիմանում ամեն ցավի ու տանջանքի:



Հայրիկը բույսերի, ծաղիկների բուծիչ հատկությանը շատ էր հավատում: Դեղ ասած բանը չէր սիրում, դժգոհությամբ ու դժկամությամբ էր ընդունում, բայց երբ իմանում էր, որ այս կամ այն դեղն իրեն ծանոթ բույսից կա՛մ ծաղկից է պատրաստված, ընդունում էր մեծ հավատով, և սկսում էր խոսել բույսերի, ծաղիկների հատկութուններից: «Ծաղիկներից պատրաստված դեղը՝ ժողովրդի դարերի փորձն է, ժողովուրդն է գտել, ժողովուրդն է ստեղծել»: Առողջ ժամանակ էլ մրսած լինելու դեպքում կոտու բույսերից պատրաստած թեյ էր խմում՝ մոռի, լորենու, դանթափի, ուրցի և այլն: Շատ էր սիրում, մասուրը, ամփուկը և միշտ գործ էր անում:

Ստրաֆանտին ընդունում էր, որովհետև բժիշկներն ասել էին, թե դա բոժոժիկից (ПАУДЫМ) է պատրաստված:

Ամիրդովլաթի՛ ձեռագրերից մեկն ուներ և մի՛ քանի՛ հին բժշկական գրքեր, միշտ թերթում էր, կարդում և առանձին նշում ժողովրդական դեղերն ու խորհուրդները:

Մարտի 28

Կալ էր:

1922 թվականին Ալ. Մյասնիկյանը Անդրերկրի բարտուղարն էր, ապրում էր Թիֆլիսում: Մշտապես հետաքրքրվում էր հայրիկի առողջական դրուսթյամբ: հետևում էր նրա ապաքինմանը, հոգում էր, օգնում:

Երկու անգամ այցելության եկավ հայրիկին Հ. Սուրյաթյանի հետ. առաջին անգամ հունվարի 13-ին, երկրորդ անգամ՝ վիրահատումից հետո՝ մայիսի 24-ին:



Մաղյանը պատմում էր. «Մարտի 9-ին, վիրահատումից հետո, երեկոյան մոտը նստած եմ, շատ էր ծարավ: Նայեց»:

1 Ամիրդովլաթ Ամասիացի (1415—1496) — մատենագիր, բժիշկ

Նայեց, հետո հարցրեց, թե՛ Գրիշա՛, կյանքում, ի՞նչ ևս կարծում, ամենալավ բանը ո՞րն է. ևս էլ միտք արի, միտք, ասի՛ ներդաշնակութունը ներքին և արտաքին աշխարհի, ներդաշնակ, խաղաղ դրուսթյունը:

Հովհաննեսը թե՛ չէ՛, ամենալավը ջրի ձենն է, ջրի վըշոցը... Հիշեց կոտու սարերի աղբյուրները, ջրերը... Մտաբերեց եղբոր պատմածն իր հոր մասին.

«Հերս հիվանդ էր. վերջին գիշերն էր. ծանր էր, դուրս էլ ցուրտ, հանկարծ հեռվից լսեց ձիու խրխնջոցը... Ա՛յ. ևս քու ձենիդ դուրբան... Ասաց, թեքվեց ու քնեց...»:

Ապրիլի 15

Տրամադրությունը լավ չէր: Թաթախման երեկո՛ էր. հիվանդությունից հետո, առաջին անգամ բոլորս միասին նըստեցինք ընթերիքի, աշխատում էինք մեր երգերով տրամադրությունը լավացնել, երեկոն ուրախ անցկացնել:

Մյուս օրը դատիկ էր, հայրիկը վեր կացավ անկողնից, առաջին անգամ պատշգամբ դուրս եկավ՝ և հյուրեր էր ընդունում:



Ապրիլի վերջերը իրեն լավ էր զգում, արագորին կաղդուրվում էր, առողջանում և ուժեղանում:

Մայիսին ամբողջ օրերը պատշգամբում էր անցկացնում: Երբեմն պառկում էր, հանգստանում և պարապում ընթերցանության մեջ: Իրեն լավ էր զգում և շատ էր կարդում: Մեծ ոգեկոծությամբ: Իրեն լավ էր զգում և շատ էր կարդում: Մեծ ոգեկոծությամբ սկսեց կարդալ Սենկևիչի «Հեղեղը» ոտակներն: Այդ վերջինս պատահամբ էր ընկել նրա ձեռքը. դեռ ուժ չունեի իր առանձնասենյակը դնալու, պատշգամբում արկղների մեջ անդամ ստագրերը թերթել էր և «Русская мысль» ամսագրում գտել էր Սենկևիչի այդ վեպը: Շատ էր հավանել: Այդ ժամանակ սկսեց կարդալ և Ա. Յացիմիրսկու գիրքը՝ «Новеи-

1 Թաթախման երեկո — կրոնական տոն ջրօրհների նախօրյակին

шая польская литература», այնուհետև՝ հայ միջնադարյան լեզունդները:

Օր-օրի հայրիկի պարապելու ցանկությունն ուժեղանում էր.

«Երբեք ինձ՝ էսքան առողջ ու լցված շեմ զգացել, ինչպես հիմա...»:

Իր սենյակը նորից կարգի բերեց, ձեռագրերն ու թղթերը հանեց, մի մասը ոչնչացնում էր, մի մասի վրա ուշխատում: Որքան նկատեցինք՝ շարունակում էր պարապել էպոսով, նրան զբաղեցնում էին «Սասունցի Դավիթը», մանկական գրականությունը և Արևելքի բանաստեղծները, հատկապես պարսիկ և չին բանաստեղծները: Այլևի ուշ անցավ խաբանիի բառյակների թարգմանությանը և հետո վերցրեց «Անբուն կրկուի» «Հասկերում» տպագրված տեքստը, որի վրա սկսեց շտկումներ անել:

Դուրսը, պատշգամբում, նա պարապելու մի հարմար անկյուն էր սարքել. փոքրիկ սև սեղան սպիտակ պիտոցով, սեղանի վրա՝ գրիչ, կտրիչ, մատիտ և փոքրիկ տետրեր, որ ինքն էր կարել: Կողքին դռն էր փակուղե շինական ծաղիկաման՝ ծաղիկներով, և իր հեռադիտակը՝ սարի անցողարձ անողներին նայելու համար: Նստած էր փոքրիկ սեղանի առաջ, ճոճաթոռում, արևելյան ոճի խալաթով և թասակը գլխին:

Պարապում էր ցերեկները, երեկոները հանգստանում էր: Կտրված լինելով դրսի կյանքից, հեռադիտակով նայում էր դիմացի սարի խճուղու վրա անցողարձ անողներին: Մի զույգ միշտ նրա տեսողաշտումն էր՝ թաղի երգող Սիրանն էր մոր հետ: Սիրանն իր փոքրիկ եղբոր հետ մեր բակն էր դալիս հաց հափաքելու: Նու իր երգերով հայտնի էր ամբողջ թաղին: Փոքրիկ 7—8 տարեկան սևուկ աղջիկ էր, կենդանի ու յիթ, իրակոտ աչքերով և շատ դուրեկան ձայնով: Սիրանի մայրը լվացարարուհի էր: Մայրը աղջկան դպրոց տվեց և այդ օրվանից Սիրանը մեր թաղի բակերը փոխարինեց դիմացի սարի հետ: Ամեն օր, իրիկնադեմին Սիրանը մոր հետ սարն էր բարձրանում և ճամփի տակին, հենց մեր տան դիմաց, կանաչներում նստում էին մինչև մութն ընկնելը: Երգում էր

աղջիկը և իր երգերը հովին տալով, թռչկոտելով, ուրախ, թեթև, մոր հետ սարի մյուս կողմն էր անցնում:

Հայրիկն այդ ժամերին պատշգամբում, իր ճոճաթոռին նստած, հեռադիտակով նայում էր նրանց և ուրախանում:

— Ա՛յ քեզ երջանիկ մարդիկ, տես ի՛նչ լավ զույգ է մոր դեմքին միշտ ժպիտ ու զոհունակություն, աղջիկն էլ երգելով իր մոր հետ. միշտ ուրախ ու զվարթ:



Գարնանալին մի երեկո Իլյա Նակաշիձեն՝ այցելության եկավ: Հայրիկը նոր էր վեր կացել անկողնից, դեռևս թույլ էր: Պատշգամբում, իր ճոճաթոռում, փոքրիկ սև սեղանի առաջ նստած կարդում էր խաբանիի բառյակները և թարգմանում:

Հայրիկը շատ ուրախացավ նրա անսպասելի այցելությանը:

Հետաքրքրի զրուցակից էր Նակաշիձեն, բարի ու լավ վրացի, հայտնի տոլստոյական: Նակաշիձեն հայրիկի սրտակից բարեկամներից էր: Պատշգամբում նստած երկար ժամանակ խոսում էին Արևելքի բանաստեղծներից ու փիլիսոփաներից: Ուշ գիշեր էր, սարի կողմից լավում էր սոխակի երգը, երկունն էլ բանաստեղծական մեղմ տրամադրության մեջ էին:



Հիվանդ ժամանակ թևին ուռուցք էր դուրս եկել: Բուժող բժիշկը երեկոյան կոմպրես էր արել, կապել, զնառել: Գիշերը կոմպրեսը բացվեց, նոսրից կապեցի, լուսադեմին նորից բացվեց: Առավոտյան բժիշկը բարկացավ ինձ վրա, թե՛ ինչպե՞ս եմ կապել, որ բացվել է:

Հայրիկը բժշկի նկատողության վրա ծիծաղեց, թե էս էլ դառավ Մոլլա, Նասրեղիյի առակը. «Մի օր մոլլեն կնկանը

1 Նակաշիձեն Իլյա — վրաց գրող և հասարակական գործիչ

դարկում է հորթը կապելու: Հորթը բացվում է: Մուլեն է կապում՝ էլի է բացվում: Մուլեն նորից է կապում՝ լուսադեմին էլի է բացվում: Առավոտը մուլեն գալիս է կնկա հետ կոխվ անում, թե՛ դու էդ ո՞նց էիր կապել, որ քո կապելուց հետո երկու անգամ էլ ես կապեցի՝ էլի բացվել է: Հիմի էլ քոնն է, քո կապածը բացվել է, եկել ես նվարդի հետ կոխվ ես անում»:



Մեր նյութական վիճակն այդ ամիսներին լավ չէր: հայրիկի համար առանձին ճաշ էինք պատրաստում, որ լավ սնվի:

Մի օր թե՛ միասին՝ ճաշենք: Տեսավ, որ մեր ճաշն ուրիշ է, իր ճաշն էլ չկերավ:



Մայիսին Երևանից հրավեր ստացավ մասնակցելու նոր ուղղագրության շուրջը կայանալիք խորհրդակցությանը: Այդ ժամանակ նոր էր վեր կացել անկողնից և հնարավորություն չունեի անձամբ մասնակցելու: Բայց շատ էր դժգոհ և վերդովլած հապճեպ արված նորամուծությունների, ու բարեփոխությունների դեմ: Խոստում էր դայրույթով և իր բողոքը ուղարկեց Երևան՝ լուսժողովում Պ. Մակինցյանին, հայտնելով, թե «Մանուկ Աբեղյանի առաջարկը «սլակասավոր է և քննելի»:



Իր մանկական գործերից հայրիկը շատ էր սիրում «Չարի վերջը»: Ասում էր. «Եթե մշակեմ, դա իմ մանկական երկերի գլուխգործոցը կլինի»:

Գարնանն էր (օրը լավ չեմ հիշում), մեր հ եկան Մոսկվայի հայկական դրամատիկական սս ասներ Արշավիր Կերկոսյանը, Արփիկ Մելլյանը և եղ-

յանը: Եկել էին հայրիկի մոտ խնդրանքով, որ նա «Քաջ Նազար» հեքիաթը պիես դարձնի և իրենք խաղան:

Հայրիկը, որ իրեն լավ չէր զգում, այսպես պատասխանեց՝ այդ գործն ամենից լավ Գերենիկը կանի...

Ինչպես հայտնի է՝ այդպես էլ եղավ:



Ամառը, վիրահատումից հետո, երբ կարծես կաղզուրվում էր, աշխատում էր «Հասկերում» տպագրված «Չարի վերջի» վրա, գրում էր նորը՝ «Անրուն կրկուն»: Կարդում էր Գյոթեի «Тисе Патрикевич»-ի շքեղ, մեծադիր հրատարակությունը և ասում էր. «Մրա նման քան պիտի հրատարակեմ»:

Գրանից հետո նոր, բառակ թղթի վրա սկսեց մշակել բոլորովին նոր տեքստ, որը նույնպես մնաց կիսատ...



Կարդում էր Ֆլամարիոնի «Երկնքի պատմությունը» գիրքը:

Աստղերով էր հետաքրքրվում և այդ օրերին էլ գրեց «Սիրիուսի հրածեշտը»: Գրքեր էր կարդում վենետիկյան մասին և նյութեր հավաքում: Կարդում էր արևելքի բանաստեղծներից: Ձեռքին խաբանի էր, որի ժողովածուից մի քանի քառյակ թարգմանեց և ինքն էլ մի քանի քառյակ գրեց:

Ճաշերից հետո Արեգի հետ պատշգամբում շախմատ էր խաղում: Սիրում էր այդ խաղը և մի լավ խաղացողի էր փնտրում, որ հետը մրցի: Աշնանը, երբ իրեն ավելի թույլ զգաց, սկսեց նարդի խաղալ, որը այնքան էլ չէր սիրում:



Շենց պարապելու այդ լավ ժամանակն էլ վրա հասան Քիֆլիսի հուլիսյան շոգերը և դրա հետ միասին՝ նյութական ծանր դրությունը... Պարտքատերերը մի կողմից, օրվա դրամի պակասն էլ մյուս կողմից անհանգստացնում էին հայրի-

կին: Մենք էլ իրեն երկար ժամանակ խնամելուց թուլացել էինք: Այդ բոլորը նրան և՛ հուզում էր, և՛ ջղայնացնում, և՛ վշտացնում:

Ամառանոց գնալու խնդիրն էր առաջ եկել, բայց ոչ մի կերպ չէր հաջողվում: Նա մեղ հանգստացնում էր, հուսադրում, բայց երբ սպասումը երկարեց, ինքն էլ չէր կարողանում այդ գրու-
թյունը տանել:

Հենց այդ օրերին նկարիչ Գիգո Շարբաբլյանն էր եկել հայրիկին յուզաներիով նկարելու: Հայրիկը կատախով՝ ապ-
կացրեց, որ չի կարող, անտրամադիր է հանգիստ նստելու: Եվ առհասարակ չէր սիրում նստել նկարվելու: Բայց հետո համաձայնվեց, մանավանդ, որ նկարիչը եկել էր ներկե-
րով, մոլբերտը ձեռքին և համառոտ էր ու խնդրում, որ հայ-
րիկը համաձայնվի: Նա յերջապես համաձայնվեց դժկամու-
թյամբ, բայց մի քանի օրից իրեն ավելի թույլ զգաց:

Որքան էլ մտահոգված էր մեր ծանր գրությամբ, բայց տանում էր թեթև, հույսով, կատակներ էր անում, մի քանի գրական երեկոներ սարքեց, մեղ համար գրքեր էր կարդում:

Երբ հուսահատվում էինք՝ հուսադրում էր. «Լավ կլինի, մի քիչ համբերություն ունեցեք, դե՛, էն մարդիկ էն օրը խոստա-
ցան...»: Ինքն էլ ծրագրեր էր կազմում ամառանոց գնալու, պարապում էր ու համբերությամբ տանում այդ բոլորը:



Գանգատվում էր ցավերից: Տեր-Ներսիսյանն ասում էր, որ բնույն տանելու և նորից վիրահատելու կարիք կա: Ես սկսե-
ցի գերմաներեն դասեր սունել և մտածում էի՝ ամառը հայ-
րիկին տանել Մոսկվա, այնտեղից էլ Բեռլին: Հայրիկին էլ ասացի, որ վերջնականապես բուժվելու համար պետք է գնալ Մոսկվա, իսկ նա կարծում էր, թե ամառանոց գնալով, կազ-
դուրվելուց հետո ցավերը կանցնեն ու կսկսի չգարապել:

Ես համառ կերպով պնդում էի Բեռլինի՝ կարևորությունը: Մի երեկո գնացի Ալեքսանդր Մյասնիկյանի մոտ, բայց նա տանը չէր: Խոսեցի Մակինցյանի հետ, պատմեցի հայրիկի

ծանր գրության մասին և խնդրեցի արագացնել նրան Մոսկվա տանելու խնդիրը: Նա ծանրացրեց, թե հիմա փող չո հենք, դժվար է... վերջը տեղից վեր կացավ, թե. «Он нам дорого обходится...»:

Ես վրդովված դուրս եկա, եկա տուն, հայրիկին պատ-
մեցի ավելի մեղմ ձևով, հայրիկը թե՛ «էսօր էդպես պա-
տասխանեց, բայց վաղը, երբ որ շեմ լինի, շատ կփնտրեն ու էլ չեն գտնի ինձ...»:

Ես դերմաներենս շարունակում էի և հայրիկը անունս դրեց՝ «նախ Բեռլին»:



Հուլիսյան շոգերը և սննդի պակասը նրան էլ հուսահա-
տեցրին: Մեղ հեղեղած ժամանակ թեև խոսում էր, ժպտում, բայց մենակ ժամանակ տխուր էր, ինչ-որ մտքերով էր տար-
ված, այլևս չէր կարողանում նստել, պարապել: Պարտաք-
տերերը պարտքերն էին ուզում, ոչինչ չէր ծախվում:



Մխիթար Տեր-Անդրեասյանն էր եկել հայրիկին այցելու-
թյան: Պատշգամբում նստած խոսում էին Չարենցի նոր լույս տեսած ժողովածուից: Տեր-Անդրեասյանը չէր ընդու-
նում Չարենցի գլոհմների նոր ձևը և վիճում էր «Ամենապո-
եմի» շուրջը, իսկ հայրիկը, ընդհակառակը, խոսում էր գո-
վատով:

Հուլիսի 7

Հայրիկն իրեն լավ էր զգում, թեև թույլ էր: Ամառանոց գնալու փոքրիկ հույս կար: Ուզում էինք դեռ Գեղ, բայց

¹ Տեր-Անդրեասյան Մխիթար — քննիկու-ինժեներ, գրականագետ, Թու-
մանյանի մտերիմներից մեկը. օգնել է Թումանյանին անգլերենի իմացու-
թյամբ

բժիշկները խորհուրդ էին տվել Բորժոմ, բուժման համար անհրաժեշտ գտնելով Բորժոմի վաննաները: Բայց չհաջողվեց ո՛չ մեկը, ո՛չ մյուսը և շոգերին մնացինք Թիֆլիսում:

Հունիսի 9, 10

Մանր օրեր էին. փող չկար, հույս էլ չկար որևէ տեղից ստանալու, իսկ պարտքատերերը շարունակում էին անհանգրստացնել առավոտ և երեկո:

Հունիսի 11

Վիճակը վատացավ: Տանը ճաշ չունեինք: Երեկոյան Սիմոն Փիրոսյանը և Նարիման Տեր-Ղազարյանը¹ բերին 20 միլիոն², մերկիվճակը մի քիչ թեթևացավ: Հայրիկի տրամադրությունը բարձրացավ, մյուս օրը՝ հուլիսի 12-ին, պարտքերի մի մասը տվինք, մյուս մասն էլ էին պահանջում, բայց հնարավորություն չունեինք վճարելու:

Հուլիսի 23

Դրուժյունը շատ վատ էր, պարտքատերերը եկել էին և ոչ մի հնարավորություն չկար վճարելու: Շոգ էր և տոթ. սննդի բացակայություն: Մարդիկ էին գալիս այցելության, զրույց էր անում, մի քիչ տրամադրությունը բարձրանում էր:

Հուլիսի 25

Շոգ էր: Հայրիկի տրամադրությունն ընկած էր:

¹ Խորհրդային Հայաստանի պետական պատասխանատու աշխատողներ

² այսօրվա հաշվով՝ շուրջ 2000 ուրլի

Հուլիսի 26

Հայրիկն առաջին անգամ տանից դուրս եկավ Արեգի հետ միասին, կառքով բարձրանալով դեպի սարը՝ Կոջորի խճուղին:

Օգոստոսի 3

Եկել էին Մարիա Ֆադեևնա՝ Տեր-Մարտիրոսյանը (կոմպոզիտոր Նիկ. Տիգրանյանի քույրը), կոմպոզիտոր Սարգիս Բարխուդարյանը, Վահան Տեր-Առաքելյանը, դաշնակահարուհի Միրիմանյանը: Հայրիկի համար կրկնեցին Հայրտանը նախորդ օրը կայացած համերգը: Հյուրերը շատ կային երեկոյան. տրամադրությունը մի քիչ բարձրացավ:



Ամառը տանից միայն երկու անգամ դուրս եկավ: Առաջին անգամ՝ միասին զնայինք Ալ. Մյասնիկյանին այցելության. Նա մեր տանից շատ մոտ էր պարում:

«Գնանք, մի շնորհակալություն հայտնեմ կառավարությանը, ահագին բան արին ինձ համար: Հիվանդ ժամանակս մարդը այցելության եկավ, սրտին մոտ ընդունեց հիվանդությունը: Խելոք մարդ է, լավ մարդ է, մեծ տակտի տեր»:

Ասաց, թիկնոցը զցեց ուսերին ու գնացինք Մյասնիկյանին այցելության, բայց նրան տանը չգտանք:

Օգոստոս

Ամերիկյան կոմիտեից մի քանի ամերիկացիներ էին եկել ծանոթանալու հայրիկի հետ, նաև խոսելու իր մանկական երկերը Ամերիկայում հրատարակելու մասին: Լուսանկարիչ էին բերել և մի քանի անգամ զանազան ձևերով ու զիրքով լուսանկարեցին, հետո իր մանկական գրքերը դասավորեցին և՛ գրքերի հետ լուսանկարեցին: Նրանք այդ բոլորն անում

էին շատ լրջորեն, իսկ հայրիկը ծիծաղում էր և ասում. «էս հո Պարոնյանի Աբխսողոմ աղան դարձա...»:

⊙

Օգոստոսի կեսերին արդեն թույլ էր. գանգառվում էր մեջքի ցավերից. դժվար էր ման գալիս, ասորժակը կորցրեց և սկսեց նիհարել:

Յավերը մեղմացնելու համար Սաղյանն սկսեց պանտապոն սրսկել, որից հետո իրեն լավ էր զգում և սկսում էր պրուցց անել. գրականությունից, առակներ ասել, պատմություններ անել մինչև ուշ գիշեր և գիշերն էլ, պանտապոնից հետո, հանդիսա քնում էր:

Պանտապոնը նրան շատ էր դուր գալիս. «Ինչ-որ թմբու-թյան մեջ եմ ընկնում, կրադանքի... Յավերս մոռանում եմ ու ինձ առողջ եմ զգում, ուժեղ: Ա՛յ Գրիշա, մեր քննադատները ինձ պանթիստ են ասում, բանից դուրս է գալիս պանթիստ չեմ, այլ պանտապոնիստ...»:

Մի երկու շաբաթ այդպես անցավ, բայց հետո սկսեց նորից նիհարել, թուլանալ, ջղախանալ և չքնել:

Գիշերները կարդում էր: Կարդալու, պարապելու, գրուցելու պահանջը մեծ էր: Ամեն ինչ անում էր, տանում, համբերում, բժիշկների բոլոր խորհուրդները կատարում, որ նորից վեր կենա, լավանա, բայց լավը չէր տեսնում և զղջում էր, որ Պոլիս գնաց ու հիվանդացավ:

— Ասում են՝ զրույցի էն լավ ժամանակը սատանեն կհավ, թե՛ բարի լույս... Հիմի իմն է՛ գրելու էս տրամադրությունս Պոլիս գնալը եղավ...

Օգոստոսի վերջերին ավելի թուլացավ: Դժվար էր ման գալիս: Սեպտեմբերի սիզոններին պառկեց, նորից սկսվեց բժշկությունը՝ ցավեր, հեղեր, անքուն, ծանր գիշերներ. գրությունը դեպի լավը չէր փոխվում, դժգոհ էր բժիշկներից ու բժըկությունից, մտածում էր Գերմանիա գնալու, Բեռլինում բուժվելու մասին: Այդ օրերին բուժող բժիշկը դարձավ Մ. Մելիքյանը՝ իր հին ծանոթներից մեկը:

⊙

Բժիշկներ Սաղյանը և Թադևոսյանը կարծում էին ցավե-թը վերահաստման կարերիցն են կամ մալարիայի հետեանք և խորհուրդ էին տալիս գնալ մոտակա ամառանոցը օդափոխություն:

Այդ օրերին որքան էլ հիվանդ էր ու թույլ, մտածում էր իր մանկական երկերի մասին: Օգոստոսի 12-ին մի նամակ գրեց Երեան, Ստեփան կիսիցյանին. «...Մի քանի տասնյակ գրքույկ կարող եմ հանձնել տպագրության... Միաժամանակ կպատրաստեմ նորերը, որոնց արդեն ձեռք էի տվել, բայց, գժբախտաբար, ձեռքիցս ընկան, էնքան թուլացա ամառվա շողից ու, ամոթ չլինի ասելը, վատ սնունդից»:

Այժմ գրեթե վերագարծել եմ էն դրությունը, երբ վերջին օրերում պառկած էի անկողնում»:

Խոսում էր առակներով, հիշում էր իր սխալները, իր առողջ վիճակը. «Ջահելությունն ասում է՝ թե իմանայի՛, ծերությունը՝ թե կարենայի՛...»:

Շատ բեղովլաթ ժառանգ դուրս եկա. կոոին ինձ ահագին կապիտալ էր տվել. ծախսեցի, փուռ արի...

Կորցնելը էնքան հեշտ է, գտնելն էնքան դժար... Տունս հյուրանոց էի շինել, ինքս զբաղված խալխի գործերով»:

Երբ խոսք էր ընկնում իր առողջությունից, միշտ ցավով ու դարմանքով էր հիշում, թե առաջ ի՞նչ առողջություն է սենցեղ և ի՞նչ հեշտ է կորցրել:

⊙

Օգոստոսի վերջերին հայրիկը գանգառվում էր մեջքի ցավերից և կորացած էր ման գալիս: Բժիշկներ Սաղյանը և Մալարովը խորհուրդ էին տալիս գնն մոտակա ամառանոցներից մեկը գնա՝ կարճ ժամանակով մի քիչ կազդուրվելու: Ինքը ընտրեց Շուշալիքը, որտեղ ապրելու հնարավորություն և հարմարություններ կային, բայց ցավերը օր օրի ուժեղանում էին, զրկելով հնարավորությունից:

Երեան ուղարկված նամակների պատասխանն էլ շտապավ,

թեև Լուսժողովուստից խոստումներ, որ արված է՝ պարտքերը թեթևացնելու, և՛ իրեն ամառանոց ուղարկելու: Այդպես էլ ամբողջ ամառ սպասելուց հետո ոչինչ չարվեց:

Չնայած շոգին ու ծանր պայմաններին, գրքեր էր կարդում, պարապում էր էպոսով, այդ օրերին նրա միտքը էպոսի շարջն էր պտտվում: Հետո նորից անցավ «Անբուն կրկուր» վերամշակմանը:

Այդ օրերին Երևանից ստացվեց Հայաստանի Գիտական-ինստիտուտի «Բանբերը» (գիրք Ա և Բ, 1921—1922): Այդ ժողովածուն նրան շատ հետաքրքրեց, թեթև էր, կարդում, առաջին հերթին կանգ առավ խաչիկ Սամվելյանի ուսումնասիրության վրա. «Տոտեմիզմը հայոց մեջ»:



Մայրս է պատմել. ամառվա մի շոգ օր, Չարենցը դալիս է հայրիկին այցելության: Դուռը բացում է մայրիկը և Չարենցի հիացմունքին ի պատասխան ասում, որ Թումանյանը տանն է, հրավիրում է ներս: Բայց Չարենցը հրաժարվում է՝ այսպես չեմ գա...

Չարենցը մի քիչ դիմում է եղել, կնալին ետ գցած, բլուզի կոճակները բաց, և տան դռնից ետ է դարձել:

Սեպտեմբեր

Եկավ բժիշկ Մ. Մելիքյանը և, քննելով, ասաց, որ հիվանդին անհանդատացնում է ստամոքսի վերքը: Սա էլ իր հերթին խիստ դիտա նշանակեց, խորհուրդ տվեց պառկած մնալ և բուժում էր իր դեղերով: Մ. Մելիքյանի մասնակցությունը հայրիկի բուժման գործին դուր չեկավ Սաղյանին և հիվանդի ներկայությամբ վեճ սկսվեց: Հայրիկն էլ, մոռանալով իր հիվանդությունը, զբաղված էր բժիշկներին հաշտեցնելով:



Աշնանը հայրիկը շատ էր սիրում խաղողն քնկույզի հետ, բայց զգուշանում էր. բուժվելու համար իրեն ամեն բանից

զրկում էր: Երկու շաբաթից ցավերը մեղմացան, իրեն լավ էր զգում, նույնիսկ վեր կացավ, դուրս եկավ պատշգամբ, ճոճաթոռում նստեց և կարծես թե առողջանում էր: Դժբախտաբար, բարեկամումը տեևց միայն երկու օր և նորից սկսեց գանգատվել ցավերից:

Այդ օրերը հայրիկին այցելության էր եկել իր ծանոթներից մեկը և պատմում էր, թե ինչպես Սաշա Գեգեչկորին¹, որի ոտքը վերահատել ու ծուն էին կպցրել, այնքան է բարկացել, որ ուզեցել է ատրճանակ արձակի բուժող բժշկի վրա:

Հայրիկը թե՛ «Նա, որ ատրճանակ է ուզում արձակել իր մի բժշկի վրա, ես հո պուլեմյոս պիտի բաց թողնեմ իմ քսանհինգ բժշկի վրա...»:

Այդ ժամանակ բուժող բժիշկները քսանից ավելի էին և մեզ թվում էր, թե բոլորն էլ սխալ են բուժում...



Գիշերները չէր քնում, տանջվում էր: Բժիշկները արգելել էին հյուրերի և մոտիկների այցելությունը: Մի երեկո քամանչեն ձեռքին եկավ հայտնի քյամանչիստ Սաշա Օգանեզաշվիլին և ցանկություն հայտնեց հայրիկին տեսնելու:

— Նոր եմ վերադարձել ամառանոցից, լսեցի, որ Թումանյանը հիվանդ է, եկել եմ տեսնելու: Նա շատ է սիրում քյամանչա, եթե թույլ կտա, կուզեի իր սիրած եղանակներից մի բան նվագել իրեն համար:

Այդ օրը հայրիկը լավ չէր զգում. մեր տանն էլ էլեկտրական լույսը փչացել էր. հայրիկի սենյակում մոմ էինք վառել. կիսալսալար էր: Մտածեցինք՝ թույլ է, գուցե նվագը ավելի վատ սզդի, բայց հետո միտքներս փոխեցինք և հայրիկին հայտնեցինք Օգանեզաշվիլու ցանկությունը: Ուրախացավ, ներս հրավիրեց: Հանդիպումը սրտառու էր. զրկախառնվիցին, ուրախացան:

Օգանեզաշվիլին լուռ, առանց մի խոսք ասելու, աթոռը

¹ Գեգեչկորի Սաշա — կոմունիստական կուսակցության գործիչ

վերցրեց, նստեց սենյակի մի անկյունում, ճիշտ հիվանդի դիմացը և նվազեց հրեք եղանակ՝ «Ռաստը», «Մահուրը» և «Գուն էն գլխեն իմաստուն իս»։ Նվազեց նուրբ ու սրտառուչ։ Հայրիկը մեծ ուշադրությամբ լսեց իր սիրած եղանակների վարպետ կատարումը։ Հուզված էր. աչքերից արցունքներ թափվեցին։ Օգտնեղաշփիլին ասաց. «Նս եկա ուրախացնելու, ոչ թե լացացնելու»։

Այդ գիշեր հայրիկը հանգիստ քնեց. նվազը կարծես բուժիչ ազդեցություն էր արել։

⊙

Ամեն անգամ, երբ ուղիտ ենք լսում, հիշում եմ հայրիկի հիվանդ օրերի մի զրույցը այցելուներից մեկի հետ։ Հյուրը պատմում էր, որ Ամերիկայում ամեն տեղ դրված է ուղիտ, նույնիսկ վարսավիրանոցներում, որ սափրվելու ժամանակ էլ կարող են լսել երգ ու խոսք։

Հայրիկը լսեց, լսեց, հետո ասաց.— Կդա ժամանակ, երբ մենք էլ մեր տներում ուղիտ կունենանք և մեր տանը նըստած՝ կլսենք աշխարհի նորությունները։

1922 թվականի նոյեմբերին թեև շատ էր թույլ՝ առողջանալու հույսը չէր կորցնում։ «Միայն հիմա եմ զգում, թե ինչ նոր բաներ կարող եմ գրել և ինչ նոր ձևով»,— ասում էր զրույցի ժամանակ նկարիչ Նդիշե Թադևոսյանին, երբ վերջինս այցելության էր եկել հայրիկին։

Նոյեմբերի 8

Աշնանը, երբ դրությունը նորից վատացավ, և մոտը նըստած խոսում էինք բժիշկների սխալներից, որ հենց սկզբից հնարավոր էր Մոսկվա գնալ և այնտեղ անել վիրահատությունը՝ նա ամեն ինչ արդեն ուշացած էր համարում, ձեռքը թափ էր տալիս ու ասում.

— Գեղտի, դմաղ օլմաղ— անց կացավ, էլ ասել չի լինի, ասելն ավելորդ է...

Հետո թուրքերեն երկտող ասաց, որ նույնպես հաճախ էր ասում և իր սիրած տողերից էր.

Գեղտի բըլբուլ, գեղտի գյուլ,
Իստառ աղլար, իստառ գյուլ...¹

⊙

Հոգնել էր պառկելուց. հիշեց Հայնեին, որ ծանր հիվանդության պատճառով տարիներ շարունակ մահճին գամված է եղել.

— Խեղճ Հայնե, ինչպե՞ս է տաններկու տարի մնացել պռկած, ինչպե՞ս է տարել, ինչքա՞ն է տանջվել...

Հիշեց և նրա վերջին ցանկությունը, որ խնդրել է իրեն տանել Լուվր, Վենեթայի արձանը վերջին անգամ տեսնելու։ Երեկոյան ուղեց Միլտոնի «Գրախտ կորուսյալը» (գրաբար)։ Կարգաց իր սիրած հատվածը՝ «Լույս, լույս...»։

Գրելու մեծ ցանկություն ու տրամադրություն ունենալ, բայց ցավերը թույլ չէին տալիս վեր կենալ և ուժ էլ չունենալ պարսպելու։

— Ինչքա՞ն քառյակ կգրեի էս երկու տարում, ինչքա՞ն բան կանեի... խանդարեցին, շթողեցին մարդ իր գործով կենա, երկու տարի կորցրի, երկու տարի իմ կյանքից հաննա, երկու տարի կորցրի, երկու տարի իմ կյանքից հաննա, էն էլ վեց... Ի՞նչ եմ գրել մինչև հիմա, մի բանի տող բան, էն էլ ձեռաց, ոտի վրա, ի միջի այլոց և կամ հիվանդ ժամանակ։ Կացեք մի վեր կենամ, սարքվեմ, նստեմ ու հանգիստ գրականությանը պարապեմ։

— Ափսո՞ս իմ «Հաղարան բըլբուլը»։ Ինձ չորս ամիս է հարկավոր, չորս ամիս հանգիստ թողնեն, շխանդարեն, և իմ «Հաղարան բըլբուլը» կդրեմ։

¹ Գնաց սոխակը, դնաց վարդը,
Կուզես լա, կուզես խնդա...



Նոյեմբերի կեսերին վիճակն ավելի վատացավ: Պժուհում էր բժիշկներից: Պատճառը մասամբ վերագրում էր դիտան խիստ: չպահպանելուն: Մի օր ցանկություն հայտնեց, որ իրեն որևէ հիվանդանոց փոխադրեն, ուր ավելի խիստ կլինեն իր սննդի նկատմամբ:

— Լավ կլինի մի լավ հիվանդանոցում լինեմ, օրինակ՝ գերմանականում, որտեղ և՛ խիստ ուժեղ կլինի, և՛ լավ հրեկողություն ու խնամք, և՛ կանոնավոր բժշկություն:



Որոշվեց նորից հրավիրել բոլոր բժիշկներին՝ մեծ կոնսիլիումի: Հրավիրեցինք տասը բժիշկ: Կոնսիլիումը երկար տևեց և անցավ աղմուկով: Բժիշկներից ինը, կարծեմ, առաջարկել էին՝ ցեխի վանաներ, ցեխով մեղմացնելու վիրահատումից հետո առաջ եկած ցավերը, վիրաբույժ Տեր-Ներսիսյանը կողմնակից է եղել Բեուլին փոխադրելու, իսկ բժիշկ Մ. Մելիքյանը միակն էր, որ դեմ է եղել ցեխի վանաներին:

Բժիշկների այդ խորհրդակցությունը նոյեմբերի 17-ին էր: Որոշվեց 40 ցեխի վաննա ընդունել, մասնագետի հսկողությամբ:

Սկզբում դա հայրիկին դուր էր գալիս, իրեն լավ էր զգում. ինչպես և առհասարակ ամեն մի նոր բուժում սկսելիս: Եվ հավատում էր իր առողջանալուն, բայց հետո շատ թուլացավ ու իրեն ավելի վատ զգաց, քան առաջ: Դեկտեմբերի 3-ին ավելի վատ էր զգում: Առաջին անգամ գանդավեց սրտի թուլությունից...

Քառասուն աստիճանի 22-րդ վաննայից հետո սիրտն արդեն շատ էր վատ. որոշվեց դադարեցնել ցեխի վաննաները: Սկսեցին կաթիլներ տալ սրտի համար և սրսկումներ անել: Մեկ անգամ էլ նշանակեցին ցեխի վաննա, բայց նույնիսկ քայլել չէր կարողանում. «էս ի՞նչ եմ եղել... ութսուն-իննսուն

տարեկան մարդ եմ դարձել»: Եվ այդ օրվանից արդեն շատ էր վատ: Երբեք այդպես չէր եղել. «էս հո իմ նեսոյի ջարաբարդնիսը դառավ...»:



Նորից սկսվեցին անքուն գիշերներն ու ցավերը: Ջղայանում էր, հոգնել էր բժիշկներից էլ, անկողնից էլ, դեղերից էլ և կորցրել էր ապաքինման հավատը: Չէր հավատում բժիշկներին և իր բուժումը տեսնում էր Թիֆլիսից դուրս:

Նոյեմբերից վերստին Սաղյանը սկսեց բուժել, սա էլ իր հերթին դիմեց հակառակ միջոցի. վերացրեց դիտան, իսկ ցավերը մեղմացնելու համար պանտոպոն էր սրսկում:

Ահա այդ ժամանակ էր, որ նա, տեսնելով բժիշկներին անկարողությունը, հորինեց «Վարք Հովհաննու» երգիծանքը: Այստեղ նա հիշում էր բոլոր բժիշկներին, հեզնում իրենց իսկ ներկայությամբ: Ասում էր ու ծիծաղեցնում բոլորին:

Մի օր գրի առա այդ երգիծանքը:

Վարք Երանելի Յովհաննու Լոնցոյ

Եւ երանելի նահատակ մի, ողորմելի Յովհաննէս մեր, որ անկաւ ի ձեռս անօրինաց մերոց Երա՛րի, Գաբներայ, Տիգ-Մելայ, ՄկՄելայ և դահճապետին Ջահանգիրայ Պուրնացոյ և այլոց չնչաւատիցն նմանեալ. որք դումարեալ և բարեալ, տարեալ դերանելին յորջն մեծահաշակ բամբառակն ՍամՊավայ, Գանձակեցոյ և դաշնակաւ ու դաշունիւ խոշտանգեցին. զփորոտիսն երանելոյն երջանկայիշատակ Յովհաննու մե՛ յո՛ւ...

Ասեղնազարկէին թոյնս ազգի ազգի, արգելէին ուտել զհաց և ըմպել զջուր Տեառն, արգելէին մերձատրաց առնել այս երանելոյն: Եւ ամ մի բովանդակ տանջեալ զերանելի՛ նահատակն զողորմելի Յովհաննէսն մեր, և յորժամ ոչ կարաքեալ սպանանել զնա, դարմանային և աղաղակէին.

— Զի՞նչ հղօր է Լօտի...

Իսկ երանելին աղօթէր առ Աստուած և ասէր.

— Տէ՛ր, թո՛ղ զմեզս անօրինացն, զի ոչ դիտեն դինչ գործին... և զառնայր երանելին առ նոսա և ասէր.

— Շնորհակալ եմ, եղբարք, զի բազում ջանս գործեցաք ի կատարել զպարտս ձեր սուրբ:

Նւ հրաւիրէր ըմպել ըմպելիս և ուտել զկերակուրն, զորս անօրէնք ուտէին ախորժակիս:

Ոմն յանօրինացն անուանեալ Գրիշա, որ զաղտ ի սրտի պաշտէր զքրիստոնէութիւնն, տարածամ գիշերի գայր յայց ծածուկ երանելոյն և արդարոյն թոյն սրակէր թմրեցուցիչ ի մեղմել զտանջանս նորա...»¹:

Գեկտեմբեր

Մոսկվա մեկնելուց առաջ մոտիկ բարեկամներն այցելութեան էին գալիս հրածեղտ տալու:

Մի երեկո այցելութեան եկալ անտառագետ Արշակ Թադևոսյանը, որ իր մոտ ընկերներից էր: Նրան տեսնելով շատ ուրախացալ. հարազատի այցելութիւնն էր:

Նրկար զրույց արին, հիշեցին Լոսին, իրենց հարնդան՝ Էրին և ապա հրածեղտի ժամին խնդրեց նրան. «Պահպանիր Լոսու անտառները, որ գյուղացիները ծառերը չկտրատեն, չռնչացնեն:

Անտառը մեր հրկրի զարդն է, մեր հարստութիւնը, լա՛վ պիտի խնամել, պահպանել»:



«Էնպես հանկարծ ու անսպասելի կգնամ, որ իսկի շեն էլ իմանա, շեն էլ հավատա...»

— Ինչքա՞ն են փոշմանելու հետո, ինչքա՞ն ափսոսալու... Ո՛ւշ կլինի, էլ շեմ լինի...»:

¹ Գրաբար այս երգիծանքում բերված անունները Թումանյանը կաղմել է բուժող բժիշկների անվան և ազգանվան առաջին վանկերից. այսպես՝ Տիգրան — Տիգրան Մելիքյան, ՄկՄել — Մկրտիչ Մելիքյան: Ջահանգիր Պոլունացին լեհ վիրաբույժ Մարկիեչն է: Նրա Գրիգոր — բժիշկների անուններն են, որոնցից մեկը՝ տեքստի վերջում հիշվող «ոմն յանօրինացն անվանեալ Գրիշան», բժիշկ Գրիգոր Սաղյանն է:

Գեկտեմբերի 20

Բժիշկները նորից հավաքվեցին խորհրդակցութեան: Գտան, որ բուժելու համար անհրաժեշտ է տանել Բեռլին՝ օճապահ-նով բժշկելու: Որոշվեց Մոսկվայով գնալ Բեռլին, Սաղյանի ուղեկցութեամբ:

Գեկտեմբերի 21

Պատրաստութիւնն էինք տեսնում Մոսկվա մեկնելու Ցեքրեկը կոնսիլիում եղալ վերջնականապես որոշելու Մոսկվա գնալու խնդիրը: Բժիշկներից Մարկիեչը և Տեր-Ներսիսյանը առաջարկեցին տանել Բեռլին, բայց սրտի թուլութեան պատճառով որոշվեց մեկնելը երկու օրով հետաձգել:

Գեկտեմբերի 22

Պատրաստութիւնն էինք տեսնում հայրիկին Բեռլին տանելու: Իրերը դասավորելու ժամանակ ասաց, որ իր ճամպուրէի մեջ դնեն ձեռագրերից մի քանիսը. «Անբուն կըլուն», անտիպ քառյակների վերջին տետրը և «Հայկական էպոսի բառարանից» ունտմնասիրութիւնը. «Հետս գրեք՝ Բեռլին, բժշկվելուց հետո, էնտեղի սանատորիայում կպարապեմ...»:

Գեկտեմբերի 23

Տրամադրութիւնը շատ վատ էր: Մի քանի անգամ մտալ իր առանձնասենյակը, տխուր տրամադրութեամբ դուրս եկալ: Ցերեկը մոտ բարեկամները եկան հրածեղտ տալու:

Այդ օրն առավոտյան, հրք սլատրաստվում էինք Մոսկվա մեկնելու, իրեն հանգիստ էր ցույց տալիս, բայց երևում էր հոգումը, շատ էր մտածում, քիչ էր խոսում. լուռ էր, զոռպ, շարժումները՝ զգուշ: Մի վերջին անգամ իր առանձնասենյակը մտալ, նայեց գրասեղանի արկղներն ու պահարանները: Գրիշերը ժամը 10-ին ճանապարհ ընկանք Մոսկվա: Հայրի-

կին ուղեկցում էին Աշխենը, Արեգը, Սաղյանը և ես: Տուրտ էր: Մուժ, մուսլ, ծանր գիշեր:

Ճանապարհին լավ էր զգում, տրամադրությունը մի քիչ բարձրացավ, հուսով էր, որ գնում է բուժվելու և պիտի վերադառնա առողջ:

Եվ լախ կայարանում գնեցինք Աղդաշի խնձոր¹ և նուս Շատ ուրախացավ. «Հե՛յ գիզի հա՛, քանի՛ տարի է չէի տեսել...»: Ախորժակով կերավ, բայց ասաց. «Էլ էն համը շու՛քի»:

Բարու կայարանում իրեն վատ էր զգում, բժիշկը սրտկոմ էր արեց:

Կայարաններից մեկում հանդիպեցինք իր դասընկեր Հակոբ Ստեփանյանին. շատ ուրախացավ:

Կուրսի կայարանից հետո ավելի լավ էր զգում, շարունակ պատուհանից նայում էր դուրս՝ անծայրածիր, ձյունապատ տափաստաններին ու դաշտերին: Ճանապարհից գոհ էր: Կայարաններում մարդիկ առողջ ու թարմ, ուտելիքը՝ առատ: Դա հայրիկին դուր էր գալիս. «Ե՛նչ լավ է, առատ երկիր է, առողջ մոզովուրդ...»:



Մոսկվա հասանք դեկտեմբերի 29-ին, առավոտյան ժամը 11-ին: Դիմավորելու էին եկել բժիշկ Ասկարյանը, գրող Կարեն Միքայելյանը և տեղի գաղութից մի քանի հոգի՝ շտապօգնություն մեքենայով: Աշխենի, Արեգի և Սաղյանի ուղեկցությամբ հայրիկին կայարանից տարան Դեվիչյե պոլե՝ Սպիժանոյի կլինիկան (հիվանդասենյակ № 28) նախնական քննություն:

Մյուս օրը՝ 30-ին, պրոֆեսոր Սպիժանոն բժշկական ինստիտուտի մի քանի հայ ուսանողների հետ եկավ, քննեց և գտավ, որ դրությունը շատ ծանր է: Բեռլին գնալը համարվեց ավելորդ:

¹ Աղդաշի խնձորը Աղայանի և հայրիկի սիրած խնձորն էր (ծանկեղ):

երկու օրից՝ հունվարի 1-ին, հայրիկին փոխադրեցին Օստրոմովի անվան (նախկին գերմանական) հիվանդանոցը, որտեղ և մնաց մինչև վերջ՝ մարտի 23-ը...

Առաջին երկու շաբաթը Մոսկվայում իրեն համեմատաբար լավ էր զգում: Մտածում էր նույնիսկ պարապելու մասին: «Մարդ առողջ լինի, մի քիչ ապրի՛ Մոսկվայում և հանդիստ պարապի»:

Որոշել էր բուժվելուց հետո միաժամանակ ապրել Մոսկվայում:



Հունվարի 3-ին եղավ կոնսիլիում, որին մասնակցում էին՝ պրոֆեսորներ Ֆեոդորովը, Գերցենը, Ֆրոմգուրը, Պլեանյովը և երկու ուսանողներ: Եզրակացրին, որ ուռուցքը տասներկուամսյա աղիքի մոտ է և խորհրդակցությունից հետո առաջարկեցին տանել Բեռլին, բայց Գերմանիայում գործադուլային դեպքերի պատճառով Բեռլին գնալը հետաձգվեց: Որոշեցին առայժմ ուսանողական ճառագայթներով բուժել Մոսկվայում:

1923

Հունվարի 5

Երեկոյան, թաթախման գիշերը միասին ընթրեցինք, իրար Կենաց խմեցինք: հայրիկը հիշեց անցած երեկոսները... Հետո թե՛ «Զատիկին երևի տանը կլինեմ, առողջ, երևիսաների հետ, սեղանի շուրջը միասին նստած»: Հետո ավելացրեց հառաչանքով. «Կյանքիցս երկու տարի դուրս հանվեց... Ինչքա՛ն քան կանեի, ինչքա՛ն քառյակ կզրեի էս երկու տարում...»:

Վերջին ժամանակները զրույցները քիչ էի գրի առնում: Դա չէր մտահոգությունս, որա մասին այլևս չէի մտածում:

Հայրիկին այցելության էին եկել Միքայել Մազմանյանն¹ ու Գևորգ Աբովը²: Տուն դնալիս Մազմանյանը հարցրեց, թե գրի չե՞մ առնում արդյոք հայրիկի զրույցները, հետաքրքիր մտքեր է հայտնում, լավ է խոսում, ախոս է, գրեցեք:

Գրելն, իհարկե, դժվար էր այն օրերին, բայց ինչքան էլ որ հասցնում էի, այն օրվանից նորից սկսեցի գրի առնել մտքումս մնացած խոսքերը, բայց, իհարկե, կցկտուր ու մոտավոր կերպով: Գրում էի հիվանդանոցի միջանցքներում կամ սրամվայում, երբ և որտեղ պատահում էր:

Երբ Մազմանյանն ու Աբովը մտան էին, խոսքը գրքի, գրականության շուրջն էր, թե ի՞նչ նոր հրատարակություններ ու նորություններ կան գրական աշխարհում, ի՞նչ նոր գրողներ են երևացել, ի՞նչ են անում, ի՞նչ են գրում: Խոսք եղավ գրքի հրատարակության մասին. «Գիրքը, մանավանդ գեղարվեստականը, հրատարակելուց հետո անպայման գեղեցիկ պետք է հրատարակել: Գեղարվեստական աշխարհում, ավելի քան մի այլ տեղ, ոչ մի բան դոռով չի կարելի անել, վերջ ի վերջո անիվը մի տեղ կկոտրվի...»:

Հետո հարցնում էր, թե իրենք ինչո՞վ են հետաքրքրվում, ի՞նչ են կարդում: Մի քանի խորհուրդներ տալուց հետո, վերջը ավելացրեց. «Ժամանակի ձայնը պետք է լսել, ուշադիր լինել, օգտվել, արթուն լինել միշտ: Մենք շատ հետաքրքիր ժամանակ ենք ապրում՝ հնի ու նորի անցողական մի շրջան»:

Հետո Միքայել Մազմանյանին տվեց փոքրիկ նաճակադրոշմ՝ ձուկ՝ թուշունի գլխով, խնդրեց, որ մեծացնի և նկարի որպես էքսիբերիս՝ իր գրադարանի համար:

1 Մազմանյան Միքայել — ճարտարապետ
2 Աբով Գևորգ — գրականագետ

Աբովը հետք թերեւ էր նոր լույս տեսած իր դիպրը «Գանակը բրին» վերնագրով: Երեկոյան կարդացի՞նք՝ Համվանեց:

Այդ օրը ցերեկը այցելության էր եկել Սահակ Տեր-Գաբրիելյանը, խոսում էին Բեռլին դնալու, վիզա վերցնելու մասին և անձատարակ իր բժշկության շուրջն էր զրույցը:

Գիւղերը լավ շքեց: Վիղաների համար հայրիկին և ինձ նկարեցին:

Երեկոյան քանաստեղծներից էր խոսում:

«Պոեզիան, չգիտեմ համակներից որում, պրոն է՝ էն որ ստաստեն արավ, որ ևս Բուսաստանում քանաստեղծ մուլեի մի, Խակապետ, Երկիրը շատ էր աննպատ Պոեզիանի համար, բայց Պոեզիանն ուրիշ տեղ չէր կարող ապրել: Բանաստեղծն իր երկրում պիտի լինի միայն, և միայն իր երկրում կարող է ապրել քանաստեղծը: Նույնը ևս կարող եմ ասել, մեր երկիրը շատ է խոտը, տալին ու վրա, շատ է խոտը: Ե՛րբ դնաս, Ե՛րբ մնաս... Բայց ևս միայն իմ երկրում կարող եմ ապրել»:

«Մայրդ որքան մոտ վինի իր երկրին ու իր ժողովրդին, որքան շատ խորանա ժողովրդական ստեղծագործության մեջ, նա էնքան ավելի մեծ է ու համամարդկային. էդ ճանապարհում միայն պրոպը կարող է համամարդկային գրականության մեջ տեղ տնայնալ»:

Ռուսերեն մի նոր ամսագիր էինք բերել. կարդում էինք, ինքն էլ լսում էր: Այդ ամսագրում Բ. Վլադիմիրցևի «Գրական փոխազդեցությունների տեսությունը» հոդվածի սովորական հանդիպեցի՞նք մի գրախոսականի՝ մոնղոլ-թաթարական ազդեցությունների մասին: Այդ հոդվածը շատ ոգեւորեց հայրիկին: Նստեց անկողնում: Ափսոսում էր, որ ինքը հիվանդ է, ցավով հիշեց իր կիսատ թողած վերջին գործերը:

«...Մի վեր կենամ էպոսի մասին գրած հոդվածս¹ հիմնավորեմ, շատ հետաքրքրական խնդիր է: Մեր բանասերները չուզեցին հասկանալ, էդ խնդրով զբաղվել»:

«...Հասնի ենք մի ժամանակի, երբ բանը գիրքն է, մանավանդ, ով որոշ տարածություն անցել է արդեն. նստի ու պարապի: Ինչ կա ավելի լավ, քան գիրքն ու գրականությունը...»:

Հունվարի 12

Միքայել Պապաջանյանն² էր եկել այցելության: Քաղաքական խնդիրներից էին խոսում: Հայրիկը նորից հուզվեց, վրդովվեց, դաշնակցականների քաղաքականությունից խոսեց. «Ժողովուրդը կոտորված, տեղահան եղած, ցրված, հալածված: Հայկական հարցը մի անգամ ընդմիջտ կապված է Ռուսաստանի հետ: Մեր մեծ երազներից հետո ոչ միայն մինչև Արաքսի ափերը հասանք, այլ նույնիսկ էջմիածնի պատի տակերը»:

Մեր խնդիրը բավական դժվարացել է: Մենք էնքան ենք տկար, որ մի փոքրիկ վտանգ կամ տաճիկների կողմից հարված, և մենք կարող ենք խորտակվել... Օրը օրին երնեկ կտա»:

Միք. Պապաջանյանը հրաժեշտ տալիս իր հետ դուրս տարավ Աշխենին: Ասել էր, որ Բեռլին մեկնելու մասին չմտածենք և հայրիկին էլ շտրամադրենք, քանի որ բժիշկներն ասում են, որ վիճակն անհուսալի է. եթե այնտեղ պատահի դժբախտությունը՝ փոխադրել չենք կարող:

Դրանից հետո Բեռլին գնալու մեր պատրաստությունները դարձան ձևական, մեր նպատակը հայրիկին միամտացնելն էր:

¹ Խոսքը «Հայկական էպոսի բառարանից» ուսումնասիրության մասին է, որի ներածությունը 1921 թվականի ամսոց Թումանյանը կարյացք էր Թիֆլիսում, Հայաստանը:

² Պապաջանյան Միքայել — հասարակական դրժիշ, պետական դուսայի անդամ

Հունվարի 13

«Մեր նկարիչները առաջիկայում շատ բան կարող են անել, շատ կարող են օգտվել մեր գրականությունից: Տարագրուսին՝ կտայի մեր լեզունդները, իմ քառյակները ազգային ոճով նկարազարդել: Կոչոյանին² պոեմներից, Թեպետ Կոչոյանին գեռ լավ չեմ ճանաչում ու չգիտեմ նրա աշխարհը»:

Եղիշե Թադևոսյանը կարող է նկարազարդել «Սասունցի Գավիթը», Թեպետ նրա վրձինը ավելի նուրբ է. լավ կլինի «Անուշը», «Փարվանան», «Աղավնու վանքը», «Թմկաբերդի առումը»:

Ա՛խ, երանի «Հաղարան բլրբուլս» գրած լինեի... Ի՛նչ լավ կլինեի...»:

Հունվարի 14

Կարդում էինք «Նորքի» առաջին համարը, Պետրոս Զաքարյանի հուշերը: Հետո սկսեց խոսել Գրասերի³ մասին. «Մեծ բան է ու շատ մեծ բան՝ լինել կուլտուրական, ինտելիգենտ»:

Հունվարի 15

Երեկոյան Կարեն Միքայելյանը եկավ հիվանդանոց, հետք քերեց Ե. Չարենցի նամակը: Չարենցը Երևան մեկնելուց առաջ չէր կարողացել անձամբ այցելել հայրիկին և մի նամակ էր գրել ու խնդրել, որ հանձնեն իրեն:

Նամակը կարդացին, շատ դուր եկավ իրեն, հուզված էր: «Չարենցի նամակը շատ է հետաքրքրական, անկեղծ և լավ խոսքով անուշություն է. տաղանդավոր մարդու նամակ. հիշաը սա է»:

¹ Տարագրուս — նկարիչ-մինիատյուրիստ

² Կոչոյան Հակոբ — Հայաստանի ժողովրդական նկարիչ

³ Գրասեր — գրականագետ Յուլյա Խանդավազյանի ծածկանունը

Ահա այդ նամակը.

«Ամենասիրելի Հովհաննես Թումանյան»

Խորապես ցավում եմ, որ հնարավորություն չունեմ անցնել Ձեզ մոտ և ամենախորին հարգանքներս բերել Ձեզ, մեր խոսքի ամենամեծ վարպետին, մեր ամենասիրելի պոետին: Այսօր ժամը չորսին ես Ալեքսանդր Յոզորովիչի հետ մեկնում եմ Երևան, գնում եմ մեր երկիրը, խորապես համոզված լինելով, որ միմիայն այնտեղ, մեր հայրենի եղերքում մենք պիտի հնարավորություն ունենանք ստեղծելու մեր կուլտուրան, մեր գրական կուլտուրան, որը պետք է բխի Ձեր ստեղծագործության, որպես տեղական ստեղծագործության տրագիցիաներից:

Դառը սրտով գնում եմ այստեղից, ցավելով, որ հնարավորություն չունեմ Ձեզ մոտ լինելու և հետևելու Ձեր ամոքմանը, նաչիրյան խոսքի ավագ նահապետի ամոքմանը, որից դեռ այնքան իմաստուն ու այնքան լիքը սպասումներ ունի հայրենի եղերքը:

Սիրելի՛ Թումանյան, ես խորապես հավատում եմ, որ Դուք կառողջանաք, կկազդուրվեք և կնվիրեք մեզ Ձեր «Հաղարան բլրբուլը», որի մասին լսել եմ ես մանկությունից և սրտատրոփ սպասում եմ կատարմանը: Ընդունեցեք իմ, Ձեր կըրտաներագույն աշակերտի ամենաջերմ հարգանքները, հավատացած եղեք, որ ես Երևանում սրտատրոփ պիտի սպասեմ Ձեր վերադառնալուն և պիտի գամ Թիֆլիս իմ անհուն ակնածանքը բերելու Ձեր վաստակած և իմաստուն կյանքին, որ նվիրել է հայրենի եղերքին այնքան «շուայ» ձեռքով հոգեկան բարիքներ ու գանձեր:

Նորից ու նորից ցանկանում եմ Ձեզ լիակատար առողջություն: Համբուրում եմ Ձեր վաստակած ձեռքը:

Ձեր՝ Նիլոն Չարենց:

Մոսկվա, 1 հունվարի 1923 թ.»:

⊙

Մոսկվայում 1923 թվականի հունվարի 15-ին Վ. Բրյուսովն իր կնոջ միջոցով հայրիկին էր ուղարկել իր «В такне дни» ժողովածուն հետևյալ մակագրությամբ.

«Հովհաննես Թումանյանին— ջերմորեն սիրված բանաստեղծին, նրան սրտանց նվիրված հեղինակից՝ մոտալուս հանդիսման հույսով ի նշան մշտական հարգանքի և երախտագիտության:

Վալերի Բրյուսով. Մոսկվա, հունվարի 15, 1923 թ.»:

Հունվարի 16

Թեև հիվանդ էր, բայց կարդալու, լսելու մեծ տրամադրություն ուներ. հետաքրքիր և նոր գրքերի պահանջ էր դրում: Մենք ամեն օր նոր գրքեր էինք գնում, բերում: Հենց որ մենակ էր լինում ու ինքն էլ տրամադիր՝ երեկոները գիրք էր կարդում:

Մի օր բերինք Դոստոևսկու աղջկա գիրքը իր հոր մասին¹ Այդ գրքից կարդացինք մի քանի գլուխ: Հայրիկին դուր չեկավ. ճիշտ որ թույլ էր գրված, բայց հետաքրքրվեց, որովհետև աղջիկն էր գրում հոր մասին: Կարդալուց հետո, հայրիկը թե՛ «էս գիրքը հենց էսպես և եթե էլ ավելի թույլ էլ լիներ գրված, նույնպես արժեքավոր է և հետաքրքրական, որովհետև աղջիկն է գրում հոր մասին: Բանաստեղծի դավակները կարող են ներկայացնել իրենց հորը: Ամեն բան կարողության բան է, հնչյուն գնել խնդիրը, ինչպես մտեանալ, ինչպես պարզել: Տրամադրություն մեծ բան է, եթե մարդու մեջ տրամադրություն է, նա կարող է իրեն նամիկ վրա դնել, ուրախություն տալ, բան ստեղծել: Դուք կարող եք ինձ ինտուիտիվ կերպով զգալ, բայց դա հերիք չէ, պետք է գիտակցել և զլխավորը՝ պատճառաբանել»:

¹ «Достоевский в изображении его дочери—Л. Достоевской». Пер. с немецкого Л. Я. Круковской, под ред. и с предисловием А. Г. Горнфельда. М., 1922.

«Բանից դուրս է գալիս, որ հենց էս մանր-մունր բաներն են կյանքը, բայց հաճախ մարդիկ ծիծաղում են ու էդ մանր-մունր բաների կողքով անցնում»:

Հունվարի 17

Քեռիների վիզան ստացել էինք արդեն, բայց հենց այդ օրերին, Ռուրի շրջանի բռնագրավման առթիվ, խզվեցին Գերմանիայի և Ֆրանսիայի հարաբերությունները: Քեռիների մասին այլևս խոսք չէր կարող լինել: Առավոտը, երբ «Պրավդայի» առաջնորդողը կարդացինք, հայրիկը թե՛ «Մինչև լուսը մեզ հասավ, մտիքը վրա հասավ... Գնայինք մի գիտության հովանավորության տակ ընկնեինք, լավանայինք, ափսո՛ս, էս էլ չեղավ»: Շատ տխրեց Քեռիին շքնալու համար:

«Ի՛նչ լավ կլիներ մի առողջանայի, պարապելի, ինչքա՛ն քիչ եմ պարապել իմ գործով: Ամիսներ՝ ուրիշ գործով, ժամեր՝ գրական: Հենց որ լավանամ, պետք է գրական ու տնական գործերով զբաղվեմ, գրվածքներս կարգի բերեմ ու տունս: Մի կարողանամ ժողովածուն լրիվ հրատարակել, գրեմ 1926 թվին՝ «Շունն ու Կատվի» քառասունամյակին»:

Շարունակ իր կաբինետից էր խոսում, հիշում էր իր գրասեղանը, ձեռագրերը...



Գերմաներեն լեզվով մի փոքրիկ հեքիաթ էի գնել բերել՝ գունավոր պատկերազարդմամբ:

Հրատարակությունը շատ հավանեց և հիշեց իր գրելեքներից մեկը՝ «Աստղիկի և Վահագնի հարսանիքը»:

«Գեղեցիկ նյութ է և շատ հետաքրքիր. շքեղ ու լավ կարելի է պատկերազարդել: Այդ հարսանիքին մասնակցում են բնությունը և թռչունները: Նյութի վերնագիրն է՝ «Թե ինչո՞ւ է արագիլը տկտկացնում»: Աստղիկի և Վահագնի հարսանիքին, հերթով երևում են բոլոր թռչունները և մասնակցում նաև ուրախությունը, արագիլը ուշանում է; հասնում է էն ժամին,

ներ դռները փակում են արդեն, արագիլն էլ տկտկացնում է:

Մեր միջնադարյան լավ լեդենդներից մեկն է, որ վեր կենամ, պետք է գրեմ»:

Հունվարի 18

«Շա՛տ բան է եկել, կուտակվել. մտածելու շա՛տ բան կա, պարապելու մեծ պահանջ»:

Հունվարի 19

Գ. Աբովի այցելությունը առիթ տվեց հիշելու Ն. Չարենցի, Գ. Աբովի և Ա. Վշտունու դեկլարացիան¹:

«Անցյալները Աբովը մոտոս էր, կարծես թե ներողություն էր խնդրում, մի տեսակ իրեն քաշված էր դգում. չէ՞ որ նա էլ դեկլարացիա հրատարակողներից մեկն էր: Դե՛, մի առակ կա, թեպետ ոչ ինձ եմ ուղտ համարում, ոչ էլ նրանց ճանճ, բայց դե որ տեղն եկել է, պետք է ասել. ասում են՝ ճանճը ուղտի առջ բղղում էր, թե՛ շնորհակալ եմ, ուղտ ախպեր. թե՛ ինչի՞ց. թե՛ ողջ տարին ականջիդ մեջ բուն էի դրել, ապրում էի, հիմա գնում եմ: Ուղտը թե՛ ոչ գալը եմ իմացել, ոչ գնալը... Հիմի սրանցն է...»

Չարենցի նամակից երևում է, որ տաղանդ է, որովհետև տաղանդն է, որ ծուռ ճամփից իրեն կարող է ուղիղ ճամփի վրա գնել:

Դե, Պողոսն էլ գյալղի գյալան մարդ է. մի օր էս կասի՝ մի օր՝ էն»:

Հունվարի 20

Առավոտյան նորից խոսեց պարապելուց, գրականությունից. «էնպես եմ կարոտել մի լուրջ գրական-գիտական ասագրի: Մի լավանամ, դեանք մեր կուտուրայով զբաղվենք»:

¹ Այսպես կոչված «Երեքի դեկլարացիան», որ «ձախ արվեստի» դրբերից ժխտում էր դասական ժառանգության նշանակությունը նոր կուտուրայի ստեղծման մեջ:

մե՛ր լեզվով, մե՛ր գրականութեամբ. մե՛ր կրակով տաքանանք— ընդհանուրի հետ, ընդհանուրի մեջ:

Մեր գրական մարդկանցից անպայման լուրջ մարդ է Յուլակը, մի լավանամ. նրա հետ գրական նամակադրուձյուն եմ սկսելու...»:

Հարցրի թե՛ ի՞նչ խնդիրների, ի՞նչ հարցերի շուրջը: Ասաց. «Մեր գրականությունից— մի շարք խնդիրներ կան, մասնափորձապես մի խնդրի շուրջը, որ լավանամ, կսկսեմ»:

Հունվարի 21

Երեկոյան մոտն էր եկել Սաղյանը, տեղացիներից ուրիշ երկու մարդու հետ: Երկար զրույց անելուց հետո, հարցրին թե՛ ինչո՞ւ «Հաղարան բլրուլը» չի գրել ավարտել: Հայրիկը թե՛ «...էդ անտերը խաղաղ ժամանակի բան ա, երկար ժամանակի, որ հանգիստ նստես ու գրես, ոչ թե ու Վայնայի...»:

Վաղուց է ձեռիս. շա՛տ վաղուց. 30 տարուց ավելի...:

1898 թվին ասին՝ Շուրափեր «Հաղարան բլրուլը» իմացող կա— Չորանանց Վարդան են ասում: Գնացի՛ Շուրափեր, մի ծանոթ ունեի, գնացի նրա մոտ, հարցրի թե՛ էս ինչ մարդուն ճանաչո՞ւմ ես, գիտե՞ս. թե՛ հա՛, գիտեմ, գնանք: Գնացինք, տունը գտանք, դռանը մի ծեր մարդ փետ էր տաշում, ասին էդ նրա տղեն ա: Հարցրինք, թե՛ Չորանանց Վարդան են ասում— էսինչ հեքիաթը լավ իմացող, գիտե՞ս նրան. թե հա, էս նրա տունն ա, որ կա, ես էլ նրա տղեն եմ, լավ էլ գիտեիր էդ հեքիաթը, համա ուշ եք եկել... ինչի՞ չէիք երեկ գալի. թե՛ ինչի՞. թե՛ երեկ դիշեր մեռավ... էս էլ նրա համար եմ տաշում... դազալ եմ շինում:

Վախում եմ ես էլ Չորանանց Վարդանի օրն ընկնեմ. էնքան քաշ տվի, որ էլ չըգրեմ...»:



Հայրիկին հիվանդանոց փոխադրելուց հետո Սաղյանը շատ անելիք շուներ: Նրա բացակայությունը, որպես կենդանի զրույցի մարդու, շատ խորն էր զգում. «Մարդը դբաղեցնել

գիտի, զրույց անել է իմանում. հետաքրքրող զրույցի մեջ է գցում մարդու լուրջ, հեշտ ու թեթև, հաճելի երեկոներ կարելի է անցկացնել նրա հետ...»:

Հետո խոսեց իր գործերից. «Ես վերջին անգամ ժողովածու կաղմեղու ժամանակ (1919 թ.) նկատեցի, թե ինչքան արագ եմ անցել շրջանները, աշխարհայացքիս էտապները...»:

Գեո. 90-ական թվականներին գրում էի «Հին կոիվը», մնաց կիսատ, անմշակ. դեռ կգրեմ, կմշակեմ: Էնքան արագ եմ անցել, որ նույնիսկ վրա չեմ հասցրել գրել, վերջացնել...»:

Իմ վերջին շրջանը՝ փիլիսոփայական շրջանը— «տիեզերական խոհերի» շրջանն է— Աշոտ Հովհաննիսյանն էլ էդ կարծիքին էր «Սիրիուտի հրաժեշտի» առթիվ խոսելու ժամանակ: Նա շատ ճիշտ էր հասկացել և շատ սուր ու հուրը նկատեց վերջին անգամ, երբ ինձ մոտ էր աշնանը»:

Հետո սկսեց խոսել մեր գրողներից, գործիչներից, նրանց ապագա անելիքներից:

«Նորերից Չարենցն է, որ անպայման բանաստեղծ է, տաղանդավոր տղա է, բանաստեղծական անկեղծ շնչով: Ծիշտ է, մեկ-մեկ էս կամ էն բանի ազդեցություն տակ ճամփի տակ ու գլուխ է ընկնում, դե՛, էդ ոչինչ... Ափսո՛ս, որ շատ է խմում, էդ նրա վատ կողմերիցն է և նրան շատ կվնասի»:

Հունվարի 22

«Ես մի բան գիտեմ լավ, եթե լավանամ, սկսելու եմ պարապել և լավ եմ պարապելու, նվիրվելու եմ գրականութեանը, գրելու եմ, այլևս չեմ խանգարվելու»:

Էլ ոչ ոքի չեմ հավատալու, ո՛չ ոքի...»:

«Աղայանից հետո գրական ընկերների մեջ ոչ մի ընկեր չգտա: Սաղյանն էր, թեպետ ոչ գրական մարդ, բայց ընկեր էր, էն էլ չեղավ, երկու մարդ կա մեջը...»:

Հունվարի 23

Առավոտը նոր գրքեր ուղեց կարգալու, մենք գնել էինք վերահրատարակված, բայց ոչ այնքան հետաքրքիր գրքեր, Կոզոնցի. «Լավ գրքեր բերեք, մնայուն, մարդուն իսկույն

կլանող, կենտրոնացնող գրքեր...»: Ու նորից խոսեց մեծ գրողներից, բանաստեղծներից, որոնք միշտ նոր են ու մնալուն: «Որպեսզի միշտ մնաս Պառնասի ու Ոլիմպոսի վրա՝ էդ բարձր աշխարհքում, մարդ պետք է միշտ հարաբերության մեջ մնա էդ մեծերի հետ՝ Գյոթեի, Պուշկինի ու նմանների»:

Մյուս օրը Պուշկինի «Եվգենի Օրեգինը» և նրա մյուս պոեմները բերինք.— մի քանի երեկո Պուշկին էինք կարդում:

Լսում էր ու Պուշկինից խոսում:

«Ա՛խ, թե մի առողջանայի՛... Դռներս պինդ եմ փակելու, որ էլ մարդ չթողնեմ ներս, նստելու եմ ու պարապեմ, և լավ եմ պարապելու— նվիրվելու եմ գրականությանը:

Քառյակները շատ ուժեղ շտրիխներ են, դրանք իմ հոգու կենսագրությունն են:

Կյանքըս արի հըրապարակ...

Ճիշտ որ հրապարակ— Պոլիս դնալիս ճամփին եմ գրել՝»:



«Աշխարհքում ամեն բան հեշտ է, մի բան է դժար՝ մարդ լինելը. դրա համար է, որ Համլետը, երբ իր հորը ուզում է գովել, ասում է՝ մաքր էր նա: Հեշտ բան հո չի՞ մարդ լինելը. մարդ փնտրելիս էլ, երբ մարդու մեծ կարոտ ես զգում, աշխատում ես նույնիսկ գտածին, եղածին մեծացնել— շատ բան տեսնել մեջը, բայց մի օր վերջիվերջո պատուվում է, բացվում է, տեսնում ես՝ շատ հասարակ կտոր է, շատ խամ...»:

Հունվարի 24

Գիշերները սիրում էր զրույց անել ու երկար ժամանակ չէր քնում: Սկզբում խոսում էր տանից, երեխաներից, հետո գրականությունից: Մի երեկո հարցրեց, թե իրեն ո՞ւմ հետ կարող ենք համեմատել, ո՞ր գրողի հետ: Ես ասացի՝ որպես բանաստեղծ՝ Պուշկինի հետ, կյանքի որոշ շրջաններն ու արամադրությունը՝ Բայրոնի, իսկ կյանքի եղանակը և բնավորության որոշ գծեր շատ են նման Գյոթեին: Այդ նույն հարցը մյուս օրը առավտոր տվել էր Աշխենին և Արեգին: Նրանք Բայրոնի անունը չէին տվել. այդ առթիվ հայրիկը մյուս օրն ասաց. «Ճիշտ է, իմ բանաստեղծությունների մեջ բայրոնական մի ամբողջ շարք կա, ինչպես և կյանքումս՝ շրջան, բայց դա եղել է паносный, ոչ հարազատ, ինչպես, օրինակ՝ «Դու քո ճամփեն գնա, քույրիկ» և այլն»:

Երբ ներս մտա, Աշխենն ու Արեգը դնացել էին, հերթապահ քույրն էր մտոր: Հայրիկն ասաց. «Ընչ լավ է շուտ շեկար, թե չէ էն երկուսից չէիր պրծնի. նրանք Բայրոնիդ շնորհունեցին: Դու մի բանում և՛ ճիշտ ես, և՛ չէ, թեպետ Աշխենն ու Արեգը համաձայն չէին, բայց ասածներիդ մեջ մի ճիշտ բան կա:

Ես գիտեմ, մի օր, իհարկե, ոչ շուտ, իմ կյանքը մեծ հետաքրքրություն ու աղմուկ է հանելու, շատ բան է պարզվելու, տեսնելու են բոլորովին ուրիշ բան: Շատերը ինձ երջանիկ են կարծում, կյանքս հարթ ու հավասար, բայց ներքին փոթորկումներիս ու աղմուկներիս շատ են անձանոթ. ոչ ոք ոչինչ չգիտե: Գրվածքներս դեռ լավ չեն կարդացել, տեսել... և ոչ ոք ուղիղը չի գտնելու, չի ասելու ե՛րբ...»:

Հունվարի 28

Ուզեց Դոստոևսկու աղջկա հիշողությունների գիրքը: Կարդալու համար ընտրեց վերջին գլուխը, որ գրողի մահվանն էր վերաբերում:

Երբ կարդացի, վերջացրի գրքի հարյուրերորդ էջը, ուր Դոստոևսկին ցանկություն է հայտնում իրեն թաղել Նեկրա-

1 Ըստ երևույթին, այս գրառման մեջ թյուրիմացություն կա: Հիշյալ քառյակը գրված է 1921 թ. սեպտեմբերի 5-ին, երբ Թումանյանը դեռևս չէր մեկնել Պոլիս:

սովի մոտ, որպես իր առաջին զնահատողի և լավ բարեկամի, հայրիկն ընթերցումը դադարեցրեց ու ասաց. «Հա՛, մի ժամանակ ես էլ էի մտածում, թե մեռնելուց հետո որտե՞ղ պիտի թաղեն, համա հիմի՝ էլ չէ... սարսաղ բան է, մի հաշիվ է, թե որտեղ են թաղելու մեռնելուց հետո: Շատ էի ուզում, որ մեր Դրդի՛ ուսին լինեմ, էնտեղ եմ անցկացրել իմ երեխա ժամանակի լավ օրերը, շատ եմ խաղացել... Ամենից լավը մահվանից հետո այրեն ու քամուն տան, թող տանի՛...»

Ինձ վրա շատ է ազդել Պուշկինի թաղումը. ձյունոտ դաշտ, մի սահնակ, մեջն էլ դագաղ ու քշողն էլ չգիտեմ, թե ում է տանում, քշո՞ւմ է...»:

Հունվարի 30

Բժիշկ Սաղյանի Թիֆլիս վերադառնալու մյուս օրը հայրիկի տրամադրությունը վատ էր, շատ էր դժգոհ ստեղծված դրությունից: Երեկոյան դեմ թույլ էր զգում իրեն: Հիշեց իր մանկությունը, կոռում անցկացրած օրերը. «Շա՛տ բեղովաթ ժառանգ դուրս եկա, կոռին ինձ ահագին կապիտալ էր տվել՝ ծախսեցի, փուշ արի՛:

Երեխա ժամանակ ինչքա՛ն էի առողջ, ի՞նչ առողջություն ունեի, ի՞նչ աստվածային թեթևություն, ինչպե՛ս էի թռչում և ինչքա՛ն թեթև... Ինչպե՛ս շոպյեցի, բուրբ կորցրի...»

Օրգանիզմս տարվա ընթացքում երբեք չի զգացել վտանգը, վտանգի մոտենալը, նույնիսկ օպերացիայի օրը, երբ իրենք՝ բժիշկները, ա՛հ ու դողի մեջ էին, վախենում էին, իսկ ես՝ չէ. շատ էի հանգիստ և երբ տանում էին սեղանի վրա դնելու, ես դեռ առական էի պատմում նրանց, ծիծաղեցնում, միայն վերջին ժամանակ, երբ ցեխի վաննաներից հետո հանկարծ թուլացա, բժիշկներն էլ ասին, թե սիրտս թույլ է արդեն, էն ժամանակ միայն օրգանիզմս վախ զգաց»:

1 Գանդ գյուղի հյուսիսարևելյան կողմում գտնվող բլուր, որից բացվում է կոռու ամբողջ համայնապատկերը:



Դժգոհ էր մեղանից էլ, բժիշկներից էլ. «Մի տարուց ավել է քրքրեցին, քրքրեցին... ոչ մի բժշկություն չարին: Դարձել եմ թամաշի առարկա, հիսունից ավել բժիշկ եկավ նայեց ու սչինչ չարին դեպի լավը, ո՛չ մի բան... ափսոս, մի լավանայի՛...»: Ու նորից հիշեց իր տոնը, իր առանձնասենյակը. «Վա՛յ իմ կաբինետ... ի՞նչ լավ էր, վառարանս վառում էի, դիմացը նստում, ինձ համար պարապում...»:

Հունվարի 31

Առավոտից տրամադրությունը վատ էր: Ավտոմեքենայով տարանք ռենտգեն-կաբինետ՝ ռենտգենի ճառագայթների առաջին սեանսին: Տրտում դեմքի վրա հուլյսի ինչ-որ սովեր կար, բուժվելու հեռավոր հավատ...»

Առաջին սեանսն ընդունելուց հետո իրեն լավ զգաց. «Կարծես թե անձրև լինեի գալիս... էդ ռենտգենյան ճառագայթները մեծ ապագա ունեն»:

Փետրվարի 1

Երեկոյան խոսում էր գրականությունից, մեր գրողներից, նրանց գրական գործերից: Հիշեց Շիրվանզադեին, Լեոյին, Իսահակյանին, Դեմիրճյանին: Մտածում էր, թե որը որտե՞ղ է հիմա, ի՞նչ են անում, ի՞նչ են գրում և ի՞նչ նոր բան կարող են տալ մեր գրականությանը:

Ափսոսում էր, որ Իսահակյանը հեռու է, կտրված է մեր երկրից, ցավում էր նրա կորուստների համար. «Հիմա էլ, եթե վերադառնա Կովկաս, կխորտակվի. նրա կորուստները շատ են, շա՛տ, խեղճ Ավո...»:

1 Քումանյանը, իհարկե, չգիտեր, որ իր հիվանդությունը (բաղկեղ) անբուժելի է. այստեղից էլ՝ նրա հասկանալի դժգոհությունը բուժումից ու բժիշկներից, որոնցից էր հմուտ բժիշկ, բանաստեղծի սրտակից ընկեր և գրուցակից Գրիգոր Սաղյանը:

Փետրվարի 2

«Ոչինչ չէի ուզի, մի լավանայի, նորից կարբինետս մտնեի ու նստեի, պարապելի:

Ի՞նչ լավ էր առաջ, վառարանս վառում էի ու նստում ինձ համար պարապում... Ե՞րբ եմ լավանալու, սեղանիս ծերին նստելու, մեր տանը, երեխաներիս հետ... հանգիստ. բոլորին տեղավորեմ, ինքս իմ գործով պարապեմ: Ուրիշների համար պատարագ արի, ինձ համար կնունք էլ չարի: Աշխարհք է, էլի, ուլ իմանա՞ թե Ե՞րբ, որտե՞ղ, ի՞նչ կպատահի. ես ի՞նչ իմանայի, թե Արտիկս էնպես կգնար և կամ հայրական տունն էնպես ավերակ կդառնար...»:

Փետրվարի 6

Առավոտը Մոսկվայի դեղեցիկ շենքերից ու տեղերից էր խոսում: Հետո հիշեց իր կարբինետը՝ «Ի՞՞՞ համար էլ գեղեցիկ տեղ չկա. ամենագեղեցիկ տեղն ինձ համար կարբինետս է՝ կրակս վառած, թղթերս սեղանի վրա փռած, նստեմ ու ինձ համար պարապեմ...»

Հե՛յ գիզի հա՛, 1907 թվականին, շատ կարճ ժամանակում մոտ 400 հեքիաթ ուսումնասիրեցի. ինչքա՛ն հեքիաթ գրեցի, ինչքա՛ն... ո՞նց էի պարապում...»

Երանի թե «Հաղարան բըլբուլս» գոնե որպես հեքիաթ գրած լինեի, ի՞նչ լավ կլիներ: Ա՛խ, մի վեր կենամ, ինչե՛ր կարելի է հրատարակել, ի՞նչ հնարավորություններ կան հիմո պարապելու, տպագրելու. բոլորը, բոլորը կա՛ առա՛տ, լա՛վ, իսկ ես, իսկ ես... Ես էս օրի եմ... Ա՛խ, մի լավանայի՛... Հիմա որ լավացա, էլ ոչ ոք չի պոկի ինձ իմ գրասեղանից: Գարունքի հետ հենց որ աչքերս բացվեն՝ ինչե՛ր եմ թափելու, ինչե՛ր եմ թափելու՝ հեքիաթների, լեզենդների հեղեղ...»:



Երեկոյան Սասունիկի՛ հետ գնացել էինք Պոլիտեխնիկական թանգարան՝ Վլադիմիր Մայակովսկու երեկույթին: Նրա բանաստեղծություններից առանձնապես տպավորվեց.

Кто там шагает правою?

Левою, левою, левою...

տողերը, որ նա արտասանում էր բարձր ձայնով, շեշտով և իր առնական կեցվածքով քայլում էր բեմում ու խորխոր նայում հասարակությանը:

Երեկոյան եկա հիվանդանոց, տպավորություններս պատմում էի հայրիկին, բայց նրա վրա տպավորություն չարավ:

Փետրվարի 8

Մոսկվայում եղանակները վատ էին՝ ցուրտ, անարև օրեր. հայրիկին դուր չէին գալիս այդ եղանակները, սրտնեղում էր ու դժգոհում.

«Վա՛յ մեր երկիրը, սա ի՞նչ բան է՝ մութ, մռայլ, ցուրտ, արև չկա, արև...»:

Առավոտը հայելին ուզեց, սափրվեց: Նայեց իրեն հայելու մեջ. «էս ի՞նչ եմ դառել...»:

Ամբողջ երեկո տրամադրությունը վատ էր:

Շատ էր սիրում Չարչուի՞ սեխ և փսղորժակով ուտում էր: Մի օր էլ Երևանի շուշխեկ ուղեց: Գնացի, շատ ման եկա, չգտա: Վերջապես մի խանութում գտա, թեև չոր էր, բայց և այնպես գնեցի, բերի հիվանդանոց: Հայրիկն, իհարկե, չհավանեց. նայեց ինձ ու ասաց. «Բա մեղքը չի՞ էն աստվածը, որ էդ աչքերը ստեղծել է»:

1 Սասունիկ — Թումանյանի բարեկամ, բահանա Հակոբ Ստեփանի դուստրը

2 քաղաք Թուրքմենստանում

Փետրվարի 10

Երեկոյան խոստում էր պարապելու, աշխատելու մասին: «Մարդը լավ բաներով պիտի հետաքրքրվի, հետաքրքրութիւնն էլ լուրջ պիտի լինի. գեղեցիկ շրջանակի մեջ դնի ու վերջակետի հասնի: Ինչքա՞ն բան կարելի է անել. առաջին քայլն է դժվար, երկրորդն ինքն իրեն կգա:»

Մեր կառավարութիւնն ու հասարակական գործիչները մի անգամ էլ փորձ արին, ինձ իմ գրասեղանից պոկեցին, բայց հիմա որ լավացա, էլ ո՛չ ոք ինձ չի պոկի իմ գրասեղանից»:

Փետրվարի 11

Բարեկենդանի օրերն էին: Գիշերները ուշ էր քնում, ցավերն անհանդատացնում էին. մի քանի անգամ զարթնում էր պանտապոն սրսկվելու համար ու սկսում էր զրուցել:

Գիշերը ժամը երեքին զարթնեց, ցավերը սկսվել էին, հենց այդ ժամանակ փողոցով մարդիկ էին անցնում՝ երգում էին, ուրախանում: Կյանքի, մարդկանց դժար ձայները հայրիկի ականջին հասան, ինքն էլ զվարթացավ, ուրախացավ:

«Ի՞նչ լավ է դուրսը. փողոցում մարդիկ գարմոշկա են ածում, բարեկենդան են անում, ուրախանում...»:

Երբ քույրը պանտապոն էր սրսկում, նայեց երկնքին, Սիրիուսը աչքին ընկավ, տեսավ ու սկսեց Սիրիուսի հետ խոսել:

«Երանի քեզ, Սիրիուս, որ ցավեր չունես...»

Ինչ լավ գույն ունի Սիրիուսը, ծովի նման կապույտ— կանաչավուն. բիւ— շատ սիրուն գույն է...»:

Փետրվարի 14

Ճաշերից հետո սիրում էր զրույց անել.

«Սկեք նստոտեցեք, զրույց անենք, հոգեշահ զրույց...», ու սկսում էր խոսել իր մանկութիւնից, անցած օրերից, առնա՞ծ տեղերից... Հիշում էր կոռին, սարերը, անտառները...»

«Երկու սրբազան տեղ կա կոռում, որ շատ էի սիրում ու հիմա էլ լավ եմ հիշում. մեկ Տափակ մերու աճարկուտը. ամեն միւր մի-մի սպիտակ մոմ ասես, մեկ էլ Արթափալի կաղընկուտը՝— ամեն մեկը Աստվածաշնչի մի-մի նահապետ... Ինչքա՞ն էր խորհրդավոր, վեհ ու սիրուն... Հե՛յ գիդի հա՛... Ինչքա՞ն եմ ման եկել, վաղել էդ անտառներում...»:

Փետրվարի 15

Երեկոյան այցելութեան էր եկել Մոսկվայի իրավաբաններից մեկը՝ Բարսեղյանը: Առաջարկում էր հայրիկի մանկական գրվածքները Մոսկվայում հրատարակել: Հայրիկը ծանոթացավ այդ առաջարկին, համաձայնեց ու որոշեց առաջին հերթին հրատարակել «Մի կաթիլ մեղրը», հետո հերթով մյուս հեքիաթները: Բարսեղյանի զնալուց հետո հայրիկը երկար ժամանակ խոստում էր հրատարակչական գործի մասին:

«Հրատարակութեան գործը շատ դժվար գործ է. և զրոյի համար ավելի լավ բան չկա, քան գրի ու ստանա հր հասանելիքը: Հրատարակութեան գործում ձեռք, ճաշակը և այլն արդեն գրողի իրավունքն է: Գործը անելուց հետո է երևում, թող էս մեկը հրատարակվի, հետո տեսնենք»:

Այդ զրույցի առթիվ նորից հիշեց իր հեքիաթները, իր գրագրանքը...

«Բոլոր ժողովուրդների հեքիաթները հավաքել եմ, բոլոր հրատարակութեաններն իր ժամանակին զնել, պահել. ինչքա՞ն հեքիաթ ունեմ գրելու... ինչե՛ր ունեմ անելու... Էն, ինչ որ տարիներով, շարշարվելով հավաքել եմ՝ Սիտինի, Կնեբելի, Վոլֆի կլիշեները— ինչե՛ր կարելի է հրատարակել, ի՞նչ հնարավորութիւններ կան, ի՞նչ հարմարութիւններ հիմա պարապելու. բոլորը կա, առատ ու լավ, իսկ ես է՛ր օրի եմ... Ա՛խ, մի լավանայի՛, պարապելի՛...»:

«Մի կաթիլ մեղրը», որ առաջին հերթին պիտի հրատարակվի...

1 Կաղնու և աճարի խիտ ու գեղեցիկ անտառներ. գտնվում են Գսեղ գյուղից 15—20 կիլոմետր հեռավորության վրա (Մարց գյուղի մոտերը):

րակվելը Մոսկվայում, չգտանք, գրեցինք Թիֆլիս, որ ուղարկեին, այնտեղ էլ չէին գտել, ժամանակին շկարողացան ուղարկել, այնպես էլ գործը մնաց չսկսված, ոչինչ չհրատարակվեց:

Փետրվարի 16

Սրվա նոր թերթերը կարողալուց հետո նոր գրքեր ուղեց: «Գետք է կարդալ, միշտ կարդալ. և ամեն մի կարդալը մի բան է տալիս ու աննկատելի կերպով ամբարվում, բան դառնում»:

«...Հիմա բոլոր դրուձյունները ապրում են՝ սկսած թաղումից մինչև նոր ծնած երեխայի ժամանակը. հնպես արագ են գալիս ու գնում բոլոր լավ ու վատ արամագրուձյունները— ակսած խելագարից մինչև նորածին երեխայի արածները կարող են անել»:

Երեկոյան կոմպոզիտոր Սարգիս Բարխուդարյանն էր մտոր. նոր ձայնագրած եղանակները տպագրել էր տալիս Մոսկվայում: «Նաղ պար» վերնագիրը հայրիկը գրեց:

Փետրվարի 18

Երեկոյան հավաքված գիրք էինք կարդում, վերնագիրը չեմ հիշում. ուսանողներն էր, մեծ մարդկանց մասին էր: Կարդացինք Նապոլեոնին վերաբերող գլուխը: Մի քանի երեւ կարողալուց հետո էլ շուգեց լսել, հոգնել էր, թե չհավանեց, չգիտեմ, հետո ինքը սկսեց խոսել: Սկզբում Նապոլեոնի մոր մասին էր խոսում, հետո անցավ ընդհանրապես մեծ մարդկանց մայրերին.

«...Մեծ բախտ է լավ ծնողներ ունենալը, մանավանդ լավ մայր. մայրը՝ ամեն ինչ է: Իմ մայրը շատ էր վայրենի... նա սարի պախրա էր, եղջերու... արտաքինով շուտ գեղեցիկ, զարմանալի առողջ և տաք սրտի տեր. շատ էր ջիզարով, իհարկե, դեպի իրեն երեխաները, և ինչ որ սարի բան կա իմ մեջ— նանիցն է:

Մինչև տասը տարիս ապրել եմ գյուղում և կյանքիս մեծ

մասը անց եմ կացրել սարերում: Իմ մերը թուշող կին էր. արծվի թռիչք ուներ: Ամենաբարձր սարերում, ծաղկոտ տեղերում է պահել ինձ, կանաչներում, աղբյուրների մոտ... Շատ բան է տվել ինձ, շատ... իհարկե, դա բնազդական սեր էր, բայց շատ էր սիրում ինձ:

Ուրիշ բան էր իմ հերը— լավ մարդու կատարյալ տիպը: Մեծ մարդ էր, զարմանալի նորը մարդ. անդունդի խորություն ուներ, լայն հոգի, շատ մեղմ, նուրբ ժպիտը միշտ դեմքին. զարմանալի սրախոս էր, լուրջ սրախոս: Երբեք իր նյութական պակասություններից չէր խոսի, իրեն միշտ հարուստ էր ցույց տալիս:

Շատ էր սիրում երգել, մեկ-մեկ էլ ինքը երգեր էր հորինում. շոնգուր ուներ, ածում էր իրիկունները: Լավ զրից անող էր:

Իմ հոր տունը շեն տուն էր, առատ, հարուստ:

Մեծ սենյակ ունեինք. օջախը միշտ վառած, երկու կողմից երկար թախտ, դռակներ ու մութաբաներ դարսած. բոյահայելի՝ կողքին սազը կախած, մոմակալն ու մաղաշը, նկարներ...:

Իմ հերը չէր սիրում քիչ բան առնել՝ խաղողը բեռնով էր առնում, քիչմիշը՝ խուրջինով: Նրա ամենափոքր շափը խախալն էր:

Առատ էր պապոնցս տունը: Ուրախ էի և անհոգ: Շատ էին երես տալիս տատերս: Երկու տատիս ծոցումն եմ մեծացել:

Տասը տարեկան գնացի Զալաթոլի:

90 թվականին, երբ գիրքս առաջին անգամ լույս տեսավ, իմ հերը զատ էր ուրախացել, ասել էր՝ «Հիմի ինձ էլ մահ չկա»: Շատ էր սիրում երեխաներին, ամեն երեխի ծնվելով գալիս էր Թիֆլիս: Երբ առանձին բնակարան վարձեցի, էն տարին էլ գնացքի ճանապարհը շինում էին, շատ էր ուրախացել, ասում էր՝ «Հիմի շուտ-շուտ կգամ քաղաք, հենց որ տանը ինձ նեղացնեն՝ կնստեմ ու կգամ երեխանցս տեսնելու...»:

Բայց հենց էն տարին, նրա կյանքի վերջին տարին էր առաջին գնացքը ձորով անցնելիս ձայնն էր լսել միայն...»:

Գիշերը շատ էր թույլ: Գուներ գիշեր էր: Շատ էր ուղում, որ գիշերը երկուսս էլ՝ Աշխենն ու ես (նույն սենյակում գիշերում էինք և հսկում իրեն) արթուն մնանք և միասին հսկենք իրեն: Գիշերվա ուշ ժամին, երբ ստվորականից մի քիչ ավելի երկար քնեց, մենք մեր մահ-ճակալների վրա թեք ընկանք և երկուսս էլ միաժամանակ անկատելի քնել էինք...

Առավոտյան հայրիկն ասաց.

«Նորհրդավոր գիշեր էր էս գիշերը... Գիշերվա մի ժամանակ, երբ աչքս բաց արի, տեսա երկուսդ էլ քնած էիք զանազան դիրքերով, չղարթնացրի: Երկար նայեցի ձեզ ու հիշեցի Քրիստոսին Գեթսեմանի այգում իր աշակերտների հետ, երբ նա թողնում է աշակերտներին արթուն մնան աղոթելու ու ինքը հեռանում է... Վերադառնում է աշակերտներին քնած է տեսնում:

Դա՛, շա՛տ էր խորհրդավոր...»:

Փետրվարի 26

Առավոտը ասես կտրված էր մեզանից ու մտքով հեռուներն էր թափառում.

«Հա՛յ, գիդի հա՛, մեր կոովա սարերը, ձորերը, անտառ-ճերը... մտքով ինչպե՞ս գնացի հին ծանոթներիս մոտ, որ հիմի չկան, ինչպե՞ս եմ վերապրում անցած կյանքս՝ արդեն չբացած...»:

Այդ օրը տրամադրությունը բարձր էր, շարունակ սրախոտում էր և հանգերով խոսում: Ասաց. «Եթե ֆիզիկապես հնարավորություն ունենայի, օրը մի պոեմ կգրեի... ափսո՛ս...»:

Տեսնելով այդ տրամադրությունը, խնդրեցի. ասա՛՛ ես գրեմ: Նայեց վրաս ու ծպտալով ասաց. «Երեխա՛՛ ես, երեխա...»:

«Դա՛... Շեքսպիրի ասածն է հիմա— անիծվի և՛ խելքն ու ընդունակությունը, որ խաբեություն է անում, ափսո՛ս...»

էս երկու օրը ինչ-որ խորթություն եմ զգում իմ և իմ շրջապատի միջև. կարծես թե կապը կտրվում է մեր մեջ. հաճախ մարում եմ, կորցնում եմ ինձ ու շեմ իմանում՝ դու դո՞ւ ես, թե չէ... հա՛... ունեղենը ուժեղ բան է, ինձ շատ թուլացրեց:

Վերջերս նաևին շատ եմ տեսնում, պարզ նրան եմ տեսնում:

Օ՛ֆ, խաբանի, խաբանի— դուշմանի սրտով մի օր էլ տանիցս դուրս կերթամ...¹

Շատ քիչ բան է հաջողվել կյանքումս, հիմի հասել եմ անդունդի ծերին, նոր պիտի գամ դեպի լավ բաները... էն էլ եթե լինի, տեսնենք. տեսնենք ի՞նչ կլինի: Իսկ եթե չհաջողվի, դա կնշանակի կիսամուրաղ լինել թե՛ գրական գործերի մեջ, թե՛ ընտանեկան:

Ակըս քարին դեմ է ընկել, թե կկոտորվի— կկոտորվի, թե անց կկենա, էն ա անց կկենա, բայց եթե անց կացավ, երկառ կապրեմ, լավ կապրեմ. իմ լավ օրերը նոր են սկսվելու, նոր եմ ապրելու, նոր եմ պարապելու...»:

Երեկոյան հարցրեց, թե մեր գրականության մեջ շում կարող ենք ազգային, ժողովրդական գրող համարել. խոսում էր, բնորոշում, թե որն է ազգային բանաստեղծը և անցավ Պուշկինին.

«Դա՛... Պուշկինը ազգային մեծ բանաստեղծ է: Ազգային բանաստեղծը պետք է իրեն երկրից լինի, իր ժողովրդից խոսի, հարստատ և համաշխարհային խնդիրներ շրջափի միևնույն ժամանակ բանաստեղծ, մտածող-փիլիսոփա,— դա Բյոլթեն է, կատարելատիպը, որ երկուսը ներդաշնակում է»:

Այդ օրը թերթերից մեկում կարդացինք մի հոդված, տիր գրված էր. Данте— храм, Гете— дворец. «Իսկ Շե-

¹ խաբանի քառյակներից մեկի բովանդակությունն է:

բըսպի՞րը,— հարցրեց ինքն իրեն ու պատասխանեց,— նա տարերքն է, համայնապարփակ տիեզերքը: Շեքսպիրը ամեն ինչ է»:

Փետրվարի 28

Առավոտը թույլ էր:

«Հետդճետե զանգերը տալիս են մեկ-մեկ...»:

Հարցրի՛ ի՞նչ զանգեր, հայրիկ:

«Չե՞ս տեսնում, ականջներս ծանր են լսում, աչքերս շաղ-իլում են... Դուք չեք հասկանում, երեխա եք: Ինչքան գեղեցիկ բան կա ձեր էդ միամտության մեջ, և ի՞նչ լավ է, որ չեք հասկանում, չեք զգում, որ մի օր կարող եք առանց հայրիկի մնալ... ինչ լավ է, որ էդպես է»:

«Երբեք կյանքը աչքումս այնքան արժեք, այնքան կարե-վորություն չի ունեցել, ինչքան հիմա...»:

Մարտի 1

Բեռլին գնալու մեծ ցանկություն ուներ և այդ հույսով էր ապրում: «Մնում է գնալ մտնել գիտության լույսի տակ: Մարտի ճրագի նման փայլվում եմ. տեսնեք Բեռլին գնալը կհաջողվի՞, թե չէ»:

Երեկոները, սովորաբար, լույսը սև թաշկինակով ծածկում էինք, որ աչքերը չցավեցնի, բայց այդ երեկո թողեց լույսը ծածկենք: «Գիշերը քնելուց առաջ լույսը թող սեղանի վրա մնա, թող լույս լինի սենյակը. ես հիմա շատ լավ եմ հասկանում Գյոթեին. լ՛ույս, օ՛ր, տարածություն... ի՞նչ լավ բաներ են... Մարդ հիմա մի բարձր, բարձր սարի վրա լինի...»:

Մարտի 2

«Մի գեղեցիկ զույգ աչքիցս չի հեռանում, շարունակ առաջս է: Մերենցն ու իր աղջիկը... Ի՞նչ լավ զույգ էին, միակ զույգը, աղավնու նման միշտ իրար հետ սիրով, միշտ ան-

բաժնի իրարից... ինչքան բանաստեղծություն կար, ինչքան էր գեղեցիկ...»

Աղջիկը շատ լավ դեմք էր, կրթված, զարգացած, ինտելիգենտ, կուլտուրական մարդ: Ինչքան ուժանտիկա կար նրանց մտերմության մեջ, ինչքան գեղեցկություն... Ամեն օր, ժամը 4-ին, թեև անցուկ հայր ու աղջիկ միշտ դուրս էին գալիս զբոսնելու Դվարցովաչա փողոցը. միշտ տեսնում էր երկուսին միասին... Դա՛... Մերենցը շատ լավ մարդ էր. ճիշտ է, մեծ դեմք չի, բայց լավն է:

Գրականության մեջ էդ տեսակ զույգեր քիչ կան: Գեղեցիկ է և Անդերսենը՝ իր թոռան հետ»:

Մարտի 3

«Համենայն դեպս սա մեծ հիասթափություն էր, շատ մեծ»:

Բժիշկ Աբազովն էր բժշկում: Պատմում էր իր կյանքի ճախորդություններից.

«Բժիշկը կյանքի ճամփին զարկված մարդ է երևում...», — ասաց հայրիկը նրա գնալուց հետո: Նոր մարդ էր Աբազովը, նոր էին ծանոթանում իրար հետ: Հայրիկն ասաց. «Եկն գնոք Փարալոն, որ ոչ ճանաչեր զձովսեփն: Հիմի ես ու Աբազովն ենք. եկել է՝ բժշկի, չի էլ ճանաչում ո՞վ եմ ես, ի՞նչ եմ ես...»:

«Աշխարհքումը ամեն բանի բույրը ճաշակն է: Ճաշակը մեծ բան է, դրա համար է, որ հին հույները պատմության էջերից չեն իջնում երբեք, շարժվելու ձև գիտեին, ուտելու, ապրելու ձև, կարգին ու գեղեցիկ. հոգու և մարմնի պաշտամունք կար նրանց մեջ»:

Մարտի 4

Առավոտն իրեն ավելի թույլ էր զգում: Բեռլին գնալու ցանկությունը չէր լքում նրան:

Երեկոյան Մոսկվայի նկարիչներից մեկը՝ Հովակիմ Մի-

հաջանյանը եկավ, հետն էլ իր նկարներից մի քանիսը բերեց:

Հայրիկը շատ հավանեց և ասաց. «Ափսոս, ուշ եմ հանդիպում իմ նկարչին, ինչքա՞ն բան կարող էինք միասին անել, ափսոս: Եթե Բեռլինում առողջացա, վերադարձիս կտեսնը՝ վենք, կխոսենք»:

Հայրիկին դուր էին եկել Միհայրանյանի նկարների արևելյան վառ գույները: Նրա գնալուց հետո ասում էր. «Սրան կտայի իմ լեզենդներից, հեքիաթներից մի քանիսը: արևելյան լիրիկ, էկզոտիկ բաները կարող է լավ տալ»:

Մարտի 5

«Ամեն մի ցավ մի խրատ է, և սա իմ վերջին խրատը կլինի: Իմ բոլոր խաթեքը խաթրից են եղել: Սրան ասում են խաթրի դոհ»:

Հայրիկի վերջին շաբաթները լցված էին հայրենի բնաշխարհի անհուն կարոտով, մանկուկյան անդառնալի հիշողություններով:



Վերջին շաբաթները բժիշկները նշանակել էին մորֆի ու պանտոպոն, որ հայրիկին շատ էին դուր գալիս: Սրակվելուց հետո ցավերը մեղմանում էին, տրամադրությունը մի կարճ ժամանակ բարձրանում էր, հանգստանում ու սկսում էր զրույցը:

«Մի քանի քառյակ գրեցի ու մնացին սևագիր, կիսատ... վեր կենամ, վեր կենամ գրեմ... Կացեք մի վեր կենամ... ու...», — ասում էր, ուզում էր ասելիքն ավարտի, բայց խոսքը մնում էր կիսատ:

Ծրբեմն երգելու տրամադրություն էր ունենում: Մի անգամ «Քյուրոլին» սկսեց երգել, մի երկու անգամ էլ իր սիրած պարսկական բայաթիներից, հետո՝ հոր երգած շարականներից...

Հիշում էր գլուղում անցկացրած մանկուկյան տարիները, օրերը... հոր երգերը: Ամենից շատ մոտ ու մտերիմ մարդու

կարիքն էր զգում, լավ զրույց անող մարդու, որ մոտը նստի, արտակից մտեմնա ու սրտանց զրույց անի հետը:

«Ա՛յ մի մոտ մարդ լինի, զրույց անող, ուրախ, հոգեչա՛ր զրույց անող մի մարդ, մի մտերիմ, մոտ մարդ...»:

Հիվանդ ժամանակ իրեն զվարթ էր պահում, ամենքի հետ սիրալիկ էր, մեղմ: Որքան էլ տանջալից, անքուն գիշեր անցկացնե՛ր՝ թե բժիշկներին, թե այցելուներին դիմավորում էր ժպիտը դեմքին: Ասում էր, խոսում, հյուրասիրում:

Առողջ և ուրախ դեմքեր էր ուզում տեսնել. սրտալի ծիծաղ, ուրախ երգ, սրտաբաց մարդ: Մոսկվայի հիվանդանոցում նրան շատ էր դուր գալիս, որ առավոտները պալատ մտնող հերթապահ քույրը կամ ծառայող կանայք առողջ էին, ժիր ու զվարթ: Հաճույքով էր նայում, երբ առավոտը վաղ ծառայող կանայք դուլլով առողջ ջուր էին բերում ու սկսում էին սենյակը լվանալ, թարմացնել:

«Իմ սենյակն էլ միշտ էդպես պիտի մաքրել տամ. ամեն օր սառը ջրով լվանան»:

Ինչքա՞ն թարմություն կա, ինչքա՞ն առողջ է ու դուրեկան...»:

Մարտի 7

Առավոտը թեյին ասաց.

«Սակավիկ մը, և ինձ շեք տեսնի», — Քրիստոսի վերջին խոսքերն են իր աշակերտներին: Նույնը ես հիմա: ձեզ եմ ասում, երկու գիշեր է մնացել ձեզ հետ անցկացնելու, հետո կհեռանամ ձեզնից...

Մարթան և Մարիամ Մագթաղենացին — երկու կին Քրիստոսի կյանքում. մեկը՝ գործնական, մյուսը՝ Մարիամը, հակառակը: Մարիամը, երբ յուզով օծում է տիրոջը, Մարթան ասում է — խնայիր յուզը աղբատներին բարություն անելու: համար և դա տիրոջն ավելի դուր կգա: Իսկ մյուսը՝ Մարիամը, ոչինչ չի խնայում և ամեն ինչ շռայլում է տիրոջ համար:

— Դա՛... Քրիստոսի կյանքում շատ խորհրդավոր պատ-

Յկերներ կան, իսկ Բուրդայի կյանքը... Արևելքը շատ է մեծ, շատ...

Մարդ կյանքում միշտ պետք է մի բանի նվիրվի— դա է կյանքը, նվիրվի, կյանքը դրանով լցնի ու ապրի:

Երեկոյան Արեզը բերեց Ռաբինդրանատ Թագորի գիրքը՝ «Պարտիզպանը», որ նոր էր լույս տեսել Վիեննայում, Համլիկի թարգմանությամբ: Հայրիկը շատ ուրախացավ, հուզվեց, աչքերը լցվեցին, կարոտ հայացքով նայեց Համլիկի լուսանկարին, պենսնեն դրեց աչքերին, գիրքը վերցրեց ու սկսեց թերթել: Շատ գոհ էր, որ արդեն տպագրվել է: Գրքը արտաքուստ շատ հավանեց: Կարդացինք առաջաբանը, այնքան էլ չհավանեց: Որոշ գիտողություններ անելուց հետո կարդացինք թարգմանություններից մի քանի հատված: Որոշ հատվածներ հավանում էր, իսկ երբեմն էլ ուղղումներ անում և գիտողություններ: Կարծիք հայտնեց, որ Համլիկը լավ լեզու ունի և դեռ կլավացնի: Ամբողջ գիշեր խոսում էր Արևելքից և Թագորից:

«Ռաբինդրանատ Թագորը շատ է նուրբ ու գեղեցիկ: Դեմքի արտահայտությունը կոնգֆեկտյոն է հիշեցնում. խոշոր դեմք է անսպաման, բայց, իհարկե, Գյոթեի մեծությունը չունի: Իմ և Թագորի մեջ, մեր վերաբերմունքի մեջ դեպի աներեւելույթը— մեծ տարբերություն կա. ես առանց ակնածության եմ հետը խոսում, դիմում, մեջս երկյուղ չկա, իսկ Թագորը՝ երկյուղով:

է... է... էս պոեմի պես պիտի լինի մարդու կյանքը, առանց ընդհատումի, հանգիստ գնա, ջրի ափին, երկնքի տակին, արևի դիմացը՝ ինքդ քեզ հետ, ինքդ քո մեջ,— առանց կտրվելու, գնա՛ս, ապրե՛ս... Ինչպե՞ս կլինի շերամը, եթե գործելիս նրա թելը կտրվի...

Օ՛ֆ, ինչքա՛ն եմ կարողել պարապելուն, ինչքա՛ն... երանի թե էս անգամվա բժշկությունից հետո երկու ոտքս կտրեն ու մնամ իմ կարիներում, իմ սենյակում, դուրս չգամ, դուրս չհանեն, շխանգարեն, հանգիստ թողնեն ինձ, հանգի՛ստ...

Ի՛նչ տանջանքով ու տառապանքով եմ տունս սարքել— ոչնչից, ոչնչից տուն շինեցի— մենակ, մենակ, իհարկե, սխալներով: Ռոճիկս ու թոշակս խալխին եմ տվել, խալխի գործե-

րով զբաղվել, մայրիկին խոհարար շինել, ձեզ էլ խալխին ծառայեցրել...»:

Երեկոյան ցավերը նորից սկսեցին անհանգստացնել, երկու ժամը մեկ քույրը պանտապոն էր սրսկում:

Մարտի 8

Առավոտը սիրտը շատ էր թույլ. գիշերը քիչ էր քնել, հագիվ կես ժամ: «էս մեկը Համլիկի շառերն էր, նրա հաշվին գրենք. հիշտ եք ասում, բավական լարված լսեցի, խոսեցի, շատ հոգնեցի, շատ...»

էնպես արեք, որ վաղն անսպաման գնանք Բեռլին, թե չէ: կվատանամ: Նստած կգնամ, սրսկումներն էլ մի կերպ կտանեմ, միայն թե գնանք Բեռլին»:

Երեկոյան տրամադրությունն ավելի վատացավ: Ասում էինք՝ ամեն բան հիմա լավ կլինի, Համլիկը Բեռլին է, ծախսերը կհոգան, գնալը հաջողվում է, գարունն էլ գալիս է արդեն:

«Հա՛, նունիկ ջան, ամեն բան լավ է արդեն, միայն ես եմ վատ...»:

Աչքերը շարունակ փակ էր պահում: Մեկ էլ այսպես ասաց.

— Մայրիկն ինչ-որ լավ բան էր եփել, կերա՛ առողջացա՛:

— Ի՞նչ էր, հայրիկ, ասա մենք էլ եփենք:

— Չեք կարող...

Մարտի 9

Գիշերն անքուն անցկացրեց: Ինչպես հետո Աշխենը պատմեց, կանչել էր նրան իր մոտ և ասել. «էս դրությունը ո՞նց գնամ Բեռլին, ճամփին կմեռնեմ, երեխիս (Արեգի) գրկում... Չէ՛, չեմ գնա...»:

Գիտեիք, որ Բեռլին գնալն այլևս փմաստ չունի:

«էս իմ «Նեսոյի քարաբաղնիսը» դառավ— ցեխ, ունտգեն— տարբերություն չկա. ուժեղ բաներ են, գալիս են նշանակում ու չեն էլ հետևում, թե ինչպե՞ս են անում կամ ինչպե՞ս եմ տանում...»:



Նամակ ստացվեց Դերենիկ Դեմիրճյանից.

Օհանես ջան.

Երկար չեմ գրում, որովհետև շատ բան ունեմ գրելու: Քո լին սրտիդ մեջ, գիտեմ, մի տեղ էլ ինձ համար կունենաս, քննչպես իմ նեղ սրտիս մեջ ամենամեծ տեղը դու ես բռնած եղել էսքան ժամանակ: Ե՞րբ պիտի Մոսկվայից դա քո թանկ նվերդ ամենքին և ինձ,— որ դու ապաքինվել ես: Եվ եթե քո ձեռքդ, որ սուր է ինձ համար, մի բառով թեթևացնե՞ր իմ անհուն տրտմությունս...

Ձերմագին համբուրում եմ էդ ձեռքդ և սպասում քեզ, իմ հին, իմ քաղցր Օհանես:

Քո Դերենիկ

Սիրելի Արեզ

Երբ հայրիկը տրամադրություն կունենա՝ տուր կարգալու իմ երկտողս և բարի եղիր մի երկտող էլ դու գրիր ինձ նրա անողջության մասին:

Բարեներս Նվարդին և Աշխենին
Դերենիկ»

Հայրիկն այնքան թույլ էր, որ նամակի ընթերցումը լավ չլսեց:

Մարտի 11

Լավ առավոտ էր. արև ու տաք:

«Ինչ որ տեսել ես՝ անցել է. ինչ որ արել ես՝ անցել է. դու էլ շուտով կանցնես՝ սա է ճշմարտությունը...

Հիմի մի բան եմ ուզում. երեխանցս հետ մի քիչ էլ ապրել, մի քիչ: Երեխաներիս հետ իսկի շապրեցի, նոր էինք տուն դառնում: Վա՛յ իմ հեր, իմ հոր հետ էլ շապրեցի: Նոր էի տուն սարքվել, հերս պիտի գար տեսներ, ասում էր՝

հենց որ սիրտս նեղացնեն, տունս թողնելու եմ, քեզ մոտ գամ: Իմ հերը ո՛չ տունս տեսավ, ո՛չ էլ աշխատանքս...

Ի՛նչ հարազատ ձայներ են գալիս ականջիս՝ մանկուց, Լոռուց— մեր սարերի, մեր հանդերի. ի՛նչ լավ ձայներ են գալիս ականջիս...»:

Այլևս Բեռլին չէր ուզում գնալ և չէր էլ կարող: Շատ թույլ էր:

«Ես ավելի շուտ մեր տունը կգնամ, մեր տունը էնքա՛ն եմ կարոտել... չգիտեմ ինչու Երևա՛նն ուղեց սիրտս— մե՛ր երկիրը:

Դա՛... «Տագնապի ու հսկումի գիշերներ...», որ լավանամ, հուշերի մի շարք պիտի գրեմ էդ վերնագրով»:

Մարտի 13

Առավոտյան Ս. Տեր-Գաբրիելյանն էր եկել Պապա Քալանթարյանի՝ և Կարեն Միքայելյանի հետ: Հայրիկը երկար խոսեց իր հիվանդությունից...

Մարտի 14

Հիվանդության օրերին հաճախ էր հիշում Աբասթումանը, Աբասթումանի անտառները և մեծ ցանկություն ունե՞ր ամառն այնտեղ անցկացնելու.

«Ա՛խ, երանի՛ էս ամառ Աբասթումանի անտառներում ձեզ հետ զբոսնեմ, ի՛նչ լավ կլինի...»:

Ցերեկներն արևի լույսը չէր տանում, աչքերը լցվում էին, վարագույրներն իջեցնում էինք:

Մարտի 15

Շատ թույլ էր, հուզված, խոսում էր դժվարությամբ: Ասացի՛ հայրի՛կ ջան, շատ ես խոսում ու հոգնում: «Հա՛, սիրուն ջան, ճիշտ ես ասում... էլ չեմ պատմի. չեմ էլ կարող պատմել... վերջացա՛վ...»:

1 Քալանթարյան Պապա— գիտնական-գյուղատնտես և հասարակական գործիչ

Մարտի 17

«Ինձ թվում է, վերջին ուժերս թողնում են ինձ...»
Հանդստացնում էինք, հույս տալիս, թե կատողջանա, լավ կլինի: Ամեն առավոտ բերում էինք օրվա թերթերը՝ «Պրավդա», «Իզվեստիա», ինչպես նաև Լենինի առողջության բյուլետենը: Հայրիկը հետաքրքրվում էր Լենինի վիճակով, հարցնում: Ասացինք, որ Լենինի համար Գերմանիայից նոր բժիշկներ են եկել, նրանց կհրավիրենք, քեզ կօգնեն, կբժշկեն:

«Ո՛ւշ է, ուշ, շատ է ուշ արդեն, գուցե Լենինին կարողանան օգնել, բայց ինձ համար ուշ է արդեն: Ինձ այլևս ոչ մի լավ լուր, ոչ մի լավ բան չի ուրախացնում: Վերջապես...»:

Մարտի 18

Գարնան առավոտ էր, սլաշձառ, արև օր:

Հիշեց հորը, Լոռին, մանկությունը. «Ինչե՛ր եմ տեսել մեր սարերումը, մեր ձորերումը, իմ կյանքում... Ինչե՛ր եմ տեսել...»

Աշակերտ վախտս էր. Ղոխնանց Պապը մեր ձորումը, գիշերները կրակի դրաղին չիբուխը սարքում էր, հեքիաթներ ասում: Գեքեղը վըշշում էր, ձորը թըշշում, ձեն տալի, պախրեն գոռում էր, Ղոխնանց Պապն էլ պատմում էր, մենք էլ ականջ էինք դնում. լավ պատմող էր... Ի՛նչ լավ էր, հե՛յ գիղի հա... էդ պատմածներից կտորներ ունեմ «Հառաչանք» պոեմում:

Ի՛նչ լավ է, ո՛նց է փոփում մանկությունս առաջիս, մի քիչ առաջ ուզում էի երգել մանուկ օրերիս երգերը, չկարողացա. Ի՛նչ լավ է— արե՛, կանա՛չ, Ի՛նչ սլաշձառությունս ու դեղեցկությունս եմ հիշում մանկությանս անցած օրերը...»:

«Հիմի մեր Լոռվա ձորերը շունչ են առնում, չե՛ն ասում էն շնչիցը մի քիչ ինձ դարգեն... ես էլ շունչ առնեմ...»:

Էնքա՛ն եմ կարտեղ ձեզ, ձե՛զ, որ կողբիս եք, նրանց հեա միասին, որ հեռու են. բոլորին կարտեղ եմ: Հիմա երեսեքը մեր բալկոնում, արևի շողերի միջին տաքանում են»:

Ասում ենք. «Հայրիկ ջան, մենք էլ կգնանք, կխառնվենք»:

«Հա՛, կգնա՛նք... կխառնվե՛նք...»,— ասաց ու դեմքը շուռ տվեց: Հետո նորից խոսեց.

«Զգիտեմ, էս երկու օրը առողջանալու հավատս խորտակվեց և երեկվանից քո աչքերի մեջ իմ քառյակի մի տողն եմ կարդում»

— Մահի ահ կա՛ իմ սրտում...

Գու երեկվանից մահվան վախը զգացիր...»:

Աշխենը հետո պատմեց, որ նույն օրը հայրիկի և իր միջև տեղի է ունեցել հետևյալ խոսակցությունը.

— Աշխեն...

— Ի՛նչ է, հայրիկ:

— Քնա՞ծ ես:

— Չէ:

— Չե՞ս ուզում մի քիչ զրից անենք:

— Շատ եմ ուզում,— իսկույն վեր կացա և նստեցի կողքի աթոռին:

— Մի բան հարցնեմ քեզ. Ի՛նչ ես կարծում, հո՞ր կորուստըն է ծանր, թե՞ որդու:

Անսպասելի հարց էր և շատ ծանր: Հայրիկը գիտեր, ինչքան եմ տղայիս՝ Հովիկին սիրում... Հաճախ ասում էր մի քիչ լավանամ՝ գրենք, երեսին բերեն:

Զիմացա՛ ինչ ասեմ, հետո պատասխանեցի.

— Հայր էլ կա, հայր էլ, որդի էլ կա, որդի էլ...

Ասաց.

— Չէ, սխալվում ես. ես հորս շատ էի սիրում, շատ...

Եւ աստվածային հայր... Շատ մեծ վիշտ պատճառեց նրա մահը ինձ, բայց Արտիկինն ավելի մեծ էր...



Ցերեկը կայացավ պրոֆեսորների և ուսուցիչների մեծ կոնսիլիում և դա վերջինն էր: Կոնսիլիումի մասնակիցներն էին վիրաբույժներ Ֆեոդորովը, Մարտինովը, երկու ուսուցիչներ, Պլեսնյովը, Պեդանովը, հիվանդանոցի բժիշկները: Իհարկե, հուսադրող ոչինչ չեղավ: Հիվանդի վիճակը լավ ոչինչ

չէր կարող խոստանալ: Կոնսիլիումը, հայրիկին հուսադրելով, խորհուրդ տվեց հայրենիք վերադառնալ, հավատացնելով: թե հարազատ բնության ծոցում հեշտ կվերականգնվեն ուժերը: Հայրիկը խնդրեց, որ ուղտմ է բժիշկների հետ առանձին խոսել, առանց մեզ: Մենք երեքով՝ դուրս եկանք:

Հետո բժիշկներից իմացանք, որ խնդրել էր ամեն ինչ անեն, «գոնե երեխաներիս համար, շատ են տանջվում...»:

Բայց ի՞նչ կարող էին անել բժիշկներն անբուժելի հիվանդության դեմ: Նրանց վիճակն էլ շատ ծանր էր, որ ոչինչ անել չէին կարող:

Հայրիկն, իհարկե, զգում էր այդ, բայց ցույց չէր տալիս: Ուրախ էր, որ տուն պիտի վերադառնար:

«Մի տուն գնանք, երեխաներիս տեսնեմ...», — ասում էր ու մեզ էլ շտապեցնում:

Մարտի 19

Առավոտը բժիշկ էրիվանցովը եկավ: Մոսկվայի հայկական գաղութի և Հայաստանի օգնության կոմիտեի ներկայացուցիչներն իրենց հետ բերել էին մի ծրար ողջույնի խոսքով, առողջության բարեմաղթություններով:

Մրարը մեզ տվեցին, կարդացինք: Հայրիկը լսում էր.

«Բանաստեղծ Հովհաննես Թումանյանին
19 մարտի 1923 թ.

Մոսկվայի հայ գաղութը յուր ընդհանուր ժողովում ամսի 18-ին միաձայն որոշեց ողջունել Ձեզ, որպես հայ ժողովրդի ցավերի և ուրախության մեծ երգչին և խնդրեց տեղիս Հայաստանի օգնության կոմիտեին յուր լավագույն ցանկությունների, բարեմաղթությունների և զգացմունքների թարգմանք լինել:

Սիրով կատարելով ընդհանուր ժողովի այդ ցանկությունը, Հայաստանի օգնության Մոսկվայի կոմիտեն ինքը ևս միա-

նում է Գաղութիս՝ ջերմ համակրանքի ու սիրո արտահայտություններին և հույս ունի, որ մոտիկ ապագայում Դուք լիովին կառողջանաք և նորից ուժեղ կհնչեցնեք Ձեր աննման քնարը:

Նախագահ կոմիտեի՝
Կարեն Միխայլյան

Անդամ-քարտուղար՝
Նիկ. Տեր-Մանվելյան

Վարիչ՝
Ս. Քափանակյան»

Լսեց, նայեց հեղնական ժպիտը դեմքին, հայացքն ուղտեց կողքին նստած բժիշկ Հարությունյանին, որ եկել էր այցելությունի հետ, ասաց.

«Տեսեք ինչի՞ վրա է գաղութը, ողջույնի խոսք է դրկում, երկար կյանքի բարեմաղթություններ... երբ գիտեն, թե ինչ օրի եմ...»:

Հետո, խոսքն ուղղելով բժիշկ էրիվանցովին, շարունակեց.

«Հայտնեցեք Ձեր գաղութին շնորհակալություններս և ասացեք, որ ցանկանում եմ ավելի լավ գրողներ ոճնենաք և կարողանաք ավելի լավ խնամել ու գնահատել նրանց: Ուշ էր եկել. արդեն ուժ չունեմ նույնիսկ շնորհակալությունս հայտնելու: Ես մի բան կցանկանայի և մի բան կուզեի, որ Հայաստանում ջրանցք անցկացնելու գործը մինչև վերջը կարողանաք տանել և անպայման էդ գործը գլուխ բերեք: Ես որպես նախագահ միայն սկսեցի, հիվանդությունս խանդարեց, շատ բան չկարողացա անել մեր ժողովրդի համար, մեր երկրի համար — դուք շարունակեցեք և աշխատեցեք մեր երկրի, մեր ժողովրդի համար»:

Այդ օրը հայրիկի համար գնեցի կապույտ մանուշակների մի փունջ, հիվանդանոց բերի, տվի իրեն. վերցրեց, հետո ձեռքից գցեց խորը, շատ խորը տխրությանը: Ասես արտաքին աշխարհի, դրսի գարունը՝ կյանքը, և ներքին աշխարհի ձմեռը՝ մահը, իրար դեմ հանդիման եկան...

1 Աշխենը, Նվարդը, Արեզը

Մարտի 21

Առավոտը խնդրեց մահճակալը էնպես դնենք, որ երկինքը երևա: Մահճակալը դրինք սենյակի մեջտեղը:

Շատ անհանգիստ էր:

«Մեկ ուղում եմ մի բարձր սարի վրա լինեմ, մեկ էլ ուղում եմ մահճակալից վեր գամ»:

Թույլ էր, քիչ էր խոսում: Զարկերակը 94 էր: Անտարբեր էր բուժմանը: Դեղերը և սրակում չէր ուզում: «Ձեր խաթեր եմ ընդունում»,— ասում էր: Խնդրեց, որ հիվանդանոցից մի քույր դա մեղ օգնություն, որ մենակ չլինենք:

Գարնանային պայծառ առավոտ:

«Էսօր դարուն է իմ աշխարհքում, մեր երկրում... Մեր պատշգամբում երեխաներս արևի տակ, աչքերը ճամփին սպասում են իրենց հայրիկին, իսկ փս վերջին շունչս եմ քաշում... գետինը մարմինս քաշում է... չե՞ք տեսնում ինչպես եմ ընկնում, դուք էլ չեք հավատում... Երեխեքս էլ չեն հավատում, որ ես ընկնում եմ... չհասկացան... չհավատացին...»

Էսօր ինձ ավելի առողջ եմ զգում, բայց շատ եմ թույլ-շատ...»:

Հարցրեց ամսաթիվը.

«Վերջին գիշերն է... Մարտը չեմ վերջացնի»:

Մարտի 22

Օր օրի թուլանում էր:

Խողովը, որ հիվանդանոցի հերթապահ բժիշկն էր, մտամ պալատ, ձեռքը բռնեց՝ զարկերակն էր ստուգում: Հայրիկը նայեց բժշկի դեմքին: Բժիշկը լուռ հաշվում էր զարկերակը և, հիվանդի հայացքից խուսափելով, հակառակ կողմն էր նայում՝ լուսամուտին:

Բժիշկը ցած դրեց հայրիկի ձեռքը: Հայրիկը հարց տվեց բժշկին, բայց սա, վերստին նրա հայացքից խուսափելով, ինչ-որ բան մրմնջաց ու դուրս եկավ...



Շանր գիշեր էր, շատ ծանր: Վերջին ուժերը լքում էին հայրիկին: Այդ գիշեր մեղ հետ էր հիվանդանոցի հերթապահ քույրը՝ էռնա Կառլովնան: Հայրիկը դեղեցնում էր քրոջը, դրուցում էր հետը, հյուրասիրում էր կոնֆետով և մեղ էլ լսընդ-րում, որ գիշերը արթուն մնանք, հսկենք, շքենք: Խնդրում էր քրոջը, որ նա էլ չքնի: Քույրը, իրոք որ գթության քույր, շատ էր ուշադիր ու սիրալիր դեպի հայրիկը:

Մարտի 23

Առավոտյան ժ. 6-ին հայացքով ցույց տվեց դեպի պատուհանը: Նայեցի՝ տեսնեմ փաթիլ-փաթիլ ձյուն է գալիս: Մինչ այդ շատ լավ եղանակ էր: Պատուհանը միշտ բաց էր:

«Ուտեղու ակորժակ ունեմ...»: Կերավ:

Ջուր ուլեց: Լիքը բաժակը միանգամից դատարկեց, բայց իսկույն թուլացավ: Աչքերը շարունակ անհանգիստ էին, կարծես բան էր փնտրում: Հաղիվ էր խոսում: Սրսկում շուղեց. «Դատարկ բան է, ձեր խաթեր եմ անում»:

Բժիշկներ եկան. անտարբեր էր, ոչ ոքի շթողեց մոտե-նան: Եկան Կարեն Միքայելյանը և Պապա Քալանթարյանը: Ասաց. «Дайте покойно отдохнуть».

Սոսկալի էր հայրիկի աչքերի արտահայտությունը, կարծես մեղ հետ չէր, ներքին պայքար ուներ... «Ղոշող կացեք»,— այս եղավ հայրիկի վերջին խոսքը:

Շրթունքները շարժվում էին, բայց չէր կառողանում խոսել: Չախ աչքից արցունք կաթեց, քիչ հետո՝ երկրորդը: Երեքով նստած էինք մահճակալի շուրջը: Թվում էր, դեռ լսում է: Շունչներս պահած հետևում էինք հետզհետե մարող մարմ-նին: Ժամը ինն անց տասը րոպեին արձակեց վերջին շունչը...

Անբուժելի հիվանդությունն ավարտեց իր սև գործը: Հայրիկն այլևս չկար...

Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

Ա

- Աբազով— 303
 Աբելյան Հովհ.— 186
 Աբելյան Մ. (Վարսամ)— 174, 176, 240, 262
 Աբիխ Հերման— 87
 Աբով Գ.— 280, 281, 287
 Աբովյան Խ.— 50, 74, 87, 118, 164, 186, 243
 Աբովյան Ս.— 112
 Ադամյան Ա.— 45
 Ադամյան Պ.— 140
 Ադոնց Ն.— 125
 Աթանասյան Ա.— 50, 122
 Աթանասյան Ղ.— 50
 Ալիխանյան Ի.— 186, 209
 Ալվարդ— 125
 Ալիկյան Վ.— 235
 Ակոբ— 35
 Ահարոնյան Ավ.— 14, 94, 119, 174
 Ահարոնյան Վ.— 174, 185
 Աղաբեկյան Ա.— 35
 Աղաբեկյան Մ.— 35
 Աղայան Ղ.— 11, 14, 15, 18, 39, 40, 45, 48, 50, 51, 53, 55, 57, 74, 92, 94, 134, 144, 146, 168, 170, 174, 178, 179, 188, 189, 190, 191, 196, 203, 204, 233, 278, 289
 Աղայան Մ.— 101, 152, 203, 204
 Աղաջանյան— 246
 Աղբալյան Ն.— 14, 18, 40, 110, 114, 120, 121, 134, 138, 141, 157, 159, 162, 163, 173, 174, 178, 229, 230
 Աճեմյան Լ.— 125, 126
 Ամատունի Ս.— 128

- Ամիրանի— 67
 Ամիրզովլաթ Ամասիացի— 258
 Անդրանիկ (զորավար)— 143, 144, 145, 148, 155, 157
 Անդրանիկ (Օսանի տղան)— 30
 Անդերսեն— 303
 Անիկ— 54
 Ապոլլոն— 12
 Առաքելյան Ա.— 176
 Առաքելյան Հ.— 167
 Ասատուր Գ.— 12
 Ասկարյան— 278
 Աստղիկ (Սիրանուշի դուստրը)— 107
 Աստղիկ (Թումանյանի քույրը)— 25, 85
 Արամյանց— 242
 Արասխանյան Ավ.— 75, 118, 134, 177
 Արիստակես Լաստիվերացի— 64, 169, 235
 Արծրունի Գ.— 227
 Արկովեզ (Գևորգ Ղարաջյան)— 45
 Արմենյան Ա.— 106
 Արշակյան Հ.— 107
 Արտավազդ— 67
 Աֆրիկյաններ— 242, 243

Բ

- Բաբաջիկ— 152
 Բազնուզ Ալֆրեդ— 139, 141
 Բագրատ— 56
 Բալա Գիրոր— 33, 34
 Բալայան Ս.— 53
 Բալմոնտ Կ.— 161, 183, 201
 Բակլաչև Լ.— 124
 Բաճաթուր Ե.— 143
 Բաղդասարյան Ե.— 162
 Բայրոն Ջ.— 67, 131, 145, 153, 178, 180, 184, 219, 291
 Բաշինջաղյան Գ.— 93, 110, 186
 Բաշինջաղյան Լ.— 217
 Բարխուդարյան Ա.— 125, 126
 Բարխուդարյան Ս.— 267, 298
 Բարսեղյան— 297
 Բաքստոն Հարոլդ— 139, 141
 Բեզզադյան Ալ.— 233

իՖնդադյան Տ.— 233
Բեզնադարյան— 176
Բել-Կոն-Լյուրոմբրովսկայա Ն. (Գորոդեցկայա Նիմֆա)— 186
Բելշե— 169
Բերանժե Պլեո Ժան— 67, 68, 69
Բերրերյան Հ.— 248
Բերրերյան Մ.— 53
Բերզսոն— 134
Բլոկ— 172
Բոգորազ-Տան Վլ.— 87
Բողեր— 135
Բրանդես— 178
Բրեմ Ալֆրեդ— 21, 87, 180
Բրեստև— 219
Բրյուսով Վ. Յա.— 54, 57, 92, 135, 136, 137, 138, 285
Բրյուսովա Յո. Մ.— 136
Բրոզնաուզ— 92
Բուդա— 306
Բուդուգյան Ա.— 98, 104, 127
Բունիաթյան Մ.— 121
Բունին Ի. Ա.— 68

Գ.

Գալֆոյան— Կ.— 16, 141
Գարեգին վարդապետ— 125
Գեզելկորի Ս.— 271
Գևորգյան Մ.— 241
Գերշենդոն— 205
Գերցեն (բժիշկ)— 279
Գյոթե Վ.— 68, 71, 83, 120, 149, 158, 179, 180, 184, 215, 219, 229, 232, 263, 290, 291, 301, 302, 306
Գլուզայան Տ.— 223
Գոգոլ Ն. Վ.— 224
Գորիֆելդ Ա. Գ.— 285
Գորոդեցկի Ս. Մ.— 93, 170, 174, 177, 185, 186, 194, 196, 216, 219
Գրասեր— տե՛ս Խանզադյան Յուլիա
Գրիբոյեդով Ա. Ս.— 227
Գրիգոր Ախթամարցի— 64
Գրիգոր Նարեկացի— 64, 115
Գրիգորյան Զ.— 70
Գրիշաշվիլի Ի.— 93, 196, 219, 244

Գրյուզ— 222
Գրո (Տեր-Հակոբյան Գրիգոր)— 155
Գրուզենբերգ 0. — 63

Դ.

Դալ Վ. Վ.— 65
Դանթե Ա.— 301
Դանիելյան Բ.— 80
Դեմիրճյան Գ.— 14, 15, 16, 18, 54, 55, 94, 110, 114, 121, 125, 141, 143, 155, 159, 178, 186, 187, 193, 196, 198, 200, 206, 213, 218, 221, 229, 230, 241, 242, 263, 293, 308
Դեմիրճյան Վ.— 15
Դիկկենս— 21
Դիմաքսյան Մ.— 165
Դիտենբերգեր— 222
Դյուբուա Պոլ— 173
Դոստոևսկայա Լ.— 285
Դոստոևսկի Մ. Ֆ.— 209, 215, 285, 291
Դուրյան Պ.— 106, 158, 224, 225

Ե.

Եդեկել— 235
Եղիշե— 64
Եսայան Զ.— 155, 163
Եսայի— 235
Երզնկյան Ա.— 241, 242
Երիցյան Գ.— 235

Զ.

Զանդ ժորժ— 203
Զարգարյան Ա.— 13, 14, 55, 213
Զարգարյան Ժ.— 109
Զարգարյան Ռ.— 155
Զաքարյան Պ.— 283
Զևս— 12
Զուլա էմիլ— 61

Զորինգեն— 79
Զորյան Ե.— 20
Զորյան Ստեփան (Ռոստոմ)— 170, 173, 176
Զորյան Ստ.— 157, 237

է

էսքիլես— 178, 202
էրեկո— 165
էրիվանցով— 312, 313
էփրիկ Մ.— 183
էֆրոն— 92

Թ

Թագոր Ռարինդրանատ— 181, 306
Թաղևոսյան— 246, 269
Թաղևոսյան Ա.— 276
Թաղևոսյան Ե.— 93, 141, 142, 186, 272, 283
Թամադճյան Ա.— 53
Թամադճյաններ— 188
Թանգիկ— 124, 125
Թերլեմեզյան Փ.— 79, 86, 93, 142
Թերսիդես— 67
Թոթովենց Վ.— 142
Թորդոմյան Մ.— 155
Թումանյան Անուշ— 38, 58, 93, 103, 108, 193, 212, 231
Թումանյան Աշխեն— 11, 16, 18, 22, 38, 40, 57, 59, 91, 97, 99, 107, 166, 190, 196, 226, 227, 231, 237, 249, 250, 278, 282, 291, 300, 307, 308, 311, 312
Թումանյան Արեգ— 38, 40, 41, 108, 157, 192, 249, 263, 267, 278, 291, 306, 307, 308, 312
Թումանյան Արտաշ— 191
Թումանյան Արտավազդ— 12, 21, 28, 38, 40, 41, 48, 59, 60, 86, 95, 96, 101, 103, 119, 167, 170, 171, 173, 185, 188, 190, 195, 211, 225, 254, 294, 311
Թումանյան Արփիկ— 38, 59, 103, 108
Թումանյան Բաղևոս (Ասլան)— 35, 133
Թումանյան Բամար— 38, 90, 96 (Սևուկ), 108, 187, 231, 233
Թումանյան Իսկուհի— 165
Թումանյան Լևոն— 241

320

Թումանյան Համբարձում— 66
Թումանյան Համլիկ— 11, 28, 38, 40, 86, 101, 103, 108, 306, 307
Թումանյան Հովիկ— 226, 250, 311
Թումանյան Մարիամ— 14, 37, 55, 109, 241
Թումանյան Մուշեղ— 11, 16, 18, 19, 20, 22, 38, 40, 59, 90, 91, 97, 98, 107, 116, 166, 252, 253
Թումանյան Նվարդ— 22, 38, 40, 58, 130, 152, 173, 262, 307, 308, 312
Թումանյան Ռոստոմ— 130, 191
Թումանյան Սաթիկ— 108
Թումանյան Սոնա (Նան)— 23, 86, 90, 189, 191, 193, 194, 214, 247, 256, 298, 301
Թումանյան Սեդա— 38, 40, 49, 96, 108
Թումանյան Վահան— 87, 256
Թումանյան Վաղարշակ— 103
Թումանյան Վարսիկ— 108
Թումանյան Օլգա (Մայրիկ)— 13, 15, 26, 40, 49, 52, 53, 54, 57, 59, 70, 80, 84, 86, 87, 90, 94, 95, 97, 109, 116, 121, 168, 175, 195, 223, 253, 270, 307

Ժ

ժողեֆինա— 17

Ի

Իսախանյան— 251
Իսահակյան Ավ.— 14, 16, 18, 19, 30, 33, 53, 75, 87, 92, 94, 178, 243, 293
Իսկուհի— 31, 166
Խվանով Վ.— 138, 183

Լ

Ջաղերլյոֆ Սելմա— 68
Լազարև— 252
Լենին Վ. Ի.— 233, 310
Լեոն— 14, 26, 29, 40, 74, 92, 101, 102, 137, 186, 240, 241, 242, 243, 244, 293
Լևեն Ի.— 89
Լերմոնտով Մ. Յու.— 54, 116, 150, 158, 160, 161, 197, 216, 224, 239
Լի Թայ Պո— 148

Իժին Ն.— 91

Լիսիցյաններ— 192, 238

Լիսիցյան Լ.— 125, 126, 238

Լիսիցյան Կ.— 238

Լիսիցյան Սա.— 24, 104, 105, 114, 138, 157, 176, 216, 223, 238, 269

Լոնդֆելլո Հենրի— 68, 306

Լուսաշարակի Ա.— 239

Խ

Խաչատրյան Ս.— 142

Խայամ Օ.— 66, 69, 71, 83, 214, 215, 216, 219, . . .

Խանդոբ— 224

Խանզադյան Յ. (Գրասեր)— 177, 283, 28

Խանոյան Ս.— 241

Խատիսյան Գր.— 97, 99

Խաբանի— 69, 260, 261, 263, 301

Խոդասևիչ Վ. Ֆ.— 76

Խոդով— 314

Խոլոդկովսկի— 232

Խոնդկարյան Ա.— 155

Խորենի Վ.— 185

Խրիմյան Մ. (Հայրիկ)— 75, 174, 175, 176, 231, 233

Ս

Սալտուրյան Ալ.— 19, 20, 92, 100, 159

Սերենց— 302, 303

Սուծունավա— 196

Կ

Կալիդասա— 69

Կալֆ— 222

Կանայան Ս.— 240

Կանչիլի Ա.— 245

Կանտ— 134

Կառլովնա Է.— 315

Կարապետ— 157

Կարապետյան Հ.— 108

Կարինյան Ա.— 242

Կարլեյլ Թոմաս— 50

Կնդրա— 204

Կեպինով— 79

Կիրակոս Գանձակեցի— 64

Կիրչենբլատ— 251

Կնևրեյլ— 297

Կնեյա Սերաստիան— 36

Կուցով Մ.— 197

Կովիտաս— 56, 92, 234

Կոնոպնիցկայա Մ.— 197

Կոչոյան Հ.— 283

Կոստանդին Սրզնկացի— 64

Կորկոտյան Ա.— 262

Կորոլենկո Վ.— 132

Կրակովսկայա Լ. Յա.— 285

Կրասովսկի— 74

Կուլերյակին Ա.— 173, 186, 216

Հ

Հազիր— 56, 104, 109, 113, 152

Հախվերդյան Գ.— 51

Համլետ— 16, 140, 290

Հայնե Հ.— 178, 179, 180, 184, 273

Հասմիկ— 237

Հարզին Ջորջ— 139, 141

Հարություն (Երամիշտ)— 152

Հարությունյան— 313

Հաֆեզ— 66, 69, 83, 232

Հերա— 12

Հերդեր— 68

Հոմերոս— 178

Հովհաննես— 157

Հովհաննիսյան Ա.— 241, 242, 289

Հովհաննիսյան Հովհ.— 19, 20, 92, 201, 202

Հովհաննիսյան Ն.— 16

Հովհաննիսյան Տ.— 134, 170, 176, 187, 218

Հովսեփ— 303

Հովսեփյան Գ.— 124, 125

Հովսեփյան Լ.— 198

Հոսիկ արքեպիսկոպոս— 124

Չ

Չեղվելով— 54

Ղ

Ղաղար Փարոյեցի— 64
Ղաղարյան Ա.— 118
Ղոխնանց Պապ— 310
Ղուկասյան Թ.— 73

Ս

Մանսկի— 63, 74
Մազմանյան Մ.— 280
Մալխասյան Ա.— 112
Մակարով— 246, 251, 269
Մակինցյան Պ.— 100, 103, 118, 119, 135, 136, 248, 262, 264, 287
Մակո բիձա— 35
Մաղաբյան Գ.— 105, 246
Մամ (Թումանյանի հորեղբայրը)— 102
Մամիկոնյան Ս.— 121
Մամուլաշվիլի— 58
Մայակովսկի Վլ.— 295
Մայիլյան Ա.— 192
Մայսուրյան Օ.— 64
Մայրիկ— տե՛ս Թումանյան Օլգա
Մանանդյան Հ.— 14, 33, 43, 168
Մանդինյան Ս.— 174
Մանվելյան Լ.— 174
Մանվելյան Մ.— 122, 133, 155, 209
Մանուկյան Ա.— 257
Մառ Ն. Յա.— 92, 157, 217
Մատենճյան Մ.— 48, 156, 221, 222
Մատթեոս Ուոհայեցի— 64
Մարգարիտ (Շիրվանզադեի դուստրը)— 185
Մարթա— 305
Մարիամ Մազթաղենացի— 305
Մարկիել— 251, 252, 255, 276, 277
Մարկով— 251, 252
Մարտինով— 311

Մաքսուդյան Մ.— 69
Մելիք-Աղամյան Ռ.— 185
Մելիք-Բախտամյան— 54
Մելիք բիձա— 27
Մելիք-Հայկազյան Ա.— 57
Մելիք-Հայկազյաններ— 57, 104
Մելիք-Ղարաղոզյան— 53
Մելիք-Մուշկամբարյան Տ.— 234
Մելիքյան Մ.— 268, 270, 274, 276
Մելիքյան Ռ.— 122, 123, 206
Մելիքյան Տ.— 276
Մելյան Ա.— 262
Մելյան Մ.— 113, 247
Մելքոնանք— 165
Մելքոնանց Մ.— 26
Մեսրոպյան Ա.— 234, 235
Մեսերլինկ Մ.— 171, 180, 225
Մերցվիլևո— 250, 251
Միտոն Զ.— 273
Միհաջանյան Հ.— 303, 304
Միրզոյան Ալ.— 86, 93, 220
Միրիմանյան— 267
Միցկևիչ Ա.— 179, 180, 184
Միքայելյան— 167
Միքայելյան Կ.— 155, 278, 283, 309, 313, 315
Մկրտիչ— 157
Մհեր— 67
Մյանսիկյան Ալ.— 242, 243, 244, 258, 264, 284
Մոլլա Նասրեղին— 261, 262
Մովսես Խորենացի— 64, 115
Մարիեր Ջեմս— 68
Մոավյան Ա.— 237
Մուրադբեկյան Խ.— 12'
Մուրադյան— 12
Մուրադյան— 14
Մուրտալ— 12

Յ

Յաշվիլի Պ.— 93, 227, 228, 245
Յացիմիրսկի Ա.— 259
Յուպտեր— 222

Նազարյան Տ.— 199
 Նալբանդյան Մ.— 69, 161
 Նակաշիձե Ի.— 261
 Նահապետ Քուչակ— 64, 215
 Նահապետ— տե՛ս Աղայան Ղաղարոս
 Նան— տե՛ս Թումանյան Սոնա
 Նապոլեոն— 298
 Նավասարդյան Բ.— 111
 Նավասարդյան Տ.— 162, 199, 200
 Նար-Դոս— 186
 Նեկրասով Ն.— 291
 Ներսես Շնորհալի— 64
 Նիկոսի— 69, 214, 232
 Նիկոլաձե Յա.— 79
 Նիկոլայ II— 118
 Նիցչե Ֆ.— 83, 178, 218
 Նորենց Վ.— 185

Շադինով Հ.— 54
 Շահազիզ Ե.— 17
 Շահազիզ Ս.— 70
 Շահինյան Մ.— 161, 162
 Շահպարտյան— 253, 254
 Շահվերդյան Ս.— 241
 Շանթ Լ.— 14, 16, 21, 40, 43, 92, 103, 110, 114, 159, 168, 178, 20
 208, 212, 229, 234
 Շարբարյան Գ.— 80, 186, 264
 Շելլի Պ.— 131, 145, 180, 183, 219
 Շելլենկո Տ.— 234
 Շեքսպիր Վ.— 12, 31, 71, 131, 140, 141, 142, 145, 159,
 171, 178, 180, 199, 214, 215, 218, 219, 229, 301, 302
 Շիլլեր Ֆ.— 21, 37
 Շիրվանզադե Ալ.— 14, 15, 40, 92, 102, 119, 142, 157, 185, 187, 200, 29
 Շլեյտլ Վ.— 150
 Շլեպկինա-Կուպերնիկ— 203
 Շուան— 53

Ոսկանյան .ամուսիններ— 186

Չալիկյան— 246, 252, 255, 257
 Չարենց Ե.— 162, 163, 239, 265, 270, 283, 284, 287, 289
 Չեխով Ա. Պ.— 68
 Չորանանց Վարդան— 288

Պահարե— 157
 Պայլմով— 105
 Պասպաջանյան Մ.— 185, 282
 Պասլովյան Ալ.— 187
 Պասկեիչ— 74
 Պատկանյան Բ.— 69
 Պարոնյան Հ.— 268
 Պեգաս— 207
 Պեղնեյր— 311
 Պեշեկթաշլյան Մ.— 20, 39, 224, 225
 Պետրաժիցկի— 134
 Պետրոսյան— 161
 Պերսպերյան Մ.— 107
 Պլատեն— 36, 87
 Պլետնյով— 279, 311
 Պոզոս— 287
 Պոստոս— 74
 Պոռչյան Պ.— 14, 15, 51, 75, 134, 233
 Պրժևալսկի Ն.— 66
 Պրոմեթեոս— 67
 Պուշկին Ա. Ս.— 19, 54, 71, 116, 131, 132, 133, 150, 158, 179, 180, 184,
 197, 205, 216, 224, 281, 290, 291, 292, 301

Ջավահիր (Ջավո)— 229
 Ջիվանի— 56
 Ջիվելեզով Ալ.— 92, 108, 110, 121

Ի

- Ռարիկ — 66
- Ռադլով — 65, 149
- Ռյուզդալ — 222
- Ռյուկկերա Ֆ. — 67
- Ռոստոմ — տե՛ս Զորյան Ստեփան
- Ռոտտեր — 235
- Ռուբեն — 152
- Ռումի — 69
- Ռուսթավելի Շ. — 161, 200, 201

Ս

- Սաադի — 69, 83
- Սաղաթյան Մ. — 201
- Սահակյան — 167
- Սաղյան Գ. — 73, 190, 232, 233, 246, 251, 252, 255, 258, 259, 268, 269, 270, 275, 276, 277, 278, 288, 289, 292, 293
- Սամվելյան Խ. — 270
- Սալաթ-Նովա — 15, 17, 18, 51, 56, 104, 109, 110, 111, 112, 114, 136, 152
- Սանդրո — 152
- Սառիկյան Հ. — 160, 161, 295
- Սասունիկ — 295
- Սարյան Լ. — 146
- Սարյան Մ. — 79, 125, 141, 142, 1.
- Սաքանյ Գ. (Խուրի) — 27
- Սաֆո — 178
- Սաֆրաստյան Ա. — 139
- Սեդիսանյան Ա. — 172
- Սեմիգալով — 105
- Սենկելչ Հ. — 134, 259
- Սենտիվ Պ. — 212
- Սիամանթո — 92, 106, 107, 156
- Սիմոն — 31, 32, 33
- Սիտին — 297
- Սիրամարգ — 26
- Սիրան — 260
- Սիրանույշ — 16, 107, 140
- Սիրվարդ — 125
- Սկոտ Վալտեր — 21.

- Սյունի Գր. — 86
- Սուրգուր Ֆ. — 183
- Սոֆոկլես — 178
- Սպենդիարյան Ար. — 152, 153, 154
- Սպենդիարով Հովհ. — 153
- Սպիժանո — 278
- Ստեփան — 102
- Ստեփանյան Հ. — 278
- Ստորոժենկո Ն. Ի. — 66
- Սրվանձտյան Գ. — 64, 212
- Սունդուկյան Գ. — 19, 20, 122
- Սուրաբյան Մ. — 247
- Սուրենյանց Վ. — 141, 142
- Սուրխաթյան Հ. — 258

Վ

- Վախթանգ — 103
- Վանցյան Գր. — 176
- Վարդաղարյան Ֆ. — 14, 15, 43, 53, 54, 91, 197
- Վարդանյան — 167
- Վարդանյան Գ. — 39, 188
- Վարդիկովներ — 87
- Վարսամ — տե՛ս Աբեղյան Մանուկ
- Վարսենիկ — 15
- Վարուժան Գ. — 106
- Վեներա — 12, 23, 156, 273
- Վեռլեն — 135
- Վեռն Ժյուլ — 21
- Վերխովսկի Յու. — 66
- Վերոն — 155
- Վիվան (Ջիդեջյան Անուշավան) — 239
- Վլադիմիրցև Բ. — 281
- Վշտունի Ա. — 287
- Վոլֆ — 297

Տ

- Տարիձե Տ. — 93, 179, 227, 228, 245
- Տարազոս — 283
- Տարո — 168
- Տեր-Անդրեասյան Մ. — 265
- Տեր-Առաքելյան Վ. — 56, 267

Տեր-Գարրիելյան Ս.— 241, 281, 309
Տեր-Գրիգորյան Է.— 38
Տեր-Գրիգորյան Զ.— 155, 200
Տեր-Դավթյան Է.— 152
Տեր-Ղազարյան Ն.— 266
Տեր-Ղևոնդ (բահանա)— 50
Տեր-Ղևոնդյան (տանտեր)— 168
Տեր-Մանվելյան Ն.— 313
Տեր-Մարտիրոսյան Մ.— 267
Տեր-Մարության Ա.— 118
Տեր-Մինասյան Բենիա— 152
Տեր-Մկրտչյան Գ. (Միաբան)— 128, 169
Տեր-Ներսիսյան— 246, 251, 252, 255, 264, 274, 277
Տերյան Վ.— 74, 100, 103, 108, 109, 110, 111, 114, 118, 119, 121, 135, 138, 155, 156, 159, 183, 238
Տերտերյան Ա.— 174
Տիգրան— 30
Տիգրանյան Ա.— 106, 107
Տիգրանյան Ն.— 267
Տիգրանյան Ս.— 168
Տիցիան (նկարիչ)— 222, 241
Տոլստոյ Լ.— 31, 134, 233, 234
Տոտոմյան Վ.— 110, 121, 161, 216
Տվեն Մարկ— 68

Բաֆֆի— 40, 57, 139
Ուայլդ Օսկար— 225

Ուայլդ Օսկար— 225
Ուլանդ Լյուդվիգ— 67

Փալիաշվիլի Զ.— 245
Փաշալիշվիլի Ս.— 239
Փառնակ Գ.— 214

Փալստոս Բյուզանդ— 64
Փախազյան Վ.— 106
Փախազյան Վրթ.— 18, 55, 92, 134, 138, 170, 186, 218
Փիրոսյան Ս.— 266
Փշավելա Վ.— 121

Քալանթար Լ.— 122
Քալանթարյան Պ.— 309, 315
Էամսլյան Ս.— 123
Քաչունի Մ.— 65
Քարմիրեն— 125
Քախանակյան Ս.— 313
Քեչեղեղյան Կ.— 262
Քյուրոզլի— 196
Քոչարյան— 17, 178
Քրիստոս— 222, 300, 305

Օբեդնիկով— 90
Օզանեզաշվիլի Ս.— 56, 69, 271, 272
Օզանեզով— 186
Օհանանց հեղու— 71
Օնիկ— 30
Օսան— 29, 30
Օստրոմով— 279
Օտյան Ե.— 69, 248
Օրլոնիկիձե Գ.— 237, 238, 240

Չայստաֆ— 140
Չեոզորով— 279, 311
Չիրգուսի— 66, 69, 201, 232
Չլամարիոն— 147, 263
Չրանս Անատոլ— 61
Չրիկ— 234
Չրոմզուլդ— 279

Յ Ա Ն Կ

ՔՈՐԲԱՆՅԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒ

Ա.

- Ախթամար— 230
- Աղավնու վանքը— 126, 231, 233
- Աղջկա սիրտը— 118
- Անբախտ վաճառականներ— 96
- Անբուն կրկուն— 260, 263, 270, 277
- Անուշ— 29, 101, 138, 147, 153, 162, 172, 182, 214, 220, 223, 247, 283
- Աստղիկի և Վահագնի հարսանիքը— 286
- «Արևելքի եղեմներիև իշավ պայծառ իրիկուն...»— 213
- Արտավազը— 206
- Արտայակ— 147

Գ.

- Գարնան առավոտ— 76
- Դիշերային մտածմունք— 231
- Գիքորը— 12, 102, 103
- Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի— 150
- Գուժանի երգը— 197

Դ.

- Դաշնակներ— 70
- Դեպի Անհունը— 168, 182, 223
- «Դու քա ճամփին զնա՛, բուլբի՛կ...»— 291

Ե.

Ջրագներ, նախագուշակություններ և նախազգացումներ— 189
Ջրգլի վիշտը— 118, 206

Է.

Ջ՛յ, աստղեր...— 197, 231

Ը.

Ջնկերիս— 20

Թ.

- Թագավորն ու շարլին— 160, 192
- «Թեպետև բախտը մեզ շատ հարվածեց...»— 105
- Թմկաբերդի առումը— 152, 153, 154, 192, 283

Ի.

- Իմ ընկեր նեսոն— 275
- Իլյա Մուրոմեց— 92
- «Ինչքան մահ կա իմ սրբոտմ...»— 311

Լ.

- Լոռեցիների կողը— 86
- Լոռեցի Սաբոն— 29

Մ.

Մաղիկների երգը— 107

Կ.

- Կաքավի երգը— 76
- «Կյանքըս արի հըրապարակ, ոտքի կոխան ամենքի...»— 290

Հ.

- Հազարան բըլբուլ— 41, 92, 115, 123, 145, 181, 182, 195, 206, 207, 208, 217, 273, 283, 284, 288, 294

Հայկական էպոսի բառարանից— 240, 277, 282

Հայոց լեռներում— 20

Հայրենիքիս հետ— 76

Հայ ուխտավորին— 231

Հառաչանք— 310

(Հե՛յ ազահ մարդ, հե՛յ անզոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ...»— 213

Հին կոնիլը— 289

«Հոգուս հատոր»— 177

Հովհաննես Թազավոր— 206

Ճ

Ճերմակ աղավնի— 168

Մ

Մարկոն Ռամազանին գինի է խմում— 148

Մարկոն վար է անում— 148

Մարկոն վերաջնում է պսակի հարկը— 148

Մերժած օրենք— 197

«Մթին է դեռ, ու չի ծեղում...»— Տ. Շևչենկո— 234

Մի կաթիլ մեղրը— 70, 76, 90, 101, 297

Մծիրի— Մ. Լերմոնտով— 231

Մոծակն ու մրջյունը— 148

Ն

Նեսոյի բարաբաղնիսը— 307

Շ

Շունն ու կատուն— 70, 98, 127, 128, 177, 185, 217, 286

Ո

Օսկի բաղաբը— 78

Օրբը— 231

Չ

Չարի վերջը— 102, 192, 262, 263

Պ

Պատրանք— 231

Պոետն ու Մուսան— 52, 197

Ջ

Ջրահեղձը— Ա. Պուշկին— 185

Ս

Սասունցի Դավիթը— 101, 223, 224, 232, 240, 260, 283

Սիրիուսի հրաժեշտը— 147, 263, 289

Սոխակի վիշտը— 76

Վ

Վայրէջք— 91, 231

Վատ օրեր— 197

Տ

Տազնապի ու հսկումի գիշերներ— 309

ՈՒ

«Ո՞ր հեռանաս, կոխած տեղերդ արյունոտ...»— 131

Փ

Փարվանա— 153, 283

Ք

Քաջ կիվկիվը— 127

Քաջ նազարը— 263

Քառյակներ— 82, 183, 208, 213, 216, 217, 219, 222, 263, 273, 277, 279, 283, 290, 304, 311

Քեֆ անողին քեֆ չի պակսիլ— 45

«Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անցկացավ...»— 213

Ղուսաբեր (ղասագիրք)— 24, 104, 114, 234

Հասկեր (մանկական ամսագիր)— 78, 260, 263

Նվարդ Հովհաննեսի Թումանյան

ՀՈՒՅԵՐ ԵՎ ՋՐՈՒՅՅՆԵՐ

«Միջին և բարձր տարիքի աշակերտների համար

Հրատ. խմբագիր՝ Օ. Հ. Պապոյան
Նկարիչ՝ Գ. Վ. Մանդակունի
Գեղ. խմբագիր՝ Ս. Վ. Պողոսյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Կ. Տանոյան
Վերատպող սրբագրիչ՝ Ս. Ա. Յախոչյան

ИБ № 2434

Հանձնված է շարվածքի 01.09.87 թ.: Ստորագրված է տպագր. 16.11.87
վճ 00752: Ֆորմատ 84×108¹/₃₂: Թուղթ տպ. № 2: Տառատեսակ՝ «Գրքի
սովորական»: Տպագրությունը՝ բարձր, պայմ. 17,64 մամ.+0,8 մամ
ներդ., տպ. 18,44 գուն. թ. օտ., հրատ. 15,47+0,64 մամ. ներդ.:

Տպաքանակ՝ 5 000: Պատվեր 783: Գինը՝ 80 կոպ.:

«Լույս» հրատարակչություն, Կիրովի փ. 19 ա:

Издательство «Луйс», ул. Кирова, 19а.

Հայկ. ՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի անտրի
գործերի պետական կոմիտեի № 6 տպարան, Երևան, Թումանյան \23/1:
Типография № 6 Госкомитета Арм. ССР по делам издательствъ
полиграфий и книжной торговли. Ереван, ул. Туманяна, № 23/1.